Ստ. Զորյան

# Մի
## կայծ վառվում
## է վաղուց մոխրում

պատմվածքներ



891.99
9.-83

Տպագրված
1955



687 Ա/ԱԼ 39

ՀՍՀՀ
ՊԵՏՀՐԱՏ

Ս. Զոհրաբ 19 NOV 2011

891.99
Զ-83 ա/ր-

# ՄԻ
# ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1935

13 04 2013

30063

Պատ. խմբ. Ռ. Աբայան
Տեխ. խմբագիր [redacted]
Սրբագրիչ Ս. Շահիրազյան

◆

Պետհրատի տպարան
Պլավլիտ 213. պատվեր 660.
Հրատ. 3333, տիրաժ 4000.



53
38

## Նախերգանք

Աղբյուրը յերկիս յե այսօր: Դուրսը ձյունը, իմ սիրած ձյունը իջնում է հանդարտ: Իջնում է նա մերկ ծառերի վրա, տների վրա, փողոցների վրա: Իջնում ու ծածկում ամեն ինչ—խնամո՛վ, հավասա՛ր, ու դիչերը գառնում է մարմարյա: Իջնում ու ծածկում է նա հեռուները–հեռու՝ և՛ ուղի ու արահետ, և՛ դյուղ ու քաղաք, և՛ սար ու անտառ: Նա բռնել է այսօր հորիզոնից–հորիզոն, ու թվում է ձյուն և գալիս ամբո՛ղջ ամիերքում: Գալիս է նա մեծասիրտ ու հանդարտ, անարդել ու համարձակ, ինչպես յեկել է դարեր չարունակ, ինչպես գալիս եր մեր մանկության որերին, ինչպես պիտի գա և մեր գերեզմանի վրա, և այն ժամանակ, յերբ աչխարհում էլ չենք ունենա վո՛չ անուն, վո՛չ հիչատակ:

Բայց յես չեմ տխրում: Ընդհակառակը. բնության մեջ իմ ամենասիրածը —ձյունն է այդ, վոր իջնում է յերկրի վրա, վորպես մաքրության կարծես ու նորո-

դում նրան: Վոչ եվ մրսում եմ:—Պատուհանս բաց է ահա, ու լսում եմ, թե ինչպես են վախուվ վաթիլները թավիչի նման քավում ծառերին, դուցե և իրար: Այնպես նույնը, այնպես մեզմ ձայներ ունեն նրանք: Նրանց վախսուկի մեջ ես մի այլ աշխարհի չշուկ եմ լսում... և հոգիս կամաց-կամաց ջոթափում է բեռներն առոյա, ու ես այնպես հանգիստ, այնպես մաքուր եմ զգում ինձ:

Այսոր խաղաղ, անուշ յերեկո յե ինձ համար:

Կրակս ուրախ ժպտում է ոջախում, և չգիտես ի՞նչպես, ի՞նչ կախարդանքով հուշեր են զարթնում իրար յետևից ու, ինչպես նկարը եկրանի վրա, հաջորդում են միմյանց— այդ հուշերը բազմերանգ, այդ հուշերը ուրախ ու ախուր:

—Ձեզ ո՞վ կանչեց, իմ հեռավոր, իմ մոռացված հուշեր: Արդյոք ձյո՞ւնը բերեց ձեզ, այս յերեկո՞ն խաղաղ, թե՞ ոջախիս կրակը տարավ ինձ յետ՝ դեպ այն որերը, յերբ աշխարհը թվում եր մի դյուզ հասարակ, արևը՝ անտառի մեջ քնող մի մանուկ, իսկ կյանքը, կյանքը,—պարզ ու մթին հանելուկ:

— Ե՛, բարի՛ գալուստ: Ձեմ վանի յես ձեզ:

Սիրտս հոժար և նորից ու նորից ձեզ հետ լինելու, ձեր ուրախությունն ու ախրությունն ապրելու:



## I

## Մ Ե Ր Տ Ո Ւ Ն Ը

Մորս պատմելով՝ յես ծնվել եմ գարնան մի առավոտ— վաղ արշալույսին, ու լսի ծնվելուն պես՝ մեր յեկեղեցու զանգերն սկսել են ղողանջել·

—Տի՛ն–դի՛ն...տի՛ն–դի՛ն...

Ներկանեի կարծիքով՝ չատ հանդիսավոր ու խորհըրդավոր է յեղել այդ վայրկյանը: Զանգերը կարծես ավետել են, թե ահա աշխարհ և դալիս մեկը, վոր առանձին մի բան է լինելու— ուշադրությո՛ւն·— «Տի՛ն–դի՛ն...տի՛ն–դի՛ն»... Ցոթանասուն հինդ տարեկան տատերն այն կարծիքն է հայտնել, թե քառասուն տարվա ընթացքում այդպիսի—զանգերի ղողանջով ծնունդ չի պատահել իրեն, և այս հանդամանքն աւելի և ավելի նրան կարծելու, վոր յես կա՛մ չատ «աստղով» ու նշանավոր մարդ պիտի լինեմ կա՛մ... նշանավոր ավազակ, վորի մասին աստված արդեն առաջուց— զգաստարությամբ ղղուշացնում է մարդկանց: Իսկ

տատս —նույնպես աստվածավախ մի կին— զանգերի այդ ղողանջից յենթադրել է, որ յես հավանաբար յեկեղեցու սպասավոր եմ դառնալու, այլապես իմ ծնունդը չէր ղուգադիպի յեկեղեցու զանգահարության... Բայց, ի՞նչը անց, դիմազծերս դնելով, դառել է, որ բերանս նման է ձկան բերանի, ուստի և մի համարձակ դուշակություն է արել, թե յես, յերևի, շատ պիտի ճամպորդեմ, այն էլ ովի դիտի, ծովերով...

—Ծովե՞րով,— վախեցել է հորաքույրս:— Վո՛ւյ, ամա՛ն, կխեղդվի...

— Ո՞վ պիտի նրան փող տար, որ ճանապորդի,— ասել է պապս, տեր վողորմյան քաշելով:

— Հե՛րը,—հեղնել է վաճառական հորեղբայրս, ակնարկելով հորս անվողություն, որ հողագործ մարդ՝ փող չի դանի ինձ տալու:

Հայրս լռել է համեստությունից թե ամաչելուց, որ յերեխա յե ունեցել, կամ մտքում ուրախացել է դուցե, որ յես, իրրև տղա, վար ու ցանքին կարող եմ ոգտակար լինել իրեն:

Ինչ վերաբերում է մորս, նա կողքի սենյակում մահճակալին պառկած, լսել է այս բոլորը և դայրացել հորս վրա, որ նա՝ հորեղբորս հեղնանքին չի պատասխանել արժանի խոսքերով, թե՝

—Մի վախի, իմ տղան ճանապարհածախսը քեզանից չի ուզի...

կամ թե ասեր՝

— Ինքը կաշխատի, ինքը կճանապորդի...

Մինչ այդ՝ տատիս ինձ վախեցել և բարուրի



մեջ և տարել մուտքի դռան չեմքում կանդնել՝ յերեսը դեպի արևելք ու սկսել խաչակնքելով.

—Տեր ամենակալ ու լուս արեգնակ,
ամեն յերկրիս խաղաղություն,
թագավորաց հաշտություն,
ցավին թանդություն,
հացին առատություն,
ես յերեխին էլ՝ յերկար արև...

Տատիս աղոթում է չեմքին, մերոնք վիճում են նեբսը, իսկ յես այդ բոլորին անուշադիր՝ ճչում եմ անվերջ, և հանգստանում այն ժամանակ միայն, յերբ մայրս սոխնքը դնում է բերանս:

—Մոր ծիծ կարող է լինելու,— յեղրակացնում է պապս:

Այնուհետև, թե ինչպես են վերաբերվել մերոնք ինձ—յես վոչինչ չդիտեմ, վորովհետև վոչ-վոք վոչինչ չի պատմել այդ մասին:

Բայց յես իմ մանկությունը հիշում եմ այն որից, յերբ մի կատր չաքար ուտելու համար ծեծեցին ինձ: Այդ՝ ինձ համար նշանավոր դեպքից առաջ հիշում եմ, իհարկե, և ուրիշ բաներ, բայց դրանք շատ աննշան են ու ակնթարթային, ինչպես խանգարված յերազի մասեր, որ վոչնչով չեն կապվում իրար, կամ խավարի մեջ նշմարվող ցոլքեր, որ անկարող են վարատեղ խավարը:—Հիշում եմ ինձ, որինակ, սպիտակ չորեր հատած. հիշում եմ մի աղբյուր, վորից ջուրը թափվում է մերկ թրի պես չողչողալով, և մի սևապիսա կին, որ ձեռս բռնած տանում է ինձ այդ աղբյուրի մոտով: Սևապիսա կինը՝ տատս է. տանում է ինձ յեկեղեցի...

տատս —նույնպես աստվածավախ մի կին— դանդերի այդ ղողանջից յենթադրել է, որ յես հավանաբար յեկեղեցու սպասավոր եմ դառնալու, այլապես իմ ծնունդը չէր զուգադիպի յեկեղեցու դանգահարությանն... Բայց, ժոքը անց, դիմազծերս դննելով, դանել է, որ բերանս նման է ճկան բերանի, ուստի և մի համարձակ դուշակություն է արել, թե յես, յերևի, շատ պիտի ճամպրուկեմ, այն էլ ով գիտի, ծովերով...

—Ծովերո՞վ,— վախեցել է հորաքույրս:— Վո՛չ, ամա՛ն, կխեղդվի...

— Ո՞վ պիտի նրան վող տար, որ ճանապրդի,— ասել է պապս, տեր վողոմյան քաշելով:

— Հե՛րը,—հեղնել է վաճառականի հորեղբայրս, ակնարկելով հորս անվողությունը, որ հողագործ մարդ՝ վող չի գանի ինձ տալու:

Հայրս լռել է համեստությունից թե ամաչելուց, որ յերեխա յե ունեցել, կամ մտքում ուրախացել է դուցե, որ յես, իրոք տղա, վար ու ցանքին կարող եմ ողտակար լինել իրեն:

Ինչ վերաբերում է մորս, նա կողքի սենյակում մահճակալին պառկած, լսել է այս բոլորը և դայրացել հորս վրա, որ նա՝ հորեղբորս հեղնանքին չի պատասխանել արժանի խոսքերով, թե՝

—Մի վախի, իմ տղան ճանապարհածախսը քեզանից չի ուզի...

Կամ թե ասեր՝

— Ինքը կաշխատի, ինքը կճանապրդի...

Մինչ այդ՝ տատմերն ինձ վաթաթել և բարուրի



մեջ և տարել մուտքի դռան չեմքում կանգնել՝ յերեսը դեպի արևելք ու սկսել խաչակնքելով.

—Տեր ամենակալ ու լուս արեգնակ,
ամեք յերկրիս խաղաղություն,
թաղավորաց հաշտություն,
ցավին թանգություն,
հացին առատություն,
ես յերեխին էլ՝ յերկար արև...

Տատմերն աղոթում է չեմքին, մերոնք վիճում են նեբսը, իսկ յես այդ բոլորին անուշադիր՝ ճչում եմ անվերջ, և հանգստանում այն ժամանակ միայն, յերբ մայրս սոխինքը դնում է բերանս:

—Մոր ծիծ կարող է լինելու,— յեզրակացնում է պապս:

Այնուհետև, թե ինչպես են վերաբերվել մերոնք ինձ—յես վոչինչ չդիտեմ, վորովհետև վոչ-վոք վոչինչ չի պատմել այդ մասին:

Բայց յես իմ մանկությունը հիշում եմ այն որից, յերբ մի կատր չաքար ուտելու համար ծեծեցին ինձ: Այդ՝ ինձ համար նշանավոր դեպքից առաջ հիշում եմ, իհարկե, և ուրիշ բաներ, բայց դրանք շատ աննշան են ու ակնթարթային, ինչպես խանգարված յերազի մասեր, որ վոչնչով չեն կապվում իրար, կամ խավարի մեջ նշմարվող ցոլքեր, որ անկարող են վարատեղ խավարը:—Հիշում եմ ինձ, որինակ, սպիտակ չորեր հագած. հիշում եմ մի աղբյուր, վորից ջուրը թափվում է մեկ թրի պես չողչողալով, և մի սևադեսա կին, որ ձեռս բռնած տանում է ինձ այդ աղբյուրի մոտով: Սևադեսա կինը՝ տատս է. տանում է ինձ յեկեղեցի...

իսկ յեկեղեցում պարմացնում են ինձ վառված ջահերը և աերտերը, մանավանդ աերտերը, վոր չեմ իմանում տատի՞ յե նա, թե պապի—կի՞ն է, թե մարդ,—ու վորոշում եմ, վոր կնոջ, յերևի, պապի յե, կնոջ տատի... Հետո հիշում եմ մի ցանկապատ, վորի փչերը մագիլներին նման բռնել են շորերս. չեմ կարողանում տուն գնալ, ու լալիս եմ... Այնուհետև—կանդնած եմ մեր տան չեմքին. հանկարծ յերկինքը տրաքում է, մեր հրևանի բարդին բոցավառվում և յերկինք հասնող կրակե սյունի պես, և ճարճատյունով ընկնում: Բարդու հետ ընկնում եմ և յես...

Կան և ուրիշ կյանքեր, վորոնք մնում են դարձյալ առանձին—առանձին ու չեն կապվում իմ հետագա կյանքի հետ: Իսկ շաքարի նշանավոր դեպքով միանգամից սկսվում է իմ, յերեմ կարելի յե ասել, գիտակցական կյանքը:

Այս դեպքը հիշելուս պատճառն այն է դուցե, վոր դրա հետևանքով մեր տանը կատարվեցին ուրիշ նշանավոր դեպքեր, վոր այնքան հուզում ու վիշտ պատճառեցին ինձ:

Դժվար է ասել՝ քանի տարեկան եյի— չո՞րս, հինգ թե՞ վեց,— բայց լավ հիշում եմ ինչեր կատարվեցին մեր տանը այդ ծեծից հետո: Բայց նախ շաքարի մասին:

Յես—ահա—մի փոքրիկ-փոքրիկ տղա՝ կրծքակալ կապած (այդ մայրս և կապել, վոր կերակուր ու ջուր չթափեմ հագուստներիս) գնում եմ դեպի պահարանը, վորի մեջ մայրս, տատս ու հորեղբորս կինը գնում են հաց, պանիր, մածուն, մրգեր և ուրիշ-ուրիշ ուտելիքներ:

Պահարանը մեծ չէ. նա հագի սեղանից բարձր է ու սև. վրան դրված են յեղնիկի վառնելից չինած մոմակալներ և սև հատարակ չրջանակով մի հայելի, վորի մեջ (յերբ մայրս ցույց և տալիս) յերևում և ինձ նման մի փոքրի՛կ-փոքրի՛կ տղա:

Մոտենում եմ պահարանին, դուռը բանում եմ ու նայում ներս: Տանը մարդ չկա. մենակ եմ: Մայրս չդիտեմ ուր է գնացել, իսկ տատս ու հորեղբորս կինը՝ Սանամ պիրին բակում՝ ծառի տակ կար են անում: Այդ և պատճառը, վոր յես յերկար, հանդարտորեն նայում եմ պահարանի ներսը: Ինչքա՜ն բան կա.— հա՛ց, պանի՛ր, ձու. ափսեներ, բաժակներ, աղամաններ, մուրաբի վազեր—բոլորը չարված իրար կողքի, իրար վրա... Ահա և շաքարամանը՝ անկյունում... Զդիտեմ ինչու, շաքարամանը տեսնելով, մոտենում եմ պահարանը, դռները վրա յեմ քաշում, մեջը նայում: Այստ վերցնում եմ մի կտոր շաքար ու սկսում ուտել:

Չրճվալից հաճույքի մեջ եմ: Ցեվ թվում և, վոր այդպես կարող եմ նստել յերկա՛ր, յերկա՛ր:

Մեկ էլ պահարանի դուռը բացվում է հանկարծ: Ցերևում և հորեղբորս միրուքով դեմքը:

— Ա՛յ դու... եզ ի՞նչ ես անում...

Ու նրա չար կանաչ աչքերը չռվում են վրաս:

Տանը ամենից շատ յես նրա այդ աչքերից եմ վախենում: Հագի տեղանի մոտ էլ, յերբ այդ

աչքերի հայացքն ընկնում և վրաս—յես ուսերը թողնում եմ ու մորս կողմը նայում:

Բայց հիմա բերանս փակում եմ, որ չտեսնի ինչ եմ ուտում:

Սակայն նա ամեն ինչ հասկացել է արդեն:

— Ուրեմն դու եղբես մոնում ես եդտեղ չաքար ուտում,—ասում է նա ու, ձեռս ցավեցնելով, դուրս է քաշում ինձ պահարանից:

Ցես զարմանում եմ հորեղբորս խելքի վրա, թե չտեսած՝ ի՛նչպես իմացավ, որ չաքար եմ ուտում:

Նա բարկացած դուրս է բերում ինձ պահարանից, կանգնեցնում է սենյակի մեջտեղը և ասում.

— Ինքդ բա՛ց...

Ցես դողում եմ և, վախից, բերանս ավելի պինդ եմ սեղմում: Բայց հորեղբայրս բարկանում է իմ այդ վարմունքի վրա և հասա մատը կոխում է առամներիս արանքը:

Ցես վախից կծում եմ նրա մատը, բայց նա բանի տեղ չի դնում այդ. չաքարը մատներով հանում է բերանից ու, հանկարծ, յերեսիս դղրում եմ մի ծանր հարված... և յես բերանքսիվայր ընկնում եմ հատակին...

Դրանից հետո աչքերս բաց եմ անում մորս դրկում: Նա ձեռները չարժում է հուսահատ ու կրկնում.

— Թո՛ղ, թո՛ղ ձեռներդ, յերեսդ լմանամ..



Ցես նայում եմ ձեռներիս ու զարմանքից զգաստանում. ձեռներս ամբողջովին կարմրած են, արյունոտ:

— Թող լվանամ, որ արյունը կտրի,— չարունակում է մայրս, ջրամանը վերցնելով:—Թող արյունը լվանամ:

Այդ արյունը դալիս է իմ բերանից, և յերբ ձեռս տանում եմ դնելի չուբթերս, նկրկվում է կարմրվրով: Բայց այդ բանն այնքան անհանգստություն չի պատճառում ինձ, որքան մորս անհանդստությունը, ա՛յն, որ նա ահաբեկ ու արտասվալից ձայնով լվանում է ձեռներս ու յերեսս և աշխատում է բամբակով կտրել բերանիցս յեկող արյունը,—այդ անհանգստությունը վախեցնում է ինձ:

Ու սկսում եմ լաց լինել: Գիտակցում եմ, որ վատ բան և պատահել ինձ. այլապես մայրս այդպես չեր անհանդստանա:

Իմ լացի վրա՝ մայրս ավելի յէ հուզվում և, ձայնը բարձրացնելով, սկսում է անիծել:

— Տմոդի ձեռը կոտրվի,—ասում է նա և ձեռով չորս դլուխս, ճակատս, որ լաց կտրեմ, բայց նրա հպումից յես ցավ եմ զդում ճակատիս: Իսկ մայրս կարծում է, թե իր ձեռով հանդստացնում է ինձ:

— Ձեռը կոտրվի տմոդի,— կրկնում է նա, և ինձ կանֆետ ու մրգեր է խոստանում, որ լաց չլինեմ:

Վերջին անդամ, յերբ մայրս ասում է՝ «տմոդի

ձեռը կտրվի»—կողքի սենյակից նորից դուրս և գալիս հորեղբայրս, կանաչ աչքերը խոժոռում և ինձ ու մորս վրա և ասում և բարկացած.

— Հերի՛ք և դուրս մաս: Սատկիլ չի···

— Ա՛հ, ուրեմն գո՞ւ չես ուզել,—ասում և մայրս, նոր միայն հասկանալով, որ ինձ խրնել և հորեղբայրս:—Բեզ ի՞նչ եր արել, անիրավ, որ արհնվիկ ես արել քորփինս:

— Ի՞նչ,— նորից հորեղբայրս կանաչ աչքերը հառում և վրաս:—Հըմ· եղ քիչ ա դրան:

Ձեռս սպմում եմ մորս կրծքին:

— Ի՞նչ և արել, որ քիչ և,—տարակուսում և մայրս:

— Ի՞նչ և արել··· Մտել եր, չկաֆի մեջ նստել՝ չաքար եր ուտում: Ա՛յ ինչ և արել···

— Մի կտոր չաքարի համա՞ր,—ասում և մայրս,—ինձ ասեյիր··· ել ինչո՞ւ չես արյունլվա արել···

— Եղ դրան քիչ և,— չարունակում և հորեղբայրս:—Ասում եմ՝ «բերանդ բաց»—մատս կծում և···

Ու նա, բռունցքը վրաս թափ տալով, նորից մտնում և կողքի սենյակը:

Ձեռս դողում եմ: Հորեղբայրս՝ իր սև միրուքով ինձ թվում և ահռելի հսկա, որին ոչ-ոք չի կարող հաղթել, ու նա ինչ ուզենա կարող և անել:

Բայց իմ չաքար ուտելու պատմությունը սրանով չի վերջանում:



Հենց նույն յերեկո մեր տանն սկսվում և մի ահագին իրարանցում ու կռիվ: Բոլորը խոսում են հուզված ու մտահոգույց տնում ինձ:

Հայրս, որ մի նեհար, յերկար մարդ և՝ կոչտ բեխերով, սենյակի մեջտեղ կանգնած՝ բարկացած խոսում և հորեղբորս վրա, թե ինչո՞ւ և ծեծել ինձ: Իսկ պապս (տերտերի նման մեծ մի իրուքով մարդ) և տատս՝ (ով գլխաշոր կապած կին) պաշտպանում են հորեղբորս և ձեռնին չարունակ մեկնում են իմ կողմը:

— Անկարգ յերեխա յես.տեն բանի մեջ ընկնում և, տեղն ինչ խառնում···

— Բա երեխան վո՞նց կըլի,—ասում և հայրս:—Երեխան իրա երեխությունը կանի: Բա մի կտոր չաքարի համար ենպես կտան, որ տատմը պատչում թաղվի՞··· Են ի՞նչ բան ա···

Ձեռս տանում եմ դեպի չրթունքս, որ ցավում և հիմա: Բայց վոչ մի ձայն չեմ հանում: Անխոս նստել եմ մորս կողքին, բռնել եմ նրա վեչերից ու վախվուկ աչքերով նայում եմ խոսողներին: Այդ լինում և այն ժամանակ, յերբ խոսողները ձեռնին մեկնում են ինձ:

Սակայն, այդ վախը չունեմ հորից:

Մինչև այդ որը յես այն կարծիքի եյի, թե իմ պաշտպանը և բոլոր վտանգներից ինձ պահպանողը—մայրս և: Մի վոքը նաև տատս: Իսկ թե ինչի համար եր հայրս—յես այդ չեյի հասկանում: Ջեյի հասկանում առհասարակ նրա դոյության իմաստը, նրա դերը: Այդ պատճառով էլ կարծում եյի, որ նա

ավելորդ է... միայն խանգարում է ինձ, և ուրիշ վոչինչ... Որինակ— նա հաճախ բարկանում էր վրաս, վռազ խփում դեմքին ու չէր թողնում անեմ ա՛յն, ինչ ուզում էի: Խանգարում էր, ու թվում էր բոլորովին ավելորդ...

Բայց այդ որը, յերբ տանը խոսում են իմ չաքար ուտելու մասին, նա բոլորովին վոխվում է իմ աչքում: Ցեվ յես ղժում եմ, վոր նա՛ էլ, մորս նման իմ պաշտպանն է: Ու հետաքրքրված նայում եմ նրան և հետևում նրա խոսքերին ու ձեռների չարժումին:

Ա.յսօր նա շատ է դրգռված:

— Բա յես աշխատեմ, արուն-քրտինք թափեմ ամեն որ, մի կտոր չաքարն իմ յերեխին շատ համարեն,— ասում է հուզված ու դնում-դալիս սենյակում, յերկար-յերկար քայլեր անելով:

Իսկ պապս, ութերորդմյան ձեռնին, մոմաքին թիկն աված՝ պատասխանում է.

— Աշխատո՛ւմ... ինձ համար հո չես աշխատում: Աշխատո՛ւմ... ինչքան աշխատում, յերկու ենքան ուտում ես: Կնիկդ, չորս յերեխադ... Մենք չըլնենք, դու կարա՞ս ապրես: Ֆո յերեխեքը պահողը մե՛նք ենք: Դեռ խոսո՛ւմ ես:

Հայրս ավելի յե բարկանում.

— Ուրեմն դո՞ւք եք ինձ պահում, հա՞...

Ու խոսում է դարձյալ ձեռները չարժելով և դարձյալ դնում-դալիս և սենյակի մեջտեղով:

Ցես առաջին անգամն եմ ներկա լինում մեծերի կռվին, դուցե յեղել եմ ուրիշ անգամ էլ, բայց



այժմ լսում եմ կլանված. չեմ ուզում թողնել և վոչ մի բառ: Ֆանի վոր նրանք խոսում են իմ չաքար ուտելու մասին և մատնացույց են անում ինձ, թվում է, թե այն ամենը, ինչ ասում են—բոլորը վերաբերում է ինձ, միայն ինձ,—ու լարում եմ ինձ, աշխատում եմ հասկանալ նրանց խոսքերը, ըմբռնել դոնե նրանց իմաստը: Բայց այդ ինձ չի հաջողվում. չատ բան մնում է մութ ու անհասկանալի: Ի՞նչ բան է աշխատանքը և ինչո՞ւ յեն աշխատում, ո՛վ է ո՛ւմ պահում,— յես այդ չեմ հասկանում: Ցես դիտեմ միայն, վոր ինձ պահողն իմ մայրն է, հորս էլ նա յի հաց տալիս, պապիս էլ, տատիս էլ... Բոլորին... Մայրս ու հորեղբորս կինը՝ Սանամ-ղիզին. դրանք են, վոր կերակուր ու թեյ են յեփում, անկողին են քցում... Եվ ի՞նչու է պապս ասում, թե հորս պահողն ինքն է. յերբ լինքը վոչինչ չի անում. վոչ կերակուր, վոչ թեյ է յեփում, վոչ սեղան է սարքում, վոչ անկողին քցում, այլ միայն տերողորմյա է քաշում ու իր նման պապերի հետ ղրույց անում:

Խոսակցությունը չարունակվում է: Պապս դարձյալ ինչ-վոր խոսքեր է ասում հորս, տատս աշխատում է մեղմել պապիս տաժծները, իսկ հորեղբայրս պապիս մոտ, սեղանի կողքին նստած, աչքի տակով խեթ նայում է հորս և անձայն ծիծաղում նրա վրա: Այդ ծիծաղն ինձ դուր չի գալիս:

Հայրս ավելի յե տաքանում

— Ուրեմն յես է՛ս տանն աշխատանք չունե՞մ...

53
38



ՀԱՅԿ-ССР

— Մեծ բան ա՝ մի յերկու արա ա վաթում,— խոսում է հոր եղբայրս և նորից, ատամները բանալով, ծիծաղում անձայն:

Հայրս բարկացած դնում է դեպի հորեղբայրս:

— Ի՞նչ. խակ դու ի՞նչ ես անում: Սաղ որը պարապ-սարապ նստած ես խանութիդ դռանը...

— Քեզ ի՞նչ,— ասում է հորեղբայրս: Մի որվա մեջ յես քու մի տարուց շատ եմ աչխատում:

Ու վարից վեր նայում է հորս (ինձ թվում է, նայում է նրա չորերին) ու ավելացնում.—Սրան տեսնեք: Գյաղա՛...

Ջեմ հասկանում թե ինչո՛ւ, այս խոսքի վրա հայրս հարձակվում է հորեղբորս վրա և ուզում է խփել նրան բռունցքով, բայց տատս ու Սանամ պիղին կտրում են առաջը ու չեն թողնում, որ հայրս մոտենա նրան: Տատս վոչ միայն չի թողնում, այլ և բարկանում է սատիկ:

— Լա՛վ, հերի՛ք. ես տունը իրար գլխով մի տաք մի լակոտի համար...

Յեվ նա ձեռը մեկնում է իմ կողմն ու չանչում ինձ:

— Ո՛ւ, չաքարը բկումդ մնար...



## II

### Բաժանք

Այս կռվից հետո մեր տանք բաժանվում են: Հորս, մորս ու մեզ՝ յերեխաներիս թողնում են մեր սենյակում, ուր մենք քնում ենք, ճաշում, իսկ իրենք՝ պապս, տատս, հորեղբայրս ու նրա կինը՝ Սանամ-պիղին փոխադրվում են մյուս սենյակները, ուր լավ մահճակալներ կան և պատերին՝ հետաքրքիր, հետաքրքիր պատկերներ: Վոչ թե փոխադրվում, այլ ավելի շուտ՝ նրանք մնում են մեծ սենյակներում և այլևս չեն գալիս մեր սենյակը: Մեր ու այդ սենյակները միացնող դուռը, որ մշտ բաց էր լինում, փակվում է մշտապես:

Յեվ յես այդ վատ դռնից եմ իմանում, որ մենք բաժանվել ենք: Յերբ սովորականի պես, կոխվ ու չաքար մոտացած, ուզում եմ այդ դուռը բանալ՝ մյուս սենյակները գնալու— դուռը չի բացվում. հրում եմ, ծեծում— գարձյալ չի բացվում:

ավելորդ է... միայն խանգարում է ինձ, և ուրիշ վոչինչ... Որինակ— նա հաճախ բարկանում էր վրաս, վռազը խփում դեմքին ու չէր թողնում անեմ ա՛յն, ինչ ուզում էի: Խանգարում էր, ու թվում էր բոլորովին ավելորդ...

Բայց այդ որը, յերբ տանը խոսում են իմ չաքար ուտելու մասին, նա բոլորովին փոխվում է իմ աչքում: Ցեղ յես ղժում եմ, վոր նա՛ էլ, մորս նման իմ պաշտպանն է: Ու հետաքրքրված նայում եմ նրան և հետևում նրա խոսքերին ու ձեռների շարժումին:

Այսօր նա շատ է դրգռված:

— Բա յես աշխատեմ, արուն-քրտինք թափեմ ամեն որ, մի կտոր չաքարն իմ յերեխեն չատ համաբեն,— ասում է հուզված ու պնում-պալիս սենյակում, յերկար-յերկար քայլեր անելով:

Իսկ պապս, սերտղորմյան ձևերին, մոմիաքին թիկին տված՝ պատասխանում է.

— Աշխատո՞ւմ... ինձ համար հո չես աշխատում: Աշխատո՞ւմ... ինչքան աշխատում, յերկու ենքան ուտում եք: Կնիկդ, չորս յերեխաք... Մենք չըլենք, դու կարա՞ս ապրես: Քո յերեխեքը պահողը մե՛նք ենք: Դեռ խոսո՞ւմ ես:

Հայրս ավելի յե բարկանում.

— Ուրեմն դո՞ւք եք ինձ պահում, հա՞...

Ու խոսում է դարձյալ ձեռները չարժելով և դարձյալ պնում-պալիս և սենյակի մեջտեղով:

Ցես առաջին անգամն եմ ներկա լինում մեծերի կռվին, գուցե յեղել եմ ուրիշ անգամ էլ, բայց



այժմ լսում եմ կլանված. չեմ ուզում թողնել և վոչ մի բառ: Գանի վոր նրանք խոսում են իմ չաքար ուտելու մասին և մատնացույց են անում ինձ, թվում է, թե այն ամենը, վոնց ասում են—բոլորը վերաբերում է ինձ, միայն ինձ,—ու լարում եմ ինձ, աշխատում եմ հասկանալ նրանց խոսքերը, ըմբռնել դոնե նրանց իմաստը: Բայց այդ ինձ չի հաջողվում. չատ բան մնում է մութ ու անհասկանալի: Ի՞նչ բան է աշխատանքը և ինչո՞ւ յեն աշխատում, ո՛վ է ո՛ւմ պահում,— յես այդ չեմ հասկանում: Ցես գիտեմ միայն, վոր ինձ պահողն իմ մայրն է, հորս էլ նա յե հաց տալիս, պապիս էլ, տատիս էլ... Բոլորին... Մայրս ու հորեղբորս կինը՝ Սանամ-ղիպին. դրանք են, վոր կերակուր ու թեյ են յեփում, անկողին են քցում... Եվ ի՞նչու է պապս ասում, թե հորս պահողն ինքն է. յերբ ինքը վոչինչ չի անում. վոչ կերակուր, վոչ թեյ է յեփում, վոչ սեղան է սարքում, վոչ անկողին քցում, այլ միայն սերտղորմյա է քաշում ու իր նման պապերի հետ զրույց անում:

Խոսակցությունը չարունակվում է: Պապս դարձյալ ինչ-վոր խոսքեր է ասում հորս, տատս աշխատում է մեղմել պապիս ասածները, իսկ հորեղբայրս պապիս մոտ, սեղանի կողքին նստած, աչքն տակով խեթ նայում է հորս և անձայն ծիծաղում նրա վրա: Այդ ծիծաղն ինձ դուր չի գալիս:

Հայրս ավելի յե տաքանում

— Ուրեմն յես ե՛ս տանն աշխատանք չունե՞մ...

53
38

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ

— Մեծ բան ա՝ մի յերկու արա ա վարում,— խոսում է հոր եղբայրս և նորից, ատամները բանալով, ծիծաղում անճաշն:

Հայրս բարկացած գնում է դեպի հորեղբայրս.

— Ի՞նչ. խակ դու ի՞նչ ես անում: Սաղ որը պարապ-սարապ նստած ես խանութիդ դռանը...

— Ինչ ի՞նչ,— ասում է հորեղբայրս: Մի որվա մեջ յես քու մի տարուց շատ եմ աշխատում:

Ու վարից վեր նայում է հորս (ինձ թվում է, նայում է նրա չորերին) ու ավելացնում.—Սրան տեսնեք: Գյադա՛...

Չեմ հասկանում թե ինչո՛ւ, այս խոսքի վրա հայրս հարձակվում է հորեղբոր վրա և ուզում է խլել նրան բռունցքով, բայց տատս ու Սանամ պիղին կարում են առաջը ու չեն թողնում, որ հայրս մոտենա նրան: Տատս վոչ մեկին չի թողնում, այլ և բարկանում է սատիկ:

— Լա՛վ, հերի՛ք. ես տունը իրար գլխով մի տաք մի լակոտի համար...

Յեվ նա ձեռը մեկնում է իմ կողմն ու չանչում ինձ:

— Ո՛ւ, չաքարը բկումդ մնար...



## II

## Բաժանք

Այս կռվից հետո մերոնք բաժանվում են: Հորս, մորս ու մեզ՝ յերեխաներիս թողնում են մեր սենյակում, ուր մենք քնում ենք, ճաշում, իսկ իրենք՝ պապս, տատս, հորեղբայրս ու նրա կինը՝ Սանամ-պիղին փոխադրվում են մյուս սենյակները, ուր լավ մահճակալներ կան և պատերին՝ հետաքրքիր, հետաքրքիր պատկերներ: Վոչ թե փոխադրվում, այլ ավելի շուտ՝ նրանք մնում են մեծ սենյակներում և այլևս չեն գալիս մեր սենյակը: Մեր ու այդ սենյակները միացնող դուռը, վոր մշտապես բաց էր լինում, փակվում է մանզամից:

Յեվ յես այդ վախ դռնից եմ խմանում, վոր մենք բաժանվել ենք: Յերբ սովորականի պես, կխիլ ու չաքար մոտացած, ուզում եմ այդ դուռը բանալ՝ մյուս սենյակները գնալու— դուռը չի բացվում. հրում եմ, ծեծում— դարձյալ չի բացվում:

Այդ ժամանակ մայրս հասկացնում է ինձ, որ էլ չի բացվի, որովհետև բաժանվել ենք:

Ի՞նչ է նշանակում բաժանվել— չեմ հասկանում:

Բայց մայրս նորից ոգնությունն է հասնում ինձ. բացատրում է, որ ես էլ մյուսների պես պետք է ապրեմ մեծ սենյակներում, իսկ մենք, մեր սենյակում:

Ահա թե ինչ... Ցավ այդ որը կես առաջին անգամ հասկանում եմ, որ բաժանիլ նշանակում է մեջի՝ կերկու սենյակի արանքի դուռը փակել:

Բայց հետո նկատում եմ, որ բաժանիլն ունի ուրիշ առանձնահատկություններ էլ:—Դուռը փակելուց հետո՝ մերոնք էլ իրար մոտ չեն գնում. այսինքն՝ ավելի շատ պապս, տատս, հորեղբայրս ու նրա կինը՝ Սանամ-պիղին այլևս չեն գալիս մեր սենյակը թեյի, ճաշի, կամ ինչպես անում էին մինչ: Հիմա նրանք իրենց համար են թեյ խմում, մայրս՝ մեզ համար: Հենց դուռը փակելու որը Սանամ-պիղին չեկավ սամավարը տարավ մեր սենյակից ու էլ չբերեց... Հետո նրանք իրենց համար էին կեսրակուր խմում, մայրս՝ մեզ համար...

Մեր սենյակն առաջ ընդհանուր էր. այդտեղ առաջ հավաքվում էին բոլորը՝ թեյում, ճաշում և ապա գնում կողքի սենյակները զրուցելու, քնելու:

Այդ կողքի սենյակները յերեք էին, յերեքն էլ լավ զարդարված. պատերին գորգեր, հատակին գորգեր, լուսամուտներին՝ վարագույրներ: Կային լավ մահճակալներ, դրանցից մեկն ընկուզենու փայտից էր և տատս դա համարում էր տան ամենաթանկագին բանը, և մի առանձին խնամքով էր պրպում նրա փոշին: Իսկ նրա ճաղերն ու տախտակները այնպիսի քանդակներ ունեն — զարմանալի՛. ծաղիկներ են քանդակված, նուռ ու խնձոր, . իսկ ծայրերին՝ կլոր-կլոր գնդակներ, որ յեթե պատես՝ ուզես կդան, և հոլի նման կարելի կե խաղացնել:

Այդ մահճակալի վրա կեն քնում հորեղբայրս ու Սանամ-պիղին:

Իսկ այդ սենյակներում նրանք ընդունում են լավ հյուրերի, և այդտեղ էլ հաց ու ճաշ են տալիս նրանց: Պապս այդ սենյակները անվանում է «ուրախության ու տրամության օթախներ»: Այդտեղ են կատարվել թե՛ հարս, թե՛ հորեղբորս հարսանիքը և թե իմ կինունքը:

Այդ սենյակները միշտ մաքուր են ու հաճելի. և դրա համար այնտեղ մտնելն ինձ համար ուրախություն է. պատերին կախված են ամեն տեսակ՝ մեծ ու փոքր պատկերներ: Բայց ինձ ամենից շատ ուրախ է դալիս այն պատկերը, ուր բազմաթիվ մկներ՝ ուրյդ-ուրյդ լծված՝ սատկած կատվին սահնակով տանում են թաղելու... Յես առհասարակ մկներից վախենում եմ. այդ պատկերի մկներն էլ ակզբում ինձ սարսափ էին բերում, բայց չուտով տեսնելով, որ դրանք մյուս մկների նման, չեն չարժվում, այլ չարունակ մնում են միևնույն տեղն անշարժ— ես էլ չեմ վախենում: Համարձակ գնում-վանդնում եմ պատկերի առաջ ու կատվին «վիշտ» անում: Ինձ թվում է, որ նա քնել է, հանկարծ պիտի զարթնի ու մկներին հալածի, բռնի... Ո՛,

չեմն պարծենը... մինչեն ինչպես պիտի վախ-
չեյին: Թվում եր պատկերի վրա եվ մուկ չեր մնա-
րավորը պիտի Թափվեյին «ընկուզվ» մահճակալի
վրա... Իսկ յերեխա դա լիներ գիշերը—ի՞նչ պիտի
անեյին հորեղբայրս ու Սանամ-գիլին...

Բայց հիմար կատուն չեր պարծենում: Յեվ մայրս
վորքան եվ ասում եր «սատկած» է,—յես չեյի հա-
մոզվում: Կարծում եյի, վոր նա մի որ պիտի վեր
կենա սահնակից ու բոլոր մինչերին բռնի-խեղդի,
ինչպես անում եր մեր Շամո կատուն:

Մինչ դուռը փակելը, այսինքն՝ բաժանիլը ինձ՝
ամբողջովին միայն նրա համար, վոր այլևս չեմ
տեսնելու այդ պատկերը, վորովհետև մորս տա-
լով, այսուհետև պապիս տուն չպիտի գնայի:

— Նրանք դուռը փակել են, վոր մենք նրանց
մոտ չգնանք, հանկարո՞ւմ ես,—ասում է մայրս:

Յես, ճիշտն ասած, չեմ հասկանում (վորովհե-
տև դժվար եր հաշտվել այն մտքի հետ), բայց և
այնպես պլիով եմ անում, Թե հասկանում եմ:

Դուռը փակելուց հետո հորեղբայրս ու պապս
մի որ գալիս են մեր սենյակը՝ հագի մեծ սեղանը
տանելու:

Հայրս տանը չի: Ինչպես միշտ, այդ որն էլ
գնացել է աշխատանքի. նա կամ վար անելու յի
գնում, կամ տայլով վեյլին է կրում դաշտը: Իսկ
տանը մնում է միայն անձրև որերը և ջղայնանում
է ու հաճախ նկատողություն անում ինձ, վոր
անկարգ բաներ եմ անում ու յերբեմն խփում է



ինձ... դրա համար էլ յես ուրախ եմ լինում, վոր
նա տանը չի մնում:

Բայց այդ որը, յերբ պապս ու հորեղբայրը
գալիս են սեղանը տանելու,— այդ որը յես ուզում
եմ վոր հայրս տանը լիներ, վոր չթողներ մորս
հրեն դես ու դեն, և արգելեր սեղանը տանելու:

Ու ինձ Թվում եր, վոր յեթե նա տանը լիներ—
աշխեն բան այնպես չեր լինի, ինչպես յեղավ:

Յերբ պապս ու հորեղբայրս մոտենում են սե-
ղանին՝ վերցնելու, մայրս, վոր այդ ժամանակ
մոտքը յեղբորս որորոց է դնում, վեր է Թռչում
տեղից, յերեխան դնում է Թախտին ու մոտենում
է նրանց:

— Ձեզ մոտ քիչ բան կա՝ սեղա՞նն եյ էլ տա-
նում,— ասում է նա:—Գետնիկն հո չե՞նք ճաշելու:

— Իսկ մենք գետնին պիտի ճաշենք,— պա-
տասխանում է հորեղբայրս Թեթը նայելով:

— Ձեզ մոտ ծալովի սեղան կա,— չարունա-
կում է մայրս:

— Յեն՝ հիչ. են ղոնաղի սեղան ա,—նկատում
է պապս:

Ու վերցնում են, վոր տանեն. բայց մայրս
ընկնում է սեղանի վրա:

— Ձե՛մ Թողնվ:

— Հետո՛ւ քաշվիր,— ասում է պապս խիստ:

Մայրս ուղղվում է, բայց սեղանի վրայը չի
Թողնում: Համարյա կախ է ընկնում նրանից:

Այս անգամ հորեղբայրս հրում է նրան: Մայրս

յետ-յետ գնալով, դիպչում է թախտին ու մնում ժանգնած. և, չդիտեմ, ամաչելո՞ւց, թե վախից, էլ վոչինչ չի ասում. թույլ և տալիս անեն ինչ ուզում են:

Յեվ նրանք՝ պապս ու հորեղբայրս, յուրաքանչյուրը մի ծայրից բռնած, տանում են սեղանը:

Ինչ հետո հորեղբայրս գալիս և աթոռները տանելու: Վերցնում է յերկու հատ և ուզում է գնալ: Մայրս նորից և վորձում արդելել. այժմ ավելի համարձակ,, վորովհետև պապս չկա. ինձ այդպես է թվում: Նա բռնում և աթոռներից ու ձգում է դեպի իրեն:

— Սրանք ո՞ւր ես տանում: Բա մեզ աթոռ հարկավոր չի՞...

Բայց հորեղբայրս ուժեղ թափ է տալիս աթոռները. մայրս նորից յետ-յետ է գնում. ու մինչ ուզում է նորից առաջ գալ—հորեղբայրս տանում է աթոռները:

Հետո հերթով՝ տատս, Սանամ-պիպին, հորեղբայրս գալիս տանում են առաստաղից կախված լամպը, հարթուկը, ամաններ, ափսեներ, բաժակներ, սփռոց... Մայրս լռուր ամեն բանի ընդդիմանում է. նրան չեն լսում:

Մորս հաջողվում է պահել միայն պահարանը, այն պահարանը, վորի մեջ մտել եյի չաքար ուտելու և վորի վրա դրված եյին յեղնիկի վոտներից չինած մոմակալներն ու հայելին:

Յեվ այդ որը յես հասկանում եմ նաև, վոր բաժանիք նշանակում է վոչ միայն միջի դուռը վակել, այլ և ապրանքներ ու իրեր տանել տնից:



Ամուսամենայնիվ ինձ թվում եր, վոր միջի դուռը կբացվի մի որ, վոր դա ժամանակավոր բան է, վորովհետև յես այնպես եյի հավատացած, վոր մեր տանն ամեն բան պիտի մնա այնպես, ինչպես յեղել է. որինակ՝ տատս պիտի մնա միշտ տատ, պապս՝ պապ... հայրս, մայրս, հորեղբայրս ու Սանամ-պիպին ել պիտի մնան միշտ այդպես իրենց տեղում, իրենց գործի վրա, իսկ յես, մյուս յերեխաների—Վարդուշի, Արտաշի ու Վաչոյի հետ պիտի մնամ միշտ յերեխա:

Բայց այդպես չեր լինում կարծես:

Իմ աշխարհը քանդվում եր... Որեր անցնում եյին իրար յետևից և միջի դուռը չեր բացվում:

Սեղանը և մյուս իրերը տանելու յերեկոյան հայրս գալիս է տուն. մայրս լաց լինելով պատմում է նրան ամեն ինչ: Հայրն լսում է նրան անխոս ու դըլուխը թափ տալիս, լսում է՝ գլուխը չարժում, հետո մեկեն պոկվում է տեղից ու դուրս գնում:

Ու, վոքր անց, փակված դռան յետևից, այսինքն պապս սենյակներից լսվում է նրա բարկացած ձայնը, վոր ասում է ինչ-վոր: Մայրս մոտենում է դռներին ու ականջ գնում. ինձ թվում է՝ ուզում է իմանալ ինչ է ասում հայրս: Չնայած յերեխան՝ փոքրիկ Վաչոն լալիս է անհանգիստ, բայց մայրս այնպես է հետաքրքրված այն կողմի խոսակցությամբ, վոր ուշ չի դարձնում յերեխային. գլխով ու ձեռով հասկացնում է ինձ, վոր նրան որորեմ: Իսկ ինքը, գլուխը թեքած չարունակում է ականջ գնել:

Մեկ էլ՝ նա ճչում է հանկարծ ու ձեռով խփում դռան:

— Սո՛ւտ ա, չես նրան բան չեմ ասել: Սո՛ւտ ա...

Այն կողմից պատասխանում են մորս. մայրս պատասխանում է նրանց, ու սկսվում է ականջ խլացնող, անհասկանալի, ազմկալի մի խոսակցություն. այնտեղից, դուռը ծեծելով, պատասխանում են մորս, այս կողմից մայրս է դուռը ծեծում ու պատասխանում:

Ազմկից յերեխան ավելի յի անհանգստանում կարծես ու սկսում է բարձրաձայն լաց լինել:

Ձես չեմ հասկանում ինչո՛ւ համար են ազմկում ու դռներ ծեծում, բայց յերբակացնում եմ, որ բաժանիք նշանակում է նաև ազմկել ու դռներ ծեծել...:

Այնուհետև այդպիսի ազմկալի պրույցներ հաճախ են պատահում ծնողներիս ու մերոնց միջև՝ թե բակում, թե դռների յետևից: Ձեվ յես, վերջապես, մի փոքր հասկանում եմ բանի էությունը:

Հայրս ու մայրս ասում են, թե քանի որ բաժանվել ենք—մեր բաժինը ավելք՝ կալդին բաժանվենք:

Պապս չի համաձայնում:

Մենք ունենք չատ տավար— յեզներ, կովեր, հորթեր, ձի, տան իրեր, դորդեր և չատ ուրիշ բաներ:

Այդ բոլորից պապս հորս տալիս է միայն ա՛յն մի լուծ յեզը ու ա՛յն սայլը, որ Հայրս քաշեցնում է: Իսկ «տան բաներից»— վոչինչ:



Հայրս խնդրում, պահանջում է «հալալ» բաժին: Պապս դլուխն որորում է:

— Դու ջահել ես,—ասում է,—յես ծեր եմ. եղ կովերը, բաները դուռով ինձ պահեն ու ծեր մորդ:

—Բա իմ յերեխեքը ինչո՞վ ապրեն,— չարունակում է հայրս:

Պապս զարմանում է.

— Ե՛, քու յերեխաներին էլ յես պահե՞մ...

— Ձես իմ աշխատածից եմ ուզում,—բացատրում է հայրս:

— Ինչքա՛ն աշխատել ես, յերկու հենքա՛ն կերել ես,— պատասխանում է պապս:

Ու վիճում են, թե ո՛վ է չատ աշխատել, ո՛վ է չատ կերել: Վեճը կամաց-կամաց փոխվում է կռվի, կռիվը՝ ազմուկի, և յես էլ վոչինչ չեմ հասկանում, թե ի՛նչ են ասում և ի՛նչ են ուզում իրարից:

Ձերը հիմա հեռու-հեռվից յես եմ նայում այդ օրերին— բաժանքի կռիվները համարյա աքղում են այն բոլորը, ինչ լավ եր ու զեղեցիկ իմ վաղ մանկության մեջ.— մեր խաղերը ծառերի տակ, ձյունեյի վրա, մեծերի հեքյաթները դարնան յերեկոներին կամ ձմեռը՝ վառարանի մոտ, թավուտական կույր աչուղների յերդն ու նվագը թավ վրա, վոր այնքան մարդ, կին, յերեխա եկին հավաքում իրենց չուրջը, և այնպես քունդ եկին հանում իմ փոքրիկ սիրտը:

Բայց մերոնք գարձյալ վիճում են. ամեն մի իր, ամեն մի գործիք առաջ է բերում նոր վեճ ու նոր կռիվ. խոսում են պղինձների մասին, անիվների մասին, կացնի մասին:.. Ամեն մեկն ուզում է, վոր այդ

գանները լրենը լինի... Շուտով սկսում են խոսել և հողի մասին:

Հայրս ինչ-որ հող և ուզում վարել— պապս չի թողնում:

— Եղ յես պիտի վարել տամ,— ասում է նա հանգարտ, աերոպորմյան քաշելով,—դու դնա ճամբի հողը վարի:

— Այս հողը ձեզ, խամբ՝ ինձ,— տաքանում է հայրս:

Պապս սիրում է խոսել հանգարտ, ընդհատումներով, մտածելով և յերբեմն էլի պատասխանում, յերբ հայրս տաքանում է: Յերեսը թեքում է մի կողմ ու աերոպորմյան քաշում հանգիստ:

Այս անգամ էլ, յերբ հայրս ձայնը բարձրացնում է—նա լռում է. նայում դեռնին ու աերոպորմյայի սև, ճիճաղատուղի չամի հատիկները չկոցնում իրար յետևից:

Հայրս կանգնում է մի վոտքը. ապատում է, վոր պապս մի բան ասի. բայց, յերկար պատասխան չըստանալով, հեռանում է դայրացած:

Յերկու որ հետո նրանք նորից են վիճում:

Հայրս թողքում է, թե ինչո՛ւ իր վարած հողը —պապս ցանել է տվել իրենց համար:

— Շատ լավ եմ արել,—ասում է պապս հանդիստ.— յես քեզ ասի՝ եղ հողը չվարես:

— Ինչո՞ւ չվարեմ,— բարկանում է հայրս:

Պապս յերեսը թեքում է ու աերոպորմյայի հատիկները չկոցնում:



Մի ուրիշ անգամ մայրս արցունքը աչքերին դալիս է ուն ու բարկացած դնում պապին մոտ:

— Բա ասենց բան կանե՞ն, այ ապի,—ասում է նա, վեր քաշած դոդնոցը պապիս առաջ բանալով:

Մորս դոդնոցի մեջ յես տեսնում եմ նոր ծլած լոբի և սոխի ու պամիդորի սածիլները՝ արևի տակ թուլացած, կուչ յեկած:

— Գնացել եք ցանած տեղը քանդել, սերմ ու սածիլ եսպես չաղ տվել,— չարունակում է մայրս:

Պապս լսում է, լռում մի առ ժամանակ, ապա դլուխը բարձրացնում ծանրաբոհ:

— Գնա բանի՛դ,—ասում է նա:—Շա՛տ եվ չաղ եմ արել: Քեզ ո՞վ եր իրավունք տվել, վոր դնաս տեղ վերցնես ու բան ցանես:

— Բա, այ ապի...

— Գնա՛ բանիդ...

Պապս յերեսը թեքում է մի կողմ, ու տերոպորմյայի սև հատիկները չկոում են իրար յետևից:

Հայրս տուն է գալիս, տեսնում է հանած սերմերը և վրդովվում սաստիկ:

— Յես հիմա ցո՛ւյց կտամ,— ասում է նա ու դուրս դնում արագ:

Քիչ հետո նա վերադառնում է մեր հարևան ծերունիների հետ, նստեցնում նրանց ծաղիկ, վիճակարի ծաղկեփնջի նմանող սալորենու տակ՝ տախտի վրա և սերմերն ու սածիլները փռում նրանց առաջ:

— Տեսեք, այ ախպեր. եսենց բան կըլնի՞,— ասում է հայրս ու ձեռները խաչում կրծքին:

Ծերունիները, վորոնց թվերին էլ ճանաչում

եմ,— Պողոսանց Վարդան ամին, իմ ընկեր Աչոսի պապը, պառավ Զանոյի մարդը և զարմին Դավիթը— չորսը միասին նայում են սածիլներին ու չորսը միասին գլուխները որորում:

— Ամոթ բան ա,— ասում են նրանք միասին:

— Բա հիմա ես ի՞նչ անեմ,— ասում և հայրս վրդով:

— Դու վոչինչ էլ մի անի,— ասում են ծերունիները հանդիսա,— մարդ գարկի՝ հորդ կանչի:

Այդ որը հանդիսավոր որ և ինձ համար: Այդ ծերունիները, վոր այնպես վեհ կյին թվում ինձ ու պատկառելի, առաջին անգամն են լինում մեր տանը՝ միասին: Ցեվ ես, նրանց չուրջը պտտվելով ապահ հետաքրքրությամբ նայում եմ նրանց գեմքերին, վոր կնճիռներից ճաքճքել են կարծես, նրանց ծանր ու վտախանելին, վորոնց տակ կռացել են նրանց ուսկանջները, և ճերմակ միրուքներին, վոր ծածկում են կրծքերը, ինձ թվում էր՝ չորսն էլ նման են իրար: Ցեվ ի՛նչ ուշեն կարող են անել: Ցեվ ամեն մարդ նրբանց խոսքը կլսի. կարող են հորս պաշտպանել և պապիս հանդիմանել:

Մինչև պապիս գալը՝ նրանք նստում են լուռ իրենց ձեռնափայտերին հենած, իսկ յերբ պապս գալիս ե— նրանք անխոս տեղ են տալիս նրան թախտի վրա ու նորից կռում:

Պապս նստում է ծերունիների ճեմին և սպասում, թե ի՛նչ են ասելու իրենից մեծ այդ ծերունիները:



Իսկ յես հետաքրքիր նայում եմ այդ ծեր մարդկանց և նույնպես սպասում, թե ինչ են ասելու:

Վերջապես Վարդան ամին չերսւթը հանում և պոռուց, ծխախոտ և լցնում ու կռկորդը մաքրում:

— Մանաս,— ասում է նա պապիս,— ես ձեր գաժանքը վո՞նց պիտի ըլի: Ինչո՞ւ Ներսեսին (հորս) բաժին չես տալիս: Քանի աչքդ բաց ա, ունեցածդ բաժին արա վորդկերանցդ մեջ ու հանգիստ ապրի: Մեկին ավար մի անի, մյուսին՝ խավար: Լա՛վ չի...

Պապս լսում է և տերտղորմյան քաչում հանգարտ:

— Հը, ի՞նչ կասես, Մանաս,— խոսում է իմ խաղընկեր Աչոսի պապը: — Ներսեսը յերեխատեր ա, իրա բաժինը տուր՝ Թող գնա:

— Տունը՛, մի լուծ յեզը՛ իրա ձեռին ա,—ասում է պապս:

— Եղ չեզա՛վ,— մեջամտում է զարմին Դավիթը,— չեզա՛վ: Մի գոմ տավարից մի լուծ յեզը՞ —բիչ ա... Դու պետք ա հողիցը հող տաս, տնիցը— տուն, տան միջիցը՝ տան մեջ...

Խոսում են և մյուսները. ուզում են համոզել պապիս, վոր ունեցածը հավասար բաժանի յերկու վորդու մեջև, և որինակ են բերում թե ինչպես են անում ուրիշները և թե ինչպես կարելի յե անել:

— Ներսեսին տուր մի յերկու կով, մի յերկու խալիչա, բոստանի կեսը,— ասում է Վարդան ամին:

Մյուս ծերունիները թվում են ուրիչ բաներ, վոր անհրաժեշտ է տալ հորս:

Պապս անխոս լսում է նրանց ու տերտորմյան քաշում հանդիստ:

Յեվ յերբ նրանք խոսքով ամեն ինչ բաժանում են, վերջացնում, պապս պլուխը բարձրացնում է, նայում ծերունիներին և վոտքի կանգնում:

— Գնացեք եղ բաժանքը ձե՛ղ համար արեք,— ասում է նա:—Յես բաժանելու՝ բան չունեմ...

Ու արագ գնում է դեպի դուռը:

Բաժանարար ծերունիներն անխոս նայում են իրար և պլուխնին որդրում դարձյալ: Ինչ հետո մեկը հարցնում է, թե ինչո՛ւ յենք բաժանվել, և հայրս սկսում է իմ կերած մի կտոր չաքարից...

Այդպես է անում և մայրս: Յերբ հարևանուհիները պրուչյի մեջ հարցնում են նրան, թե ինչ պատահեց, վոր հանկարծ բաժանվեցինք, մայրս միշտ սկսում է չաքարից:

— Ես դեռնը մատը յերե չիափը չմաներ՝ չաքարը ուտեր, ես բանը չեր լլի...

Իսկ տատս, ինձ տեսնելիս, միշտ չանչում է բարկացած.

— Գրողը քեզ տանի, են մի կտոր չաքարը չուտելիր եղի... Մեր խաղաղ տունն իրար գլխավ տըվիր...

Յեվ յես դղում եմ, վոր յերե, իսկապես, յես չաքար չուտեի, մեր տանը, յերևի վոչինչ չեր պատահի...



## III

## ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ

Իմ ամենամեծ հաճույքը սայլ նստելն է:

Հայրս ամեն որ, մեր հարևանների հետ, սայլով բեռներ է կրում կայարանից առևտրականների համար կամ բեռներ է տանում կայարան: Առավոտը յես քընած եմ լինում, յերբ նա սայլը լծում է ու գնում: Բայց կեսորին, յերբ գալիս է յեղներին խոտ տալիս և ինքն էլ հաց ուտում,— յես սայլի մոտից չեմ հեռանում: Սպասում եմ լծելուն: Յեվ յերբ հայրս սկսում է լծել, յես բարձրանում— նստում եմ սայլը և գնում մինչև մեր վողոցի անկյունը... Դա իմ ամենասիրած հաճույքն է: Սայլի վրա թպրմած՝ վերևից եմ նայում վողոցում պատահող յերեխաներին. նրանք վոտով են գնում, յես՝ սայլով. նրանք հո սայլ չունե՞ն... Իմ մեջ պարծենում և յերգելու, աղմկելու տրամադրություն. և յես յերգում եմ, աղմկում, վոր մարդիկ, յերեխաներ ուշադրություն դարձնեն վրաս. տեսնեն ինչպես եմ սայլ նստել:

Յետո ես հասնում եմ իմ նպատակին. ցերեկոյանները լինած սայլի վրա տեսնելով վազում են վոր իրենք էլ նստեն. բայց ես չեմ թողնում: Ո՛ւմ սայլին կնըստեն... Նրանք մոտենում են— ես քշում եմ վոտով, ճիպոտով... ու այդ բանը հպարտությամբ է լցնում սիրտս: Ցերեկն ո՛ւմ ուզում թողնում եմ, ո՛ւմ չեմ ուզում— չեմ թողնում... Ու այս անում եմ հատարճակ. քանի վոր հայրս հետս և—վստահ եմ, վոր վոչ մի տղա չի համարճակվի լինած բան ասել... Հայրս լինած համար ամենաուժեղ մարդն է աշխարհում. ո՛վ կարող է նրան հաղթել. նա միայն պապիս չի կարողանում հաղթել, թե չե ամեն բան անում է.— մեծ նակ յորենով լիքը պարկը վերցնում է՝ տանում ներս. ցեղներին յենթարկում և իրեն. մի անգամ վիսիչող ճիու թոկը բռնեց և ճլին կանգնեց: Ձե, իմ հայրը չա՞տ ուժեղ է. սայլի անիվը մենակ հանում է, սոնուն մատուճի քսում ու նորից տեղը դնում... Հորս մոտ և հորս հետ ես լինած ղեռում եմ մկանգամային ապահով թե՛ չներից, թե՛ տավարից և թե՛ ցերեկոյաններից... Ահա թե ինչու հպարտ եմ և վերևից եմ նայում բոլորին:

Բայց իմ հաճույքը յերկար չի տևում:

Հասնում ենք վոտոգի անկյունը թե չե, հայրս սայլը կանգնեցնում է:

— Դե, իջի՛ր:

Մեծ ախտոսանքով իջնում եմ սայլից ու կանգնում տխուր:

Այդ ժամանակ հայրս կարպադրում է, վոր պնամ տուն, թե չե չունը կգա՝ կըկծի կամ կով կգա՝ հարու



պատ: Յետ վորովհետև ես չնից ու հարու տվող կովից վախենում եմ ատոպիկ—վազում եմ տուն, վոր այնքան էլ հեռու չի փողոցի անկյունից: Անցնում եմ մի չորս-հինգ տուն-նորից մեր տան առաջ եմ:

Իսկ յերեկոյան, մայրամուտին, յերբ արևը թաղնվում և անտառի յետևը՝ ես նորից դնում եմ փողոցի անկյունը, անհանգիստ սպասում եմ հորս, վոր սայլ նստեմ և այնպես՝ սայլին բազմած վերադառնամ տուն...

Յետ ահա մի որ էլ, յերբ ես խաղում եմ ընկերներս հետ, տեսնում եմ մեր սայլը գալիս է: Ուրախ-ուրախ վազում եմ ընդառաջ, էլ չմտածելով, վոր ժամանակից շուտ է գալիս: Յերբ մոտենում եմ— նոր միայն նկատում եմ, վոր քշողը հայրս չի, այլ մեր հարևանի տղա Ալեքը:

Այդ լինած տարօրինակ է թվում. բայց և այնպես առաջ եմ վազում և հենց սայլի մոտ մնում եմ քարացած... հայրս՝ չորերը ցեմենտոտ՝ մեկնվել է ցեմենտից սպիտակած սայլի վրա, իսկ մեր Փլլոս քեռու տղա Մաթոսը նրա գլուխը գրել է իր գոգին ու քոնել ձեռներով:

Հորս այդ դիրքից լինչ-վոր վատ, շատ վատ բան նախազգալով՝ իսկույն յետ եմ դառնում ու վազում դեպի տուն:

Մայրս, գուլպան ձեռին, դրուցում է մեր հարևանուհի՝ Թերեզա մորքուրի հետ:

— Հայրվիկին բերում են,— ասում եմ կերկեր:

—Վո՞նց թե,— վեր և թռչում մայրս զարմացած:— Ինչե՞ր ես դուրս տալիս:

Ցես ել խոսք չեմ դանում ասելու. միայն ձեռս մեկնում եմ դեպի փողոց, վորով մեր ցեմենտից փոշոտված սայլը դանդաղ դալիս է դեպի տուն:

Մայրս տեսնելով սայլը և հորս նրա մեջ մեկնված՝ մի ճիչ է արձակում ու ընկնում է դետին:

Մենք՝ յես ու քույրս՝ մորս ձայնից ավելի յենք վախենում, քան հորս դիրքից, ու սկսում ենք լաց լինել:

— Վոչի՛նչ, վոչի՛նչ, բան չկա,—ասում է սայլը քշող Ալեքը:

Նույնն ասում է և մեր քեռու տղա Մաթոսը:

Այդ ժամանակ մայրս վեր է կենում հոգած տեղից ու մոտենում սայլին:

Մինչ այդ սայլը կանգնում է, սայլապանները՝ Ալեքն ու Մաթոսը հորս՝ թևերից բռնած՝ իջեցնում են ցած, ապա վոտքի կանգնեցնելով, թևերն ընկած տանում են ներս:

Ա՛հ, ուրեմն մեռած չեր:

Ցես թեթևացած չունչ եմ քաշում, բայց ինձ պաշարում է մի նոր անհանգստություն.— ի՞նչ է պատահել արդյոք, վոր հորս աչքերը փակ են. նա վնասո՞ւ յե դլուխը վախել թույլ և ի՞նչու յե ամեն մի քայլն անելիս՝ անքում:

Մորս սուր ցավը նույնպես անցնում է. նա ել չի ճչում, այլ, ծնկներին խփելով, ուզում է իմանալ ի՛նչ է պատահել:

—Թող, թող տանենք տուն՝ հետո,— ասում են սայլապանները:

Ցել նրանք վոչինչ չեն ասում, մինչև հորս չեն տանում ներս: Իսկ ներս տանելով՝ նրան զգուշությամբ պառկեցնում են թախտի վրա՝ յերեսը դեպի առաստաղը:

Այստեղ միայն նկատում եմ, վոր հորս աչքերը փոշոտ են, իսկ կուրծքն ու գլխի մազերը փոշեթաթախ:

Մայրս ել չի համբերում.

—Դե, տեսեք տենամ ի՞նչ է պատահել,— ասում է նա արցունքը սրբելով:

Ալեքի ու Մաթոսի պատմածից յես այնքան եմ ըմբռնում, վոր հայրս վիճել է ցեմենտի ուսս կապալառուի հետ, թե ինչո՛ւ խոստացած վարձը չի տալիս, և կապալառուն բարկացած՝ մի բուռ ցեմենտ է վերցրել ու չպրտել հորս յերեսին: Ցեմենտը թափվել է հորս բերանն ու աչքերը... Հայրս կամեցել է հարձակվել կապալառուի վրա, բայց ել աչքերը չեն բացվել... Սայլապանները հավաքվել են անմիջապես յերեսը սրբել, բերանը ջրով վողողել, բայց աչքերը չեն կարողացել մաքրել: Հայրս ինքն ել դժվարացել է աչքերը բանալ, վորովհետև ցեմենտից սաստիկ կսկիծ է զգացել... Այդ տեսնելով՝ սայլապաններն ուզում են կապալառուին բռնել ծեծել, բայց նա՝ թողնում է վախչում:

— Եսպես յեղավ բանը:— Հիմա պետք թե՛իչկ կանչել,—ասում են սայլապաններն ու դուրս գնում:

Շուտով մեր տունը լցվում է հարևաններով: Գին, մարդ, յերեխա զալիս են հորս տեսնելու: Հեռվից նայում են նրա՝ թախտին պարզված մարմա-

նին, առաստաղին ուղղած փակ աչքերին,—նայում են, հառաչում, վշվշում ու կանղնում մի կողմ:

Ներանց վշվշոցն ավելի յեր հուզում մորս, և նա լալիս է: Իսկ հայրս յերբեմն-յերբեմն աչքերը խուփ հայհոյում է կապալառուին:

— Պետք ա գանգատ տալ,—ասում է մեկը:— Տանուտերին կամ միրավոյ սուդը:

— Թո՛ղեք, ամա՛ն, ասկից ուրիշ բան կհանեն: Ելի ձեզ մեղավոր դուրս կըներեն. վոդրադչին պըրխասավին մոտիկ ա... յերկուսն էլ ռուս—չաս կզգեն...

Այդ ռուս փոդրադչուն բոլորը ճանաչում են, վորովհետև նա մեր թաղումն է ասլրում, հենց մեր վոզոցի վրա. մեր դամի այն կողմը, այսինքը վոզոցի հակառակ կողմը: Ապրում է նա պատշգամոմ մի տան մեջ: Ցերկու աղջիկ ունի, մի տղա:

Յես նուչնպես ճանաչում եմ թե՛ իրեն, թե՛ յերեխաներին: Աղջիկներն ինձնից մեծ են, իսկ տղան փոքր. բոլորն էլ լավ չորեր ու կոշիկներ ունեն. հետո՝ խաղի ոդեր ու դնդակ. դնդակը մե՛ծ-մեծ է—մարդու գլխի չափ:

Իմանալով այդ փոդրադչին և հորս աչքերը ցեմենա լցրել, կամաց սկսում են անիծել նրան.

— Շլինքը վորը պրծնի...

— Աբևի լուսին կարոտ մնա:

Փոքր անց գալիս են տատս ու պապս: Բաժանքի որմանից նրանք մեր տուն չեն յեկել, բայց այսոր գալիս են: Հավաքվածները յես-յես են դնում ու ճամբա տալիս նրանց:



Տատս էլ, մորս նման ծնկներին խփում ու րնկնում է հորս վրա:

Ու նա էլ սկսում է անիծել անողին, այսինքն ռուս փոդրադչուն: Հետո մաքուր թաշկինակ է ուզում և սկսում է հորս աչքերը մաքրել. ավելի չուտ ուզում է մաքրել. բայց դրանից հորս աչքերն ավելի յեն ցավում: Հայրս չի կարողանում վոչ կարգին խփել աչքերը, վոչ էլ կարգին բանալ. նրանք մնացել են մի տեսակ կիսախուփ դրության մեջ, վորովհետև նրա կոպերի ու բիբերի արանքին ցեմենա կա և այդ ցեմենտը ցավ, կսկիծ է պատճառում: Այդ ժամանակ տատս թաշկինակը դնում է մի կողմ և, լեզուն հանելով, կռանում է հորս յերեսին: Յես հետաքրքրությամբ նայում եմ, թե ինչ է անելու տատս, և տեսնում եմ, վոր նա, արցունքներն աչքերին, լիզում է հորս աչքերի վրա:

— Ցավո՞ւմ ա, Ներսես ջան,—հարցնում է տատս:

— Կսկծում ա,—ասում է հայրս սարսռալով, և նրա աչքերի թերթերոնքները խաղում են անբնական ձևով:

Հորս այդ ցավը տեսնելով՝ դղում եմ, թե ինչպես սիրտս կամաց-կամաց լցվում է տեսլությամբ դեպի ռուս փոդրադչին. նա ինձ թվում է աշխարհի ամենաչար մարդը, մեր ընտանիքի դժբախտության պատճառը, մեր թշնամին: Ջղում եմ, թե ինչպես տատս եմ և նրա յերեխաներին, վոր ամեն որ գալիս խաղում են մեր վոզոցում...

Ամբողջ ամբողջությամբ զգում եմ միաժամանակ, որ հայրս լսկապես այն ամենաորը, անհատը մարդը չի, ինչ ներկայում եղի: Ուրեմն նա չի կարողացել հաղթել ոուս փոդրադչուն... Ջե՞ որ հայրս նրանից և բարձրահասակ է և ուժեղ: Այդ ինչպես է պատահել... Ցես ցույց կտամ այդ ոուս փոդրադչուն:

Ու քանի դնում առելությունս սաստկանում է.— Ուրեմն հայրս պիտի պառկի, իսկ նա ապառման դա՞... Ուրեմն մենք՝ մայրս ու ներեխանները ամուր պիտի նստենք հորս անկողնու մոտ, իսկ նրա լավ հագնված ներեխանները՝ ողբը ու դնդակները խաղա՞ն... Վոչ, պետք է այնպես բան անել, որ նրանք էլ տխրեն, որ փոդրադչին էլ վնասվի, նրա կինն էլ... Բոլորը...

Ու հետզհետե ինձ համակում է մի զգացում, որին, ինչպես հետո յեմ իմանում, մենքերը «վրեժխնդրություն» կամ «վրեժ առնել» են ասում: Ցեվ որքան այդ զգացումն ավելի յե ուժեղանում մեջս: Ցերբ առնում եմ հորս՝ աչքերը փակ պառկած, իսկ մորս նրան կերակուր ուտեցնելիս—սիրտս բռնկում է զայրույթից. ուզում եմ դուրս վազել և ոուս փոդրադչուն, նրա ներեխաներին քարով խփել կամ մի ծանր վնաս հասցնել:

Ու կամաց-կամաց այդ ցանկությունը մեջս պառնում է վորոշում. միայն հարմար առիթ եմ վորոնում՝ այդ վնասը նրանց հասցնելու. ինձ համար մեկնուն է, թե ո՛վ կլինի վնասվողը—



ինքը փոդրադչի՞ն, թե նրա ներեխաները, միայն թե սիրտս հովանա:

Բայց զգում եմ միաժամանակ, որ լավ կլինի այդ վնասը հասցնեմ հենց իրեն—փոդրադչուն:

Ցեվ ահա մի առավոտ յես, վեչա քար լցրած, մտնում եմ մեր հարևանի պարտեզը, որ ընկած և վողոցի կողքին: Ցես պիտեմ յերբ և անցնում փոդրադչին վողոցով: Մոտավորապես պիտեմ նրա զորձի գնալու և վերադառնալու պահերը: Առավոտը, յերբ թեյից հետո, խաղում ենք—նա դնում և անից, իսկ յերբ ճաշում ենք վերջացնում—պալիս և ձեռնափայտը ձեռին: Նրա գլխին սպիտակ գլխարկ կա, հագին մոխրագույն պիջակ: Մի իրուքը նման և կացնի՝ հիմքը նեղ, ծայրը լայն: Ցերբ քայլում է՝ ձեռնափայտը միշտ թխկացնում և գետնին: Հորիցս կաթճ և ու գեր, և քայլում և միշտ գլուխը կոացրած, կարծես միտք և անում չարուշնակ:

Մոնելով պարտեզ՝ պահվում եմ նրա մի անկյունում, ուր մոռի խիտ թփեր կան ու հանելիներ: Այդ տեղը թե՛ հարմար և և թե՛ ապահով: Հարմար և նրանով, որ վողոցով անցնողը յերեվում և. ուրեմն փոդրադչուն կարող եմ տեսնել անցնելիս: Իսկ ապահով և նրանով, որ վոչ-վոք ինձ չի տեսնի. ուրեմն վորքան էլ քարեր նետեմ ոուս փոդրադչու վրա, նա ինձ չի նկատի: Տաս աչք էլ ունենա,—մտածում եմ,—չի տեսնի:

Ու ահա սպասում եմ: Անցնում և բավական

Ժամանակ. (դուցե մի օր, դուցե յերկու ժամ, չգիտեմ—յես ժամի մասին պատկեր չունեմ այդ ոլորտին). փողոցով անցնում են ամեն տեսակ մարդիկ, անցնում են սայլերը, յերկրեմն ձիավորները, բայց փողոցային չկա: Յանկապատը շատ բարձր չի, և բոլոր անցորդները յերևում են ուսերից վեր: Մտքիս նա անցել է—չեմ նկատել, թե՛ անցել—դնացել է մինչ այստեղ պահվելս:

Ու անհանգստությունից ինձ թվում է ժամանակն անցել և արդեն... ամեն մի վոտնաձայնից վեր եմ թռչում, գլուխս բարձրացնում թմբերի միջից ու նայում: Նա չկա, դարձյալ չկա...

Կամաց-կամաց հուսահատվում եմ, վոր եկ չի գալու, և դրա հետ մի ասլն թուլանում է քարեր նետելու սրամտությունս: Ձգնա՞մ արդյոք առնեն, թե՛ սպասեմ մի փոքր ել...

Այս մտածումների մեջ եմ, մեկ ել ահա խաղաղ փողոցում ձեռնափայտի թխկոց ու, քիչ հետո, յերևում է փողրադչու սպիտակ գլխարկը:

Սիրտս սկսում է դողալ կրծքիս տակ, վոտներս նույնպես դողում են, խակ ձեռներս լարվում: Ձգում եմ—վճռական րոպեն մոտենում է. պետք է ցույց տամ քաջություն, պետք է այնպես անեմ, վոր նա ել պատկի հորս նման, կամ մի ծանր վերք ստանա...

Փեչիցս մի քար եմ վերցնում ու սպասում...

Ահա գալիս է նա՝ վայրը թրխկացնելով, ու գլուխն յերևում է ուսերից հետո:

Յես տատանվում եմ. քցե՞մ քարը, թե՛ չքցեմ:



Նա կամաց-կամաց հավասարվում է ինձ:

Քցե՞մ թե չքցեմ:

Նա անցնում է արդեն... կերթա, կհեռանա և ել այսպես հարմար առիթ չի պատահի...

Յես մի փոքր բարձրանում եմ տեղիցս ու քարը նետում... Բայց չի դիպչում: Անցնում է նրա գլխի կողքով: Յես այդ լավ եմ տեսնում, և այդ հանգամանքը վոգեվորում է ինձ:

Յես նետում եմ յերկրորդը, յերրորդը, մի քանիսը—իրար վրա: Հանկարծ նա կանգ է առնում ու յետ նայում զայրացած: Տեսնում եմ նրա չար աչքերի վայրը. ուզում է տեսնել, իմանալ—վորտեղի՞ց են գալիս քարերը:

Յես կուչ եմ գալիս կանեփների մեջ, աչխատելով ամեն կերպ աննկատ մնալ, թեև կանեփները յերկու լմ հասակին են:

Փողրադչին նայում է այս ու այն կողմ և տեսնելով, յերևի, վոչ-վոք չկա, գլուխն որորում է ու դնում:

Յես անմիջապես վերսկսում եմ «բարապրանդակը»—մե՛կ, յերկո՛ւ, յերե՛ք.... Քարերը թռչում են նրա գլխի վրայից, անցնում են նրա կողքով և կա՛մ ընկնում են փողոցի այն կողմի պարտեզը կա՛մ փողոցը, ու վոչ մեկը նրան չի դիպչում:

Այս անգամ նա յետ է դառնում, մի քանի քայլ գալիս է յետ, նայում է զարձյալ աջ ու ձախ: Յես նորից անչափ ժանում եմ կանեփների մեջ: Իսկ նա դես ու դեն նայելով՝ թքոտում է ու ինչ-վոր խոսում ոտաերեն:

Մարդ չտեսնելով՝ նա նորից չարունակում և ճանապարհը: Այդ չես լմանում եմ արդեն նրա վայրկ թիկոցից:

Յերբ վայրկ թիկոցը բավական հեռանում է, ավելի չուտ ել չի լավում, չես կամացուկ, զգուշությամբ, շուրջս նայելով, դուրս եմ գալիս կաղնիներից ու մոտ թիվերից և գնում տուն: Գոհ եմ, որ փոդրադչուն գոնե զայրացրի: Կուզեի, որ քարերը դիպչեյին նրա գլխին, կուզեի, որ նրա գլուխը պատռվեր՝ արյուն դուրս գար, կամ քարերը դիպչեյին նրա մարմնի որևէ մասին ու մի լավ վնասեյին նրան: Բայց քանի որ դա չեղավ, լավ եր գոնե անհանգստացրի, բարկացրի:

Բայց ինչ սպասի՛ր: Մենք դեռ կտեսնվենք: Ճաշին տուն վերադառնալիս ցույց կտամ նրան...

Մինչև ճաշ չսակայն, ուրիշ բաներ են պատահում:

Ճաշից առաջ, չես սովորականի պես, բարձրանում եմ մեր դամի կտուրը, ուսումնելու, թե ինչպես են մեծ աղաները աղավնիները ինում: Ինձ դուր է գալիս աղավնիների այդ ինչքը. սիրում եմ, յերբ նրանք. վեր բարձրացած՝ սկսում են հանկարծ ցած իջնել՝ իրենց գլխի վրա դառնալով, կամ յերբ թևածելով յերկար չրջան են անում տների գլխին, ապա տարվում հեռու-հեռու, անհայտանում լազուրում և հանկարծ՝ նորից հայտնվում իրենց տերերի գլխավերև... Այս անգամ դամի կտուրը բարձրանալով՝ չես նկատում եմ, որ



ուրս փոդրադչու աղջիկները ու տղան ուրախ խաղում են իրենց բակում: Շեկ մազերով աղջիկները՝ ճերմակ հագած, իսկ տղան՝ ծովայինի կոստյում պղնստով ու գլխարկով:

Նրանց ուրախ, զվարթ խաղը նորից սկզտորում է իմ սիրտը. հիշում եմ պառկած հորս՝ ցեմենտից կակծացող խուփ աչքերը և մորս՝ նրա մոտ կանգնած տխուր... և այս բոլորի պատճառը սրանց հայրն է...

Չգիտեմ ել ինչեր են անցնում իմ գլխով, չես, առանց յերկար մտածելու, դամի կտրից, քարեր եմ հավաքում ու մեկը մյուսի չետևից, նետում նրանց կողմը:

Քարերը փռռում են ու ընկնում նրանց բակը, բայց վո՛չ մեկին չեն դիպչում:

Խաղը սակայն խանգարվում է:

Նրանք չփոթված նայում են այս ու այն կողմ, բայց ինձ չեն նկատում: Յես չարունակում եմ...

Այդ ժամանակ նրանք փախչում-մտնում են իրենց պատշգամը, ու այնտեղից դիտում թե քարերը վո՛րտեղից են գալիս:

Նկատում են և, խիստն բարը իջնելով, ճակատամարտն ընդունում. սկսում են իրենք ել քարեր նետել իմ կողմը:

Աղջիկները ինձանից մեծ են, չատ մեծ, իսկ տղան՝ իմ հասակի չե, բայց գեր:

Յես գլում եմ, նրանք պատասխանում են: Յեվ չնայած նրանք յերեքով են, բայց չեն կարողանում ինձ հաղթել. այսինքն ինձ չսի քարեր նետել:

Նրանք չեն կարող ինձ հաղթել նրա համար, որովհետև ես բարձր տեղ եմ—դոմի կտուրը. իսկ նրանք գտնվում են ցած, բակում: Ցավ հայտնի ոսո և—քարը վերևից ցած ավելի լավ և նեռվում, քան հակառակը:

Բայց նրանք մի առավելություն ունեն, որից ես զուրկ եմ. նեղն ընկած ժամանակ նրանք պատսպարվում են պատշգամի մոտ գտնվող ծածկի տակ, իսկ ես պահվելու տեղ չունեմ: Նրանց քարերից պաշտպանվելու համար կռանում եմ մի քանի, կտրանը վրայիցս անցնելու ատենին: Բայց չեմ դադարում և չարունակ քարեր եմ նետում նրանց վրա... ու, վերջապես, նրանց փախցնում եմ տուն և ինքս իջնում փողոց:

Բայց քիչ հետո նրանք նախահարձակ են լինում:

Փողոցով անցնելիս՝ փսդրադչու փոքր աղջիկը դարբասի դռնից մի կտոր փայտով խփում է մեջքիս ու դուրս փախչում:

Դա բավական է լինում: Անմիջապես քարեր եմ հավաքում փողոցի խիճերից և, վեր ցցնելով կրկին բարձրանում դոմի կտուրը:

Ու նորից սկսվում է տաք քարակռիվը:

Քարերը յերկու կողմից անվերջ գնում են դալս: Բայց,—պարմանալի բան,—չեն դիպչում. ոչ ինձանք նրանց, ոչ նրանցը՝ ինձ: Ամենը, նրանք ամեն մի քար նետելիս՝ խկուզն մտնում են ծածկի տակ, իսկ յես կռանում եմ, կամ քաշվում դոմի մյուս ծայրը, որ չի յերևում նրանց տակից:



Քարապարանոցը տևում է բավական յերկար. իմ քարերը նորից հատնում են և յես, ստիպված, նորից իջնում եմ փողոց քարեր առնելու:

Իմ հակառակորդները նկատում են այդ և, դարբասի դռան մոտ գալով, նետում են իմ կողմը ինչ ձեռներն է ընկնում—քար, փայտի կտոր, տաշեղներ, կոտրած ափսեներ... Յես պատասխանում եմ նրանց՝ բռներով խիճ չպրտելով... ձեռներով հավաքում եմ փողոցի ամբողջ ու մանր խիճը և, առանց դոմի կտուրը թարձրանալու, չպրտում նրանց կողմը: Կռիվը յերբեմն ընդունում է կատաղի բնույթ. այնպիսի արագությամբ ինձ դործում, որ իրար յերես չենք տեսնում...

Վերջապես, այդ բոլորը վերջանում են նրանով, որ հանկարծ մի սուր ճիչ է լսվում.

— Մամա՛...

Իմ նետած քարերից մեկը դիպչում է փոդրադչու տղին. նա վեր է ընկնում, հետո լաց լինելով գնում է տուն, քույրերի ողնության:

Ցես ցնծում եմ իմ հաղթության համար, ու, անմիջապես, կռվի վայրը թողնելով, ուրախ-ուրախ վազում եմ տուն:

Վերջապե՛ս... Դե՛, թող գնան հիմա... Հայարտանում, պարծենում եմ ինքս ինձ և ուզում եմ մորս պատմել, թե ինչ քաջագործություն եմ արել, բայց վախենում եմ. նա այնպես չի սիրում, որ զուրսը՝ յերեխաների հետ չարություն եմ անում:

Չնայած դրան, այնուամենայնիվ վորոշում եմ

Նրանք չեն կարող ինձ հաղթել նրա համար, որովհետև ես բարձր տեղ եմ—դոմի կտրանը. իսկ նրանք դանվում են ցած, բակում: Ցավ հայտնի ոան է—քարը վերևից ցած ավելի լավ է նետվում, քան հակառակը:

Բայց նրանք մի առավելություն ունեն, որից ես զուրկ եմ. նեղն ընկած ժամանակ նրանք պատապարվում են պատշգամի մոտ գտնվող ծածկի տակ, իսկ ես պահվելու տեղ չունեմ: Նրանց քարերից պաշտպանվելու համար կռանում եմ մի քանի, կտրանը վրայիցս անցնելուն պես ուղիղ եմ կանգնում և չարունակ քարեր եմ նետում նրանց վրա... ու, վերջապես, նրանց փախցնում եմ տուն և ինքս իջնում փողոց:

Բայց քիչ հետո նրանք նախահարձակ են լինում:

Փողոցով անցնելիս՝ փոդրաիչու վրքը աղջիկը դարբասի դռնից մի կտոր փայտով խփում է մեջքիս ու դուրս վազում:

Դա բավական է լինում: Ամբիջապես քարեր եմ հավաքում փողոցի խիճերից և, վեր ցցելով կրկին բարձրանում դոմի կտուրը:

Ու նորից սկսվում է տաք քարակռիվը:

Քարերը յերկու կողմից անվերջ գնում են դալիս: Բայց,—զարմանալի բան,—չեն դիպչում. ոչ ինձ նրանց, ոչ նրանցը՝ ինձ: Ամենք, նրանք ամեն մի քար նետելիս՝ խոնարհ մտնում են ծածկի տակ, իսկ ես կռանում եմ, կամ քաշվում դոմի մյուս ծայրը, որ չի յերևում նրանց բակից:



Քարակռիվը տևում է բավական յերկար. իմ քարերը նորից հատնում են և ես, ստիպված, նորից իջնում եմ փողոց քարեր առնելու:

Իմ հակառակորդները նկատում են այդ և, դարբասի դռան մոտ գալով, նետում են իմ կողմը ինչ ձեռներն է ընկնում—քար, փայտի կտոր, տաչեղներ, կոտրած ափսեներ... Ես պատասխանում եմ նրանց՝ բաերով խիճ չպրտելով... ձեռներով հավաքում եմ փողոցի ամբողջ ու մանր խիճը և, առանց դոմի կտուրը թարձրանալու, չպրտում նրանց կողմը: Կռիվը յերբեմն ընդունում է կատաղի բնույթ. այնպիսի արագությամբ ենք գործում, որ իրար յերես չենք տեսնում...

Վերջապես, այդ բոլորը վերջանում են նրանով, որ հանկարծ մի սուր ճիչ է լսվում.

— Մամա՛...

Իմ նետած քարերից մեկը դիպչում է փոդրաիչու աղին. նա վեր է ընկնում, հետո լաց լինելով գնում է տուն, քույրերի ոգնությամբ:

Ես ցնծում եմ իմ հաղթությամբ, ու, անմիջապես, կռվի վայրը թողնելով, ուրախ-ուրախ վազում եմ տուն:

Վերջապե՛ս... Դե՛, թող գնան հիմա... Հպարտանում, պարծենում եմ ինքս ինձ և ուզում եմ մորս պատմել, թե ինչ քաջագործություն եմ արել, բայց վախենում եմ. նա այնպես չի սիրում, որ դուրսը՝ յերեխաների հետ չարություն եմ անում:

Ջնայած դրան, այնուամենայնիվ վորոշում եմ

պատմել, թե՛ մորս և թե՛ հորս. թող նրանք էլ ուրախանան: Բայց չի հաջողվում. մայրս այդ րոպեին խոսում էր մի կնոջ հետ, որը կեկել էր հորս տեսնելու:

Ու մինչ մայրս դրուցում է, ես ուրախ-ուրախ դուրս ու ներս եմ անում, ինքս իմ արածի վրա հիացած:

Վերջապե՛ս... Դե՛, հիմա դնացեք...

Յես ինձ զգում եմ հաղթականի. բարձրանում եմ ինքս իմ աչքում և վորոշում եմ՝ աղջիկներին էլ խաբել, հո՛րն էլ:

Բայց իմ այդ ուրախությունը յերկար չի տևում:

Հանկարծ մեր դուռը ծեծում են: Մայրս դուրս է դնում խմանալու ո՛վ է, և յես լսում եմ մեր դպիր Սաաուրի ձայնը.

— Մանասի Թոան ո՞ւր ա,—ասում է նա:

— Թոա՞ր, թե՞ տղան,— հարցնում է մայրս, հավատացած լինելով, վոր դպիրը հորս է հարցնում:— Հիվանդ պառկած ա...

— Յես եղ գիտեմ,—ասում է դպիրը,—յես տղին չեմ ուզում, Թոան եմ ասում: Սուրենը քո տղա՞ն ա,—չարունակում է դպիրը:

Յես դողում եմ և լսողությունս լարում:

Հայրս նայնպես, մեջքի վրա պառկած, աչքերը հիվանդոտի, հետաքրքրված չարժում է անում ու ականջ դնում:

— Իմ տղան ա,—պատասխանում մայրս անհանգիստ:—Ի՞նչ կա վոր:



— Հիչ, ասում է դպիրն անտարբեր:— Կանցկլարում կանչում են:

— Կանցկլարո՞ւմ,—զարմանում է մայրս:—Նա կանցկլարում ի՞նչ գործ ունի... Սխալ կլինես, ախպեր. դուցե հորը՝ Ներսեսին են կանչում:

Գպիրը նեղանում է:

— Ե՛, յես Ներսեսին չեմ ճանաչո՞ւմ... Ինձ ասել են Ներսեսի տղա Սուրենին քեր:

Յես դողում եմ և գնում դեպի հայրս:

Իսկ մայրս չեմքում, բան չհասկանալով, տատանում է:

— Սիր են բեխան ի՞նչ գործ ունի կանցկլարում:

— Վոնց թե ի՞նչ գործ ունի,—ձայնը բարձրացնում է գպիրը:— Տվել ա ռաի երեխու դըլուխը ճղել — գործ չունի՞...

Շրթունքները խաղում են, ատամները դիպչում են իրար, և յես ավելի յեմ մոտենում հորս:

— Ի՞նչ ուսս, ի՞նչ բեխա,— զարմանքից այլայլվում է մայրս:

— Փոդրաղչու...

«Ուրեմն բոլորն իմացել են և գնացել դանգատվել: Հիմա ի՞նչ պիտի անեմ,— մտածում եմ յես:— Չլինի՞ քարն այնպես է դիպել, վոր վերքը վտանգավոր է դարձել: Ինչ՞ պիտի լինի: Ինչո՞ւ համար են ինձ կանչում»:

Յես ավելի յեմ դողում:

— Լավ. ի՞նչ կա վոր. խփել ա՝ գրա համար կանցկլո՞ր եք կանչում,— բարկանում է մայրս:— Բեխա՝ բեխություն ա արել: Բա վոր նրա հերը, եղ

մեռած վոդրադչին մարդուս աչքերը կուրացրել ա— խի՞ նրան չեք կանչում...

— Եդ իմ բանը չի,— ասում է դպիրը,— տա— նուտերը ինձ զարկել է ազիզ չեռնից: Թե տա՞ննա ա, ասա՝ գա:

Ձես տագնապած նայում եմ հորս յերեսին, տես— նելու ինչպես վվերաբերվի նա այս բանին:

Հայրս սառնիկ անհանդիստ է. արտևանունք— ները թարթում է չուտ-չուտ, ասես ուզում է աչքե— րը բանալ. բայց թոնթորում է ինչ-վոր ու ձայն տա— լիս դպիրին.

— Ասատո՛ւր, արի եսառիղ:

Դպիրը մոտենում է ներս:

Հայրս, աչքերը փակ, բացատրում է նրան, վոր ինքն ինձ կվթողնի այն սպայմանով, յերթե միայն դը— պիրն ինքը չի թողնի ինձ ծեծեն կամ վախեցնեն:

Բայց մայրս այլ կարծիքի յե. նա ասում է, վոր ինձ յերբեք մենակ չի թողնի, և վնքն էլ կգա: Նա թեև դիվանատուն և նման տեղեր չի գնում յերբեք, վորովհետև սովորություն չի, վոր մարդատեր կինը գնա արդպիսի տեղեր, բայց այս անգամ մայրս նչա— նակությունն չի տալիս այդ սովորության: Շալը վերցնում է, ձեռս բռնում և դառնում դպիրին, վոր ճիշտը ձեռքին կանդնել և աենյակի մեջ առը:

— Գնա՛նք,

Դպիրն առաջ է ընկնում, իսկ յես մորս ձեռը բռնած, գնում են դոդալով:— Դպիր, տանուտեր, պրեսատավ, կանցելյար—այդ բոլորն ինձ սարսափ են ազդում. բոլորն ինձ թվում են ամենակարող մար—



պիկ, վոր ինչ ուզեն կարող են անեն: Ձես լսել ու տեսել եմ, թե ինչպես են նրանք մարդիկ բռնում, ծեծում, բանտարկում: Մայրս ինձ միշտ վախեցնում է դպիրով... Ինքս էլ տեսել եմ թե վորքան չար են դպիրները... մի անգամ նրանք տարան մեր հարևանի կարպետն ու սամավարը: Ջնայած մեր հարևանի կի— նը լաց եր լինում, կախ եր ընկնում կարպետից ու սամավարից, բայց նրան չեյին լսում. հրում եյին, ձեռներին խփում, վոր պոկվի...

Ձես գնում եմ և ճանապարհին պատահող տղանե— րին, աղջիկներին նախանձում, վոր խաղում են ի— րենց համար, վոր նրանց կանցվյար չեն կանչել: Վա— խի հետ միաժամանակ մոտածում եմ և իմ ինքնա— պաշտպանության մասին: Ցերթե հարցնեն. «ինչո՞ւ յես խփել»,— կասեմ. «նրանք յերեքով ինձ եյին քար քցում, յես էլ նրանց քցեցի»: Իսկ յերթե ասեն՝ «Տապա պատճառն վնչ է, վոր դու քար ես քցել և ի— րա՝ փոդրաչու վրա»... Ջե՞ վոր հիմա ամեն ինչ հայտնի կլինի նրան: Ի՞նչ պիտի պատասխանեմ: Ցեվ վորոշում եմ այդ հարցին անմտիկ պատասխանել. «Լավ եմ արել. բա ինչո՞ւ յե նա իմ հոր աչքերը ցե— մենա լցրել»...

Գայլում ենք, և յես զգում եմ, վոր մայրս նուիմպես անհանդիստ է, այլայլված. նրա ձեռը վո— րով բռնել է իմ թաթը, դողում է: Ձես չգիտեմ ինչ է մոտածում նա, բայց վստահ եմ, վոր նա ինձ կը— պաշտպանի, նրա ներկայությամբ յես ինձ լավ կպա— հեմ և անմտիկ պատասխանները կտամ: Լավ է, վոր մայրս հետս է:

Ահա և կանցելարը: Մեծ քարե շենք՝ բազմաթիվ լուսամուտներով: Հենց դրսի աստիճաններին պլանին մեզ հանդիպում է մի թուխ՝ վոքրիկ ճուտերով շրջապատված: Մեզ տեսնելուն պես՝ թուխը թևերն ուռցնում և և ընկնում մի կողմից՝ ահագին աղմուկով ու ճուտերին կանչելով: Այդ հավի ճուտերն էլ ինձ թվում են յերջանիկ. նրանց տանուտերի մոտ չեն տանում. ուր ուզեն կարող են գնալ հիմա: Բայց յես...

Մի կողմից մտնում ենք մի յերկար սրահ. վայտե յերկար, թիկնակով նստարաններին նստած են դյուղացիներ՝ վախախները ծնկներին դրած: Սրահի վերի մասում նստած են տանուտերը՝ գլուխն չղմած վզին և ակնոցով մի մարդ, վոր գրում է գլուխը կախ: Յես տանուտերին ճանաչում եմ. նա ամեն որ անցնում է մեր փողոցով մի ձեռնափայտ ձեռին: Նրան տեսնելիս՝ միշտ վախ եմ զգում, վորովհետև նա այնպես խիստ է խոսում մարդկանց հետ և յերբեմն այնպես է բարկանում: Ո՛ ո՛ ո՛...

Գյուղացիներից գենը՝ առաջին նստարանին նստած է լավ հանգնված մի կին: Յես նրան անմիջապես չեմ նկատում, վորովհետև գյուղացիները ծածկել էին նրան: Բայց յերբ նկատում եմ՝ ճանաչում եմ խոլուն և ինձ ավելի վատ եմ զգում:

Փոդրադչու կինն է՝ իր տղայի հետ. տղան էլ է վոխված. նրա գլուխն ամբողջ կապված է սպիտակ վերակապով: Ուրեմն բերել է յուղ տվել և գնդատավել...



Այո, յես այդպես էլ կանեմ.— նրանք ինձ էլին խոխում, յես էլ նրանց խփեցի...

Յերբ մորս հետ մտնում եմ ներս և բոլորը նայում են մեզ, մայրս քայլերը դանդաղեցնում է:

— Առա՛ջ արի,— ասում է գղիրը:

Մայրս ձեռս բռնած, կամաց-կամաց առաջ է գնում և, դեռ նստարաններին չհասած, կանգ է առնում:

Տանուտերը աչքերը հառում է ինձ և մորս վրա: Այդ ժամանակ ուրիշ կինն էլ նայում է մեզ՝ զայրացած աչքերով:

Յես կպչում եմ մորս փեշին:

— Պատիվ, առաջ արի,— ասում է տանուտերը ինձ մի տեսակ հաստ, հրամայական ձայնով:

Մայրս առաջ է հրում ինձ ու ինքը կանգնում իմ յետև: Այդ ինձ դուր է գալիս. լավ է, վոր ինձ մենակ չի թողնում:

Իսկ տանուտերը՝ չղմած վզին, կռանում է սեղանի վրա, նայում է ինձ ու հարցնում.

— Դո՞ւ ես Սուրենը:

Յես, աչքերս հառակված, գլխով եմ անում:— Այո:

— Ես տղի գլուխն ի՞նչու չես ճղել,— ասում է նա բարկացած ու ձեռը դեպի փոդրադչու տղան մեկնելով:

Այս անգամ յես հոնքերիս տակից նայում եմ տանուտերին, նայում եմ նրա կողքին նստած ակնոցով մարդուն (վոր գրիչը թողել՝ նույնպես դիտում է ինձ),— նայում եմ մի ակնթարթ ուրիշ կնոջն ու իր՝

դլուխը կապած տղային և հանկարծ,— ո՛, խայտառակութ յուն,— մորս վեչին վաթաթվելով լաց եմ լինում:

Զգիտեմ՝ տանուտերի ձեռնասո՞ւյն եմ հիշում, դրագրի ակնո՞ցն և ահալդուս, ուս կնոջ գե՞մքն և պայրացկոտ, թե՞ չըջապատն ոտարոտի,— յես չեմ կարողանում վինճ պահել, լաց եմ լինում ու... խայտառակում ինձ:

Բայց մայրս լրեն չի կորցնում. նա սկսում է անմիջապես հանդիմանել տանուտերին, թե ինչո՛ւ հապա նա չի պատժում փոդրադչուն, այդ ուս կնոջ մարդուն, որ հորս աչքերը կուրացրել և մեզ գրկել ապրուստից, իսկ հիմա—յերկու յերեխա պիտի—բարո—խակուչն կանչել և մեզ:

— Ամո՛թ է,— ասում է մայրս և դառնալով հպարտ նստած ուս կնոջը, հայերեն ու ուսերեն խոսքեր է ասում զարկացած, բռունցքը թափ տալով: Նրա բոլոր ասածներից յես այնքան եմ հասկանում միայն, թե յերեխայի գլուխ պատռելը քիչ է, դեռ նրա մարդու աչքերը պետք է իր ձեռով հող ու մոխիր լցնի, որ նա էլ հորս նման կուրանա և մնա տանը պառկած:

Ուս կինը, հանկարծակի յեկած, աչքերը ճպճըպացնում է չարտոնակ, և ինձ թվում է նա վախից այդպես անում. բայց տարիներ անց յես իմանում եմ, որ նա վոչինչ չեր հասկանում մորս ուսերենից և չգիտեր, որ մարդը՝ հորս կուրացրել է ցեմենտով:

Մայրս, յերևի, յերկար պիտի խոսեր, բայց դրլիքը չուտով բռնում է նրա թևը, և դուրս բերում կանցելարից:

Յես հետևում եմ մորս:

— Կամանց, կամանց,— ասում է նա,— դու չես իմանո՞ւմ, որ փոդրադչին թաղավորական մարդ ա...

— Բա մենք չո՞ւն ենք— ասում է մայրս:— Մենք էլ մարդ ենք...

Յեվ մինչև տուն մորս բարկությունը չի անցնում, իսկ տանը պարծանքով պատմում է հորս, թե ինչպես է «չչպրել» տանուտերին և «են ուս մաթուչկին»:

Իսկ յերեկոյան յերբ հայրս քնում է, նա դարձյալ հուզված խոսում է ուս փոդրադչու մասին. ասում է, որ ուսները մի՛շտ այսպես են. ամեն տեսակ վատ բան են անում և նրանց չեն պատժում, որովհետև նրանք թաղավոր ունեն:

— Իսկ մենք՝ հայերս անտեր ենք, անտե՛ր,— կրկնում է նա:

«Անտեր» բառի մեջ յես մի ամբողջ վոդբերդություն եմ զգում. գիտեմ, որ «անտեր» ասում են ա՛յն չանը, կաուչին, որ վոկապես տեր չունեն և ապրում են սոված, ու ամեն մարդ, յերեխա՝ խփում, հալածում են նրանց քարով, փայտով. գիտեմ, որ «անտեր» յերեխան քաղցած է մնում ու մերկ, իսկ «անտեր» տունը վրլում է, ինչպես մեր թաղում այդ որերը վրլվեց մի տուն, որին Բաղոյանց «անտեր» տուն էին ասում: Ինչ վերաբերում է «թաղավորին»— յես յերկար մտածում եմ, թե ի՛նչ բան է

«Թագավորը», և ինչո՞ւ ուսանողն ունեն, իսկ մենք չունենք:

— Բա ի՞նչու մենք Թագավոր չունենք, մայրիկ,—հարցնում եմ ծայրը աստիճան հետաքրքրված:

Իմ հարցին, երբ պատասխան, մայրս անում է մի զարմանալի պատմություն, որը ամբողջովին կլանում է ինձ:

—Թագավո՛ր... մենք էլ, իհարկե, ունեցել ենք. բայց հիմա էլ չկան: Ներանցից մնացել ա միայն մի ազա, մի վոքր, քու չափ պատիկ ազա. դրան էլ կաթողևկոսը տարել-պահել է հեռու մի դեղում, մինչև մեծանա...

Իսկ երբ մեծանա, մորս ասելով, մեր յերկիրը պիտի ազատի, աղքատներին վռնդի ու արծաթի պիտի բաժանի և անիրավներին պատժի:

«Այդ լավ է,— մտածում եմ,— փոդրապչուն էլ կպատժի, որը էլ մարդկանց աչքերը ցեմենտ չլցնի»: Բայց, մորս ասելով, այդ պատիկ ազին Թագուն պահում են նրա համար, որը Թշնամիներըը չտեսնեն, որովհետև աչքերից, դեմքից կհասկանան ո՛վ է:

— Ու չներն էլ իրա մոխց են,—ասում է մայրս:

Այդ արդեն չատ զարմանալի յե—«չներն իրա մոխց»:

Ճես դիտեմ ինչ բան են չները: Դրանք այն պըտըղուն, դեղեցիկ բաներն են, որը կան պըրխատավի, ածիլեբրների և մեծավոր մարդկանց ուսերի վրա: Բայց միթե՞ չները կարող են մոխց լինել,— մտածում յես և յեզրակացնում, որ Թագավորներինը, յերևի, այսպես է լինում. Թագավորի ոտանները, յերևի չներով են ծնվում...

Ու այդ որն անկողին եմ մտնում, մտածելով Թագավորի այդ փոքրիկ տղայի մասին, որի չները իրա մոխց են: Հանկարծ իմ ուսերին էլ այդպիսի չներ դուրս գա՞ն... Այս մտքերով էլ քնում եմ: Իսկ առավոտը, երբ զարթնում եմ, նորից հիշում եմ Թագավորի տղային և ձեռս տանում եմ ուսերս, տեսնեմ— չներ չե՞ն դուրս յեկել արդյոք...

## IV

## Առաջին սե՛ր...

Ակրո մասն այնքան են դրել, վոլքան և վոչ մի բանի մասին աշխարհում: Ասում են՝ ի սկզբանե եր սերն. վոր սերն է կազմում առանցքը տիեզերքի և միակ ազբյուրը վկյանքի: Թերևս այդպես է—չգիտեմ: Ասում են՝ սերը կրքի առաջին արտահայտությունն է և թե՝ սերն ինքը կիրք է:— Այդպես ասողները չեն հասկանում, յերևի, ի՛նչ և սերը: Ասում են՝ սերը նման է դինու. ով մի անգամ խմի— կհարբի, կկորցնի գիտակցությունն ու մխքը: Այդ, թերևս, ճիշտ է: Այդպես մի անգամ հարբեցի յես, յերբ այնքան վոքր եյի: Բայց արդյոք դա սե՛ր եր... Ասում են՝ սերը նման է կայծակի. բավական է մի անգամ խելք մարդու սրտի—կավերի, կայրի ամեն ինչ և էլ թույլ չի տա վորևե նոր զգացմունք ծնվի այնտեղ:— Այդպես էլ սերը կայծակի նման խփեց մի անգամ իմ սրտին, յերբ այնքա՜ն վոքր եյի... ու վոչինչ չսվե-



բեց այնտեղ: Բայց արդյոք դա սե՛ր եր... Գուցե ավելին, քան սեր— չգիտեմ:

Հայրս չարունակում է մնալ պառկած, ու պառկում է գարնանից մինչև ամառ. և այդ ժամանակի ընթացքում տատս, պապս, հարևանները չուտ-չուտ գալիս են մեր տունը—հորս տես: Տատս նուշնիկ ժամերով նստում է, դրուցում, որորում և վոգբրիկ յեղբորս... Ու ինձ թվում է, թե մեջի դուռը նորից կբացվի, և ամեն ինչ առաջվա պես կլինի... Բայց որերն անցնում են ու վոչինչ չի փոխվում: Հորեղբայրս բոլորովին չի գալիս մեր տուն, վոչ էլ Սանամ-պիղին: Բայց ուրախ եմ, վոր պապս, տատս գալիս են: Ուրախանում եմ նաև վոր հարևաններն են գալիս: Սիրում եմ, յերբ մեր տանը մեծ հասարակություն է հավաքվում... Զգում եմ՝ դրանք չեն թողնի վոր հայրս պառկի յերկար. ամեն մեկը կոդնի. մի հնար կգտնի նրա աչքերը բուժելու: Բացի դրանից՝ չե՞ վոր յեկողները փայփայում են մեզ, յերբեմն կանֆետ ու խնձոր են տալիս... Բայց առանձնապես հետաքրքրական է, յերբ բժիշկն է գալիս: Նա ակնոցով, կարճ ու հաստ մարդ է՝ ձեռների յերեսը լիքը, ուռած, թվում է ուռել են մեղուի վծելուց: Գալիս է նա զլուխը բարձր, թվում է նրա համար, վոր ակնոցը չընկնի. ձեռնափայտը դնում է դռան յետև՝ անկյունում. դրսանից մի չիչ ջուր հանելով՝ ձեռները լվանում է, ապա սրբում մորս տված մաքուր սրբիչով և մոտենում հորս: Նայում է նախ աչքերին, ապա կոպերը չրջում է և ինչ-վոր կաթիլներով՝

## IV

## Առաջին սե՞ր...

Ախր մասն այնքան են դրել, վոր քան և վոչ մի բանի մասին աշխարհում: Ասում են՝ ի սկզբանե եր սերն. վոր սերն է կազմում առանցքը տիեզերքի և միակ աղբյուրը կյանքի: Թերևս այդպես է—չգիտեմ: Ասում են՝ սերը կրքի առաջին արտահայտությունն է և թե՝ սերն ինքը կիրք է:— Այդպես ասող-ները չեն հասկանում, յերևի, ինչ է սերը: Ասում են՝ սերը նման է դինու. ով մի անգամ խմի— կհարբի, կկորցնի գիտակցությունն ու միտքը: Այդ, թերևս, ճիշտ է: Այդպես մի անգամ հարբեցի յես, յերբ այն-քան փոքր եյի: Բայց արդյոք դա սե՞ր եր... Ասում են՝ սերը նման է կայծակի. բավական է մի անգամ խելի մարդու սրտի—կամերի, կայրի ամեն լինչ և ել թույլ չի տա վորևե նոր զգացմունք ծնվի այնտեղ:— Այդպես ել սերը կայծակի նման խփեց մի անգամ իմ սրտին, յերբ այնքա՞ն փոքր եյի... ու վոչինչ չհաս-



բեց այնտեղ: Բայց արդյոք դա սե՞ր եր... Գուցե ավելին, քան սեր— չգիտեմ:

Հայրս չարունակում է մնալ պառկած, ու պառ-կում է դարնանից մինչև ամառ. և այդ ժամանակի ընթացքում տատս, պապս, հարևանները չուտ-չուտ գալիս են մեր տուն—հորս տես: Տատս նուրհակ ժա-մերով նստում է, դրուցում, որորում և վեճքրիկ յեղ-բորս... Ու լինճ թվում է, թե մեջի դուռը նորից կբացվի, և ամեն լինչ առաջվա պես կլինի... Բայց որերն անցնում են ու վոչինչ չի փոխվում: Հորեղ-բայրս բոլորովին չի գալիս մեր տուն, վոչ ել Սա-նամ-պիղին: Բայց ուրախ եմ, վոր պապս, տատս գալիս են: Ուրախանում եմ նաև վոր հարևաններն են գալիս: Սիրում եմ, յերբ մեր տանը մեծ հասարակու-թյուն է հավաքվում... Զգում եմ՝ դրանք չեն թողնի վոր հայրս պառկի յերկար. ամեն մեկը կոդնի. մի հնար կգտնի նրա աչքերը բուժելու: Բացի դրանից՝ չե՞ վոր յեկողները վայելուչում են մեզ, յերբեմն-կանիֆետ ու խնճոր են տալիս... Բայց առանձնապես հետաքրքրական է, յերբ բժիշկն է գալիս: Նա ակնո-ցով, կարճ ու հասա մարդ է՝ ձեռների յերեսը լիքը, ուռած, թվում է ուռել են մեղուի վծելուց: Գալիս է նա դլուխը բարձր, թվում է նրա համար, վոր ակ-նոցը չընկնի. ձեռնափայտը դնում է դռան յետև՝ ան-կյունում. դրպանից մի չիչ ջուր հանելով՝ ձեռները լվանում է, ապա սրբում մորս տված մաքուր սրբի-չով և մոտենում հորս: Նայում է նախ աչքերին, ապա կոպերը չրջում է և լինչ-վոր կաթիլներով

թրջած բամբակով լվանում. լվանում է յերկար, զգուշությամբ, վոր վոչ մի ցավ չպատճառի հորս: Վերջացնելով՝ մայրիկիս պատվիրում է, թե ինչ պիտի անի մինչև իր մյուս անգամ գալը: Յեվ մայրս, բժշկի պատվերի համաձայն, որը յերկու անգամ բամբակը ինչ-վոր ջրի մեջ թրջելով՝ լվանում է հորս աչքերը, հետո մեծ զգուշությամբ դեղ կաթեցնում:

Յերբ բժիշկը գալիս է, յես վոչ միայն ուրախանում, այլ և հպարտանում եմ ընկերներիս մոտ.

— Եսոր բժիշկն յեկավ մեր տուն...

Մի անգամ էլ, յերբ այդպես հպարտանում եմ ընկերջս՝ Սամսոնի մոտ, նրա մայրը՝ Թերեզա մորքուրը՝ զլուխն որորում ու բարկանում է վրաս.

— Սարսա՛ղ: Դա ինչ պարծենալու բան է, վոր պարծենում ես: Դու պետք ա ախրես, վոր բժիշկը գալիս ա ձեր տուն: Բժիշկը լավ որի համար չի գալիս: Նա գալիս ա անբախտության ժամանակ:

Յես ուրախանում եյի, վոր նա գալիս է հորս աչքերը լավացնելու, բայց այդ նկատողությունից ամաչում եմ և մտածում, վոր բժիշկն, վակատես, գալիս է անբախտության ժամանակ: Քանի հորս աչքերը լավ եյին— ինչո՞ւ չեր գալիս: Ուրեմն նա գրնում է այն տունը, ուր հիվանդ կա...

Յես, յերևի, յերկար կամաչելի այդ նկատողությունից, եթե ինձ ոգնություն չհասներ Սամսոնի քույրը— Սիրանը:

—Վոչինչ, վոչինչ, յերեխա յե,— ասում է նա, գլուխս չոյելով:—Մի ախորի, խաղա՛, խաղա՛...



Այնքան դորով, այնքան քնքշանք կա նրա մեղմ ձայնի մեջ, վոր յես ժպտում եմ անմիջապես ու չարունակում խաղս Սամսոնի հետ:

Թաղում յես շատ ընկերներ ունեմ, բայց ամենից մոտն ու մտերիմը Սամսոնն է, վոր մինչև վերջն ընկերություն պիտի անի ինձ հետ և վորը դեռ շատ կերևա այս պատմության մեջ:

Սամսո՛ն... նրան հիշելիս՝ ուրախությունը վոգոդում է իմ սրտում ախրը և յես նորից ղդում եմ ինձ մանուկ— աչխարհն չարին ու բարուն անտեղյակ:

Տարօրինակ տղա յե Սամսոնը. կապույտ աչքեր ունի, սև մազեր. սովորաբար կապույտ աչքերի տերը, մանավանդ մանուկ հասակում, չեկ մազեր է ունենում: Բայց Սամսոնը կարծես բացառություն է այդ կողմից: Նա իմ ընկերների մեջ բացառություն է կազմում և շատ կոզմերով: Յերկարաճիտ կոշիկներ է հագնում ու դրանցով մտնում է առուները, ման գալիս, ինչպես վոզոցում, և մայրը չի ծեծում նրան, վոչ էլ բարկանում է վրան, ինչպես մյուս մայրերը, ինչպես իմ մայրը:

Բարձր պատչգամ ունի նրանց տունը, վորն ինձ ամենասիրելի տունն է Թիֆլիսում մեր թաղում. դրսից ճերմակած է, տանիքը ծածկված է թիթեղով, իսկ պատըշգամն ամեն կողմից՝ վարից, վերից պատած է սղոցանախչ տախտակներով, վորոնք անհասանելի ճարտարություն են Թիֆլիսում ինձ: Այդ պատչգամը ներկված է, մաքուր է և ընդարձակ. այնտեղ դրված են բացված ծաղիկների մեծ թաղարներ և վարդրա—

վաս դորգով ծածկված մի թախտ, վորի վրա Սամսոնի քույրը՝ ամեն որ նստում հաշիվ և դրծում:

Սամսոնի մայրը՝ Թևրեզա մորքուրը՝ բարձրահասակ կին է, լայն ոսկրակոտ դեմքով. նա էլ՝ միշտ դուլպա է գործում. և ուր էլ գնում— աղբյուրը ջրի, թե հարևաններին տուն,— այդ դուլպան ձեռքից բաց չի թողնում: Սամսոնը նրա միակ տղան է. թևրեզա այդ և պատճառը, վոր մյուսներին նման չի բարկանում նրա վրա և նրան հագցնում է լավ շղեսաներ, կոշիկներ, չերքեզկա, վորի վրա կապում է արծաթե գոտի և փոքրիկ արծաթե դաշույն... Թևրեզա մորքուրը, ասում են, շատ տղա է ունեցել, բայց բոլորն էլ մեռել են. այդ է պատճառը, վոր Սամսոնին շատ է սիրում և չի թողնում մենակ դնա ամեն տեղ, խաղա ամենքի հետ: Վախենում է՝ քարով խփեն հանկարծ (մի տղան մեռել է քարով խփելուց), կամ ջուրն ընկնի (մյուս տղան մեռել է ջրհորն ընկնելուց)... Դրա համար ուրախ է լինում, վոր Սամսոնը խաղում է պատշգամում— իր աչքի առաջ: Ցնծը Սամսոնը ցանկություն է հայտնում՝ դնալ տղաների հետ խաղալ, մայրն անմիջապես կռանում է մեր ցանկապատից և ձայն տալիս.

—Սուրեն, Սուրեն...

Ցես դուրս եմ վազում տնից:

—Ի՞նչ է, մորքուր:

—Արի Սամսոնի հետ խաղա, Ջանս: Սամսոնը մենակ է:

Ցես ուրախ-ուրախ անցնում եմ նրանց բակը, աչտեղից— պատշգամ, ու խաղում ենք. վեց, գընդակ, ինչ պատահում է: Սամսոնը փոքրիկ քառանիվ սայլակ ունի. հերթով նստում ենք ու քաշում իրար կա՛մ բակում, կա՛մ պատշգամի մի ծայրից մինչև մյուս ծայրը: Վազեցնում ենք իրար ու կանչում.

—Ուռա՛ռա՛... խաբարդա՛...

Սամսոնի քույրը՝ Սիրանը, վոր մեծ աղջիկ է արդեն, հաշիան ձեռին, թախտի վրա նստած՝ ժպտում է չարունակ մեր արածի վրա:

— Կամա՛ց, վեր չընկնեք,— ասում է նա մեզ, դորոմոտ ձայնով, և այդ ձայնն այնպես լավ է հնչում, այնպես դուր է գալիս ինձ, վոր ուզում եմ չարունակ խոսի մեզ հետ:

Սիրանը... Ինձ թվում է նրա նման գեղեցիկ ու լավ աղջիկ չկա մեր ամբողջ գյուղում. դեմքն ոսկեգույն է ու ձվաձև, մազերն առատ, աչքերը սև ու խոշոր, վորոնց մեջ կարծես աստղեր են ճառագայթում: Իսկ փոքրիկ ձեռներն այնպես սպիտակ են ու նուրբ, և այնպես ճարպիկ ու ճարտար: Սպիտակ թևի կծիկը գոգը կամ գորգին գրած՝ նա այդ ձեռներով, զարմանալի արագությամբ, բանեցնում է հաշիայի ասեղը. և դուրս են գալիս զանազան, մեկը մյուսից զարմանալի նախշեր ու զարդեր...

Ինձ դուր է գալիս Սիրանի այդ ճարտարությունը, հնարամտությունը, դուր են գալիս նրա սպիտակ ձեռները, նրա մաքուր հագուստները, նրա ջինջ ձայնը և նրա խարտյաշ մազերը, վոր յերբեմն պեծ-պեծին են տալիս արևի տակ, մանավանդ յերբ հյուսերն արձակում-թափում է ուսերին... Առհասարակ դուր է գալիս ինձ, վոր նա

պատշգամում նստում և, ինքն իր համար յերգելով, հաշիա յե գործում...

Այժմ ել յես նրան հիշում եմ միշտ այդպես՝ մաքուր հագնված, կարմիր գորգին նստած՝ հաշիա գործելիս...

Այն որը, յերբ նա պատշգամում չի լինում, ինձ թվում է, թե խաղը լավ չի գնում և այնպես աշխույժ չկա, ինչպես նրա ներկայության է լինում:

Իսկ յերբ նա ներկա յե լինում կամ հայտնվում է հանկարծ, յես ուզում եմ իմ ամբողջ ճարպկությունն ու հնարագիտությունը ցույց տալ նրան. ուզում եմ աչքի ընկնել, գերազանցել Սամսոնին... Ու անում եմ բաները, որ նա ծիծաղի. բաներ, որոնք յերբևե առաջ են բերել նրա ծիծաղը. դիմամաք վայր եմ ընկնում հատակին կամ «գլխկոնծի» տալիս...

Սիրանը ծիծաղում է վճիտ ծիծաղով և ասում.

— Մի անի, Սուրեն. եղպես մի անի, գլուխդ կցավի...

Յես, իհարկե, լսում եմ և ելի անում այն, ինչ դուր է գալիս նրան:

Յեվ նա հաճախ ինձ մերդ, կանֆետ և տալիս, որ խելոք խաղամ:

Յես վարժվում եմ մի անգամ ել ինքս նվեր տամ նրան: Մեր պարտիզում խնձորի և սալորի ծառեր ունենք, որ յերբեմն սերևներից չատ խնձոր ու սալոր են բռնում: Մեր սալորները ընտիր տեսակի յեն. ամբողջ Թաղում այդպիսի ծառեր չկան. բոլորը գովում են, նույնիսկ խանութպանները գալիս են գնելու: Ինչպես մեր մյուս հարևանները, Սամսոնենք ել չունեն այդ սալորներից:

Յեվ ահա մի որ բարձրանում եմ մեր սալորենիներից մեկը ու, մերոնցից ծածուկ, ծոցս լցնում եմ սալորով ու անցնում Սամսոնենց բակը, այնտեղից հևիհև պատշգամ:

Սիրանը՝ գորգին նստած՝ հաշիա յե գործում:

Մոտենում եմ ու ձեռս ծոցս տանում:

— Ա՛ռ, Սիրան:

Սիրանը ցույց է տալիս գորգը: Յես սալորները թափում եմ նրա ցույց տված տեղը և, իմ արածից գոհ, նայում եմ նրան ու սպասում, թե ինչ կասի:

— Ապրես, չնորհակալ եմ,—ասում է նա և ախորժակով ուտում կարմիր սալորները:

Յես գոհ եմ, որ իմ նվերը նրան այդպիսի հաճույք և պատճառում. և ուզում եմ, որ բոլորն ուտի և ասի. «ելի բեր»:

Ինչպե՞ս հրճվանքով ծառը կբարձրանամ նրբից, ծոցս կլցնեմ սալորով ու կվազամ իր մոտ:

Բայց նա ուտում է մի քանի հատ և չարունակում իր հաշիան:

«Մնացածն ել, յերևի, հետո կուտի,—մտածում եմ յես,— ուրիշներին նման բկլիկ չի, որ բոլորը մի անգամից ուտի»:

Այդ բանից խրախուսված՝ յես Սիրանին նվեր եմ տանում և իմ տատացած նվերներից, որ տալիս են ինձ հորս տեսության յեկող բարեկամներ ու հա-

բևաններ.— մրգեր, կանֆետ, միշատ, կամ ընկույզ:

Յերբ հևալով, ուրախությունից դողացող ձեռով նվերները մեկնում եմ նրան, նա ասում է.

— Շնորհակալ եմ. դո՛ւ կեր. դու պատիկ ես:

Դուր չի գալիս ինձ այդ պատիկ բառը: Ինչո՞ւ եմ պատիկ... Պատիկը, այ, իմ փոքր յեղբայրն է, վոր որորոցումն է, վորը վոչինչ չի կարողանում անել: Իսկ յես, ինչո՞ւ յեմ պատիկ, յերբ ծառ եմ բարձրանում, յերբ փոդրադչու յերեխաներին հաղթում եմ, յերբ, վերջապես, տանը մնում եմ՝ քրոջս ու յեղբայրներիս պահում, վոր մայրս տեղ դնա կամ աղբյուրից ջուր բերի:

Ու Սիրանին ցույց տալու համար, վոր ապահ, չատակեր չեմ, վոչ էլ «պատիկների» նման բկլան, վոր ձեռս ընկածը մենակ ուտեմ, ասում եմ.

— Յես կերել եմ:

Յերբեմն նստում եմ նրա մոտ ու յերկար նայում նրա ճերմակ ճարատած ձեռներին, վոր այնպես արագ գործում են հաչիան ու զարմանալի, զարմանալի նախշեր դուրս բերում:

Յերբեմն այդ նախշերն ինձ այնպես են հետաքրքրում, վոր մոռանում, չոշափում եմ նրա ձեռագործը, անցագում եմ նախշերն առանձին-առանձին: Յերբեմն էլ ձեռ եմ տալիս նրա մաքուր չրջազգեստին ու դողնոցին, վորի աչ կողմը կա մի փոքրիկ, փոքրիկ գրպան, ուր Սիրանը դնում է հաճախ իր ձեռագործի փոքրիկ կծիկը:

Բայց ամենից առաջ՝ ինձ գրավում են նրա



մազերը, վոր մի մեծ հյուսով, ծայրը ժապավենով կապված կամ առանց ժապավենի, ընկնում է նրա մեջքին: Յերբեմն, մենկի փոխարեն, անում է յերկու հյուս ու կա՛մ թողնում է գարձյալ մեջքին կամ գլխի յերկու կողմից կախում կրծքին: Ծայրերն ընկնում են դոդը: Յեվ յերբ ձեռագործի հետ նրանք չարժվում են չարունակ, ինձ թվում է ընչացվող են...

Ու հաճախ կանգնում նայում եմ նրա մազերին: Յեվ մի որ էլ, յերբ հյուսի ծայրը դորդին ընկած չարժվում է նրա ձեռքի հետ միասին, յես բռնում եմ հյուսի չարժվող ծայրը. ժապավենն արձակվում է հանկարծ և հյուսը, նոր չարժումներից ջանդվելով, ցրիվ է գալիս նրա թիկունքովը մեկ:

Յես անմիջապես, իրրև հանցավոր, ուղում եմ հավաքել մազերը և ժապավենով կապել. բայց Սիրանն ասում է մեղմությամբ.

— Վոչինչ, Սուրեն ջան, յես կկապեմ:

Յեվ այդ որվանից յես հաճախ եմ խաղում նրա մազերի հետ. ժապավենն արձակում եմ, հյուսը ցրիվ տալիս թիկունքով ու նորից հյուսում: Սիրանը հանաքով բարկանում է վրաս, բայց թույլ է տալիս, վոր խաղամ մազերի հետ: Ինձ զարմացնում են նրա մազերի յերկարությունն ու փայլը, վոր այնպես դուրեկան է արևի տակ: Ու թավիշի պես փափուկ են այդ մազերը. մատներիս տակ կարծես մետաքսե թելեր լինեն:

— Հը, անշնորք, մի ձգի,—ասում է նա:

Ցնա թուլացնում եմ մազերը և զգուշությամբ հյուսում:

Մի ուրիշ անգամ, ցերը խնդրեր եմ տարել Սիբանին, նրանց պատշգամբ վազվզած, բանկված և արևի լուսյով. Սիբանը սանրում է զլուխը և նրա արծաթ մազերը չողշողում են այդ լուսյի մեջ: Ու մինչ Սիբանն ախորժանքով ուտում էր իմ բերած խնդրերը, ցես հմեչտակված նայում եմ նրա վայելուչ մազերին, հետո բռնում եմ մի վուշնջ ու համբուրում հանկարծ:

Ինչո՞ւ եմ համբուրում. արդյոք նրանց վայելի՞ համար, պնդեցկությա՞ն համար, թե՞ ուզում եմ իմանալ վորքա՞ն են տաքացել արևից տակ: Չգիտեմ: Սակայն, վորքան էլ իմ համբույրն զգուշ է, Սիբանն զգում է այդ ու ցես զառնում:

— Եգ ի՞նչ բան է,—ասում է ժպտալով, բայց հուզված:

Ցես չվոթված եմ. մի վայրկյան զգուշության մեջ բռնված պես եմ զգում ինձ. նայում եմ հատակին ու ապա, չգիտեմ ինչու, անխոս հետևում եմ պատշգամից և վախչում տուն:

Ցերկու որ չեմ զնում նրանց բակը: Ամենից խոկ որը Սամսոնի մայրը՝ Թերեզ մորքուրը կանչում է ցանկապատից, վոր զնամ Սամսոնի հետ խաղամ. բայց ցես ձայն չեմ հանում. իրը թե չեմ լսում. խոկ ցերը տեսնում է հանկարծ պարտիզում կանգնած-խոստանում եմ, թե հիմա կզամ. բայց զարձյալ չեմ զնում: Ինձ թվում եր իմ արածը վատ բան եր. Սիբանին դուր չեկավ. անհարմար



ե զնամ—վրաս ծիծաղի: Մյուս կողմից ինձ հետաքրքրում է, թե ինչպես կվերաբերվի Սիբանն ինձ հիմա. այնպես եմ ուզում տեսնել նրան...

Ու ախտոտում եմ, վոր այդ բանն արի և զրկվեցի նրան այսուհետև տեսնելուց, նրանց պատշգամում խաղալուց:

Մի որ, սակայն, Սիբանն ինքը պատահում է ինձ վոզոցում և, ժպտալով, ձեռը զնում է զլխիս:

— Ո՞ւր ես, անչնորք,—ասում է բարի ձայնով:— Ինչո՞ւ չես զալիս Սամսոնի հետ խաղալ:

— Վարդուշի հետ եմ խաղում,—ասում եմ քրոջս մասին:

— Սրի Սամսոնի հետ էլ խաղա:

Նրա մտերիմ ժպիտը և ձեռով զլուխս չոքելն ինձ սիրտ են տալիս, իմ սիրտը կցնում են կակաչուն ուրախությամբ. ուրեմն իմ արածն այնպես վատ բան չի եղել. ինչպես կարծում էի: Ուրեմն մոռացել կամ բանի տեղ չի զնում:

Ու վերսկսում եմ իմ ամենօրյա այցելությունները. նորից Սամսոնի հետ խաղում ենք պատըշգամում, նորից հմեչտակված նայում եմ Սիբանի ճերատզործին և ցերբեմն խաղում եմ նրա մազերի հետ: Գանդում եմ հյուսը ու նորից հավաքում, ինչպես առաջ, և նա՝ Սիբանը, առաջվա պես, դարձյալ վոչինչ չի ասում: Դարձյալ սկսում եմ սալոր ու խնդրեր տանել նրան, և նա, ինչպես առաջ, ուտում է մեծ ախորժանքով ու ասում:

— Ապրես, Սուրեն ջան: Շնորհակալ եմ:

Ցես ոչ-ախտությունից վհուկոտում եմ,

«Գլխակոնծի» եմ տալիս ու ծիծաղում: Ուզում եմ, վոր Սիրանն էլ ժպտա, ծիծաղի:

Ցես պատրաստ եմ նրա համար անել ամեն ինչ, ամեն ինչ....

Բայց, ինչպես յերևում է, ամեն բան վերջ ունի այս աշխարհում: Իմ ուրախությունն էլ յերկար չի տևում:

Մի որ, յերբ պարապմունքներում այլևս խնդիր չկա և հայրս լավացել է արդեն, յես նկատում եմ, վոր Սամսոնենք արտակարգ պատրաստության մեջ են:—ման մեջը դուրս են ածել պատշգամ, սրբում, մաքրում են. գոնեքն ու լուսամուտները, Սամսոնի մայրն ոտաբ կանանց հետ թխել են տալիս դորդերը: Իսկ Սամսոնի հայրը՝ իր խանութի աշակերտի հետ՝ կապոցներով ու կողովներով բաներ է բերում տուն: Վոչխար են առել ու կապել բակի ծառի տակ: Ու բոլորն արտասովոր ուրախ տեսք ունեն: Ցեվ այդ բոլորն արտակարգ բան է նրանց տան համար:

Ի՞նչ է պատահել. յես չեմ կարողանում գլխի ընկնել, հասկանալ: Վերջապես, Սամսոնը ցրում է իմ տարակուսանքը:

Մոտենում է ուրախ-ուրախ և հայտնում իրրև ուրախ լուր:

— Մեր Սիրանին նշանում ենք:

Ու ժպտում է յերջանիկ:

Ցես գիտեմ ինչ է նշանակում նշան: Դա այն է, վոր ոտաբ մարդիկ են գալիս տուն, ուտում են, խմում, պարում և աղջկա մատը մատանի դնում: Այդպես անցյալ տարի նշանեցին մեր մյուս հարեվաններիվ՝ Շարոյանց Սարոյի և Կաղ-Կարոյի աղջիկներին: Այն ել գիտեմ, վոր նշանից հետո հարսանիք է լինում. և աղջիկները զուռնայով տանում են յեկեղեցի, վորտեղից ել նա հոր տունը չի վերադառնում:

Ա՛յ թեե ինչ... Ուրեմն Սիրանին տանելու յեն չուտով...

Այդ բանը սաստիկ տխրեցնում է ինձ: Ուրեմն Սիրանը պիտի դնա. նա ել պատշգամում չի նստի՝ հաչիա գործի: Ել ո՞վ պիտի նայի մեր խաղերին, ուրախանա մեր խաղերով... Ել ուրեմն չեմ կարող խաղալ նրա մազերի հետ...

Բայց տեսնես Սիրանն ինքը ուրա՞խ է դրա համար թե տխուր:

Յերևի, տխուր կլինի, մտածում եմ յես: Անցյալ տարի, յերբ, Կաղ-Կարոյի աղջիկանը տանում էին—նա լաց եր լինում:

Այդ որը յես ու Սամսոնը պատշգամում չենք խաղում, այլ բակում, և յես, ամեն անգամ Սիրանին՝ պատշգամում նկատելիս՝ ուզում եմ տեսնել նա ուրա՞խ է, թե՞ տխուր: Բայց նա զբաղված է, և նրա դեմքից վոչինչ չի յերևում:

Նրանք արտակարգ պատրաստության մեջ են. նրանց ջուր բերող կլինը յեռանդով սրբում է դեղին սամավարը, և սամավարը վայելատակում է սրճի տակ. խանութի աշակերտը զարձյալ բաներ է բերում դամբյուղով, վորի մեջ յերևում են և դինու շշեր:

Իսկ յերեկոյան, յերբ պառկում եմ քնելու, նրանց անվից ղուռնի նվագ եմ լսում:

— Սիրանի նշանախոսները յեկել են,— ասում է մայրս:

Ինձնս յերկար չի տանում: Մտածում եմ՝ տեսնես ի՞նչ են անում այնտեղ. ինչ կերպարանք ունի այն մարդը, վորի հետ նշանելու յեն Սիրանին. տեսնես ի՞նչ է անում Սիրանն ինքը—ո՞ւրախ է, թե՞ տխուր: Սամսոնը, դիտեմ, ուրախ է. քայց Սիրանն, ինձ թվում է, տխուր կլինի. չե՞ վոր նրան տանելու յեն իր մոր անվից, իրենց կավ պատչգամից... Մտածում եմ—լավ կլիներ վեր կենայի դնայի նրանց լուսամուտից նայելի, թե ինչ են անում: Ախ, յերթե իմանայի ղուռնա պիտի գա—չեյի քնի: Բայց հիմա վեր կենալ չի կարելի—մայրիկը կբարկանա...

«Առավոտը Սամսոնից կհարցնեմ»,— մտածում եմ, ու այդ մտքով էլ քնում եմ:

Իսկ առավոտը, պարզվելուն պես, դնում եմ նրանց բակը—Սիրանը չի յերևում: Այն ժամն է, յերբ նա յերևում է պատչգամում: Բայց այսոր չկա... Սամսոնը նույնպես չի յերևում: Ի՞նչ է պատահել:

Ջուր բերող կինը, իմանալով, վոր յեկել եմ Սամսոնի հետ խաղալու, ձեռը դեպի բերանն է տանում և ինձ հասկացնում, վոր կամաց խոսեմ:

— Դեռ քնում են,— ասում է նա ձայնը վոլոր քցած:

Բայց մյուս որն արդեն Սիրանն իր տեղը՝ կար-



մըրակաո գորգին նստած, հավկա յե գործում: Ինձ թվում է՝ նա փոխվել է արդեն և լրջացել, մեծացել, աչքովս է ընկնում նրա աչ ձեռի մատանին, վոր չա-քունակ վայլվլում է արևի տակ, քանի նա ձեռագործ է անում: Իսկ յերբ ձեռը դնում է ծնկանը, յես յերկար նայում եմ այդ մատանուն և չեմ համաձակվում մոտենալ նրան: Թվում է Սիրանն էլ այն չի, ինչ առաջ եր: Ջնայած հիմա ավելի լավ դգեստներ է հագել, մազերն ավելի խնամքով է հյուսել, քայց մատչկոտ է և մեր խաղով բոլորովին չի հետաքրքրվում:

Յերբ նկատում է, վոր նայում եմ մատանուն, նա ժպտում է:

— Ի՞նչ ես նայում: Սրա՞ն:

Յես գլխով եմ անում:

— Եղ յերե՞կ են տվել,—հարցնում եմ վոքր հետո:

— Ինձ ի՞նչ բանն է,— հարցնում է նա ու գարձյալ ժպտում մատչկոտ:

Նա ձեռը դնում է գլխիս ու մազերս չոլում առաջիս պես, ապա, քիչ հետո, ներս է գնում, մի բուռը կանֆետ բերում ու մեծ մասը տալիս ինձ, իսկ մի յերկուսը Սամսոնին:

— Դու շատ ես կերել,—ասում է յեղբորը:

Ու այն րոպեին, յերբ Սիրանը մեկ կանֆետ է տալիս, բակն է մտնում մի կռուվ, բարձրահասակ մարդ՝ յերկար դեմքով ու յերկար բեխերով: Հագին՝ յերկարաճիտ ճոճոան կոշիկներ, գլխին՝ բարձրակ բուխարի փափախ՝ թեք գրած:

Նրան տեսնելուն պես՝ Սիրանը թողնում է մեզ ու, ձեռագործը ձեռին վազում ներս, և էլ դուրս չի գալիս:

Իսկ սև մարդը գալիս մոտում է պառչում, բաբևում է Սամսոնին, հետո ձեռով չոյում է նրա այտը ու հարցնում:

— Մայրիկդ տա՞նն է:

Մինչև Սամսոնն ամաչելով ասում է «այո», թևբեզա մորքուրն ուրախ-ուրախ դուրս է գալիս և այդ թուխ մարդուն հրավիրում ներս:

Իմ հարցին, թե ո՞վ է այդ մարդը, Սամսոնը պատասխանում է.

— Մեր փեսան է...

Զգիտեմ ինչու, հանկարծ զարմանալի ատելությունն եմ զգում դեմքի այդ մարդը: Ատելի չեն թվում ինձ նրա թուխ դեմքը, նրա բուխարի փափախը, նրա կերպարանքն ամբողջ...

Ատելի չեն թվում նրա սև, վոլորուն բեխերը, նրա ճոճուն յերկար կոշիկները, նրա քայլվածքը...

Յեվ այնուհետև՝ մյուս որերը, յերբ յես հանդիպում եմ նրան մեր փողոցում կամ Սամսոնենց բակում,—նա ինձ թվում է թշնամի, յես յերբեք չըջում եմ, վոր իմանա՝ ասում և արհամարհում եմ լրեն, վորովհետև նրա ամեն գալով՝ մեր խաղը խանգարվում է. Սիրանը գնում է ներս, իսկ Սամսոնը, խաղն ընդհատելով, հետևում է նրան:

Ու մտածում եմ, թե մի՞թե ավելի լավ մարդ չկար, վոր Սիրանին նշանել են այս սև մարդու



հետ: Ուրախ Սիրանն ի՞նչպես պիտի ապրի սրա մոտ:

Յեվ ցանկանում եմ, վոր նրան մի այնպիսի բան պատահի, վոր նա այլևս չկարողանա գալ Սիրանի մոտ:

Յեվ ահա մի որ պատահում է մի բան, վոր ինձ շատ ուրախացնում է:

Մեր շունը՝ Թորլանը միշտ կապած է լինում պարտիզի ծառերի տակ. նախ նրա համար, վոր պարտեզը գողեր չմտնեն, յերկրորդ՝ նրա համար, վորովհետև շատ կատաղի յե, հարձակվում է ամեն մի անծանոթի, անցորդի վրա—յերեխա լինի, կին թե մարդ մվնում է նրա համար. հարձակվում և անձայն, դուխում—գցում գետին ու հետանում, կամ յերբեմն շորերից կծում և մի բերան ու գարձյալ փախչում իր տեղը նստում և, լեզուն հանած, հետամ՝ հաղթանակ տարածի նման: Ուժեղ է շատ. ինչ կապով էլ կապում ենք—կտրում է չարունակ:

Այդ որը տանը նստած ենք, հանկարծ լսում ենք Թորլանի զոմռոցը փողոցի կողմից (և վոչ թե պարտեզի) ու մեկին ասում է բարկացած. «Կորի՛, դե կորի՛»...

Յես ու մայրս վազում ենք դուրս և... պատկեր: Մեր Թորլանը հարձակվել է Սամսոնենց փեսայի վրա. նրա սև շալվարը յուրեից պատռված կախվել է մի թիզ, բացելով սպիտակ վուռաչորը: Յեվ Թորլանը, վրի չդիման ընկղմացնելով, գնում է պարտեզ: Իսկ փեսան՝ դույնը գցած, կանգնել է չմարած. չգիտի յի՞ա գնա, թե առաջ: Կարծես

այդ վիճակում ճի ուզում վոչ Սամսոնենց տուն գնալ, վոչ բազար:

Մայրս ամաչելուց նեբս է մանում խնդրելու, լակ յես կանգնում նայում եմ, թե . ինչ է անելու վեսան.—Սիրանի՛ մոտ է գնալու, թե՞ բազար... Բայց նա ձեռով չոչափում է պատռած տեղը և մեջքը պատին դեմ անում, կանգնում: Ինձ այնպես է թվում, վոր նա չի ուզում այդ պատռվածը մարդ տեսնի:

Ու կանգնում է այնքան, մինչև վոր մի պատարկ կառք և անցնում հողքի փողոցով. ձայն է տալիս կառապանին և նստում ու գնում դեպի բազար:

Անսահման ուրախություն է գալիս վրաս: Մինչև յերեկո, մինչև քնելս չուտ-չուտ հիշում եմ վեսային ու ծիծաղո՛ւմ, ծիծաղո՛ւմ... Անկողնում պառկած էլ՝ մտածում եմ նրա չալվարի մասին. հիշում եմ նրա գույնը քսկին ու չիթությունը, և հպարտանում եմ ինքս ինձ.

— Դե գնա՛: Տեսա՛ր...

Ու չեմ կարծում քնավ, այլ ուրախանում եմ, ուրախանում անսահման, անվերջ... Յեվ ինձ թվում է Սիրանն էլ կուրախանար, յերե տեսներ. անդամ կուրախանա, յերե լսանա... Մտածում եմ, վոր, վեսան, յերևի, էլ Սիրանի մոտ չի գա իր պատռված չալվարով: Կամաչի ու էլ չի յերևա...

Բայց, ինչպես յերևում է, այդ վեսան չալվար չատ ունի: Հետևյալ որը նա գալիս է նոր հագուստներով և ձեռին մի մեծ ձեռնափայտ:

Իսկ մի շաբաթ հետո՝ նա, չատ հարսանիքա-



վորներով հետ, տանում է Սիրանին, ու յես վազում եմ նրանց կառքի կողքով, նրանց կառքի յետևից. ուզում եմ տեսնել Սիրանին իր նոր ճերմակ հանդերձների մեջ. ուզում եմ, վոր նա՝ Սիրանը նայի ինձ, նկատի ինձ, գոնե մի աչքով. յերե չի կարող «մնաս բարով» ասել, գոնե ժպտա վերջին անգամ: Յեվ վազում եմ, հավասարվում կառքին ու նայում նրան, նրա յերեսի գույնին, գլխի ոլկատակ ծաղկե պսակին. ժպտում եմ, ձեռներս չարժելով. ուզում եմ նրա ուշադրությունը գրավել...

Բայց չի աչքովում:

Սիրանը՝ գոզը յերեսին, ձեռները կրծքին լուրջ նստել է վեսայի կողքին ու վոչ մի կողմ չի նայում, այլ միայն իր ծնկներին:

Անձրև է գալիս, մանրահատ մի անձրև, վոր միայն մեր յերկրում է գալիս. դա անձրև չի, ավելի չուտ անձրևափոշի, բայց թրջում է խիստ մեծ անձրևի պես: Բայց, չնայած դրան, բոլորն ուրախ են, ժպտերես. մի քանի հոգի նույնիսկ յերդում են գուռնայի նվագին տակ, կառքերի մեջ:

Յեվ կառքերը մեկ հանդարտ, մեկ արագ գնում են ցեխոտ փողոցներով, և յես նրանց հետ. ավելի չուտ՝ Սիրանի կառքի հետ... Անիվները ցեխ են շաղ տալիս, ձիերի վոտները ցեխ են ջլարտում. ցեխերը թռչում են այս ու այն կողմ, ցեխերը անձրևի հետ թափվում են ինձ վրա:

Բայց վոչինչ... յես վազում եմ... աշխատում եմ յես չընկնել Սիրանի կառքից. ուզում եմ, վոր նա մի անգամ գոնե նայի ինձ...

Ջուռնաչիների կառքը գնում է ամենից առաջ: Նրա յետևից՝ Սիրանի ու վեսայի կառքը, ապա գալիս են մյուս կառքերը—բարեկամներինը, ազգականներինը... Կառքեր, կառքեր, քանի՞ն են...

Կառքերից մեկում նստած է Սամսոնը՝ չերքեզական հագին, ծլավոր փափախը գլխին և արծաթե փոքրիկ դաշույնը կողքից կախ:

Ջուռնան նվագում է, կառքերը գնում են:

Անիվները յեխ են չալ տալիս, ձիերի վոտները յեխ են շպրտում... Յես յես վայում եմ կառքերի հետ, կառքերի կողքով:

Վերջապես, հասնում են յեկեղեցի: Բոլորն իջնում են կառքերից ու մտնում ներս: Փեսան, Սիրանի թևը բռնած, գնում է առաջ, իսկ Սամսոնը՝ չերքեզական հագած, Սիրանի կողքին... Գնում կանդնում են պսակավորված աղերսների առաջը, ու ժողովուրդը ամբողջ շրջապատում է նրանց:

Ձնկրում եմ կանանց ու մարդկանց շարքերը և ինքս էլ գնում առաջ:

Սիրանը կանդնել է վեսայի ու Սամսոնի արանքում, ձեռները ելի կրծքին, աչքերը ցած խոնարհած: Տերտերը, արծաթե խաչը բարձր բռնած, ինչ-որ բաներ է ասում նրանց, և փեսան ու Սիրանը՝ դլխով են անում հերթով:

Սամսոնը նկատում է ինձ ու ժպտում:

Յես նույնպես ժպտում եմ նրան, և սպասում եմ, որ Սիրանն էլ նայի ինձ ու ժպտա, գոնե մի անգամ: Բայց Սիրանն յերբեք աչքերը չի բարձրացնում վեր.



այլ միայն գլխով է անում տերտերի ասածներին, առանց նրան նայելու:

Մտածում եմ— ինչպե՞ս անեմ, որ ինձ նկատի: Ձայն տալ— չի կարելի, ամոթ է... Ի՞նչ անեմ հապա...

Յեվ ահա, յերբ տերտերը վերջացնում է պսակը, և հարսանիքավորները պատրաստվում են դուրս գալ՝ կառքեր նստելու, յես գնում կանգնում եմ յեկեղեցու դռանը, ուղղակի դռան առաջ:

Հիմա արդեն կնկատի,— մտածում եմ՝ իմ պյուռուով հիացած,— դուրս դա թեև չի, ինձ կտեսնի:

Բայց Սիրանից առաջ դուրս են գալիս ինչ-որ հարսանիքավոր աղջիկներ ու կանայք, և Սիրանը նրանց յետևից վոչ միայն չի տեսնում ինձ, այլև ամաչում է նայել նրանց: Այնպես է ամաչում— թերթերունքը բարձրացնել չի կարողանում:

Այդ ժամանակ յես նետվում եմ դեպի նրա կառքը ու կանգնում հենց վոտ դնելու տեղին մոտ: Այստեղ արդեն չի կարող չնկատել... Նստելու ժամանակ նրան չեն խանգարի և Սիրանը կտեսնի ինձ, կժպտա և, դուցե, ասի «մնաս բարով, Սուրեն»...

Յեվ ահա գալիս և նա փեսայի հետ թևանցուկ. ահա մոտենում է կառքին... Բայց այս ի՞նչ է— մարդիկ, կանայք դարձյալ շրջապատում են նրանց... մի կին հրում է ինձ ու, Սիրանի վրնչերը բարձրացնելով, կառք է նստեցնում նրան...

Ջուռնան վչում է նորից, ու կառքերը շարժվում են յերար յետևից: Շարժվում է և Սիրանի կառքը:

Ու նորից վազում եմ յես կառքերի կողքով:

Անձրևը մաղում է դարձյալ: Անիվները ցեխ են շաղ տալիս, ձիերի վոռնոցը ցեխ են շպրտում. ցեխը թռչում է այս ու այն կողմ. ցեխը անձրևի հետ խառնվում է և ինձ վրա:

Ու քանի գնում դուռնան հնչում է պիլ, կառքերն արագացնում են իրենց ընթացքը:

Յեվ յես... յես ել չեմ կարողանում հետևել նրանց. կանգնում եմ փողոցի մեջտեղ և, չդիտեմ ինչու, լալիս եմ կամաց: Լալիս եմ ու թևքերով սրբում աչքերս:

Իսկ անձրևը, մանրահատ անձրևը, անձրևաթիթեղին հանդարտ մաղում է վրաս...

Իրիկնամուտ է. ճրագները վառում են արդեն, յերբ տուն եմ դառնում: Դեռ հեռվից նկատում եմ մորս կերպարանքը մեր բակում. նա կանգնել է մոյոր՝ ձեռները կրծքին խաչած: Ինձ տեսնելուն պես՝ առաջ է գալիս բարկացած:

— Վո՞րտեղ ես, այ անիրավ:

Զդիտեմ ինչ պատասխանեմ. սիրտս լիքն է այնքան և մտքերս այնպես ցրվել ու չորերս այնպես ցնխոտ, վոր չեմ կարողանում մի կարգին տուտ ասել:

— Գնացել եյի աղբյուրը՝ ջուր խմելու:

— Տանը ջուր չկա՞ր, վոր ես անձրևին աղբյուրը գնացիր,— ասում է նա բարկացած, պարզապես չը հավատալով իմ տխեն, ավելի շուտ պայրանալով իմ տուխ վրա:



Վորովհետև ո՛վ է տեսել, վոր յերկու–յերեք ժամ ջուր խմեն:

Ու մի ապտակ է իջնում յերեսիս:

— Գնացել ես թրջվել, ցեխոտ շաղախվել, թե ջուր եյի խմո՛ւմ: Ա՛յ քեզ ջուր խմել:

Իջնում է յերկրորդ հարվածը, այս անգամ զբլխիս:

— Սպասիր հերդ դա, քեզ ջուր խմել ցույց կըտամ...

Բայց մինչև հորս գալը՝ յես անկողին եմ մըտնում, վոր դա ինձ քնած տեսնի: Քնած ժամանակ չի ծեծվ... Յես ուստա քնած եմ ձևացնում, վորովհետև քունս չի տանում: Յերևում է ինձ Սիրանը՝ հարսի ճերմակ զգեստներով, գողը յերեսին, աչքերը խոնարհած... Յերևում է նրա թխադեմ վեհան՝ բուխարսի վախվխով ու վոլորած բարակ բեխերով:

Իսկ կառքերը վազում են ելի, վազում են ու ցեխ են շաղ տալիս:

Յես դժվարությամբ եմ չնչում, և տնքում եմ չուտ–չուտ:

Մայրս մի քանի անգամ կռանում է վրաս ու հարցնում մտահոգ, թե ինչո՛ւ եմ տնքում, ի՞նչս է ցավում արդյոք:

— Ոչինչ,— ասում եմ,— վոչ մի տեղս:

— Հը՛. չլինի՞ նորից գոլի խնճոր ես կերել,— չարունակում է նա, և ապառնում, վոր այլևս անտառի խնճոր չուտեմ, յերեխ վոչ կծծի:

Յես նորից չունչս քաշում եմ ինձ ու ուստ քնած ձևանում:

Ել չեմաք է տնքալ... Հարկավոր չե տնքալ...

## Ը

### Առաջին վիշտ

Կա՞ն արդյոք մարդիկ, որոնք չեն հիշում իրենց մանկությունը կամ մանկության դեպքերը: Եվ թե կան— դրանք դժբախտ մարդիկ են՝ պայծառ հուշերի հաճույքից զրկված. որովհետև մանկությունը — ուրախ թե տխուր— միշտ մանկություն է՝ իր անարատ սրտով, կյանքի բուռն ծարավով և լուսավոր, լուսաշող յերազներով, որ զարդարում են մեր գոյության առավոտը և յերկրորդ անգամ էլ չեն կրկնվում... Ինձ միշտ զարմացնում են այն մարդիկ, որոնք ասում են թե ոչինչ չեն հիշում իրենց մանկությունից:

Ես նույնիսկ հիշում եմ ահա այն առուն, որ ամեն որ՝ հանդարտ, չողչողալով անցնում է մեր տան առջևից. մեր հարևանները և ավելի ներքև գրանով ջրում են բանջարանոցները ու պարտեզները, բակերը, փողոցները. նրա մեջ լողում են սագի ու բադի դեղնակտուց ճուտեր՝ իրենց մայրերի հետ միասին և մի



տալոր, վարունգի կեղև կամ ճիճու դանդաղ՝ խըլխլում են իրարից այնպիսի մոլուցքով ու ագահությամբ, ասես իրենց կյանքը կախված է այդ տալորից կամ վարունգի կճեպից: Այդ առվի մեջ խաղում ենք և մենք յերեխաներս. թղթե նավակներ, տախտակի կտորներ ենք գցում ջրի յերեսը, ցեխով, ավազով տնակներ, ճանապարհներ ենք չինում նրա ափերին կամ վտակներիս քշտած վազվզում ենք ջրի մեջ ու ապրիլում: Սագերն ու բադերը՝ իրենց ճուտերով սըրտատապառատ վախչում են մեր առջևից: Բայց պատահում է այնպես, որ մայր-սագը, վիզը յերկարելով, հարձակվում է մեզ վրա, ու այս անգամ մենք ենք վախչում դլխապատառ... Պատահում է նաև, որ տալորի ու բադերի ճղճղոցի վրա դուրս է գալիս մի տանտիկին ու, մի ձեռը մեջքին վանթելով, մյուսը բռունցք չինած, ծղրտում է մեզ վրա.

— Ա՛, մահը ձեզ տանի, լինչ եք ուզում անաստուններից...

Ու մենք վախչում ենք ահաբեկ:

Մի անգամ էլ ահա, յերբ յես ու յեղբայրս՝ Աբոտաչը խաղում ենք առվում և սագերն ահագին աղմուկով վախչում են մեղանից,— հանկարծ պատշգամի դուրս գալիս հորեղբորս կինը՝ Սանամ-պիպին.

— Ա., մահը ձեզ տանի. լինչ եք ուզում անլեզու անասուններից:

Մենք վախչում ենք առուն: Ու այդ որվանից Աբոտաչը հիվանդանում է: Ես լինձ թվում է Սանամ-պիպին անիծեց— դրա համար:

Ես ահա քանի որ պատկած է նա իր փոքրիկ ան-

կողնում. մայրս հաճախ նստում է նրա մոտ, կերակրում է նրան կամ ճանճերը քշում ուսի ճղնեբով, վորովհետև Աբրաչն ինքը չի կարող քշել—այնպես թույլ է նա: Մայրս ասում է, վոր Աբրաչը ծաղիկ է հանել. և դրա համար մեզ՝ յերեխաներիս չի թողնում մոտենանք նրա անկողնուն:

— Չի՛ կարելի,— ասում է,— բժիշկն արգելել է...

Բայց յես այնպես եմ ուզում տեսնել Աբրաչի հանած ծաղիկը. լինճ զարմանալի, չա՛տ զարմանալի յե թվում, վոր մարդու, յերեխայի մարմնի վրա կարող է ծաղիկ դուրս գալ: Այդ ի՞նչպես է լինում, և այդ ինչ զարմանալի ծաղիկ պիտի լինի... Հետաքրքրական է՝ ի՞նչ գույն, ի՞նչ տեսք ունի: Ու յերբեմն, Աբրաչի քնած ժամանակ, մոտենում եմ հեռվից նայում նրա դեմքին, ուր յերևում են կարմրած վոքրիկ բշտիկներ. մայրս ասում է, վոր դրանք են Աբրաչի հանած ծաղիկները. բայց յես չեմ հավատում, — դա ի՞նչ ծաղիկ է վոր. մի՞թե ծաղիկն այդպես կը լինի... Իսկական ծաղիկը, յերևի, նրա մարմնի վրա յե. տեսնես վո՞ր տեղն է արդյոք— կրծքին, մեջքին... Բայց մոտենալ նրա մարմինը բանալ— չեմ համարձակվում. դուցե մրսի, դուցե ցավ պատճառեմ նրան,— այնպես է տանջվում խեղճ Աբրաչը:

Վերջապես, մայրիկս յետ է դալիս նրա վերմակը մի՛ որ, բաց է անում նրա մարմինը և նրա կրծքին, մեջքին, վոտներին, թևերի վրա ցույց է տալիս նույնպիսի բշտիկներ, ինչ վոր յերեսին են:

Ի՞նչ հիասթափություն...մի՞թե դրանք ծաղիկներ են... և դրանք ի՞նչ են, վոր մոտենալ չի կարելի,—մտածում եմ յես ու տխրում, վոր յեղբայրս չի կարողանում հետս խաղալ և մայրս տխրված է և չի թունակ նրա կողքին մնալ, նրանով զրաղվել ու տրխրել: Հայրս նույնպես տխուր է. ամեն որ աշխատանքից գառնալիս՝ տուն է մտնում թե չե, մոտենում է Աբրաչի անկողնին:

— Աբրաչ ջան...

Ասում է նա այնպիսի վոխված ձայնով, այնպես մեղմ. յես նրա ձայնի մեջ զգում եմ այնքան քնքշանք ու զորով, վոր յերբեք չեմ լսել. և դրանից յերեխանում եմ, վոր Աբրաչի դրությունը ծանր է:

Բայց Աբրաչը անքուն է միայն:

Յեվ հայրս գլուխն որորում է անխոս ու նստում:

Մեծերի տխրությունը վարակում է և մեզ՝ յերեխաներիս: Ու ամեն յերեկո պատվում եմ այն հույսով, թե Աբրաչը վաղը, յերևի, կլսվանա և հայրս ու մայրս էլ չեն տխրի:

Բայց մի գիշեր ահա յես զարթնում եմ մորս լացի ձայնից: Նայում եմ զարմացած. ճրագը վառվում է ամբողջ բոցով, վառվում է իրիկվա պես, յերբ պատրաստվում են քնելու համար. և մայրս հոքել է Աբրաչի անկողնու մոտ ու լալիս է ծնկներին տալով:

Հայրս նույնպես արթուն է, գիրկիվա հագուստներով կանգնած:

— Դե, յես գնամ տեղտեղի յետևից,— ասում է նա ու դուրս գնում:

Իսկ դուրսը մութն է, դիշեր:

Ներս գնալուց հետո՝ մայրս, նկատելով զարթնել եմ, ասում է.

— Վեր կաց, Սուրեն, վեր կաց չորերդ հագի:

Ուրիշ անգամ կես հագիվ թե կատարելի նրա պահանջը այդ ժամին, բայց այժմ նրա ձայնի մեջ զգում եմ անսահման տխրություն, մի տխրություն, որ թափանցում է մինչև հոգուս խորքը. մանավանդ նրա լացը, հորս տերտերի կեանքից գնալը, Արտաշէս յուդիյոնը և թափառուն հայացքը, որ նետում է առաստաղին ու պատերին— տարօրինակ, զարմանալի կին թվում. ինձ պաշարում է մի խորին ահ, անորոշ մի զգոց, և կես անխոս վեր եմ կենում, սկսում եմ արագ հագնվել ու նայել կեղրօրս, որ նայվածքը սևեռել է առաստաղին ու չզել:

Մայրս ձեռները ճմռում է չարունակ կամ ծընկները տրորում: Մեկ–մեկ էլ աչքերը հառում է առաստաղին ու մնում այդպես մի յերկու վայրկյան: Յես հասկանում եմ ինչ է նշանակում այդ հայացքը,— մայրս աղոթում է:

Մայրս ինձ էլ է աղոթքները սովորեցրել և ասել, որ յերթե մի բան ուզենամ խնդրել աստծուց՝ պետք է աղոթեմ, և այն ժամանակ աստված կկատարի իմ խնդիրքը. ու ինքն աղոթում է հաճախ:

Աղոթում է և հիմա:

Ուրեմն դա հարկավոր է այսոր:

Հագնվում եմ, չարունակ մորս նայելով, և անկատելի դուրս եմ գալիս բակը: Մութն է, յերկինքը լեզն է աստղերով: Ուրիչ տեղ մութը վախեցնում է ինձ, բայց մեր բակում յես վախ չեմ զգում: Զի՞ որ մեր յեղներն այնտեղ են, իրենց մշտական տեղը կապված. իսկ հիմա նստած՝ վորոճում են հանդարտ:

Կանգնում եմ բակում ու նայում յերկինքին, նայում եմ արտասվելու պատրաստ աչքերով: Ու մեկ էլ — ինքնաբերաբար՞ արդյոք, թե մորս հետևելով, սկսում եմ աղոթել:

Աղոթում եմ տատիս, մորս սովորեցրած խոսքով. «աստված, դու...» Յեվ աղոթում եմ այնպես արտանց, որ չեմ զգում, թե ինչպես է արցունքը հոսում աչքերիցս. զգում եմ միայն, որ այտերիս վրա դողում են ինչ–որ կաթիլներ...

Աստղերը թարթելով յերկինքից նայում են դեպ ցած ու, թվում է, լսում են ինձ՝ թարթելով:

Յես աղոթում եմ, և աստված պատկերանում է ինձ բարձր տեղ նստած ճերմակ մորուքով ու ճերմակ զլխով մի ծեր պապի՝ ճերմակաթև հրեշտակներով չրջապատված: Աղոթում եմ, ու ինձ թվում է, որ իմ խոսքերը թռչում են յերկինք, հասնում են աստղերին, ու աստղերից էլ դենը և գնում աստծու մոտ... Յեվ կարծում եմ, որ աստված իմ խոսքերը լսելով՝ չուտով մի բան կանի: Ու վորպեսզի անպատճառ անի, յես խոստանում եմ նրան ամեն, ամեն բան, որ էլ սուտ չեմ ասի, որ մայրիկիս ու հայրիկիս կլսեմ միշտ և ժամանակին տուն կգամ խաղատեղից, որ մայրիկս չբարկանա...

Յես աղոթում եմ, ականջս մայրիկիս ձայնին. և քանի լսում եմ նրա հառաչանքն ու լացը— զգում եմ, որ յեղբայրս դեռ չի լավացել. ու չարունակում

եմ ավելի ջերմեռանդ: Ձեվ աղոթելով, հավատում եմ, վոր աստված կլսի իմ աղերսը: Իմ պայծառ, ջինջ հավատը, աստղազարդ յերկնքի ու լուռ դիշերի մեջ ստեղծում է լուսեղեն հույսեր, ու յես սարքում եմ այդ հույսերով:— Այ, Աբրաշը կլավանա, և յես կը կալարծենամ ու կասեմ մորս, վոր յես աղոթեցի, պրծանից ել լավացավ:

Մեկ ել մորս բարձր լացը սթափեցնում է ինձ:

Այնքան տխուր, այնպես աղեխուր, հուսահատական է նրա լացը, վոր յես անմիջապես նեռվում եմ ներս:

Հայրս ախրաների հետ յեկել,— կանգնել են Աբրաշի անկողնի մոտ, մայրս լալիս է, ձեռները կոտրըտելով, իսկ Աբրաշն այս անգամ՝ աչքերը փակ, մեկնվել է անշարժ:

Նայելով Աբրաշին յես հասկանում եմ ամեն ինչ. մորս արցունքները խեղդում են ինձ. սիրտս ճմլվում ու մեկը ասես սեղմում է կոկորդս և չդիտեմ ինչպես, ով է ինձ դրդում—նորից դուրս եմ վազում և իմ դժգոհությունն ու վիրավորանքը հայտնում աստվածուն, ինչպես անում են մեր թաղի կանայք, ինչպես անում են յերբեմն և մայրս ու տատս:— բռունցք եմ թափ տալիս յերկնքի դեմ, վոր չլավացրեց մեր Աբրաշին: չե՞ վոր յես այնպես աղոթեցի... ու մտքումս հայհոյում եմ նրան այն խոսքերով, վոր սովորաբար ասում են կանայք այդպիսի դեպքերում.

— Ու, անխիղճ, անիրավ...

Այդ դիշեր իմ պայծառ հավատը վշրվում և բաժակի նման, և յես այնքան, այնքան դժբախտ եմ ըզդում ինձ, այնպես հուսախաբ ու հիասթափ: Մինչ այդ ինձ թվում եր, թե բոլորս, ինչպես կանք, այդպես եվ կմանանք— մայրս կմնա մայր, հայրս՝ հայր, տատս՝ տատ, մենք՝ յես, Աբրաշը, վարդուշը— յերեխաներ. և թե ամեն մարդ ստեղծվել և այդպես մնալու, ու վոչ մի բան չի փոխվելու յերբեք...

Առավոտը աղջականներ ու հարևաններ— կանայք, մարդիկ են գալիս մեր տունը— քեռի Փիլոսը, հորաքույրս, նրա մարդը, տատս, պապս, վատո-քիքիքերը— լաց են լինում մորս հետ, և հետո— բոլորը միասին վերցնում են մեր Աբրաշին ու տանում թաղելու:

Վորքան ել չեն թողնում գերեզմանատուն գնալու, բայց յես գնում եմ տխուր թափորի յետևից: Գնում եմ տեսնեմ ո՞ւր են տանելու մեր խեղճ Աբրաշին:

Ձերբ հասնում եմ գերեզմանատուն, այդտեղ առաջին անգամ յես սարսափ եմ զգում այն մութ, անհասկանալի առեղծվածի հանդեպ, վոր մահ է կոչվում: Ուրեմն մահն այն է, վոր մարդուն, յերեխային, պատանած տեղավորում են գադաղի մեջ և տանում— գնում մի խոր փոս և վրան հող ու քար լցնում: Յես տեսել եմ ուրիշ մեռելներ ել, բայց այնպիսի սարսափ չեմ զգացել, ինչպես հիմա:— Այժմ սիրտս պայթում և այն մտքից, թե մեր փոքրիկ, հիվանդ Աբրաշը ինչպես պետք և դիմանա այդ ծանր հողի ու քարերի տակ: Բայց ինձ մխիթարում եմ այն հանգամանքը, վոր նրա հոգին, մորս ու տատիս աղերսով, պիտի դնար յերկինք... Բայց այստեղ ել ծա-

դում եր մի հարց, թե ո՞վ պիտի հապա հաց, կերա-
կուր տա նրան, անկողին պատրաստի, խնամի. չե՞
վոր նա հվիանդ է:

Ինձ առանձնապես զրաղեցնում է այն խնդիրը,
թե ինչ պիտի հաղնի մեր խեղճ Աբրահը. չե՞ վոր բո-
լոր հադուստները մնացել են այստեղ—տանը: Չե՞
վոր կմրսի...

Ու այնքան մենակ, տխուր ու վորբ է պատկերա-
նում նա ինձ, վոր արցունքները վազվզում են աչ-
քերս:

Այդ յերեկո, քնելուց առաջ, յես յերկար մտա-
ծում եմ Աբրահյի մասին. հիշում եմ նրա խաղերը՝
մեր պարտիզում ու առվի ափին, նրա խոսքերը և ծի-
ծաղը, և մանավանդ ինձ տանջում է մի հիշողու-
թյուն. այն, թե ինչպես նա վերջին անգամ, հիվան-
դությունից առաջ, խաղի ժամանակ ուզեց իմ հոլը—
«մի անգամ, մի անգամ» պղեու, և յես չտվի...

Ախ, ինչո՞ւ չտվի...

Ո՛հ, յեթե նորից զար— յես այնպես կսիրեի
նրան, ու վոչ մի բան չեզի մերժի. և վինչ ել ուզեր—
չեզի խնայի. վոչինչ, վոչինչ չեզի խնայի. միայն թե
նա չտխրեր, դժգոհ չմնար:

Ա՛խ, յեթե նորից զար— յես ամեն, ամեն բան
կտայի նրան— հոլս, պնդակս, վեզերս, բոլորը:
Կտանեի հետս դաշտ, կխաղայի հետը, ծառերից
չոր ու խնձոր կքաղեի նրա համար: Ու կսիրեի,
կսիրեի...

Բայց կարո՞ղ է արդյոք Աբրահը զալ նորից: Կա-



րո՞ղ է արդյոք դուրս զալ այնքան հողի ու քարերի
տակից...

Յես ել չեմ կարողանում մտածել. արցունքները
խեղդում են ինձ և յես հեկեկում եմ, հեկեկում յեր-
կար ու անսիրտ...

## VI

### ՉԱՔԱՐ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՊՐՈՑԸ

Մեր տանը նորից վեճ կա։

Ցեվ այդ վեճի առարկան դարձյալ յես եմ։ Մայրս ու հայրս ամեն յերեկո խոսում են ինձ դպրոց տալու մասին։ Մայրս պահանջում է, որ հայրս չուտով ինձ դպրոց տանի, որովհետև ուրիշները՝ իմ հասակի տղաներն ու աղջիկները արդեն գնում են սովորելու։ Իսկ հայրս առաջարկում է՝ սպասել մի քիչ, մինչև կալը կվերջացնի. խակ կալից հետո պատճառ է բերում դարմանը, կարտոֆիլը։ Ցեվ մայրս բարկանում է։ Ու դարձյալ վիճում են այն մասին, թե ո՞ր դպրոցը տան ինձ,— ռուսա՞ց դպրոցը, թե՞ ուրիշ մի տեղ։ Ցեվ յերկար չեն կարողանում ընտրություն անել։

Բայց նրանց վեճից յես իմանում եմ, որ յեղել են հայոց դպրոցներ, և որ այդ հայոց դպրոցները փակվել են ռուս թագավորի հրամանով ու նրանց տեղ բաց են արել ռուսաց դպրոց։ Հիմա ուրեմն ռուսաց



դպրոց կա միայն, ուր նաև յերկու վարժապետ ու մի տերտեր, որ աշակերտներ են սովորեցնում Թադևն։ Ցեվ դրանցից մեկը Չաքար վարժապետն է, որ նոր է յեկել։ Մայրս լսել է, որ նա ամենալավն է, որովհետև ճեմարանում է յեղել և տերտերից լավ է սովորեցնում։

Վորովհետև խոսում են իմ մասին, յես նրանց լսում եմ խորին ուշադրությամբ, բայց նրանց ասածներից մի քանի բան չեմ հասկանում. որինակ, թե ինչու յե Թագավորը փակել հայոց դպրոցները, ի՞նչ է նշանակում «ճեմարան» և ինչո՞ւ հայոց դպրոցների վրայից բաց են արել ռուս դպրոց։

— Որ ռուս դառնա՛նք,—բացատրում է մայրս։

Ցես այդ էլ չեմ հասկանում։ Ի՞նչ կա որ, յեթե ռուս դառնանք, մենք էլ «փոդրադչու» նման լավ տան կապրենք և նրա յերեխաների պես լավ կհագնվենք։ Իսկ ինչ վերաբերում է «ճեմարանին»—այդ ինձ համար մնում է մութ։

Վերջապես, որոշում են տանել ինձ Չաքար վարժապետի «դպրոցը»։ Ընդհա՛ր Սամսոնն արդեն գնում է նրա մոտ։ Գնում է մի չատ չերքեզական հագած, մի դիրք կռնատակը դրած. և մայրս, ամեն անգամ նրան տեսնելիս, անհանգստանում է.

— Վա՛յ, կուրանամ յես, Սուրեն ջան, նա գնաց մարդ պատառ, դու մնացիր չորան...

Ու ծնկանը խփում, գարդ է անում, խակ յերեկոները հանգիստ չի տալիս հորս.

—Այ մարդ, չուտ, խալխի բեխեքը մարդ դառան, մերը մնաց չորան։

Ցեվ հայրս միշտ պատասխանում է.

—Լավ, լավ. Թող կարտոլն էլ հանեմ— հետո:

Հայրս առհասարակ զղայուններ չի արտահայտում. անառելի, անկարելի բաներ չի խոստանում, բայց ինչ-որ խոստանում է— կատարում է: Այս անգամ էլ այդպես. հենց որ գետնախնձորը հանում— թերում է տուն— մյուս որն ինձ տանում է Զաքար վարժապետի «դպրոցը»:

— Խելոք կմնաս,— ասում է մայրս, հագուստներս ուղղելով ու ճանապարհ դնելով.— ինչ որ ասի՝ կատարես, ոչ մի բան քոց չթողնես...

Ցես դլխով եմ անում, թե՝ այո, ոչ մի բան չեմ թողնի, և ուրախ եմ, որ գնում եմ այն դպրոցը, ուր Սամսոնն է գնում: Այդ լավ է, միասին կերթանք, միասին կգանք, երբեմն միասին կպաշտպանենք իրար և ուրիշներին կծեծենք,— մտածում եմ ես ճանապարհին:

Բայց ճանապարհը յերկար չի, չուտով հասնում ենք:

Զաքար վարժապետի դպրոցը՛... Ցես յերբեք չեմ մոռանա քեզ, իմ առաջին պանսիոն, և քեզ, իմ առաջին ուսուցիչ՝ Զաքար վարժապետ: Ձեմ մոռանա և քո աներոջը՝ տեր-Բաղդասարին, որը իր հետաքրքիր հարցերով միշտ ամաչեցնում էր մեր դասերին, և դոքանչին քո՝ իրիցկնոջը պատռվելի, որը քո փոխարեն նկատողություններ էր անում մեզ:

Զաքար վարժապետի դպրոցը՛... ներս մտնելու համար՝ լինում ենք յերկու-յերեք աստիճան. կիսապեռնոփոր սենյակ է՝ քառակուսի լուսամուտներով,



մի կողմը՝ արկղների ու սղոցած կարճ կոճղերի վրա չարված են հասարակ յերկար տախտակներ՝ մեկը բարձր, մյուսը ցածր: Նույնպիսի յերկար մի տախտակ ամրացած է պատին՝ Թարեքի պես, և նրա վրա կան ինչ-որ մանրիկ խորանարդներ, որ առաջին պահ խաղալիքներ են թվում ինձ: Ցես սկզբում զարմանում եմ. սենյակի մեջ այդքան տախտակ և այդքա՞ն խաղալիք Թարեքին— ինչո՞ւ համար են: Բայց հետո պարզվում է, որ դրանք «սեղաններ ու նստարաններ» են աշակերտների համար. իսկ մանրիկ խորանարդները՝ տառեր: Սրանց մի խորանարդի յուրաքանչյուր կողմին տպված է մի տառ. այսինքն ամեն մեկի վրա վեց տառ:

«Դպրոցը» զեղնահարկ է, որովհետև, ինչպես ասում եմ, վերի հարկը դեռ չի վերջացած. հատակը հոդ է, պատերը տակավին անսվաղ. քարերը յերևում են. բայց պատերին կախված են զանազան պատկերներ և մի սև տախտակ, որի վրա կավիճով ինչ-որ բաներ են գրված...

Այս բոլորից բացի սենյակում կան Թախտեր, հացի մեծ պահարան և ուրիշ իրեր... Վառ շորեր հագած, ուրախ ուխտավորի նման մի բարձրահասակ սէրուն աղջիկ, մի խումբ բանալիներ ձեռին, Թևերի տուրմաններն ու բանալիները դնդղնդացնելով դասի ժամանակ գալիս է, պահարանը բանում, չոր լավաշները ձեռներին դրած՝ տանում, կրկին տուրմաններն ու բանալիները դնդղնդացնելով: Ներս մտնելիս՝ հոգը կարծես Թնդում է նրա վտոներին տակ և «դպրոցը» լցվում է ուրախությամբ: Դժվար է ասել ինչից

և այդ,— նրա ղվարթ չարժումների՞ց, թե՞ սուրմանների պնդությունից,— բայց մենք ուզում ենք, որ նա չուտ-չուտ ներս մտնի, որովհետև Զաքար վարժապետը որքան էլ տխուր ու մռայլ լինի, նրան տեսնելիս մեղմանում է խիստն ու ժպտում. նրա դեմքը պայծառանում է այնպես...

Դա Զաքար վարժապետի նշանածն է:

Իսկ ինքը Զաքար վարժապետը, բարձրահասակ, փոքրիկ փայտուկ մորուքով մարդ է, կապույտ վերնաշապկի վրա կապում է գոտի, որի ծոպավոր ծայրերը կախվում են նրա վարտիկի դրպանի վրա, որտեղից չուտ-չուտ հանում է նա յեղրերը կարմիր թելերով աստղնաղործած թաշկինակը և սրբում հոդնած ճակատը:

Զաքար վարժապետը նոր է նշանվել տերտերի աղջկա հետ, և որովհետև, ասում են, դործ, պաշտոն չունի՝ «դպրոց» է բաց արել: Յեվ մենք— 20-ից ավելի յերեխաները— խելոք նստում ենք նրա առաջ, լսում նրա դասերը և նայում, թե ի՛նչ է կատարվում դուրսն ու սենյակում: Յեվ սենյակում յերբեմն դասերից ավելի հետաքրքիր բաներ են լինում:

Թախտերից մեկը մեծ է, չատ մեծ. նա բռնում է սենյակի համարյա մի ամբողջ անկյունը, և ավելի յե զարդարված, քան մյուսը. վրան կա մի վառվռուն դորգ, որի մի ծայրը փռված է պատին, կան և մինդարներ, և բարձեր ու մուշտաքներ՝ խաս յերեսներով: Հաճախ տերտերակինը՝ կարմրերես ու կլորիկ մի կին՝ դալիս նստում է այդ փափուկ մինդարների վրա և, մեջքը մուշտաքաներին տված դուլպայե գործում: Իսկ տերտերը յերբեմն, թիու նման մի բուռը կրծքին, նրա կողքին նստում, լրագիր և կարդում, կամ, մեծ մասամբ ձեռները կապած դրպանը դրած, դնում-գալիս և թախտի առջև, դորգի վրայով: Յեվ այդ ժամանակ նրա մի բուռը ամբամբում է. թվում է տերտերը խոսում և մտքում կամ աղոթք է ասում: Բայց ինձ զարմացնում է այն, որ տերտերը փարաջան հանում է. ինձ մի չտ թվում էր, որ տերտերները յերբեք փարաջա չեն հանում և որ այդ փարաջայի տակ նրանք կանացի ղերյաներ են հագնում. բայց պարզվում է, որ փարաջայի տակ նա կապա յե հագնում և վարտիկ. ուրեմն տերտերը այն էլ, ինչ կարծում եյի մինչև հիմա, թե նա կիսով չափ պապի յե, կիսով չափ տատի: Վոչ, տերտերն ավելի մարդու յե նման, քան կինոջ,— յեղրակացնում եմ յես, և այնուամենայնիվ դռնում եմ, որ տերտերի մեջ դարձյալ կանացի մի բան կա: Յեվ ահա դրանց՝ տերտերի ու իրիցկնոջ ներկայությամբ ուզի յեն ունենում մեր դասերը:

Վարժապետը վերցնում է Թարեքինի չարված քառակուսիներից մեկը և, մատը տառերի վրա դնելով, հարցնում է.

— Սա ի՞նչ է:

Աշակերտները պատասխանում են.

— «Ս. կամ Բ. Դ կամ Գ»... Պատահում է աշակերտի մեկը սխալվում է և Բ-ին Դ է ասում կամ հակառակը:

— Չե, այդ չեղավ,— ասում է վարժապետը:— Լավ նայիր:

Աշակերտը նայում է և զարմացած սխալվում։

— Ա՛յ, տեսար, էլի սխալվեցիր...

Տերտերակինը, որը դուրսն զորձելով՝ մեծ ժամանակ ծպտերես հետևում է մեր դասերին, հանկարծ գլուխն որօրում է.

— Ժամհարանց չաչերից ա, հայրաթ որ կսխալվի,—ասում է նա դժգոհ.—դրանցից ո՛վ է մարդ դառել, որ դա դառնա։

Վարժապետն անհարմար է զգում կարծես, որ իրեն խանգարում են, բայց վոչինչ չի ասում, չհամեձնալով դոքանչին վիրավորել։

Բայց, վոքր անց, իրիցկինը նկատողության է անում մի ուրիշ սխալվող աշակերտի.

— Ա՛յ տղա, ե՛յ, խելքդ գլուխդ հավաքի, կարդին սովորիր, որ հետո չասեն, տերտերանց վհատան բան չի սովորեցրել...

Ցերեկն էլ տերտերն ե միջամտում։ Կանչնում է ֆա ձեռները կապալի յեաև դրած. աչքերը կարճատեսի պես կկոցելով՝ նայում է սխալվող աշակերտներին և հարցնում.

— Դու ումոնցի՞ց ես, տղա։

— Մանասանց Ներսեսի տղան եմ,—ասում եմ յես մի անդամ։

— Ներսեսի՞,— զարմանում է տերտերը։— Ա՛յ քեզ բան։ Խակի չեյի ճանաչվ, յերեխա չասեյիր։ Ուբեմն Մանասի էլ թո՞ռն ես...

— Հա,—ասում եմ յես։

— «Հա» չեն ասիլ, անչնորք,— նկատում է իրիցկինը, գլուխն որօրելով։—Ասա «այո»։ Աշակերտ ես. ամոթ ա. կկարծեն տերտերանց վհատան լավ չի սովորեցնում։

Վարժապետը լռում է մի վայրկյան, թեթև դժգոհությամբ ու կխակսեթ նայում է դոքանչի կողմը և տալա չարունակում դասը։ — Մեկին կարդացնում է, մյուսին թվաբանական խնդիր է տալիս, յերրորդին սովորեցնում է տետրակի մեջ դրել իր անուն-ազգանունը... Աշակերտների պատրաստականությունը տարբեր է, ուստի դասերն էլ տարբեր են։ Այստեղ կան ամեն հասակի աղաներ—տասնըհինգից մինչև յոթ տարեկան. և բոլորը նստում են միասին—փոքրերն առաջ, հասակավորները վերջին շարքերում։ Ցեվ վորովհետև յես համարյա բոլորից փոքր եմ՝ նստել եմ առաջին նստարանին ու այդ հանգամանքի շնորհիվ, ավելի լավ եմ հետևում ուսուցչի շարժումներին և նայում նրա փնջավոր դոստն, վորի ծայրերը չարունակ ծեծում են նրա ապրերը. այդ դոստն ինձ շատ է դուր գալիս. և նայելով՝ չարունակ մտածում եմ—յերբ մեծանամ, յես էլ մի այդպիսի դոստ կառնեմ—կկապեմ...

Դասերը տևում են յերկու ժամ։ Ընդմիջում-ներին վաղում ենք բակում, որ պարտիզից բաժանված է դեռևին դարսած գերաններով։ Խաղիդ հոգնելիս՝ նստում ենք այդ գերանների վրա ու նայում աշնան պարտիզին, ուր մի քանի խնձորենիներ դեռ կռացած են խնձորներով։ Դրանք ամեռվա խնձորներ են. իրիցկինը, ինչպես ինքն է ասում, ձմոռնում է «յեղյամ ուտեն»։

— Հը, ինչ եք աչքներդ չորս արել,— ասում է նա, տեսնելով ինչ ցանկությամբ ու կարոտով ենք նայում աշնան արևի տակ վառվող խնճորներին։—Ձառեսնեմ, չլսեմ մի խնճոր քաղեք. թթուն համար է... Գերաններին ես կոզքին կարող եք խաղալ, համա դենը՝ մի շագ չանեք. վտաներդ կկոտրեմ: Իսկ քաղելու ժամանակ ամենքիդ մի հատ կտամ, վոր աչքներդ վրեն չմնա...

Յեվ ամեն անգամ դասամիջոցին կամ տուն դնալիս խրճիկին դուրս է գալիս բակը նայելու, ինչ հո պատռել չենք մտնում:

Տուն վերադառնում ենք յես ու Սամսոնը միասին և միասին էլ դաս ենք սովորում վա՛մ նրանց տանը, կա՛մ մեր: Մայրս սիրում է, յերբ մենք կարդում ենք գիր կապելով: Նա հրճվում է, վոր յես տառերի անունը տալիս եմ մեկ-մեկ: Մայրիկս ինքը դիտի կարդալ. հենց վոր սխալվում եմ,— ուղղում է, և տանը վոչ մի գործ չի դնում, վոչ մի բանի չի ուղարկում, ինչպես անում եր առաջ. ամեն բան ինքն է անում, վոր յես դասերս չխոչընդեմ.

— Դու կարդա՛, կարդա՛, վոր եղուց ամոթով չմնաս:

Հայրս նույնպես հրճվում է մի առաջին թութիանքներով. այդ մոայլ, անժպիտ մարդը, որվա հոգսերից ու աշխատանքից դադրած՝ ցնծում է, յերբ գիր կապելով՝ ասում եմ. «ա-սա, ա-րա, ա-բի»...

— Ա՛յ, կեցցե՛ս, ասում է նա,— սովորիր, վոր



չքնամուդ աչքը հանես, վոր ասրես, թե չե քեզ էլ կտրոլեն մեղ պես:

Թեև յես չեմ հասկանում լինչ և նշանակում «չքնամու աչքը հանել», բայց չքնամին համարում եմ հոբելյարս, և, հորս խոսքերից վոգևորվելով, ձայնս ավելի յեմ բարձրացնում.

— Ս-ա-բ=սար: Տ-ա-բ=տար... Մ-ա-ս-ի-ս=Մասիս:

— Ա՛յ, կեցցե՛ս... Մասիսն լինչ ա,— հարցնում և հայրս:

— Սար,— պատասխանում եմ յես, վարժապետից սովորած խոսքերով:

— Կեցցե՛ս, ճիշտ ա՛:

— Բա լինչ ես կարծում,—հպարտանում է մայրս,— ուրիշն րեխանց պես անհասկացող հո չի:

— Հը,—խնդում է հայրս, նույնպես հպարտությամբ:—Ո՞ւմ տղան ա, վոր անհասկացող ըլի:

Մայրս չուրթերը սեղմում է և դլուխը որորում.

— Ձլինի՛ ուզում ես ասել, վոր ձեզ ա քաշել:

— Բա ո՞ւմ ա քաշել,—նեղանում է հայրս, ձայնը փոքր ինչ բարձրացնելով:—Ձլինի կարծում ես քո՞ւ հերանց:

— Իհարկե,— հպարտանում է մայրս:

— Բա վոր վատ բան ա անում, ինչո՞ւ ես ասում «ձեզ ա քաշել»:

— Իհարկե, վատ կողմով ձեզ ա քաշել, լավ կողմով՝ մեզ,—չարունակում է մայրս:

Հայրս տաքանում է.

— Ուզում ես ասել, ուրեմն՝ մենք վատ ենք, քու հերանք՝ լա՞վ:

— Իհարկե. իմ հերն իր ազերանցը չի պրկում. իմ հերը պաչոռնի մարդ ա, ոխտը դեղի դլավա...

Այս բանը մայրս ասում է միշտ մի առանձին պարծանքով: Նրա հայրը, այսինքն մյուս պապս, իսկապես, նշանավոր մարդ է ամբողջ շրջանում: Բոլորը նրան ճանաչում են: Թեև վոչ մի «ճեմարանում» չի սովորել, բայց կարդում է դրաբար, ասւաերեն, լրագրներ է առանում: Նրա տան մի «դարեկը» լիքն է յեկեղեցական հատոր, կաշեկազմ դրքերով, կամ ինչպես մայրս է ասում, «ավետարաններով ու ասոլածաշնչերով»: Իսկ առացած լրագրերը նա դարսում է իրար վրա ու պահում: Նրանց առն գնալիս՝ յես միշտ դարմացած կանգ եմ առնում այդ հսկա դրքերի ու լրագրերի դիմաց:—Ի՞նչպես է կարդում պապս այս բոլորը... Բայց կարդում է: Գործից առն դալուն պես, մանավանդ յերեկոները, ակնոցը հագցնում է ականջները ու կարդում կիսաձայն.— ձայնը լսվում է, բառերը՝ վոչ: Բայց չատ տարօրինակ մարդ է նա: Ամեն յերեկո և առավոտ՝ ընտանիքի ներկայության, յեթե հյուր էլ լինի, այդ միևնույն է, նրա էլ ներկայությամբ,—կանդնում է սենյակի մեջտեղը, յերեսը դեպի արևելք, դեպի դուռը դարձած և չատ-չատ խաչակնքելով բեխերն ու միրուքը չարժում է անվերջ... ապա սկսում է ծունր դնել.— կռանում է, մի ձեռը գետին է հասցնում և դարձյալ



չուրթերը չարժում. այդ ավելի չուտ ղժացվում է, իհարկե, բեխերի չարժումից:

Շուրջն ընտանիքի անդամներն ադատ խոսում—ծիծաղում են, բայց նա կարծես չի լսում բնավ: Խորասուզված չարունակում է իր չուրթերի աշխատանքը: Յերեկով այդ աղոթքն ու ծնրադրությունները այն խորհրդավորությունը չունեին, վորքան յերեկոները, յերբ թխում եր, ամեն անկյունում վոդիներն են թաղնված և ուշադիր լսում են պապիս, ուստի և նա աշխատում է անսխալ ու անթերի կատարել իր պարտականությունը նրանց առաջ:

Հայրս այդ պապիս չի սիրում: Ընդունում է, վոր նա խելոք է, չատ գիրք է կարդացել, բայց տանել չի կարողանում, վոր նա աղոթում է այդքան: Յեվ յերբ նրա մասին խոսք է լինում, միշտ ծաղրում է մորս.

— Լա՛վ. հեր ել ասում ես. Սևանի վարդապետա. ամբողջ որը աղոթք ա մրթմրթում:

— Յերանի չի դու նրա նման ըլես,—ասում է մայրս:

— Ատալած վոչ անի:

Ու սկսում են վիճել... Յերբեմն վեճն այնպիսի ընթացք է առնում, վոր նրանք վիրավորում են իրար ու խռովում: Բայց մեծ մասամբ հեղնում են միմյանց, ծիծաղում իրար վրա և նորից դառնում իրենց հոգսերին:

Իսկ յես, նրանց զրույցը լսելով, կրկնում եմ դասերս, վոր Սամսոնից լավ պատասխանեմ, վոր վարժապետը քանոնով ձեռիս չխփի և իրիցկինը

մինդարի վրայից ինձ նկատողություն չանի: Ես վոչ այնքան վարժապետի քանոնից եմ վախենում, վորքան իրիցկնոջ նկատողություններից և տերտերից: Տերտերից և առհասարակ տերտերներից էս վախենում եմ, վորովհետև նրանք մեռել են թաղում: Ինձ թվում է՝ խորհրդավոր ու չար ուժի տեր են տերտերները. վատ ունեն յերկինքի ու աստծու հետ. ո՛ւմ ուզեն կարող են մեռցնել տալ և, ապա յերբեմն՝ տանել թաղել... Դրա համար էս զգուշանում եմ տերտերից. աշխատում եմ դասս լավ պատասխանել, վոկ խաղի ժամանակ նրա աչքից ու սենյակից հեռու մնալ:

Բայց մի անգամ ահա ճամբը, դասամիջոցին, պատահում է մի սարսափելի բան. ընկերներով յերկու բանակի բաժանված, բակում ճնապղնձի յենք խաղում. ճերմակ դնդակներն անվերջ դնում-պալիս են ոդում մի մոլեգին արագությամբ. յուրաքանչյուր խումբ աշխատում է հաղթանակ տանել ինքը և բոլորը քրտնամխած կռանում են բարձրանում, մոռացած և՛ իրենց և՛ ամբողջ աշխարհը. տեսնում ենք միայն ճյունը, վորվից պետք է ճնապղնձի չինել, և հակառակորդին, վորին, պետք է խփել... Ես ու Սամսոնը մի խմբի մեջ ենք. խորթոքված ու լարված դնդակներն ենք չինում սառած ձեռներով ու դեռ կռացած նետում «թշնամիների» վրա: Նույնն անում են մյուսները: Իսկ էս ուզում եմ առանձնապես աչքի ընկնել. մի այնպիսի բան անել, վոր ինձ դովեն. ուզում եմ դնդակներս այնպես պինդ անել, վոր դիպչողին լացացնեն, ու բավական և հակառակորդներից մեկը, յերկուսը լաց լինի, մյուսները կվախենան ու կփախչեն: Այդ պատճառով մի քանի դնդակ պատրաստում եմ միանգամից, ապա լցնում եմ փեչս ու նետում լրիվ յեռևից, մի այնպիս արագությամբ, վոր ինքս հրճվում եմ իմ ճարպկության վրա: Բայց հանկարծ,—ով կարող եր սպասել,—իմ դնդակներից մեկը դիպչում է տնից դուրս յեկող տերտերի դլխին և նրա դպակը նետում ցած: Տղաները «վայ» են անում ու խաղը դադարեցնում: Ես նույնպես. փեչիս ճնապղնձերը թափում եմ ու կանգնում չվարած:

— Ո՞վ եր,—ասում է տերտերը, դպակը ճյունի միջից վերցնելով: Յեվ յես սպասում եմ, վոր տղաներն ահա մատնացույց կանեն ինձ կամ, բռնած, կտանեն տերտերի մոտ:

Բայց տղաները լռում են, և յես մտածում եմ, թե յերևի չնկատեցին, վոր ինձ դնդակը դիպավ, կամ նկատեցին—չեն ուզում ասել, չե՞ վոր հետևանքը վատ կլինի:

Տերտերը նորից է հարցնում.

— Ո՞վ եր այդ անպիտանը:

Տղաները դարձյալ լուռ են:

Տերտերը դլուխն ու միրուքը թափ է տալիս բարկացած: Ու նորից տուն է մտնում՝ դպակը մաքրելու:

Սամսոնը մոտենում է ինձ:

— Ես տեսա, վոր քու ճնապղնձին դիպավ,

բայց չասի,— ասում է նա վճռական։— Յևթե ասեմ՝ դիտես ինչ կանե՛ր...

Այդ որը մինչև յերեկո— յես սաստիկ անհանգիստ եմ. հանկարծ տերտերն լսանա, վոր էրեն խփողը յես եմ. հանկարծ տղաներից մեկն ասի. յերևի, ել չեն թողնի սովորելու գնամ. կամ տերտերն այնպես կդնդվի, վոր յես հիվանդանամ ու մեռնեմ. չե՞ վոր տերտերներն ամեն բան կարող են անել... Հետևյալ որը յես սարսափով եմ գնում Զաքար վարժապետի «դպրոցը». այնքան ահ կա ի՛մ սրտում, վոր, ինձ թվում է, յեթե տեղ հասնելուն պես պակ բռնեն ու նորից տանեն կապցիլար կամ տերտերը դասի ժամանակ կմոտենա և ականջներս կքաշի։ Այնքան չեմ վախենում ծեծից, վորքան խայտառակությունից։

Բայց, բարեբախտաբար, որերն անցում են և վոչինչ չի լինում։

Զաքար վարժապետը տատերից հետո սովորեցնում է մեզ կարդալ, դրել, հաշիվներ անել, դասագիրքերին խաղում է մեզ հետ, լավ խմացող աշակերտներին գովում է, չխմացողներին կանչում է և ճաշից հետո, վոր ավելի լավ սովորեցնի։

— Սովորեցեք, վոր մարդ դառնաք, թե չե գլխ չխմացողին ամեն մարդ կխաբի,— ասում է նա ամեն անգամ։

Մինչև գարուն յես ու Սամսոնը մեր դասագրքերը կես ենք անում արդեն և վերջում ենք մեր բոլոր ընկերների ու ընկերների անունները դրել պատերի վրա ու մեր տետրակների մեջ։



Բայց դարձանը, յերբ սկսում են անձրևները, մեր «դպրոցն» ել սկսում է կաթել։

—Վերևն հարկը չինված չի, դրա համար է կաթում,—բացատրում է տետրերը։—Սմառը կչինենք՝ ել չի կաթի։

Կաթիլքի պատճառը մեզ չի հետաքրքրում, վորքան ինքը կաթիլքն է անհանգստացնում։ Անձրևային մութ կաթիլներն ընկնում են դրքերի, տետրակների վրա, վատ, «կըլպպում» մեր դլխին։ Ամենից անհաճոն այն կաթիլներն են, վոր դրելիս ընկնում են մեր ծոծրակին և ոձիքից անցնում չապկի տակ. կարծես մի սառը ճիճու յե սողում դեպի մեջքդ։ Մենք ընդհատում ենք դրելը և նայում առաստաղին, թե ինչ նոր կաթիլներ են պատրաստվում այնտեղ. և տեսնում ենք մութ հեղուկներ են անցնում առաստաղի տախտակներից և սպառնում սրան կամ նրան։

Իրիցկինը թախտերի գորգերն ու բարձերը հավաքել—տարել է մյուս սենյակները և ամեն տեղ տաններ է շարել, նույնիսկ մեր «սեղաններին» վրա տախտներ է դրել, բայց վոչինչ չի ոգնում։ «Դպրոցը» կաթում է և այն ժամանակ, յերբ անձրևը դադարում ու արևն սկսում է փայլել դուրսը։

Այդ ժամանակ մենք դուրս ենք գալիս բակը՝ թաթախած գետնների վրա պարապելու։

Զաքար վարժապետը, ձեռները յետևը դրած, գնում-գալիս է մեր առջև ու դաս հարցնում։

Մենք կարդում ենք կամ պատասխանում նրա հարցերին։

Ու չուտով մեր դլխին հավաքվում են թաղի պարապ, հետաքրքիր մարդիկ, կանայք, յերեխաներ: Լսում են աշակերտների պասերը, պատասխանները և յերբեմն, մի՛ջամտում իրենցով նման. վո՛չ թե նկատողություններով, այլ բացականչություններով. լավ պատասխաններին հավանություն են տալիս հրճվանքով.

— Ա՛յ, կեցցե՛ս. հալալ ըլի կերած կաթդ....

Իսկ սխալվողի վրա ծվծաղում են բարձրաձայն.

— Եղ չելա՛վ, չելա՛վ. հա՛-հա՛-հա՛...

Ջաքար վարժապետը չի բարկանում նրանց մի՛ջամտության վրա, վո՛չ վոքի չի հեռացնում, այլ ժպտում է մի տեսակ բարեհոգի: Կարճ-կլոր իրիկվինն է մխայն, վոր տանել չի կարողանում ցանկապատի մոտ խմբված տղաներին ու աղջիկներին. հաճախ ձեռները վանթում է մեջքին և հանդիմանում նրանց.

— Ի՞նչ եք հավաքվել. քյանդրմա՞զ ենք խաղացնում, թամաշա յեք յեկել...

Ջաքար վարժապետն, ընդհակառակը, վախուկ միրուքը չվելով՝ յերբեմն կանչում է այդ պարապ տղաներին, նստեցնում դերաններին, վոր ավելի մոտից լսեն մեր դասը, և այդ ժամանակ ազմուկը զադարում է. բոլորը լսում են ուշադիր, հետաքրքիր ու կլանված:

Իսկ ինքը Ջաքար վարժապետը, յերթևեկելուց ու կանգնելուց հոգնելով, նստում է դերանների առաջ՝ մի աթոռի և ելի կա՛մ կարդալ է տալիս մեր հայերենի դասը կա՛մ թվաբանական խնդիրներ և առաջար-



կում: Մենք՝ աշակերտներս պատասխանում ենք իրար հետ մրցելով, դրսից յեկած տղաները նույնպես յանյություն են հայտնում պատասխանելու.

— Վարժապետ, կարելի՞ ա,— ասում է նրանցից մեկն ու մեկը:

— Կարելի յե,—ժպտում է Ջաքար վարժապետը մեղմությամբ:

Յեվ յերբեմն դրսեցի տղաները ավելի լավ պատասխաններ են տալիս, քան մենք: Դա, թերևս նրանից է, վոր նրանք ավելի հասակավոր են, քան մենք:

— Կեցցե՛ս,— ասում է Ջաքար վարժապետը:

Տղաները վոգևորվում են, և դասը չարունակվում է նոր թափով:

Ու դասը գերաններից վրա մեզ ավելի յե դուր գալիս, քան ներսում: Այստեղ ավելի լույս է, ավելի ուրախ ու հաճելի: Յեվ ուզում ենք, վոր միշտ չարունակվի այդպես:

Դասից հետո դրսից յեկած տղաները հանկարծ դիմում են Ջաքար վարժապետին, վոր մի բան պատմի իրենց:

— Լավ,— համաձայնում է Ջաքար վարժապետը և իր կարճ, փախուկ միրուքը չոյելով, սկսում է մի պատմություն:

Այն ի՜նչ հաճելի պատմություն եր Տեր Բաղդասարի բակում, ի՜նչ զարմանք ու հիացում, ինչ բացականչություններ են, վոր լսվում են անվերջ. բոլորը լսում են կլանված և չեն կարողանում զսպել իրենց զարմանքը, թե ինչպես մեր յերկիրը, յերկրագունդը՝ հոլի

պես պառկում է ոտներըքսում, ֆռռում է շարունակ ու չի ընկնում ցած։ Մեծ ինչպես կան յերկրներ, ուր ձյուն չի գալիս, և յերկրներ, ուր մարդիկ այլ կերպ են ապրում... Անգամ գժդոհ վրնջկինը դուրսյան ձեռին մոռենում է աշակերտների խմբին և հանգիստ ականջ է դնում վեսայի պատմությանն։

Բայց յելի անհամբեր վրնջկինն է ընդհատում պատմությունը.

— Լավ, հերի՛ք է, հերի՛ք։ Գնացեք ձեր տները. կերակուրս հիմա վչացավ...

Յեվ նա դուրսյան ձեռին վազում է դեպի ոչխար. իսկ տղաները ցրվում են իրենց տները ,մյուս որը նորից գալու մտադրությամբ։

Բայց մեր հաճույքը յերկար չի տևում։

Մի առավոտ էլ ահա գնում ենք դասի— Զաքար վարժապետը չկա։

Տերտերը, ձեռները կապայի ղրպանը ղրած գընում-գալիս է տխուր, սուրմաներով աղջիկը լալիս և ձեռները յերեսին, իսկ իրիցկինը հուղված, բարկությունից ճարճատելով, անիծում և ինչ-որ մարդկանց։

— Տարա՛ն, տարա՛ն ձեր վարժապետին, էլ յերեսը չենք տեսնել։ Տանողի տունը՛...

Զարմացած, վախեցած հարցեր են տեղում իրիցկնոջ դեմին։

— Ինչո՞ւ... ո՞վ տարավ... ո՞ւր տարան...

Իրիցկինը պատասխանում է անեծքներով, գայթացած և մխանգամից կարծես մի քանի կամ մի խումբ խոսք է արտասանում։ Յեվ նրա հախուռն



խոսքերից մենք այնքան ենք իմանում, որ Զաքար վարժապետին տարել են բանտ։

— Մատնողի տունը քանդվի,— հուղվում է իրիցկինը։— Ասում եյի՝ դերաններին վրա դաս մի տալ, թաղի յերեխաները մի հավաքիր դեմիդ։ Հապար աչքս ա տեսնում...

Իրիցկնոջ ասելով՝ վեսային բռնել եյին դպրոց պահելու համար։

Հայրս էլ այդ կարծիքի յեր։ Բայց նա ասում է, որ Զաքար վարժապետն լինքն եր մեղավոր. նա պետք է թաքուն սովորեցներ, որ պրկատավը՝ բանը չիմանային. չէ՞ որ թագավորն արգելել է հայոց դպրոցները...

## VII

### ՈՒՍԱՑ ԴՊՐՈՑ

Այսօր արտակարգ օր է ինձ համար. մերոնց ուշադրության առարկան նորից ես եմ. թե մայրս, թե հայրս զբաղված են դարձյալ ինձանով. ամեն ինչ թողած՝ խոսում են միայն իմ մասին. չրջապատել են ինձ անսովոր վայելչանքով ու դուրգուրանքով: Հաղցրել են ամենալավ ղեստներս— կաղուցտ բըլուղ, փողկերը թողած չալվար և կապուցտ յերիզով գվեարկ, վոր հայրս գնել է հատկապես մի որ ա-ռաջ. վնակ վերնաչապկիս վրա կապել եմ վարմիր դո-տի, վոր մայրս պահել է «ազիզ որվա» համար:

Ինչո՞ւ յեն այդպես վայելում ինձ և ինչո՞ւ յեն այսպես հույսերով դառնում իմ չուրջը:

Այսօր յես գնում եմ, ավելի շուտ հայրս ինձ տա-նում է ուսաց դպրոց, վոր վիճակ հանեմ և քննու-թյուն տամ: Այսպես է այնտեղ. նախ պետք է վիճակ հանել, հետո քննություն տալ: Բայց բախտս կբանի՞ արդյոք— ինձ վիճակ կընկնի՞...



Մայրս չարունակ պատվում է չուրչս,— ուղ-ղում, չոկում և հագուստներս և հետո էլ խրատում.

— Այ, տես, վուչ չհանես... քննության ժամա-նակ էլ— չամաչես, ենպես պատասխանի— զարմա-նան,— ձեռը բռունցք չինած սիրա է տալիս նա:

— Վոր ասեն կարդա՝ կկարդամ,— ավելացնում է հայրս անսովոր մեղմությամբ, մի մեղմություն, վոր չատ քիչ է պատահում:

— Ցես ուրիշ դրքից չեմ կարդա,— ղղուչաց-նում եմ յես,— մենակ իմ դրքից կկարդամ:

— Վոր եղալես ա, քու դիրքը վերցրու,— ասում է հայրս նույն մեղմությամբ:

Ցեվ մենք ճանապարհ ենք ընկնում:

Այժմ տասնյակ տարիներ հետո, յերբ հիշում եմ մանկությանս որերը, թվում է՝ հեռադիտակով եմ նայում այդ անցած-մոռացված որերին. և յես ինձ տեսնում եմ փոքրիկ-փոքրիկ մի տղա, վոր դիրքը թևի տակ սեղմած՝ քայլում է հոր յետևից: Փողոցը լիքն է տղաներով, կանանցով ու մարդկանցով. և փոքրիկ տղայն թվում է, թե բոլորը նայում են ի-րեն և, նայելով հատկանում են, վոր ինքը, դիրքը թևի տակ, գնում է ուսաց դպրոց՝ վիճակ հանելու և քննություն տալու: Ու հպարտանում է փոքրիկ տղան և մեծ-մեծ քայլերով հետևում հորը.— հասա-րակ բան չկարծելք, նա գնում է ուսաց դպրոց...

Ուսաց դպրոցը յես շատ եմ տեսել դրսից, բայց այսօր նա էլ անսովոր է աչքիս: Կարծես կենդա-նացել, ընչացողվել է նրա չինքը և դարձել խորհրդա-վոր: Դա մի հարկանի բարձր, մեծ տուն է՝ մի քանի

փեղկերը ունեցող լայն լուսամուտներով, որոնց նըմանը չկա մեր դյուղում: Իսկ տանիքը թիթեղով և ծածկված, ներկված, ջրտղաններըը կախված են մինչև պատերի կեսը և մի մեծ առաջ թեքված, բաց բերաններով,— որոնց մեջ յերևում է նրանց թիթեղե լեզուն,—նայում են անցորդին: Ինձ ամենից շատ զարմացնում են այդ լեզուները, որոնք խաղալակնե րին ծայրին տալիս են բաց բերանի կերպարանք, և թըվում են անհասանելի ճարտար դործեր. իսկ դրանց չինող վարպետը— հրաշադործ: Զաքար վարժապետի մոտ սովորելիս, յերբ ամեն անդամ անցնում եմ այդ դպրոցի մոտով և ճաղավոր պարսպից տեսնում բակում խաղացող աշակերտներին, ծառերը, ծաղկանոցը և ուսուցիչներին (որ դնում-գալիս եյին իրար հետ դրուցելով) յես միակ վախտն եր լինում այդտեղի աշակերտ: Վոչ միայն յես, այլև Սամսոնն ու մյուսները ցանկանում եյին սովորել այդ ռուսաց դպրոցում, հաղնվել նրա աշակերտների նման լավ, դաս առնել նրա լավ սենյակներում, յերգեր սովորել և չարքեր կատմած— պրոսանքի դնալ: Գրավիչ եյին թվում և ուսուցիչները, որ վայլուն, պսպղուն կոճակներով սրինջակներ ունեյին, կակարդով գլխարկ, կրատմած չապիկ, վղներին սև բանթ կամ վողկապ, իսկ վարժուհին՝ մի չխկահեր, սպիտակ որթոդոք, ակնոց եր դնում քթին և հովանոցը ձեռին ըղբոսնում ուսուցիչների հետ: Այս բոլորը լավ եր, բայց մտածում եյի, արդյոք նրանք էլ Զաքար վարժապետի պես բարի՞ չեն, սրտաբա՞ց, արդյոք նրա չափ պատմութիյուններ գիտե՞ն. և թվում եր, որ



նրանք ավելի պիտի խմանային, որովհետև ավելի լավ եյին հաղնված: Իսկ վնչ վերաբերում է բարուքիյան ու սրտաբացութիյան— այդ դժվար եր խմանալ. դրա համար վոչ մի նշան չկար:

Յես ու հայրս ահա մտնում ենք բակը— աշակերտներն ուրախ խմբեր կազմած՝ խաղում են բակում, իսկ վտանք— ամաչկոտ ու հետաքրքիր—ներս են դնում իրենց հայրերի ու մայրերի հետ: Յերևում է՝ լինճ նման շատերը կան:

Յերբ ներս ենք մտնում— տեսնում ենք մեծ, ընդարձակ, բարձր սենյակը լիքը աշակերտացունեցով ու ծնողներով, որ նստարաններին նստած, լարված հետևում են վիճակահանութիյանը:

Սենյակի ծայրին դրված է մի մեծ, յերկար սեղան՝ վարմիր մահուդով ծածկված. չուրջը նստած են ուսուցիչները. դրանցից մեկը մեր ծխատեր քահանան է՝ տեր-Գյուտը, որ յերեխաները չեն կարողանում ճիշտ արտասանել և միշտ ասում են տեր-Գութ. դա յե՝ իր տիրացուի հետ, ամեն Զատկի ու Զրորհնեքի գալիս մեր տունն որհնելու: Մյուս կողմում է, լեցուն, կրծքին նստած սև մորուքով. ձեռներն սպիտակ են ու վախուկ. սև վարագյան այնքան յերկար է, տակից յերևում են միայն կոշիկների ծայրերը: Ինչպես բոլոր քահանաները, այնպես էլ դա իր յերկար հագուստի պատճառով, ինձ թվում է՝ կես-տղամարդ, կես-կին: Ինձ թվում է, նա այդտեղ նստած ուրիշ բաների մասին է մտածում, որովհետև չուտ-չուտ լուսամուտից նայում է դուրս: Տերտերի կողքին նըստած է տեսուչը. նրա սպիտակ դեմքին աչքի յեն

ընկնում վոլորած յերկար թելերը, վոր հիշեցնում են յեզան յեղջյուրներ: Հագին դեղին, վայլուն կոճակներով այուրտուկ ե. նա ջուտ-չուտ ձեռը տանում ե՛ր թելերին և վեր բարձրացնում, կարծես յերեխե ցած իջնեն՝ իրեն պիտի խանգարեն: Նրա աչ կողմը տերտերն ե, ձախ կողմը՝ ակնոցով վարժուհին, վոր մատիտի ծայրերը դարձնում ե հերթով: Մյուս յերկու ուսուցիչը հետևում են, թե ինչպես են աշակերտները վիճակ հանում. նրանց վերցրած թղթերը նրանք առնում-բանում են ու ինչ-վոր նշանակում վրենց առաջին վուռած թղթի վրա. դրանց բոլորին յես ճանաչում եմ: Դուրսը՝ փողոցում նրանք ավելի բարի յեն թվում, քան այստեղ. փողոցում յես նրանցից չեմ վախենում, վո՛չ մեկից, բայց այստեղ, չգիտեմ ինչու, սիրտս դողում ե: Զգում եմ, վոր ինչ-վոր բան չարունակ զարկում ե կրծքիս տակ — տի՛կ – տի՛կ, տի՛կ-տի՛կ... և յես ահով եմ նայում, թե ինչպես ուսուցիչներն ու աղջիկները հերթով թուղթ են հանում, բերում տալիս տեսչին, և նա, այդ թղթերը բանալով, հայտարարում ե ուսուցիչներին. «փուչ» կամ վորևե թիվ ե ասում:

«Փուչ» հանողը սիրտս ե, ամաչկոտ նայում ե ուսուցիչներին և դլուխը կախ կամ լացակումած հետևանում: Իսկ «թիվ» հանողը ժպտում ե լավ բան դըտածի պես. նրա դեմքը լուսավորվում և մանավանդ այն ժամանակ, յերբ ուսուցչուհը կամ տեսուչն ասում ե. «կանդնիր այն կողմը»:

Յես կանգնել եմ վիճակ հանող յերեխաների մեջ և չուտ-չուտ նայում եմ հորս, վոր ծնողների չարքում նստած, վոր հերթին նայում ե ինձ, և, թվում ե, աչքերով խրախուսում ե, վոր «փուչ» չհանեմ կարծես. յես նկատում եմ նույնպես, վոր «փուչ» հանողների հետ նա տխրում ե, «թվանշան» հանողների հետ՝ ուրախանում, պայծառանում. այդ ժամանակ նրա աչքերն արտահայտիչ դառնում են ինձ, վոր կարծես ասելիս լիներն. «այ, դու ել այդպես»: Ու դըրանից սիրտս ավելի յե դողում. ու յես, սրտիս ձայնը խլացնելո՞ւ, թե՞ ինձ հանգիստ դղալու համար, նայում եմ պատերին կախված պատկերներին, քարտեզներին, բայց վոչինչ չեմ ջոկում նրանց վրա. հայացքս ակամա դառնում ե նորից ուսուցիչներին, տերտերին, հորս և վիճակ հանող տղաներին:

Վերջապես գալիս ե ահա և վմ հերթը:

Այժմ, յերբ ժամանակի հեռավորությունից նայում եմ այդ փոքրիկ տղային,— տեսնում եմ կարծես, թե ինչպես ե նա վեր կենում ու դնում դեպի վիճակահանության սեղանը. նրա փոքրիկ սիրտը ավելի յե դողում, աչքերն ասես վոչինչ չեն տեսնում, բացի ուսուցչների դեղին, վայլուն կոճակներից. ամբողջ ե ընկնում մոր խրատը, թե վիճակը հանելուց առաջ՝ յերեսիդ խաչ քաշի. բայց ամաչում ե և մոռանում, թե անհարմար ե. յեթե բախտ ունի—փուչ չի հանի:— Ցավ մի վերջին անգամ նայում ե հորը, ու մի ակնարկից հասկանում ե նրան. հայրն այժմ լարված, հուզված տեսք ունի. աչքերի մեջ այնքան աղերսանք կա, կարծես ասում ե. «Սուրենն ջան, ամոթով չանես»... և այդ փոքրիկ Սուրենը հորը նայելով, խղճում ե նրան, խղճում ե ու սրտապնդում.—

ինչ լինելու չի— թող լինի: Ու ձեռը կոխում է վոլորած թղթերով լիքը տուփը և... ել չի համոում, վորքան ժամանակ է անցնում, մեկ ել լսում է տեսչի ձայնը, վոր կարդում է.

— Տասնութ:

Այդ նշանակում է, վոր չես փուչ չեմ հանել, այլ «18» թվանշանը: Սրահը մթնդամից լուսավորվում է, պատկերները պատից ուրախ նայում են ինձ, և առաջին դեմքը, վոր տեսնում եմ— դարձյալ հայրս է: Նա ցնծում է. կարծես ուրախությունն է ճառագել նրա վրա. նա չերբեք այդպես ուրախ չի եղել: Դա, թերևս, նրա կյանքի ամենաուրախ, ամենաերջանիկ վայրկյանն է— վորդու աջողությունը:

Ես նույնպես ուրախ եմ, վոր հորս «ամոթով» չեմ արել և մյուսներից չետ չեմ մնացել... Բայց սա դեռ չի նշանակում, թե չես ընդունված եմ: Դեռ պետք է քննություն տամ, և քննությունից հետո կպարզվի— ընդունվում եմ, թե վոչ: Ու վիճակ հանելու կարճատև չերանությունը տեղի չի տալիս նոր անհանգստության:— Կարո՞ղ եմ արդյոք քննություն բռնել... քննում են ահա առաջին համարները հանողներին: Նրանց հարցնում են ամեն տեսակ բաներ: Հարցերը տալիս են թե տեսուչը, թե տերտերը և թե մյուս ուսուցիչները: Իսկ վարժուհին չարունակ դժգոհ կարծես՝ նայում է թե հարց տվողներին և թե չերեխաներին. թվում է ինձ՝ նա ձանձրանում է այդ բոլորից, և չես վախենում եմ, թե հանկարծ ինձ հարցեր տա նա— չեմ կարող պատասխանել:

Բայց, բարեբախտաբար, այդ անում է տեսուչը:



— Անունդ ի՞նչ է,— հարցնում է նա:

— Անունը՞... Սմաչո՞մ եմ, թե՞ չիոթվում,— մոռանում եմ անունս, և իմ փոխարեն պատասխանում է հայրս:

— Կարդալ գիտե՞ս,— չարունակում է տեսուչը:

Ցես գլխով եմ անում.— Այո:

— Վո՞րտեղ ես սովորել:

— Ձաքար վարժապետի, գալրոցում:

— Վորտե՞ղ:

— Ձաքար վարժապետի գալրոցում,— կրկնում եմ չես:

— Այդպես գալրոց չկա,— ասում է նա:

Ի՞նչպես թե չկա. չես ուզում եմ ասել, վոր կար, բայց հիմա չկա, վորովհետև Ձաքար վարժապետին բանտարկել են. սակայն տերտերը ժամանակ չի տալիս:

— Կրոն սովորե՞լ ես,— ասում է նա:

Ցես գլուխս որորում եմ.— Վո՛չ:

— Բայց գիտե՞ս կրոնն ի՛նչ է:

— Գիրք:

Տերտերը ժպտում է. մյուսները ծիծաղում են կամաց, և չես չեմ հասկանում ինչո՛ւ:

— Հիսուսի մասին բան գիտե՞ս,— չարունակում է տերտերը:

Ցես գլխով եմ անում.— Գիտեմ:

— Ո՞վ է Հիսուսը:

— Պատկեր է:

Տերտերը գլուխն որորում է:

—Կասեն «սուրբ», անշնորք անիրավ, վոչ թե պատկեր:

Յես կրկնում եմ.

—Սուրբ, անշնորք, անիրավ, վոչ թե պատկեր:

Բայց այս ինչո՞ւ յեն ծիծաղում. մինչ՝ տերտերի խոսքերը յես սխալ ասի. յերբե այդպես է, ուրեմն բանս վատ է: Յերևի այդպես է, վոր ծիծաղում են, մտածում եմ ու ամոթից հորս չեմ նայում. ո՛վ դիտի ինչ վիչտ եմ պատճառում նրան:

Բայց չուտով ուսուցիչներից մեկը հանում է ինձ այդ դրությունից: Տեսնելով դիրքս՝ թեպետ տակ տեղ-մած, նա հետաքրքրվում է, թե ինչ դիրք է այդ:

—Իմ դասադիրքն է:

—Կարո՞ղ ես մի բան կարդալ:

Յես վաց եմ անում դիրքը և կարդում առաջին պատահած նյութը՝ «Ծիտը ծառին ծլվլում է»...

—Լավ,— ասում է նա,— հիմա կարո՞ղ ես ասել, թե քանի վրա դումարենք քսան— ի՞նչ կանի:

—Բառասուն:

—Բառասունից հանենք տա՞սը:

—Յերեսուն:

—Լավ:

Այս «լավ»— երից հետո նայում եմ հորս— նա ուրախ է նորից. ժպտում է այնպես լավ: Յեվ դա ինձ սրտապնդում է:

Բայց հանկարծ պատահում է այն, ինչից չարունակ վախենում եյի. ակնոցով վարժուհին ուղղվում է տեղը, ուղղում է պենսնեն և դառնում ինձ, թե ուսերեն դիտե՞ս:



Յես դլխով եմ անում, վորովհետև կապալառուի յերեխաներից յես սովորել եմ չատ խոսքեր, հայհոյանքներ ու մինչև քսանը հաշվելը: Վարժուհին ինձ հարցնում է քանի՞ կով ունենք և քանի հավ: Յես պատասխանում եմ— յերկու կով, ութ հավ, հինդ ոչխար, մի շուն... Ուսուցիչները նորից ժպտում են, և, ինձ թվում է այդ բանը վոչ-վոք չեր սպասում, թե յես ուսերեն դիտեմ:

— Մալադեց,— ասում է տեսուչը, բեխի մեկը վեր տանելով,— վաղը կըզաս:

Տանը մայրս, ուրախությունից, դրկում է ինձ և համբուրում:

Իսկ հայրս այնպես ուրախ է, վոր չարունակ կրկնում է տեսչի խոսքը.

—Մալադե՛ց, մալադե՛ց: Եղ լավ եր, վոր ուսերեն դիտեյիր. թե չե— բանդ վատ եր... Հիմի կերթաս ուսերենը լա՛վ կսովորես, թե վուղես սկսըր կդառնաս, վուղես կանդխատոր կըլնես: Յեթե լավ սովորես, ով դիտի հլա տելեգրաֆիստ էլ դառնաս...

Հորս ասածներն ինձ չեն հետաքրքրում: Այժմ ինձ ուրիշ խնդիրներ են զբաղեցնում.— յես ուրախությունս չեմ կարողանում պահել, դուրս եմ գնում անմիջապես և պատահողին պատմում, վոր ընդունվել եմ ուսաց դպրոց: Ասում եմ թաղի յերեխաներին, տասից,— ուղում եմ, վոր բոլորն իմանան, և բոլորը տեսնեն իմ նոր հագուստները, գլխարկը: Ու հնարում

եմ պատմությունները, թե վորքան դժվար է ընդունվելը։

— Ցեթե մի խոսք չմտայար—պրծա՛վ. չեն ընդունի։ Ցեթե ծիծաղեցիր— դուրս կանեն...

Ու հպարտանում եմ, պարծենում, թե ուսուցիչներին բոլոր հարցերին չես պատասխանելի և տեսուչն ինձ ասավ «Մալադեց»։

Մյուս որն արդեն, բոլոր դրքերս առած, Սամսոնի հետ գնում եմ դպրոց։ Թո՛ղ հորեղբայրս, Սանամ-պլոխն, հարևանները տեսնեն, վոր չես ուսւսաց դպրոցի աշակերտ եմ... մայրս մի քանի չվիր, հաց ու պանիր է դրել դրպանս և Սամսոնին պատվիրել է, վոր ինձ լավ նայի, չթողնի տղաների հետ կռվեմ։ Սամսոնը խոստացել է և այժմ ճանապարհին սովորեցնում է, թե ինչպես կռվենք, չեթե կռիվ պատահի։

Ցես ու Սամսոնը լինելու չենք մինչև յերկրորդ բաժանամունքում, և ուզում ենք, վոր նստենք իրար կողքի, մի նստարանի վրա։ Բայց ինձ Սամսոնի հետ չեն նստեցնում, այլ մի աղջկա մոտ, վոր վանաչ չալ դեյրա ունի, և սև չալ դողնոց։ Ցեվ ինձ թվում է՝ դա վատ հարևան չի. ընդհակառակը, դա ավելի լավ է, քան վորևե տղա, վոր, ով դիտի, ինչ չարություններ աներ։ Իսկ սա, յերևում է շատ մաքուր ու խելոք աղջիկ է. մազերը հավաքել է մի կարճ հյուսի մեջ և ծայրը կապել ժապավենով ու բանթ արել, և այդ բանթը նման է մեծ թիթեռի։ Նա բարի աչքերով նայում է ինձ և չարունակ ժպտում։ Հետո չի համբերում ու հարցնում է.



—Անունդ ի՞նչ է։

Ցես տալիս եմ անունս և հարցնում եմ իրենը։

—Իսկ քո՞նը։

— Ցեվա...

Ցեվա... ինչպես չհիշեմ քեզ, քո մեղմ ձայնը, վոր թեյադրում եր ինձ չխմացածս, քո համով նախաճաշերը, վորից միշտ բաժին եյիր հանում ինձ և քո վոգրիկ, վոգրիկ ճերմակ ձեռները, վոր նման եյին վոգրիկ ադավնիներին։ Զգիտեմ ո՛վ և կնոջ ձեռները նմանեցրել ադավնիներին, բայց այդ ճիշտ է Ցեվայի վոգրիկ ձեռների համար. նրանք դասի ժամանակ յերբեմն այնպես են դողում սեղանի վրա, կարծես ահա թռչեն պիտի...

Մենք խոսում ենք, և պարզվում է, վոր նա հարուստ աղջիկ է. հայրը չեթե ու կատր և ծախում, դորգեր. շուտ-շուտ Թիֆլիս է գնում, և ամեն անգամ Ցեվայի համար նվերներ է բերում։

—Քու հայրիկն ի՞նչ են անում,— հարցնում է նա։

—Արտ է վարում, սայլ է բանեցնում...

—Դուք սայլ ունե՞ք,— ուրախանում է նա։— Ցես սիրում եմ սայլ նստել։ Կթողնե՞ս ձեր սայլը նստեմ։

Ցես նրան հրավիրում եմ, բայց նստելու պիտի դալ այնպիսի ժամանակ, յերբ հայրս անից դործի յե դնում։ Նա խոստանում է։

Առաջին դասն անցնում է հարցումներով. ուսուցիչը՝ դեղին վոճակներով մի կարճ մարդ, վորի անունը, ինչպես հետո ենք իմանում, Արամ Սիմոնիչ է, հարցնում է նոր ընդունվածների անուն-ազդանունը և ապա մի քանիսին կանչում է, վոր դրատախտակի վրա դրեն իրենց անունները։

Ցես էլ դրում եմ իմ անունը...

Ու ամեն ինչ լավ է գնում մինչև առաջին դասամիջոցը:

Առաջին դասամիջոցը՛... ինչպես չհիշեմ այդ դասամիջոցը, երբ պատահեց այն, ինչ երբեք չէի կարող ապաակել...

Հոլորս դուրս ենք գալիս բակը ու բոլոր դասարանները խառնվում են իրար՝ խաղում, կանչում, ֆեյհոտում. մինչև անգամ այն նոսրիկ աշակերտներից մի քանիսը, որ ամաչելուց չէին կարողանում իրենց ամենն ասել ուսուցչին— բանում վազվզում են, պնդակ են պցում միմյանց, թռչում են իրար ուսի: Իսկ նոսրիկների մեծ մասը կանգնել են քաշված ու դիտում են նրանց խաղը, ուսումնասիրում են իրենց չըշնպատը: Ցես էլ, համարյա բոլորին անծանոթ՝ հեռու կանգնել նայում եմ խաղացողներին: Մեկ էլ իմ հասակի յերեք տղա, հին աշակերտներից մոտենում են ինձ ու կանչում, որ մասնակցեմ խաղին, որովհետև մեկը պակաս է: Ցես նրանց ծանոթ չեմ, և, դրա համար տեղիցս չեմ շարժվում: Ամաչում եմ: Սամսոնն այդ ժամանակ հեռու խաղում է, իսկ իմ նոր ընկերուհին՝ Ցեվան աղջիկների մեջ է: Բայց տղաները իմ ամաչկոտությունը հպարտության տեղ են ընդունում և սկսում են ծաղրել ինձ:

—Տեսեք, չի ուզում շորերը վիչանան...

—Վերնաշապիկին նայեք...

—Գոտիքի՛ն, գոտիքի՛ն...

Ցես չեմ խոսում. շուրթերս սեղմած՝ նայում եմ նրանց ու մտածում հեռանալ, այնպես հեռանալ, որ



իբր թե՝ վոչինչ. արժանապատվություն պահելով. բայց նրանք նկատում են իմ այդ տրամադրությունը ու ավելի յեն յերես առնում:

—Տեսե՛ք, տեսե՛ք. վախո՛ւմ ա...

—Սպասեք, սա հրես պիտի գնա...

Ու ավելի յեն մոտենում. մեկը՝ մի չեկ տղա նուշնիսկ քաշում է դուրս, իսկ մյուսն ուզում է դրը խարկս վերցնել: Ջեմ թողնում և խլում եմ նրա մեկնած ձեռին: Այդ ժամանակ յերեքը միասին չըշպատում են ինձ ու փորձում են զարձյալ դլխարկս վերցնել: Ցես չեմ թողնում մոտենան. պաշտպանվում եմ, խրխնվով նրանց ձեռներին կամ դլուխս փախցնելով այս ու այն կողմ: Բայց նրանք ծամածռություններ են անում, լեզու հանում: Ցես, մեջքս պատին քսելով, փորձում եմ հեռանալ, բայց նրանք քայլ առ քայլ, ծաղրելով, գալիս են յետևիցս: Ավելի շատ ծաղրում է ուռած այտերով ու կապույտ աչքերով մի դլխարաց տղա, նրա լիքը դեմքը, հանած լեզուն ու համարձակությունն ավելի յեն գրգռում ինձ: Ուզում եմ քացով խրխել, բայց վախենում եմ հագուստները վեղտոտեմ և այն ժամանակ ավելի վատ լինի: Սակայն, յերբ նա ձեռը գցում է գոտիս պոկելու—ել չեմ համբերում. մեջքս պատին դեմ եմ անում և քացով խփում նրա... փորին:

Բայց սա ի՞նչ է. մի՞թե իմ հարվածն այնքան ուժեղ եր, որ այդ չեկ, դեր տղան հանկարծ մի թեթև «ահ» է անում ու ընկնում գարմանով լիքը տոպրակի պես: Իսկ ընկերներն անմիջապես վեր են քաշվում ու մնում կանդնած: Իմ դեմքը, հավա-

նրանն, ահարկու չէ, որ նրանք զարմանքով ու չուած աչքերով նայում են ինձ ու էլ չեն համարձակվում մոտենալ: Իսկ բակում խաղացող մյուս աշակերտները նուազնակս մոտենում են ու չրջապատում անչարժ ընկած չինկ տղային:

Մինչ կհարցնեմ, կիմանան ինչ և պատահել, յես՝ նեռլում եմ դասարան, գրքերս վերցնում ու... չունչս տանն եմ առնում:

Թե ինչպես եմ անցնում այդ տարածութիւնը— անհայտ է, բայց յես, հաւանորէն, չատ այլայլված եմ, որ մայրս հարցնում է անհանգիստ.

— Ի՞նչ է պատահել: Ի՞նչու այդքան չուտ յեկար:

— Արձակեցին...

Մայրս զարմանում է, որ ուսուցչ դպրոցում այդքան չուտ են արձակում: Բայց հետո կասկած է հայտնում ,թե ինչու հապա Սամսոնը չի յեկել:

— Նա դնաց հոր խանութը:

Արդյոք մայրս հաւատա՞ւմ, հանդստանո՞ւմ է,— չգիտեմ: Յես գոնե չեմ հանգստանում. դնում եմ պարտեզ, աչքից հեռու մի տեղ և նստում մի քարի: Թվում է՝ ո՛ւր որ է ահա մարդիկ կգան ու կտանեն ինձ դպրոց կամ կանցիլար, ինչպես կտակապալառուի տղին խլելուց հետո: Կտանեն ու կսկսեն հարցուփորձել: Յեթե ուշաթափ յեղած լինի՝ ինձ, յերևի, դպրոցից կհեռացնեն: Իսկ յեթե մեռած լինի՞... Մտքերս կանգ են առնում և ահը ցնցում է սիրտս: Այնքան վատ եմ զգում ինձ, այնքան տխուր, անմխիթար: Եվ ի՞նչպես պիտի յերեսս ընկերներիս. ի՞նչ պատասխան պիտի տամ հորս, մորս, ուսուցիչներին... Չե, հիմա բոլորը, և ամենից առաջ հորեղբայրս, կուրախանան, որ չկա-րողացա ինձ պահել, և դպրոցից դուրս արին:

Յես չարունակ նայում եմ դպրոցի ճանապարհին, թե յերբ պիտի դա Սամսոնը: Բայց նա ուշանում է, և անհանգստութիւնը ատնչում է ինձ. ցանկապատի մոտ բուսած խոտերը պոկում եմ թափում գետին կամ դրանցից մեկը դնում բերանս ու ծամում:

Վերջապե՞ս. Սամսոնը գալիս է ահա. բայց նա այլայլված է, և այդ հանդամանքն ինձ սարսափ է բերում, ու այդ սարսափը ինձ թուլ չի տալիս նրա բոլոր խոսքերը լսեմ: Նրա ասածներից հասկանում եմ միայն, որ չեկ տղան նոր յեկած պրխտավի տղան է: Պրխտավի տղա՞ն... Յես վախից վեր եմ թռչում: Բայց Սամսոնը հանգստացնում է ինձ.— նա չի մեռել, այլ ուշաթափվել է, և այն էլ վոչ յերկար... Այդ լավ է: Ի՞նչ... Իմ հետևանքով անմիջապես հետո վեր է կացել, ինձ վնտրել, որ ծեծի: Բայց չգտնելով՝ սպասնացել է, որ յեթե ձեռն ընկնեմ... Այ թե ի՞նչ... Բայց այդ սպասնալիքն այնքան ահարկու չի, որքան... նա պրխտավի տղան է: Այս անունն ինձ զոչ և պատճառում: Ուրեմն հիմա ուր որ է դպրոցները կամ պրխտավի տարաժնիկները կգան իմ յետևից: Չե՛, յես էլ դպրոց չեմ դնա:

— Սամսոն, հայրիկիս ու մայրիկիս չասես:

— Ինչո՞ւ: Վախենում ես ծեծե՞ն: Չէչ բան էլ

չեն անվ։ Նա ուզեցել է քեզ խփել, դու էլ նրան ես խփել։ Ինչ կա վոր։

Չե, յես ուզում եմ, վոր նա չասի։ Սամսոնը հառկանում է վնաս ու խոստանում վոչինչ չասել։

Այդ դիշեր յես յերկար, յերկար չեմ կարողանում քնել։ Մտածում եմ դարձյալ, թե ահա մարդ կգա վնաս տանելու, տղայի մայրը, «վոզդրաչու» կնոջ նման, յերևի դանդաղամած կլինի և ահա դղրոց Աստուրը կգա։ Ու չեմ քնում։ Իսկ յերբ աչքերս վակում էի, տեսնում եմ, մի խումբ տղաներ, վոր վազելով ուզում են բռնել ինձ, բայց յես վախչում եմ հեռո՛ւ-հեռո՛ւ...

Առավոտ մայրս արթնացնում է ինձ, թե դպրոցի ժամանակն է։ Յես հագնվում եմ, բայց չեմ ուզում դպրոց գնալ, և մորս բոլոր հարցումներին պատասխանում եմ մի բառով.

— Չեմ ուզում։

— Ինչո՞ւ։ Դո՞ւր չի գալիս, ջե՞ս հավանում,— հետաքրքրվում է հայրս։

Չեմ խոսում.

— Վրադ բարկացե՞լ են։

Յես գլուխս որորում եմ.— վոչ։

— Վատ բան ես արե՞լ։

Լռում եմ։

— Բա ինչո՞ւ չես գնում, ասա տեսնեմ,— չարունչում է հայրս։

— Ուզում է գյադա մնա,— բարկանում է մայրը,— ուզում է բոլորը վրան ծիծաղեն։ Անխե՛լք... դու ենպես սրտով ուզում էիր ռուսաց գղրոց գնալ, հիմի ի՞նչ պատահեց։ ով գիտե մի վատ բա՞ն ես արել...

Վո՛չ ամոթանք, վո՛չ հանդիմանություն, վո՛չ ապտապտի վատ հետևանքներ, վոր «գյադա» կմնամ— վրաս չեն ազդում։ Գիտեմ, վոր հորեղբայրս, հարևանները վրաս կծիծաղեն, թե ծույլ եմ, բայց միևնույն է, յես միևնույն կրկնում եմ.

— Չեմ ուզում։ Չեմ ուզում։

— Տես ա՛յ, տավարը կուղարկեմ,— պատռնում է հայրս, իմանալով, վոր տավարը գնալ չեմ սիրում։

Համաձայն եմ ամեն բանի, միայն թե դպրոց չը գնամ, պրիստավի տղային չտեսնեմ, ուսուցիչների հանդիմանությունը չլսեմ։ Վորքան էլ մայրս մերթ սիրով, մերթ բարկությամբ աշխատում է համոզել, թե ինչքան լավ բան է դպրոցը, արևից, անձրևից հեռու, մաքուր...— միևնույն է. չեմ համոզվում։

Չեմ գնա...

— Վերջին անգամ եմ ասում. յեթե չգնացիր— տավարը կուղարկեմ,— ասում է հայրս, իսկապես, վերջին անգամ, և դուրս է գալիս տնից։

Յեվ այնուհետև՝ վորքան էլ մայրս բարկանում, լաց է լինում— յես իմ վորոշումը չեմ փոխում։ Կանչում է Սամսոնին՝ հարց ու փորձ անում, թե ի՞նչ է պատահել, ի՞նչ եմ արել յես— Սամսոնը վոչինչ չի ասում։ Նա պատասխանում է, վոր վոչինչ չեմ արել. վոչի՛նչ...

Մայրս նորից է բարկանում, նորից է լալիս...

Միևնույն է. վերջացած բան է. յես ռուսաց դպրոց չեմ գնում։

Յեվ հայրս ուղարկում է ինձ տավարը։

## VIII

## Տավարած

Ահա մեր դաշտերը՝ հնձած ու բերքով և դեռևս խնձորի ցանքերով. ահա աշնան անտառը՝ մերկ ու տխուր, ահա և աշնան առնաչունչ քամին, որ դղրդում է այդ անտառում, և տերևները— կարմիր, դեղին ու նարնջի—թափվում են, թափվում և քամու բերանն ընկած տարվում հեռո՛ւ... Ահա մեր յերկինքը կապույտ ու վճիտ, ուր կռունկների յառնկյունի վաշտերը իրար յետևից հարավ են գնում, և վերևից ահա լսվում է մեկ-մեկ նրանց դյութական ձայնը:

— Կըռռո՛կ... կըռռո՛կ...

Յես գիտեմ, որ հայրս բարկացկոտ է. ինչ ասում է, այն էլ անում է, բայց չեմի կարծում իր սպառնալիքն իրագործի այս անգամ: Բայց վորքան անկոտրում եմի յես, նույնքան համառ յեղավ նա:

Համոզվելով, որ էլ չեմ գնում դպրոց, նա հենց մյուս որը՝ վաղ առավոտ կանչում է ինձ, յեզներն ու



կովերն առաջս անելով՝ ասում է. «տար»: Ապա հոգի կապոցը տալով ինձ, ավելացնում է.

— Կպահես մինչև իրիկուն. յերբ ժամի զանգերը տան՝ նոր կբերես:

Յես հասկանում եմ. հայրս աշխատես է կարծում, յերևի, թե դա կազդի ինձ վրա. կապոցն ու ճիպոտը ցած կդնեմ խոտերի և կասեմ. «Ձև, հայրիկ. կերթամ դպրոց»...

Բայց յես համառ եմ և ինքնասեր. այդպիսի բան չեմ անի: Ջնայած սիրտս տխուր և այնքան, վոր պատրաստ եմ լաց լինել, սակայն արտաքուստ հանդիստ, առանձներս սեղմած, վերցնում եմ ճիպոտն ու կապոցը և տավարը քշում դեպի դաշտ: Մեր յեզներն ու կովերը ճանապարհը գիտեն. գնում են հանգիստ, և յես նրանց յետևից: Պատահել է ուրիշ անգամ, վոր մեր յեզներն ու կովերը տարել եմ դաշտ՝ տավարածի հանձնելու, բայց յերբեք տավարած չեմ յեղել: Յեվ այժմ վախ մտահոգում է այն, թե յերթե հանկարծ այս յեզներն ու կովերը կորչեն անտառում— ի՞նչ պիտի անեմ: Կամ բանջարանոցներն ու դեռնախնձորի ցանքերն ընկնեն: Ձե՞ վոր անտառապահն ու հանդապահն խոտուն «տուն կանեն» և «տուդան» կտանեն: Այն ժամանակ ի՞նչ կասի հայրս.— ավելի լավ չե՞ր լինի դպրոց գնայի և այս պատասխանատվությունից ազատ լինեյի:— Բայց պրխտասիրտ ազա՞ն, նրա բնավերները՞... մի՞թե կնեղեն ինձ իմ քայլին, նրա ուշադրությունը և, վերջապես, ի՞նչ կասեն ուսուցիչները, տերտերը, ակնոցով վարժուհին, հետո իմ նատարանի ընկերը Յեվան: Թեև Սամսոնն ասում է, վոչ-

վոք չի խոսում այդ մասին, բայց բավական է յես յե-
թևամ... Վոչ, ավելի լավ և առայժմ տավարը...

Ու յերկու-յերեք որ յես տավարը պահում եմ մե-
նակ դաշտի մեջ, անտառից ու բանջարանոցներից հե-
ռու. բավական է, վոր գեղան կամ կովի մեկը մի քիչ
հեռանում է մյուսներից, յես անմիջապես հետ եմ
տալիս և մխացնում ընկերներին, վոր հանկարծ
բանջարանոց չընկնի կամ անտառ չգնա... Բայց կովե-
րըն իրենց պահում են անկարգ: Նրանք մի ժամ արա-
ծում են միջակների խոտը, յեղների հետ, ապա մըտ-
նում են մասրի ու մամխի թփերի արանքը, ու յեր-
բեմն անընդհատ լսվանում այդ թփերում. այս հանգա-
մանքն ահաբեկում է ինձ. վազում եմ թփուտի յեզրին
կանգնում ու ձայն տալիս, վոր անմիջապես դուրս
գան... Յեղները, սակայն, կովերի նման չեն. նրանք,
ինչպես յերևում է, հասկանում են իմ անհանգստու-
թյունը և իրենց պահում են ավելի հանգիստ. և յես
նրանցից դոհ եմ:

Այսպես անցնում է միայն առաջին յերկու որը,
հետո մոռանում են ինձ ուրիշ վոգերով տավարած-
ներ և իրենց տավարը խառնում են իմ տավարին.
մոռանում, ընդհանում են էլի ուրիշ անծանոթ տա-
վարածներ, ապա բոլորս միասին ընդհանում ենք մի
ձերունի տավարածի, վոր ահագին մոխրագույն խո-
պան մերուք ունի կրծքին, ահագին «ծլավոր» վա-
խից դլխին և մի սև յափնջի, վորը,— պարմանալ
բան,— ման գալիս դցում է ուսերին, նստելիս՝ տա-
կը, իսկ անձրև ժամանակը՝ կանգնեցնում է վրանի
պես ու ինքը մտնում մեջը: Իրենչ տարօրինակ, պար-



մանալի մարդ է այդ Մադաթ բիձան. յես առաջին
անդամն եմ տեսնում նրան. ինչի՞ր դիտի այդ մար-
դը. լուցկին գանակով կկտում է, վոր յերկու անդամ
կրակ անի կամ չիբուխը յերկու անդամ վառի, չնա-
յած գոտու մեջ ունի և վայծաքար և դավ:

Առաջին որը տավարածներն ինձ տարօրինակ
հարցեր են տալիս, հետո սկսում են ծաղրել ինձ-
իմ դպրոցական գլխարկը, դրքից սովորած իմ խոս-
քերը, և, վերջապես, իմ վախը, թե տավարը կարող
են կորչել՝ առաջ դնալով: Յերբեմն էլ— պարապ
մարդիկ— խմբով հավաքվում են դվխես ու կատա-
կում:

— Հապա մի ասա տեսնանք՝ մի տարեկան ուլի
գլխով քա՞նի ուրթաթ է անցնում:

Յես չեմ կարողանում պատասխանել, այնքան
դժվար ու խորն է թվում այդ խնդիրը, վոր նախան-
ձում եմ հարց տվողին. նա ինձնից տարիքով է, ճիշտ
է, բայց վորտեղի՞ց է իմանում:

— Իսկ մեռած մարդը քա՞նի որ է ապրում,—
հարցնում է մի ուրիշը:

Դարձյալ պատասխանել չեմ կարողանում:

— Դե վոր դպրոց ես գնացել, ասա տեսնանք Ա-
վետարանում քանի՞ «և» կա,— հարցնում է յերրոր-
դը, մի հասակավոր ոտա:

Յես գլուխս որորում եմ.— չգիտեմ: Բոլոր
հարցերն ինձ թվում են դժվարին ու խրթին:

— Դպրոցում այդ դասը դեռ չենք սովորել,—
արդարանում եմ յես:

Բայց նկատում եմ— տավարածները ժպտում

են, իրար աչքով են անում ու քրքջում:

Հետո սկսում են հանելուկները ասել:

— Են ի՞նչ ա՝ մի մարագ մեջը լիքը ուրագ:

— Ձգիաեմ:

— Են ի՞նչ ա՝ յերկու ախպեր, մի սարի չեռև, մոխիկ են անում, իրար չեն վարըմ տեսնեն:

Յես դարձյալ չեմ իմանում: Տղաները ծիծաղում են նորից և ուզում են նոր հանելուկներ ասել, բայց լնճ ոգնություն է հասնում Մաղաքի բլճան:

— Դե, դե, ըրևխուն տնաղ մի՛ք անիլ,— ասում է նա տղաներին, ու իր կողմից նոր հանելուկներ է առաջարկում նրանց: Տղաները չեն գտնում: Յես ուրախանում եմ: Իսկ Մաղաքի բլճան դլուխը թափ է տալիս:

— Ա՛յ, տեսնում ե՞ք,— ասում է նա,— բաներ կան, վոր դուք ել չեք իմանըմ: Հըմի վոր ձեզ վրա ծիծաղեմ, լավ կըլնի՞: Ձե. ակի՛ ել չեմ ծիծաղի: Պատըվին կտովրեցնեն— հետո: Իսկ դուք հա՛ վրա ք տալե: Ղազին,— գոռնում է նա լնճ,— անունդ ի՞նչ ա: Սուրե՞ն: Լավ անուն ա: Աբի եսոեղ նստի, ղազին,— ցույց է տալիս նա գետնին փռած յափնջու մեջը:

Ա՛յնպես պարզ, սրտագին է նրա հրավերը. յես ամաչելով մոտենում եմ— նստում յափնջու վրա: Մաղաքի բլճայի ամբողջ արտաքինը նման է կրոնի դասագրքում նկարած Աբրահամ նահապետին: Նա չիբուխը բերնին թմկին է ու ավել յափնջու վրա և խորը խորը նստած յերազուն աչքերով նայում է տավարին, վոր, աչնան գաշտում ցրված արածում է հանգիստ:

— Դու ումոնցի՞ կլնես, ղազին,— հարցնում է Մաղաքի բլճան:

Յես տալիս եմ մեր անունը: Նա ճանաչում է հորը, պապիս, ու խրախուսում, սիրտ է տալիս, վոր վոչ մի բանից չվախենամ— վոչ տավարից, վոչ տավարածից, և յերբ հանդը կգամ— տավարս միշտ բերեմ խառնեմ իր տավարին: Իմանալով, վոր չեմ ուզում գալուց գնալ— գլուխն որորում է:

— Եդ լավ չես անում, ղազին. ակի լավ չես անում: Ուսումնարանը մարդու խելքը չատացնում ա...— Նա լռում է մի վոքր, մատներով սանրում է խոպան մլրուքը և չարունակում.— Ասենք՝ մարդ ել կա՝ չաչացնում ա: Բայց խելքը հարկավոր բան ա: Տավար գնալու համար ել խելք ա հարկավոր: Խելք վոր չունեցար— տավար ել չես կարող պահել: Բա՛...

Մաղաքի բլճան... վորքա՜ն դանդաղ և ինչպիսի՛ ընդմիջումներով է խոսում: Չիբուխը ծծում է այնպես՝ մլրուքն ատամների հետ փոս են ընկնում: Հիմա, յերբ գրում եմ նրա մասին, նա լնճ թվում է բրոնզաձույլ մի արձան, վորի համար վոչինչ են անձրևն ու քամին, և՛ վոմպորիկ և՛ կայծակ: Կամ թվում է յերբեմն բոխի մի կոճղ, վոր արմատներն ամուր տարածել է հողում և խլխլոտ լրնկը ծածկել բրջոտ ճղներով: Փոմպորիկից հաբյուրավոր ծառեր են տապալվում արմատահան, բայց նա միշտ մնում է կանգուն— այդ Մաղաքի բլճան. ասես հողից է դուրս

յեկել ու ինքը բնութեան մի մասն է, և ինչ վոր կա այդ բնութեան մէջ՝ բոլորի լեզուն հասկանում է:

Տավարի հետ այնպես է վարվում, վոր ուրիշ տավարած յերբեք չի կարող: Ցերը կովերն ուզում են հեռանալ՝ նա այնպիսի ձայն է հանում, վոր նրանք իսկույն կանգ են առնում: Իսկ յերբ յերկար «հո–հո–հո» է անում— անասուն մանող կովերը յետ են դառնում: Առաջ քշելու համար առանձին ձայն ունի, ջրելու համար բոլորովին այլ: Իսկ յերբ գալիս է տավարը տուն տանելու ժամանակը—նա ձայնը դըղրդացնում է մի այնպիսի հանգով, վոր կովերն ու յերիկներն ընդհատում են արոտը և բոնում տան ճամբան: Կարծես նա այդ ձայնով հասկացնում է, թե տուն դնալու ժամանակն է, և կովերը հասկանում են նրան: Իսկ յերբ պատահում է յերկու կով կռվում են իրար հետ— նա ձայն է տալիս մեկին՝ «հե՛–հե՛»... և կովերը, հնազանդ յերեխաների պես, հեռանում են իրարից:

Հետաքրքրում յես շատ տավարած եմ տեսել, բայց Մաղաթ բիձի համառությունը չի ունեցել վոչ մեկը: Այսօր էլ ականջիս հնչում է կարծես նրա «հեյ–հեյ»–ը, վոր դնում–դիպչում է լեռներին ու անտառներին և յերկարում է այնտեղ: Նրա գիտությունը տավարի, խոտի, ծառերի մասին անսահման է. դիտել բոլոր ծառերի, բույսերի անունը. դիտել յերբ կարելի յե ջրել կովերին և յերբ հանդիստ տալ, վոր կաթը չպակասի: Գիտել վո՛ր ամպն է անձրևաբեր և վո՛ր քամին ի՛նչի նշան է: Իսկ պատմությունները՛... պատմում է, թե ինչպես կովերը վախենում



են վոլնուց, ինչպես ձոր մտնում և քնած մարդու բերանը և ինչպես առնեռները բարձրանում են ձիու «յալը» հյուսում: Պատմում է ու հետո էլ չլի չինում կամ դղալներ կերտում չիմիրլից ու վայրի տանձենուց:

Մաղաթ բիձան, ո՛, չի սիրում, յերբ տավարածները քարով կամ վայտով խփում են կովերին. այդպիսի դեպքերում նա դլուխն սրորում է վշտացած:

— Ե, ախպեր ջան, վո՞նց կարելի ա. չէ՞ նա էլ քեզ պես չունչ, սիրտ ունի: Վոր քեզ խփեն՝ դուր կը գա՞... Չե: Եղպես էլ նրանք .. Ջա՛յն տուր, բարկացիլ, բայց խփել—չէ՛: Նա էլ քեզ նման ա, մենակ լեզու չունի. սրտի ուզածը չի կարա ասի, պըտի խղճանք: Բա՛... այ, մի անգամ, ջահել ժամանակս, սարը դնալիս՝ մերու մեջ պատահեցի մի պախրի: Պախրա մի ասա— մի պատկեր: Քարի ծերին կաղնած՝ արևկող և արել: Մոխիկ եմ անըմ— ենպես լավ ա կաղնել, վոնց վոր ասեմած ա ղրկել: Աբի կրակեմ — ասի...

Ու չիբուխը ծծելով պատմում է Մաղաթ բիձան, թե ինչպես է կրակել յեղջերուի վրա, վոր դյուղում պարծենա, թե ինքն եսպես բան է արել: Կրակում է— տրա՛ք.— յեղջերուն նայում է նրա կողմն ու ընկնում: Մաղաթ բիձան դնում–տեսնում է յեղջերուն ընկել է մի ցից քարի և հորթի դլուխը դուրս է յեկել պատռված փորից: Այդ վոր տեսնում է— ել ձեռ չի տալիս:

— Գնացի սար վո՛նց արունք արած,— ասում է

Մադաթ բիձան, չիրուխը ծծելով, միրուքն այաերի հետ փոս քցելով ու մի աս ժամ անխոս նայում է հետուն, կարծես հիշում է անցածը։— Եղ որմանից վորսի թարկը տըվի։ Մեղք բան ա, ղազեն։ Շա՛տ... Հորթի գլուխը մոր պատռած փորից դուրս յեկած, մեղք բան ա...։— Նա լռում է նորից։— Նրանք էլ մե՛ր են, ղազեն, նրանք էլ հե՛ր են. նրանք էլ մեզ նման ալրա ունեն։—

Լռում է, ծուխը ծոր տալիս ու ասում.

— Յերբ տեսնես ծառի ճուտը փնից ընկել ա—տեղը դիր. սռված չուն տեսնես—մի կտոր հաց տուր։ Հաց չունես— թող գնա... Ձեռ չտաս, ղազեն, վոչ մի կենդանու. ամենքն էլ աշխարհ են յեկել ապրելու. են էլ ի՛նչ պըտի ապրեն— մինը մի ամիս, մեկելը— մի տարի, շատ-շատ տասը տարի... Մարդն ա մենակ. վոր շատ ա ապրում։ Դրա համար էլ անխիղճ ա... Եղպես ա. շատ ապրողն անխիղճ ա ըլում։ Պտենակը (թիթեռը) յա ծիտը քեզ որինակ. ո՞ւմ են վատ բան անում։ Հեչ մեկին։ Բայց մարդը— ո՛ո՛ո՛...

Յեվ Մադաթ բիձան տնքում է ու չիրուխը ծծում յեռանդով. ծուխը վոլորվում է հանդարտ ու հալվում է ոդում։ Մեր վերև դեղնող անտառը խշշում է անհանդիստ, մեր առջև փռվում են մերկ դաշտերը և կապտաթի և դեռնախնձորի ցանքատերը, վոր կարծես ավելորդ կարկատաններ լինեն դաշտի վրա։ Տավարն արածում է ցրված. կուշտ յերինջները հանաքով դլուխ-գլխի յեն տալիս։ Յերկնքով թռչունների յերամներ են անցնում։ Ու Մադաթ բիձան պատմում է



ելի թռչունների, բույսերի մասին, հետո տղաներին ուղարկում է դեռնախնձոր կամ խնձոր դողանալու։

— Գնա, ղազեն, մի քանի խնձոր բեր,— ասում է նա ինձ առաջին անգամ հանդիսատ ու պարզ ձևով, ասես ուղարկում է մեր կամ իր այդին։

—Վորտեղի՞ց,— հարցնում եմ տարակուսած։

Իմ չվարումը նկատելով՝ ցույց է տալիս մոտիկ դտնվող խնձորի այդին։

— Ո՞ւմ ասեմ։

Մադաթ բիձան գլուխն որորում է քմծիծաղ։

— Ո՛ւմ պըտի, ղազեն։ Գնա՝ պատի վրով մտի, քաղի բեր,— չարունակում է նա նույն հանդարտ, պարզ ձևով։

—Բա վոր տեսնե՞ն։

— Հենց գնա, ղազեն, չտեսնեն։

Այդ յես չեմ հասկանում. իսկ յեթե տեսնե՞ն ու բռնե՞ն։

— Ընենց արա, վոր չտեսնեն. իսկ յեթե բռնեն, ասա՝ ինձ համար ա, Մադաթ բիձի համար։. Գնա՛, ղազեն, գնա։ Յերբ չունես՝ գողանալն ամոթ չի։ Աչխարհում ո՞վ ումից չի գողանում։ Ղուչը (թռչունը), վոր ղուչ ա, նա էլ ա գողանում—արտից, անտառից, մարդուց։ Գազանը հո ավելի։ Իսկ մարդը—գոլորշից չատ։ Ով չատ գողանում ա, ղազեն, նա էլ չատ հարստանում ա։ Բայց յես հարստություն չեմ սիրում. ինձ որը մի բոքոն, մի կտոր պանիր, մի յերկու կարտոշ յա յերկու խնձոր— հերի՛ք ա։

Տեսնելով զժվարանում եմ գողության գնալ,

նա սպասում է մինչև ուրիշ տավարածներն են մոտենում: Յերեք հոգի յեն՝ տասից-տասհինգ տարեկան տղաներ՝ արեխավոր, ճիպոտներով զինված: Կես խոսքերից հասկանում են Մադաթ բիձին ու վազում են դեպի այդի. և չի անցնում կես ժամ, ևրեսդաստնում են ծոց ու դրսան լիքը: Մադաթ բիձան մի յերկուսը վերցնում է իրեն, մնացածը թողնում տղաներին:

— Սդահ մի ըլեք, տղեք. ինչքան պետք ա, ինքան քաղեցեք. մի անդամից չեն պակի...

Մադաթ բիձան այդպես ուղարկում է և դեռնախնձորն, և դաշարի:

Խորոված դեռնախնձորը տավարածների դեղիկատեսն է: Դեռնախնձորը խորովում են թիթեռնից արած կրակում, և մինչև նրա խորովելը մենք բոլորում ենք դուբեկան կրակի շուրջը, իսկ Մադաթ բիձան, մոխրապուշն մորուքը մատներով սանրելով, վորևե բան է պատմում հանգիստ:

Բայց ամենից ավելի Մադաթ բիձան սիրում է տղաներին ուղարկել խնձորի. և տղաներն այդ դողուբթյունն անում են զարմանալի ձևով. նրանցից մեկը գնում է այգեպանին հայտնում, թե այդու ներքին մասը դող մտավ. ու մինչև այգեպանը գնում է ներքև, մի քանի տավարած մտնում են այդու վերին մասը և ծոց ու դրսան լցնում խնձորով: Բայց ամեն անգամ այդ ձևով չի լինում. պատահում է, յերբ տեսնում են այգեպանը չի յեկեվում— ուղղակի մտնում են այգին՝ վորևե հարմար տեղից, վոր այնուհետև փախչելը հեշտ լինի:



Յեվ մի անգամ ահա տղաներն ինձ էլ են տանում հետները. վոր յերեխ այդի չեմ մտնի, դրնե «զարտաուլ» քաշեմ: Բայց յերբ հետախուզությունը պարզում է, վոր վոչ այգեպան կա, վոչ տղան, չորս հոգով մտնում ենք խնձորի այդի:

Հիշում եմ.— մայր մտնող արևն իր հրաչեկ չոքերով վոդողել է այդին և խնձորները, խնձորները տերևների մեջ վառվում են վոսկու և նարնջի փայլով: Աչխարհի գեղեցիկ տեսարաններից մեկը մի՞թե խնձորները չեն՝ մայրամուտի չողերով վոսկեվորված: Յեվ ո՞վ կարող է անտարբեր անցնել նրանց մոտով, և չհիանալ ու չզայրացկվել նրանցով:

Մենք զգուշությամբ անցնում ենք այդու վերի պատը զգուշությամբ, վոր չունը չլսի մեր վոտնաձայնը, զգուշությամբ ու չորս կողմ աչք ածելով բարձրանում ենք ծառերը, ամեն մեկս մի ծառ, զգուշությամբ քաղում ենք խնձորները և լցնում ծոցները— ամենահարմար տեղը՝ վազելու դեպքում: Քաղում ենք, քաղում հափշտակված և այն է՝ պատրաստվում ենք իջնել, յերբ տղաներից մեկի պոռին բացվում է, թե՛ ուռած վերնաշապկի փեշն է դուրս դալիս դռռուց, հանկարծ խնձորները ծառի վերևից— թր՛ռի, թր՛ռի,—կարկուտի պես թափվում են ցած:

Ու չունն անմիջապես անհանդիստ հաչոցով լըցնում է այդին. լսվում է հայհոյանք ու քայլերի ձայն:

Տղաներն իջնում են ահաբեկ. յես չտապում եմ հետևել նրանց. չո՛ւտ-չո՛ւտ... Նրանք իջնում են ու հայդա՛— մեկը մյուսի յետևից: Իսկ ես վերնաշապ-

կի փեչն ընկնում է հանկարծ մի փոքրիկ, փոքրիկ մատնաչափ ճյուղի... Ես ինձ կորցնում եմ ավելի, ու մինչ փեչս ապառում եմ, վոր իջնեմ, ապանները պատն անցնում են, Թողնելով ինձ մենակ՝ ներքևից յեկող մարդկանց աոաջ, վոր մոռենում են արդեն: Իջնում եմ, վերջապես, և կառցած վազում դեպի պատը, և վորպեսզի չնկատեն պատն անցնելիս, յես փորոտ տալով մանում եմ պատի տակ բացված առվի անցքը: Ցավ իմ մեծ դժբախտությունն ախվում է հենց այստեղ:— առվի անցքը նեղ է, իսկ ծոցս լիքն է խնձորներով. յես դուցե անցնեմ, բայց խնձորները, խնձորները թույլ չեն տալիս:

Ու մինչ մտածում եմ դոտիս արձակել, խնձորները թափել անցնելու համար, այդեպահն ու ապան վրա յեն հասնում ու... վոտիցս բռնելով՝ դուրս քաշում առվի անցքից... քանի՞ ապտակ է իջնում յերեսիս— յես չեմ հաչվում, և չեմ կարող հաչվել. յես սթափվում եմ այն ժամանակ, յերբ, խնձորներն ու դոտիս թողած, հասնում եմ Մադաթ բիձի մոտ և յերբ ապանները ասում են, վոր յերեսիս մի մասը վկապահել է»:

Յես ձեռս տանում եմ յերեսս և սասափիկ, սասափիկ ցավ եմ զգում:

— Ի՞նչ ա, զաղեն, ցավո՞ւմ ա,— հարցնում է Մադաթ բիձեն:—Բան չկա: Ա՛ռ ես խնձորը կեր, կլավանա:

Յես չատ ծածկամիտ եմ, վորքան էլ դուրսը ինձ հայհոյում են, ծեծում՝ յես ընկերներիս, տանը վո-



չինչ չեմ ասում, վոկ յերբ վերսս վորևե նշան է լինում — խաբում եմ, թե ընկել եմ կամ բանի յեմ դիպել:

Այդպես էլ այդ յերեկո, յերբ մայրս ինձ հարցնում է, թե ինչո՞ւ յես յերեսս ուռել, յես նրան հավատացնում եմ, վոր ընկել եմ: Մայրս դլուխն որորում է թերահավատ ու ցավով.

— Հը, հվմա դպրո՞ցն ա լավ, թե՞ տավարը:

Յես չեմ պատասխանում: Յերկընտրանքը դեռ պարզ չէր ինձ համար: Իհարկե, դպրոցը լավ է, բայց... պրխտավի ապան, իմ արարքը...

Մի չաբաթվա ընթացքում յես կամաց-կամաց ընտելանում եմ տավարածության. այլևս առաջվա յերկյուղը չունեմ, թե կովերը մի քիչ հեռանալով՝ կարող են կորչել, կամ բանջարանոցներն ընկնել: Հիմա յես էլ, մյուս տավարածների նման, հանգիստ պառկում եմ մեջքիս ու նայում յերկնքին: Դա իմ հաճույքներից մեկն է, թեպետ միակ հաճույքը դաշտում:— Վորքա՜ն դուրեկան է աշնան լինչ կապույտ յերկինքը և վորքան տխուր անտառի տերևաթափը: Վճխա յերկնքով լողում են քողի նման բարակ, թափանցիկ ամպերը, դեղեցիկ, բարմաուեսակ ամպերը: — Ո՞վ է տեղծել այդ ամպերը և ո՞ւր են գնում նրբանք... Մեջքիս պառկած, հետևում եմ նրանց ընթացքին, մինչև վոր հալվում, անհետանում են նրանք մի տեղ կամ անցնում են սարի յետևն ու անհետանում:

Պառկած ժամանակ, յերբ միտս ընկնում է դպրոցը, վեր եմ թռչում հանկարծ ու նստում:

ծում եմ ուսուցիչներիս, ընկերներիս մասին, հիշում եմ Ցեվային, մայր ծայրին թիթեռի նման բռնի ու–նեցող Ցեվային և մտածում, որ Սամսոնը նրան յե–րևի ասած լինի, որ ես տավարած եմ դարձել. և հետաքրքրական և— ի՞նչ կմտածի նա իմ մասին: Հի–շում եմ այս բոլորը ու նախանձում աշնան մարգե–րում չրջող լորերին, յերկինքում չվող թռչուններին և հանդիստ արածող կովերին, որ վո՛չ քաղի յեն ավել պրխտավի տղային, վոչ էլ վախենում են վորևե մի–կից: Մանավանդ ինձ շատ անվախ են թվում թռչուն–ները, որ ահա յերկնքի յերեսն ընկած՝ գնում են դե–պի հեռուները... վայրի բադերը և կռունկները:

Ամենից հաճելին ու հետաքրքրականը— կռունկ–ների յեռանկյունի վաշտերն են, որ հանդարտ թևա–ծումով անցնում են աշնան յերկնքով.

— Կլռլը՛կ—կլռլը՛կ... կլռլը՛կ—կլռլը՛կ...

Ինչ–որ խորհրդավոր վերացնող ու քաղցր բան եմ զգում յես նրանց այդ կարծես վազուց, շատ վա–ղուց լսած անուշ, հարազատ կանչի մեջ: Ցեվ յերբ նրանք անցնում են սարի յեռևը՝ խորին թախիծ ու տխրություն և իջնում վրաս: Արդյոք ո՞ւր են գնում նրանք այդպես հանդիսավոր ու «կլռլը՛կ-կլռլը՛կ...» Մարդ կարողանա գնալ նրանց հետ. թևերը ունենա ու թռչի, և այնտեղից՝ վերևից նայի աշխարհին: Տես–նես ինչե՛ր կտեսնի... Յերբեմն էլ մտածում եմ— մարդ կարողանա հասնել մինչև ամպերը. նստի մի ամպի վրա ու գնա մինչև աստղերը և տեսնի՝ աստ–ղերն ի՞նչ են արդյոք— կրա՞կ, թե՞ աչքեր, ինչպես ասում և ասում:



Իմ ցնորքներից նորից ինձ հանում են կռունկ–ները.

— Կլռլը՛կ-կլռլը՛կ... կլռլը՛կ-կլռլը՛կ...

— Դրանք վխտաուն գլխեր են,— ասում է Մա–ղաքի բիձան:— Յերբ գալիս են՝ նշանակում ա գա–րունք ա. յերբ գնում են— աշունք: «Պատրաստվե–ցեք», ասում են: Առաջ վոր փոչտ չի ելել, դրանք են նամակները տարել-բերել: Բա՛...

Կռունկների ձայնից հետո յես սիրում եմ անտա–ռի ձայնը. յերբ նա մեկ չրչում ա հանդարտ, մեկ խշշում հուզված կամ գրնդում ազմկաձայն, յես ա–կանջ եմ դնում ուշադիր և ուզում եմ իմանալ. վո՞ր–տեղից են առաջանում այդ ձայները և ի՞նչ են ասում նրանք. և արդյոք ասո՞ւմ են մի բան: Իմ մեջ զարթ–նում է յերգելու և սուլելու արամադրություն:

Յերբեմն կանգնում եմ անտառի պռնկին ու ձայն տալիս. «Ո՛–հո՛...»: Ինձ հաճույք է պատճառում ձայնիս արձագանքը, որ գլմբում է անտառի խոր–քում և կրկնվում բամբ ձայնով: Թվում է՝ անտառի խորքից, թե մի մութ անձավից ինչ–որ հսկաներ կրկնում են իմ ձայնը՝ ինձ սատկելու, որ չկան–գնեմ իրենց հանդիստը և չծաղրեմ: Իսկ յես իմ ան–վախությունը ցույց տալու համար՝ չարունակում եմ ծաղրել նրանց:— Ո՛–հո՛... հո՛...

Պատասխանն ավելի բամբ և լինում: Բայց յես չեմ վախենում.— քայլերի ձայն չէ լսվում: Ու չա–րունակում եմ ավելի վոգեվորված:

— Դու հեղ լավ չես անում, ղազին,— ասում է Մաղաքի բիձան մի որ:— Անտառի մարդին չի կարելի ծաղրել:

— Անտառի մարդն ո՞վ է...

— Անտառի մարդը՛... բա մինչև հիմի չես իմանում անտառի մարդը ո՞վ ա: Անտառի մարդը, ա՛յ ես բոլորին— ծառին, խոտին, մեղուներին, ալասլաստաղին, պախրին չունչ ավողն ու պահողն ա... Բա՞, զագեն: Եղ դու նրան անաղ մի անի...

Ա՛յ թե լինչ... Մաղաթ բլճի ասածն լինճ վրա խորը ապավորություն է անում: Ուրեմն անտառապահվից բացի՝ անտառի ծառերին ու կենդանիներին ուրիչ պահո՞ղ էլ կա, վոր ապրում է հենց անտառի մեջ: Ինչո՞ւ մինչև հիմի ասաս, մայրիկս այդ բանն լինճ չեն ասել: Ուրեմն մեր ճայնին բարկացած պատասխանողը նա չե: Հետաքրքրական է, ի՞նչ մարդ է դա, ի՞նչ կերպարանք ունի:

Բայց, այնուամենայնիվ, չես նրանից վախ չեմ զգում և չարունակում եմ անազել նրան որը մի քանի անգամ, յերբ գնում եմ տավարը չես տալու, վոր անտառ չմանեն. կանչում եմ ու ծպտում անտառի մարդուն: Դա լինճ հաճույք է պատճառում.— Թո՛ղ ճաքի: Ձեմ վախենում, վորովհետև Մաղաթ բլճան մոտիկ է: Նա լինճ կպաշտպանի:

Ձես լինճ հանգիստ եմ զգում մանավանդ այն ժամանակ, յերբ տավարը նստում է, յերբ այլևս չկա, թե կոլերը կկորչեն: Պառկում եմ մեջքիս վրա, նայում յերկինքին ու տարվում ցնորքներով: Հիշում եմ մերթ տատիս, մերթ մորս պատմած հրաշք նեբը: Իսկ յերբ դպրոցը միտս է բնկնում, այդ ժամանակ, վեր եմ թռչում հանկարծ ու ախրում: Հիմա Աամսոնն ահագին բան սովորեց. արդյոք ի՞նչ է մտածում իմ մասին իմ նոր ընկերը՝ Ցեվան... Բայց քիչ հետո տարվում եմ էլի ցնորքներով.— տատս պատմել է, վոր յերկինքը յոթը հարկ է և, ամենամեծին հարկում նստում է աստված՝ իր վոսկե գահի վրա. ձերմակ չորեր ունի նա և ձերմակ մորթ: Յերբ ուզում է աշխարհը տեսնել— յերկնքի կապույտ դռները բացվում են և նա նայում է աշխարհին, թե ո՛վ ինչ է անում, կամ ի՛նչ պատժի կամ պարգևի յե արժանի: Այդ ժամանակ յերկնքից մինչև յերկիրը մի վոսկե սանդուխ է ձգվում, և այդ սանդուղքով ցած են իջնում ձերմակ հագած հրեշտակները՝ աստծու հրամանները կատարելու:

«Հապա ինչո՞ւ նրանք չեկան մեր Աբռաշին լավացնելու. չե՞ վոր յես այնպես աղոթեցի աստծուն: Յեթե տատիս և մորս աստծը ճիշտ է—ինչո՞ւ հապա աստված իմ խնդիրը չկատարեց»,— մտածում եմ տխրությամբ:

Այս հարցերին պատասխան չգտնելով՝ մտքերս տարվում են ուրիչ ցնորքներով: Ո՞վ է վառում աստղերը յերկնքում և ո՞վ է հանդցնում այդքան աստղը մի անգամից:

Ցնորքներով տարվելու հետ միաժամանակ, յես միշտ զգուշանում եմ, վոր տավարը բանջարանոցներն ու «կարտոփիները» չընկնեն, վորովհետև հանդապատհը, վորի պատասխանատվությունների մեջ են մտնում դբրանց հսկումն ու պահպանումը, չուտ-չուտ յերևում և դաշտում կամ գյուղի ծայրին և հարցնում տավարածներին. «Հը, կարտոփ դողացի՞լ ես», կամ՝ «Տավարդ հո կարտոփների մեջ չե՞ս արել»:

Ցեվ ահա մի որ, յերբ Մագաթ բլճան չկա, յես բոլորովին մենակ պատկել նայում եմ յերկնքին ու մտածում եմ այն փոքրիկ տղայի մասին, վորի «չներն իրա մսից են»: Մտածում եմ, չգիտեմ վորքան ժամանակ, հանկարծ մի բառաչ եմ լսում. հիշում եմ տավարը, վեր եմ թռչում ու ի՞նչ տեսնեմ— տավարը չկա: Ահաբեկ նայում եմ այս ու այն կողմ: Ձլինի՞ անտառ են մտել, վոր չեն յերևում. այն ժամանակ վա՛յ ինձ. կկորչեն կամ անտառապահը «տուն կանի» ու...

Ցեվ վազում եմ դեպի անտառ, վոր հետս չի: Բայց դեռ անտառի պուռնկը չհասած, նորից յես եմ նայում դեպի դաշտը, ուր դեռնախնձորի, վայամբի ու բազուկի կատր-կատր ցանքսերը վորոշակի բաժանվում են հնձած արտերից: Տավարն այնտեղ էլ չկա... Հայացքս անցնում է մինչև դաշտի ծայրը, վորտեղից սկսվում են դյուղի տները ու բարդինները...

Նայում եմ ու վոտներս դողում են հանկարծ:

Մեկը մեր յեղներն ու կովերը քշում է դեպի դյուղը: Ահա մեր ապտակ յեզը, ահա և մեր սև կովը. ուղիղ չորս տավար: Մե՛րն է... Հանդապահը... մի բոպե, և յես սթափվում եմ ու վազում ընչաստաո, այնքան արագ, վորքան կարող է վազել իննը տարեկան ահաբեկված տղան:

Վազում եմ խնդրեմ հանդապահին, վոր ների ինձ, վոր մի բոպե անուշադիր եմ յեղել, վոր մյուս անգամ չեմ թողնի ցանքերի մեջ ընկնեն: Ցեվ հավատում եմ, վոր կների: Ցեթե խոսքերս չսրտեն— լաց



կլինեմ, նրա ձեռը կհամբուրեմ. կասեմ, վոր հայրս ձիճեճի լինի... ու վազո՛ւմ եմ, վազո՛ւմ:

Բայց դեռ նրան չհասած, արցունքը թափվում է աչքերիցս: Մի քիչ էլ, մի քիչ էլ, և յես կհասնեմ նրան:

Ցեվ, վերջապես, հասնում եմ ահա.

—Քնե՛ր,— հեկեկում եմ յես, և էլ չեմ կարողանում շարունակել:

Հանդապահը հոգեբան է. անմիջապես հասկանում է ո՛ւմ եմ. հասկանում է, վոր տավարն իմն է. ու այնպես թնդում է վրաս, վոր յես քիչ է մնում ձեռնից կպչեմ:

— Կորիր, լակոտ: Հըլա մի ըստեղ արի, են որը քցեմ, վոր դոմչին «որչնյա ի տեր» ասես:

Ու ճիպոտն այնպես է թափ տալիս վրաս, վոր վախից քարանում եմ, իսկ ինքը ծեծելով քշում-տանում է մեր յեղներն ու կովերը:

Ցերբ նա դյուղ է մտնում և աչքիցս հեռանում, յես սթափվում եմ նորից ու մտածում.— ի՞նչ պատասխան տամ հորս, մորս, դնամ հայտնե՞մ. բայց ի՞նչպես. հայրս չի՞ ծեծի արդյոք:

Ցեվ յես վճռում եմ հայտնել նախ մորս. նա կը հասկանա ու կների ինձ:

Ո՛, մոր ներողամտություն, վոր սահման չունես...

Նա, արցունքներս սրբելով, լսում է ինձ և իր հերթին, հայտնում է հորս:

Ցեվ, փոքր անց, հայրս գնում է մեր յեղներն ու

կովերը քերում։ Բերում կապում է բակում ու մոտենում ինձ։

— Ե՛, հիմի լինչ կասես. ելի դպրոց չե՞ս գնա...

Ցես լռում եմ. չես չեմ պատասխանում. յերկուս տեղն էլ գնալ չես չեմ ցանկանում։ Ցես ուրախությամբ կերթայի դպրոց, բայց ի՞նչպես...

Իմ լռությունը, իմ համառությունը անհամակնալի չե ծնողներիս։

— Ախր պատճառն ի՞նչ է, վոր խրտնել ես դպրոցից,— բարկանում է հայրս։— Գեղ վատ բա՞ն են ասել... Թե՞ վատ բան ես արել։ Ասա՛։ Ով գիտի բան ես արել, ամաչում ես գնալ։ Հը՞։

Ախ յերևկո չես այնքան հուզված եմ, վոր ամբողջ չեմ կարողանում ինձ պահել և խոսոսվանում եմ բոլորը։

— Ըհը՛, հանդգ ասա՛,— ասում է հայրս, և մյուս որը առավոտ գնում է դպրոց՝ ուսուցչին խնդրելու, վոր ինձ ընդունեն նորից։



## IX

### ՆՈՐԻՑ ԴՊՐՈՑՈՒՄ

Այս անգամ դպրոց եմ գնում առանց դժվարության, առանց դժկամելու։

Բայց յերբ հայրս, ինձ ուսուցչին հանձնելով, գնում է, յես ինձ շատ անհարմար դրության մեջ եմ ըզգում,— ամաչում եմ, կարմրում և չեմ համարձակվում վոչ մեկի աչքին, այլև աշակերտների յերեսին նայել. վախենում եմ հանկարծ բացատրություն պահանջեն դեպքի համար, հանկարծ պրիստավի տղան դա և վրեժխնդիրը լինի,— քացով խփել ինձ։ Ի՞նչ պիտի անեմ այդ ժամանակ։ Համբերե՞մ, թե՞ պատասխանեմ։

Ինձ թվում ևր, թե աշակերտները, ուսուցիչը պես, կծաղրեն ինձ կամ կծխծաղեն վրաս։ Այդ պատճառով բոլորին նայում եմ սրված ուշադրությամբ։ Բայց վոչինչ, անգամ ինձ ծաղրող ու հալածող տղաները, վորոնց ընկերոջը քացով խփել եմ, նրանք ել նայում են ինձ առանց թշնամության. իսկ ուսուցչն ինքը՝ պրիստավի տղան մինչև իսկ ուշադրու-

թյուն չի դարձնում վրաս, խաղում է իր համար. դուցե և մոռացել է ինձ:

Մեր դասարանցիները չընդհատեցին ինձ հետաքրքրությամբ, մնձ դասարանների աչակերտները ժպտում են իմ ամաչկոտության վրա, իսկ Սամսոնն ուրախացած ինձ սիրտ է տալիս չարունակ.

— Մի՛ վախիր, արի՛, արի դնանք ներս:

Ձեռ չեմ վախենում, այլ ամաչում եմ, հիշելով արածս և տեսնելով, թե ինչ հետաքրքրությամբ են չընդհատել ինձ:

Վերջապես, նրանց հետաքրքրությունից ինձ ազատում է դասը:

— Դե՛, դնա տեղդ նստիր և խելոք կաց,— ասում է տեսուչը, ձեռը մեղմաբար մեջքիս խփելով:

Ձեռ, տեսչի այդ վերաբերմունքից խրախուսված, դնում եմ ներս և նստում առաջվան տեղս, այնտեղ ուր արդեն նստած է Ձեվան: Նստելիս՝ ձեռ նրան բարևում եմ գլխով, մի թաղուն ահ սրտիս, թե հանկարծ իմացած լինի իմ արած անկարգությունն ու տավար դնալը և չուզենա կողքիս նստել:

Բայց նա, ընդհակառակը, ժպտում է այտերը վոս դցելով ու սպիտակ ձեռը մեկնում է ինձ.

—Բարով, Մանասյան: Ինչո՞ւ չէիր գալիս,— ասում է նա մեղմորեն:— Մենք այնքան դաս ենք սովորել...

Ո՛, վորքան բարի կե թվում նրա ձայնն ինձ, վորքան սիրալիր՝ աչակերտների սառը հետաքրքրության մեջ: Ուրեմն նա վոչինչ չգիտի, թե՞ գիտե— չի ուզում



հիշել: Ձեվ դրա համար նա ինձ մոտ ու հարազատ է թվում, քան մյուսները:

Այդ որը առաջին դասը տերտերինն է— կրոն:

Ներս է մտնում նա սև չալն ուսերիվն... Տեր— Գյուտը կամ, ինչպես աչակերտներն են ասում տեր— Գուշը, առհասարակ աշնանը և ձմեռը, դասամատը դեղին, ուսերին չալ եր գցում: Նրա այդ չալը... տերտերի այդ չալը բնորում — տանում է տեր — հոր հարևանի տյան, վոր աչակերտ է մեզ մոտ: Դրա համար այդ տղային բարձր դասարանի աչակերտներն անվանում են «տերտերի չալ»: Տղան նեղանում է, վորոշում է հրաժարվել չալը բերել—տանելուց, բայց չի կարողանում. վմանք ասում եչին՝ ամաչում է, մյուսները, թե վախենում է տերտերը վատ Թվանչան դնի:

Ներս մտնելով՝ տերտերը մի յերկու անգամ դնում— դալիս է դասարանում, ապա մի ընդհանուր անուադրեր նայվածք է պատում դասարանում և, ամրիոնում նստելով, մատը մեկնում է ինձ.

— Պատմի՛ր:

Ձեռ վեր եմ կենում ու կանգնում չվարած. վոչինչ չգիտեմ պատմելու համար, բայց և չեմ իմանում ի՞նչ պատասխանեմ:

Ինձ ողնության է հասնում Ձեվան:

— Տեր-հայր, սա մի յերկու չարաթ բացակա յեր, եսոր է յեկել:

—Հա՛,— ասում է տերտերը ցրված,— վոր եղպես է, դու եգուց կպատասխանես:

Ձեռ ուրախանում եմ, վոր տերտերը նույնպես չի

հետաքրքրվում էի բացակայության պատճառով. ուրեմն նա էլ վոչինչ չգիտի:

Այսպես է սկսվում իմ նոր մուտքը: Ցեվ ամենուհետև չարունակվում են դպրոցական միատեսակ որերը, տարբինները. որեր ու տարբինները, վոր ղեկավարում են ուսուցիչները,— յեղյուբանման բնավոր ունեցող տեսուչը, վորին Սանտարուկ Սերգեյիչ ենք ասում, Նիկալայ Պետրովիչը, վոր հայերեն դիտեր մի «խոզ» բառը, վորը արտասանում էր «հոզ», և վորն ամանդամ էր մեզ աշխարհագրության ու պատմության,— ռուսաց լեզվի վարժուհի Լիդա Լվովնան, տեր— Գաբիը և մյուսները:

Այժմ, յերբ տասնամյակներվ հեռավորության, յես եմ նայում դեպի այդ ժամանակները— դպրոցական միատեսակ որերի, տարբինների մշուշից յերևում են նախ ընկերները, իմ մտերիմ, իմ չարաճճի ընկերները, վորոնց հետ շատ կհանդիպենք այս պատմության մեջ, և ապա ուսուցիչներից նրանք, վոր ավելի ազդեցություն ունեցին դպրոցում կամ ապավորության եկին թողնում մեզ վրա: Դրանց հետ յես հիշում եմ, ի հարկե, մեր ընդարձակ բակը, մեր դպրոցի անմոռանալի բակը, ուր ունեցինք հոդմացույց, անձրևաչափ և ոդերևութաբանական ամեն տեսակ սարքավորում, ուր տեղի էին ունենում մեր խաղերը, մեր զինավարժությունը, և ծառատնկությունը ամեն գարնան— Նիկալայ Պետրովիչի ղեկավարությամբ:

Առավոտները վաղ հավաքվում ենք՝ խաղում դպրոցի բակում և զանգը տալուն պես՝ կանգնում ենք զույգ-զույգ ու նեբս մտնում: Ամեն մեկը զույգ է



կազմում իր նստարանի ընկերոջ հետ, և յես ու Ցեվան կանգնում ենք միշտ միասին: Միայն այդ չի. մենք դասերն էլ համարյա պատասխանում ենք միասին— Ցեվան լինի և Թելադրում, յես նրան:

Ամենից դժվարն ինձ համար ռուսաց լեզվի, աշխարհագրության և պատմության դասերն են: Դժվարը դեպքերը չեն, այլ անունները, անծանոթ, անսովոր անունները, վոր այնքան շատ են, տարորինակ, յերբեմն անարտասանելի.— Նարուշադոնոսոր, Բեհեղպերուզ, Դիոկղիտիանոս—կրոնի մեջ. իսկ ռուսաց պատմության մեջ յես չեմ կարողանում արտասանել «Ռյուրիկ», և միշտ ասում եմ «Լյուրիկ», վորի համար և Նիկալայ Պետրովիչը ամսական բարկանում է վրաս և կրկնել տալիս անվերջ: Միևնույն է, վոչինչ չի ստացվում. «Լյուրիկը» մնում է ելի «Լյուրիկ»:

Յես ու Ցեվան նստում ենք միշտ ամենից նստարանին, իսկ մեզնից հետո գալիս են Մելիտե Եվանգուլյան ու Սեդրակը, գեր-ծակ Ավագի տղան, հայտնի Սեդրակը, վոր լոլորին կամքում է, գրքերը վերցնում՝ կատակով պահում և ուսուցիչներին բավական դլխացավանք պատճառում: Դասերը Թելադրում է և պահանջում, վոր իրեն էլ Թելադրեն, յերբ «դեմ ասնի»: Բայց յերբեմն, կատակի համար, սխալ բաներ է Թելադրում և վորձանքի մեջ գցում ընկերներին: Իսկ յերբ ուսուցիչը նկատողություն է անում սխալվող աշակերտին այդ սխալի համար— Սեդրակը ծիծաղում է: Բայց մի անգամ նա ընկավ. սխալվող տղան հայտնեց Նիկալայ Պետրովիչին, վոր այդ սխալը Թելադրեց Սեդրակը: Նիկալայ Պետրովիչը կանչեց Սեդրա-

վին ու կանդնեցրեց պատահածակի մոտ.— «Դե հիմա թեզապրի»... կարծում էք Սեդրակն ընկճվի՞ց: Բնա՛վ: Ուսուցչի թիկունքից լեզուն հանում է, ծամածռություններ անում և յերբեմն, պատահանող աշակերտին կա՛մ հավանություն և տալիս դլխով, թե՝ ճիշտ է, չարունակիր. կա՛մ՝ դլուխը տարուբերում և բացատարար: Մի ուրիշ անդամ հայոց լեզվի դասին, յերբ տերտերը նրան, անկարգության համար, միջանցքն է անում, Սեդրակը նեցս է մտնում լուսամուտից ու չարունակում ծիծաղեցնել աշակերտներին. և տերտերը վորքան էլ ցրված, այնուամենայնիվ նկատում և նրա ներկայությունը և պտում անպատանի զայրացած.

— Դո՛ւրս, անիրավ. վորտեղից յեկել ես, այնտեղ էլ դնա...

Սեդրակը բարձրանում և լուսամուտը՝ բակը դատկելու:

— Ո՞ւր ես դնում, անիրավ,—կանդնեցնում է նրան տերտերը:

— Դուք ասիք՝ վորտեղից յեկել ես, տեր-հայր. յես այտտեղից եմ յեկել,— պատասխանում է Սեդրակը ու թռչում բակը:

Տերտերը դլուխն օրորում է միայն, վոր նշանակում է, թե Սեդրակից վոչինչ դուրս դա:

Սեդրակի ու Մելիտեյի յեռանը նստում են Ապատոլ Կարամանիկին ու Ֆելիքս Զայցեվը, յերկաթուղու ավազ վարպետի վորդին, վոր հաղնվում և միշտ մաքուր ու կոկ, սանրվում և ճաչակով և վոքրիկ ժամացույց և կրում վարտիկի գրպանում. ունի նա և սադաֆե կոթով վոքրիկ դանակ, վոր պահում և կաշվե պատյանի մեջ և մեծ պժվարությամբ և տալիս մեզ խնամիս սրելու: Հայոց լեզվի և կրոնի դասերին — Ապոտոլ Կարամանիկին, Ֆելիքսը և մյուս ուսանողները գուրս են գնում, բայց Մելիտե Եվանգուլոն մեզ հետ սովորում և կրոն ու հայոց լեզու: Յեվ նա յերբեմն մեզնից՝ հայերից լավ ևր պատրաստում տերտերի դասերը, և տերտերը միշտ ամաչեցնում ևր մեզ.

— Այ, անիրավներ, ամոթ և ձեզ. հուն և, բայց հայերենը ձեզնից լավ և սովորում:

Այդ ճիշտ ևր. Մելիտեն խնամիս մեզնից լավ ևր սովորում, և այդ զարմացնում ևր մեզ:

— Մելիտե, դու հայերեն ինչո՞ւ ես սովորում. ինչի՞դ է պետք,—հարցնում ենք մենք:

— Հայրս ասում է «սովորիր, խանութում պետք ա», յես էլ սովորում եմ:

Մելիտեյի հայրն առևտրական է. գլխավոր վոդոյի վրա նա մանրուքի և մրգեղենի մի մեծ խանութ ունի: Յուցանակի վրա խոշոր-խոշոր տառերով գրված է՝ «Աբխաոո Եվանգուլո»: Այդ Աբխաոն Մելիտեյի հայրն է: Նրա խանութում այնքա՜ն լավ մրգեր կան: Մեր դյուղաքաղաքի ամենալավ մրգերը ծախվում են նրա մոտ. և Մելիտեն յերբեմն հոր խանութից մերդ, կանֆետ, թուղ, խուրմա կամ ձիթապտուղ է բերում մեզ ծախում, ու ստացած փողը իր նամքով դնում կաշվե պորտմանի մեջ: Կամ ապատիկ տալու դեպքում, ծոցատետրում գրում է հայերեն— այս ինչը մնաց այսքան կոպեկ:

Այդպես էի Ապոստոլ Կարամանդին. նա չարուճակ ասում է, որ իրենք մեր քաղաքում չեն մնալու. չուտով, գլորցն ամարտնկուն պես, պետք է գնան իրենց յերկիրը՝ Հունաստան:

— Հեռո՞ւ յե,— հարցնում ենք.

— Ե, հեռո՛ւ, ծովերից դենը,—ձեռը բարձրացնում, յերկարում է Ապոստոլը:

Ու նկարագրում է իր հայրենիքը, իրրև մի հեքիաթային, էքզոտ յերկիր՝ կապույտ ծովերի մեջ, պայծառ արևի տակ. ուր ծաղկում են ձիթենին ու նըշենին և ուր հասնում են աշխարհի բոլոր մրգերը— նարինջ, նուռ, խաղող:

— Դու յերջե՞լ ես այնտեղ:

— Չե:

— Հապա վորտեղի՞ց ես իմանում:

— Հայրս է պատմել:

Նրա հայրը հացթուխ է. թխում է ամենաընտիր մատնաքաշ հացը, իսկ յեղբայրներից մեկը քարտաշ է, աշխատում է կայսրանի շենքերի վրա, յերկրորդ յեղբայրը ծառայող է: Կիրակի որերը բոլորը հավաքվում են մաքուր, պատշգամում նստում դումինո խաղում կամ այցելում մյուս հույներին:

— Կալիսպերա, նեպե...

Ապոստոլի պատմությունները մենք լսում ենք միշտ հափշտակված. դրանք վերացնում են մեզ և տանում մի ուրիշ հիասքանչ աշխարհ: Յեվ ահա մի անգամ, յերբ նա հուզված պատմում է իր հայրենիքի, իրենց թաղամասի մասին ու պարծենում, յես



չեմ համբերում, յես ել եմ ուզում պարծենալ:

— Մենք ել թաղամաս ունենք,— ասում եմ յես:

Տղաները զարմացած նայում են վրաս:

— Բա ո՞ւր ա,— հարցնում է Սեդրակը:

— Մեր կաթոլիկոսը պահում է, դեռ փոքր է, չեներն ել իրա մոտից են:

Տղաներն ավելի յեն զարմանում:

— Դու ի՞նչ դիտես,— հետաքրքրվում է Սեդրակը:

— Մայրս է պատմել,— ասում եմ յես:

— Իմ մայրն ել է պատմել,— վրա յե բերում Սամսոնը:

Տղաները զարմանում են, և ամենից ավելի Ապոստոլն ու Մելխոն. զարմանում են մանավանդ այն բանից, վոր «մեր թաղամասի չեներն իրա մոտից են»: Յեվ զարմանքն այնքան մեծ է, վոր նրանք չեն կարողանում իրենց զսպել ու անմիջապես մոտենում են տեսչին:

Մանատուկ Սերգեյիչ, կարո՞ղ է հապես բան լինել,— ասում են նրանք, պատմելով իմ ասածը:

Տեսուչը, պատասխանի փոխարեն նայում է ինձ և գլուխն որորում յեղբերանման բեխերի հետ միասին, վոր ամեն պատրաստում է հարու տալ:

— Մյուս անգամ այդպիսի հիմար բաներ չլսեմ,—մատը թափ է տալիս նա և չարունակում իր զրոսանքը Նիկոլայ Պետրովիչի և Լիդա Լվովնայի հետ:

Յես խորտակված եմ. դաժանաբար պարտվում

եմ հուշերի առաջ և լռում: Ուրեմն դա հիմար բան է: Մեթե՞ մայրս խաբել է ինձ: Չե՞ վոր տատս էլ է պատմել նույնը, Սամսոնի մայրն էլ և պատմել: Ու-րեմն բոլորը խաբե՞լ են մեզ...

Ու իմ մեջ կասկածներ են զարթնում:

Բայց մեր ընկերների հարաբերություններն այ-սպես բաներով չերբեք չեն վատանում: Մենք վոչ միայն դպրոցում, այլ և դասերից հետո էլ, ամեն որ համարյա հանդիպում ենք, խաղում, կամ զնում ենք դաշտ, անտառ: Յերբեմն էլ, յերեկոները հավաք-վում նստում ենք առանձնացած մի տեղ աստղերի տակ ու զրուցում յերկար: Յերկինք ու յերկիր խոս-նում ենք իրար: Աստղերը բաժանում ենք միմյանց միջև, թե վո՛րը ում տանդն է, ուզում ենք իմանալ ի՞նչ և իսկապես արևը, ի՞նչ է լուսինը, ի՞նչից են նրանք չինված և ո՞վ է վարդապետում արդյոք դիշերվա ու ցերեկվա զործերը: Ո՛ր, ինչ փիլիսոփաներ են յերե-խաները... Այնպես ուզում ենք ամեն բան պարզել, իմանալ և թափանցել իրերի խորքը: Ուսուցիչների բացատրությունները մեզ չեն բավարարում, և մենք մեր փոքրիկ մտքերով հասնում ենք տիեզերական խնդիրների չուրջը, ինչպես ծաղը ցորենի փակ պարկերի չուրջը:

— Յես կուզեի դիտնական լինել ու եղ բոլորն ի-մանալ,— ասում է Սեդրակը, հավչտակված այդ մե-ծին ու խորհրդավոր զաղտնիքներով:

— Եղ բաները դժվար է իմանալ,— ասում է Սամսոնը:—Իմ մորաքրոջ տղան սկի չդիտի, դու ի՞նչ պատի իմանաս:

— Բա մորաքրոջ տղան հո դիտնական չի, ու-ստանող ա,— առարկում է Սեդրակը:— Իսկ յես ու-զում եմ դիտնական լինեմ ու ամեն բան իմանամ:

—— Գիտնակա՞ն. վարձում ես հեչտ ա,— նկա-տում է Սամսոնը,—դու սկի քու դասերը չես կար-դում, ենքան հաստ գրքեր վո՞նց պըտի կարդաս:

— Չե, Սեդրակ, եղ քու բանը չի. դու ավելի լավ է տանուտեր դարձի,— խորհուրդ է տալիս Մելիտեն, — վոր չսիրած մարդուդ բանտարկես, դոշիդ մեղալ կախես...

— Տանուտերը լավ չի,— մի-ջամտում է զրույցին Աչոտը՝ մեր Թաղեցի այրի Նոյեմի տղան:— Ի՞նչ բան է վոր— մարդ բանտարկել, սրա-նրա վրա դո-ռալ:

— Բա վոր լավ կապրի. նվերներ կտանեն, բոլո-րին կհրամայի,— չարունակում է Մելիտեն:

— Չե,— դլուխն որորում է Աչոտը:— Յեթե ինձ հարցնեք՝ յես ավելի չուտ տերտեր կլինեյի, քան տանուտեր: Բոլորը համ պատիվ վտան, համ փող, համ էլ հանդիստ կապրես քեզ համար:

— Բա մեռնել վարո՞ղ ես Թաղել,— վրա յե պըրծ-նում Սեդրակը:

— Չե. յես մեռելից վախենում եմ,— խոստովա-նում է Աչոտը, և մի փոքր մտածելով, ավելացնում է:— Վոր եդպես է— ուսուցիչ կլինեմ:

Կամաց-կամաց խոսում ենք, թե ո՛վ ինչ կուզի լինել:

Սամսոնն ասում է ,որ ինքն ուղում մորաքրոջ ողայի նման ուսանող դառնալ:

— Իսկ դու ի՞նչ կուզես լինել, Սուրեն,— հարցնում է նա ինձ:

— Տելեգրաֆիստ,— ասում եմ յես:

Վոտուց հետագրիչները, մանավանդ յերկաթուղու հետագրիչները դուր են գալիս ինձ՝ իրենց վայրուն էոճակավոր պիջակներով, կակաըպատոր գլխարկներով: Բացի դրանից՝ ինձ թվում է նուչնպես, որ նրանցից խելոք ու հնարագետ մարդ չկա. ուրիչ ո՞վ կարող է նրանց պես թելերի միջով խոսել քաղաքների հետ:

Ամսամսոլը վոչինչ չի ուղում. նա սպասում է վաչրոյն ավարտի ու գնա Հունաստան. այնտեղ էլ կը վորոշի իր անելիքը: Իսկ Մելիտեն այն կարծիքի չի, որ պետք է չարունակի հոր գործը:

— Ես անուրթը կմեծացնեմ ու ամեն տեսակ նոր բան կծախեմ: Դուք էլ կդաք ինձանից առուտուր անելու..

— Դե, կալխալերա, նեպե՛,— ասում է Սեդրակը:— Հերիք է,պնանք քնենք:

Ու տղաները ցրվում են իրենց տները, մտածելով վաղվան դասերի և ուսուցիչների մասին: Ցել ամենից առաջ, իհարկե, Նիկալայ Պետրովիչի մասին, վոր այնքան խստապահանջ է ու բարկացկոտ:



## X

### ՆԻԿԱԼԱՅ ՊԵՏՐՈՎԻՉ

Աշակերտներից վոչ-վոք տեսչից այնպես չի վախենում, ինչպես Նիկալայ Պետրովիչից: Ինչո՞ւ յէ այդպես: Թերևս դրա պատճառն այն է, վոր նա պատմութիւնից ու աշխարհագրութիւնից բացի մեզ սովորեցնում է նաև պինավարժութիւն, և պահանջկոտ է ու խիստ. հետո չի սիրում, յերբ վորևե անուն կամ բառ աղավաղում են արտասանելիս: Բայց հետաքրքիր, շատ հետաքրքիր մարդ է Նիկալայ Պետրովիչը.— նա հագնում է դեղին կոճակներով սև այուրտուկ և նուչնպիսի ժիլետ, յերկար յեղունգներ է պահում ճկուլթներին վրա. նրա գեմքն սպիտակ է, իսկ մազերը չեկ՝ դիք կանդնած, վոր հիշեցնում է նոր ծլած դարի: Ինքը նուչնպես չեկ է, ջահել ու չարճրահասակ: Նրա ժամացույցի շղթայից կախված է մի խոզ: Վորևե աշակերտի վրա բարկանալիս՝ նա մատով ցույց է տալիս այդ խոզը և ասում. «Հո՛զ», հո՛զ... դու՝ հոզ»: Սահատասրակ Նիկալայ Պետրովիչը

սկրում է անունները կպցնել աշակերտներին: Սեդրակին, որինակ, վորպես անկարգուԹյուններ անող աշակերտի, անվանում է «Պուդաչյով», Սամսոնին՝ «Ցերկար լեզու», Մելխաելին՝ «հոզ», Ապոստոլին ու ինձ՝ «մայոր», և այդպես մյուսներին: Բոլոր անուններն էլ նա կապում է աշակերտների այս կամ այն վարքի հետ: Սամսոնին, որինակ, «Ցերկար լեզու» անվանում է նրա համար, վորովհետև Սամսոնը սովորուԹյուն ունի՝ լեզու հանել աշակերտների վրա. Մելխաելին «հոզ» է ասում՝ սրանից-նրանից դէմով խըփելու համար, իսկ իմ ու Ապոստոլի «մայորն» արդյունք յեղավ այն բանի, վոր մենք ծառայանկուԹյան որը վատ եյինք աշխատում: Ընկերները վոտ եյին փորում, ծառ եյին տնկում, իսկ մենք դործն ընդհատել՝ ղրուցում եյինք պարապ:

—Ա՛հա՛ ձեզ մայորները... մայորներ. իսկական մայորներ...

Ցեվ այդ որվանից մեզ կանչում է «մայոր»:

Դասարան մտնելիս՝ նա մի վայրկյան կանգնում է դռան մոտ, մի ընդհանուր զննական ու խիստ հայացք է ձգում աշակերտների վրա և ապա ծանր քայլերով մոտենում ամբիոնին.

—Նու, պատրա՞ստ եք:

Դասարանը պատասխանում է.

—Ա՛յո:

—Պետրոսյան, սկսիր:

Ա՛խ, Պետրոսյան... Նիկալայ Պետրովիչը միշտ քեզանից եր սկսում, վորովհետև դու դասերդ լավ էիր պատմում. Թեպետ իմանում եյիր, բայց չեյիր



կարողանում պատասխանել համարձակ, և սպասում եյիր, վոր յերբեմն Թելադրեն, և Թելադրողները հաճախ ավելի սխալանքի մեջ եյին ձգում քեզ, ինչպես արի և յես մի անգամ, ու տուժեցի դրա համար:

Պետրոսյանն իր տարիքից վոքր յերևող տղա յե. դաս պատմելիս՝ լրեն կորցնում է և չուտ-չուտ այս ու այն կողմն է նայում, Թե արդյոք սխալ չարա՞վ և արդյոք հիմա մեկը չի՞ բռնի իր սխալը վամ ուղղի: Ցերբեմն էլ կամացուկ ասում եր հարևաններին.— «Վրա՛ քցեք»: Իսկ յերբ «վրա եյին քցում»— Թելադրում եյին, նա վստահ եր լինում, վոր դա ճիշտ է, ու ընկնում եր սխալների մեջ:

Մի անգամ ահա՝ աշխարհագրուԹյան դասին՝ Պետրոսյանը դժվարանում է պատասխանել, Թե վո՛րն է Բելգիայի մայրաքաղաքը. դուցե և գիտի, բայց կասկածով նայում է այս ու այն կողմ և, Թվում է ոգնուԹյուն է սպասում:

—Բուխարեստը,— Թելադրում եմ յես, խղճալով նրան:

—Բուխարեստը,— կրկնում է Պետրոսյանը վըստահ:

Բայց Նիկալայ Պետրովիչի սրատես աչքերը նկատում են, դուցե և սուր ականջներն են լսում, Թե ո՛վ է Թելադրողը— նա հանդարտ առաջ է գալիս դեպի իմ նստարանը և, ականջս բռնելով, ինչպես յեղն են տանում լծելու, մոտեցնում է ինձ դրատախտակին:

—Կանգնի՛ր մինչև դասի վերջը, վոր իմանաս, Թե Բելգիայի մայրաքաղաքը վոչ Թե Բուխարեստն է, այլ Բրյուսելը:

Ձեվ չես մինչև պատի վերջը կանգնած նայում եմ ընկերներիս, ու վոչ այնքան ամաչում, վորքան հոգնում եմ. չարունակ մի վոտից հենվում եմ մյուսին և չերանի տալիս ընկերներից, վոր նստած են:

Այսպես է Նիկալայ Պետրովիչը: Նրա պատիժներն են՝ «կանգնիր անկյունում», «այսոր կմնաս առանց ճաշի», «դնա ծնողիդ կանչի»: Ամենից սարսափելին այն է, չերբ ասում է «դնա տեսչի մոտ և արտածդ պատմիր»: Ձեվ աշակերտը դնում է, դնում է այնպես, ինչպես դատապարտյալը կերթա խաչատեղին, ու մի ասմի պատմում և իր արարքի կամ հանցագործության մանրամասնությունները, բայց չերեխեն և վոչ մի կետ, չնշմարելով, վոր Նիկալայ Պետրովիչը կարող է ասուղել ամենը:

Բայց Նիկալայ Պետրովիչն ունի ուրիշ պատիժներ էլ: Սակայն նա դրանք տալիս է վինավարժության ժամանակ, մի՛այն վինավարժության ժամանակ:

Գարնան արևավայլ որ է. մենք վինվորական չերկար շարք կազմած կանգնել ենք դպրոցի առաջ: Նիկալայ Պետրովիչը գյուխը բաց, գեղին կոճակներով բանկոնն արձակ (վորի տակից չերևում են նույնպես գեղին կոճակներով ժիլետը և ժամացույցի շղթան՝ մեջքից կախված խոզով) դնում-գալիս է և մեր առջևից և կարգի հրամայում ծուռ կանգնողներին, վորից հետո սկսում ենք քայլել ընդարձակ բակի չերկարությամբ, ձախ վոտներիս միշտ առաջ գցելով, և Նիկալայ Պետրովիչը մեր քայլերի հետ չարունակ կրկնում է՝ աջ ձեռքը տակտով չարժելով.

—Ձախ՛: Ձախ՛: Ձախ՛...



Մենք քայլում ենք չերկ-չերկու, ապա վերադասավորվում ենք, քառյակներ կազմում և վարժություններ սկսում անեղում: Կռանում ենք, բարձրանում. չրջվում ենք այս կողմ, այն կողմ, և նորից քայլում:

Փողոցից բազմաթիվ չերեխաներ ցանկապատի ճաղերին ընկած կամ ճաղերի արանքով նայում են մեզ, մարզիկ նույնպես կանգ են առնում մեզ դիտելու, և մենք աշխատում ենք լավ քայլել, աչքի ընկնել թե՛ Նիկալայ Պետրովիչի առաջ, թե՛ փողոցից դիտողների: Դրա համար չատ ճիգ են թափում մանավանդ Սամսոնն ու Ալոսատը: Ձեվ ահա այն տեղում, ուր Նիկալայ Պետրովիչը կանգնում է հանկարծ և բացականչում. «Во фронт!» — —չրջվող տղաները թափով դիպչում են անուշադիր Սամսոնին,— Սամսոնն ընկնում է, իր հետ գցելով և մի ուրիշ աշակերտի: Այնքան անսպասելի ու զավեշտական է լինում այդ բոլորը, վոր չես չես կարողանում ծիծաղս զսպել ու քրքջում եմ:

—Ո՞վ է այդտեղ ծիծաղում,— առաջ է գալիս Նիկալայ Պետրովիչը:— Աբի այստեղ:

Ձես, ծիծաղս հաղիվ զսպելով, դուրս եմ գալիս չարքից և մոտենում նրան:

Նիկալայ Պետրովիչը սաստիկ բարկացած է, բայց բարկությունը պահում, սանձահարում է. չես այդ զգում եմ նրա ձեռներից, վոր այնպես, մազիկների պես սեղմում են ուսերս և չերեսս չրջում դեպի արևը:

—Նայի՛ր,— ցույց է տալիս նա արևը:

Սա առաջին անգամը չէ, որ Նիկալայ Պետրովիչը զինամարժութեան ժամանակ զանցառու կամ կարգ խանգարող աշակերտներին պատժում է այդ ձևով, որ տղաներն անվանում են «արևի պատիժ»։ «Արևի պատիժ» ստացել են և Սեդրակը, և Ալոսատոլ կարամանվիլին, և Պետրոսյանը և շատ ուրիշները։

Բայց ես այդ պատիժն այսօր ստանում եմ առաջին անգամ։

Ցեղ վրքան տարօրինակ պատիժ է այդ։ Ցերեկայում եք,— պետք է ուղիղ կանգնել ու բաց աչքերով նայել դարնան չկացուցիչ արևին։

Առաջին վայրկյանին լերները խաղում են և ես աչքերս փակում եմ։

Բայց Նիկալայ Պետրովիչն խոսում.

—Նայի՛ր, նայի՛ր...

Ցես նորից աչքերս բաց եմ անում և անմիջապես կկոցում եմ.— այնպե՛ս կուրացուցիչ, այնպե՛ս չըլացնող են ճառագայթները։ Թռչում է արևը մի այն ինձ է նայում, թռչում է իր հրաշեկ նետակներն ու հրեղեն ասեղները նա ուղղել է միայն իմ աչքերին։ Ու ես չեմ կարողանում դիմանալ այդ սուրսայր նետակներին, նրանց փայլին. աչքերս փակում եմ դարձյալ կամ նայում գետնին։ Սակայն Նիկալայ Պետրովիչը չի մոռանում ինձ. նա չուռ-չուռ կետ է գառնում ու կարգադրում.

— Ուղի՛ղ, արևի՛ն։

Ցես նայում եմ և անմիջապես ճերս հոմանի առնում։



—Այդ չեղա՛վ, չեղա՛վ,— կրկնում է Նիկալայ Պետրովիչը։

Ցես այլևս չեմ համբերում. ճերս թափ եմ տալիս ու գնում դեպի դպրոց։

—Ո՞ւր, ո՞ւր,— կանչում է Նիկալայ Պետրովիչը յետևիցս և, չվիտեմ, հասկանո՞մ է արդյոք, որ տեսչի մոտ եմ գնում,— անմիջապես կարգադրում է.— Շարք կանգնիր, չա՛րք... Շո՛ւտ։

Ցես, իհարկե, չարք եմ կանգնում և մասնակցում վարժութեան։ Սա ավելի լավ է, քան գնալ դանդատվել տեսչին, որը, ով գիտի, ինչպես կընդուներ իմ դանդատը։ Բայց այն ել հարց է— կհամարձակվե՞մ արդյոք դանդատվել։ Դա միամիտ բռնկո՞մ չեր իմ կողմից, որը հանդչեր պիտի թերևս մինչև դպրոցի չենքը։ Ո՞վ է ուսուցչից դանդատվում տեսչին։ Ի՞նչ համարձակություն եր այդ։

Բայց այս աշխարհում ամեն բան վերջ ունի։

«Արևի պատիժն» ել իր վերջն ունեցավ։

Բայց դեռ քանիսը պատժվեցին մինչև այդ որը։ Վերջին պատժվողները յեղան դարձյալ Սեդրակը, Ալոսատոլը և ուրիշները, իսկ ամենավերջինը՝ Մելիտեն։ Այդ ժամանակ եր, որ Մելիտեն լաց յեղավ և Սեդրակը բռնվեց, այն Սեդրակը, որին Նիկալայ Պետրովիչը, անկարդուքյան համար, «Պուդաչյով» եր անվանում։

—Տղերք, սա որ եսպես տանջում է մեզ, յեկեք գրա գլխին մի ոյին խաղանք,— ասում է Սեդրակը հուզված, փոքրիկ բռունցքը թափ տալով, և նրա սև աչքերը բոցկլտում են։

Մենք ընկերներով համաձայն ենք, միայն Զարդարյան Աչոտը՝ մեր թաղեցի այլ Նոյեմի ուզան՝ Աչոտը դեմ է:

—Լավ չէ,—ասում է նա սև գլուխն օրորելով,— լավ չէ ուտուցչի գլխին այլին խաղալ: Անհարմար է, տղերք:

—Ջեղ չէ պատժել՝ դրա համար ես ասում համ,— հարձակվում է Սեդրակը նրա վրա:— Թո՛ղ հլա քիչ էլ կանգնեցնի արևի դեմ, տեսնեմ եղջես կաես:

—Ձեղ կարգին պահենք՝ չկանգնեցնի,— առարկում է Աչոտը հանգիստ:— Տեսնում ենք բարկացող մարդ է...

Սեդրակն այլևս չի լսում նրան, մեզ առանձնացնում է և հարցնում, թե ինչ «այլին» կարելի յե խաղալ:

Մտածում ենք յերկար, բայց հարմար բան չենք գտնում:

Ցեղ գտնողը գարձյալ Սեդրակն լինի և լինում:

Մեր գպրոցում այդ ժամանակ չատ ընդունված եր աթոռի տակ ասեղ դնելը:

Սեդրակն առաջարկում է այդ:

Ի՞նչ կա վոր. մենք համաձայն ենք, յեթե միայն հաջողվի:

—Դուք հանգիստ կացեք,— ասում է Սեդրակը,— միայն թե Աչոտը բանը չփչացնի:

Ցեղ ահա մի որ յերկրորդ դասից առաջ, յերբ աշակերտների մեծ մասը դուրսն են, Մելխաեն, Սեդրակի դեկավարությամբ ու ցուցմունքներով, ասեղն ամրացնում և Նիկալայ Պետրովիչի աթոռին և թելի ծայրը տանում մինչև իր նստարանը:



Զանգը տալիս են: Աշակերտները խումբ-խումբ, աղմուկով մտնում են ներս:

Մելխաեն, թելի ծայրը բռնած, սպասում է դուրնատ և ըստ յերևույթին չատ հուզված: Նրա թելն անցնում է մեր նստարանի տակով, և յես տեսնում եմ, թե ինչպես է դողում թելը: Ցես ամեն կերպ աշխատում եմ, վոր Ցեվան՝ նստարանի վրա ընկերը չնկատի այդ թելը: Դրա համար ցույց եմ տալիս նրան Իոհան Ահեղին, վոր դայրացած պատռում է խանի թուղթը և աթոռում վոտները տակ:

—Թագավորն էլ տեսնես բարկանա՞,— ասում եմ յես:

—Ի՞նչ վա վոր. դա պատկերամն է եղնես,— պատասխանում է Ցեվան, և չի կարողանում չարունակել. վրդովհետև այդ րոպեին ներս է մտնում Նիկալայ Պետրովիչը. նա, ինչպես միշտ, մի վայրկյան կանգ է առնում դռան մոտ, զննող հայացքը պատում է դասարանում և արագ քայլերով մոտենում ամբիոնին:

Թելը վոչ թե դողում, այլ ցնցվում է հիմա:

—Նու, պատրա՞ստ եք,— տալիս է Նիկալայ Պետրովիչն իր սովորական հարցը:

—Այո,— պատասխանում են դասարանը:

Թելը չարունակում է դողալ:

—Պետրոսյան, պատմի՛ր,— ասում է Նիկալայ Պետրովիչը և նստում:

Բայց հազիվ նստած՝ նա ծուռ է լինում խայթվածի պես, անսովոր մի «ա՛» անելով: Ապա ձեռքը տանում է դեպի աթոռը և նկատում ասեղը:

Ինչպես նկարագրեմ հմա Նիկոլայ Պետրովիչի այլայլված դեմքը, ջղաձիգ շարժումները և առաջները կրճատոցը, որ տեսե մեկայն մի վայրկյան և սարսուռ մաղեց դասարանի վրա, որից հետո նա անմիջապես հավաքեց իրեն ու չանթալի հայացքը պտտեց դասարանում:

—Ո՞վ ե արել այս,— հանկարծ պողպատի պես հնչում ե նրա ձայնը դասարանի քար լռության մեջ:

Դասարանը լուռ ե:

—Ո՞վ ե արել, հարցնում եմ:

Վոչ-մեկ չի խոսում:

—Ասացեք, եթե վոչ սենչին կհայտնեմ, և բոլորդ կարճակրվեք:

Սպառնալիքը չի ազդում.— բոլորը լուռ են:

—Ցես ձեզ հետ չեմ պարապի, մինչև չասաք հանցավորի անունը:

Վոչ-մեկ դարձյալ ցանկություն չունի խոսելու:

Մենք վախենում ենք միայն Ֆելկով Զայցեվից և Աչոտից, վոր յերկուսն ել իրրև վախկոտ տղաներ, կարող են հանկարծ մի բան ասել. ու տագնապով նայում ենք նրանց կողմը— յես, Սեդրակը, Ասլոսոտը. Մելքոնն: Աչոտը նստել ե անտարբեր, իսկ Ֆելկովը գլուխը կախել ե դրքի վրա: Ցեվ Թերևս նրա այդ կասկածելի դիրքը, Թերևս մեր նայվածքներն եյին պատճառը, վոր Նիկոլայ Պետրովիչն ինքն ել դարձավ նրա կողմը:

—Զայցեվ. դո՞ւ յես արել:

Թերևս դա մի խորամանկ հարց եր, վորովհետև վոչ-մեկ և Նիկոլայ Պետրովիչն այդ համարձակությունը նրանից սպասել չեր կարող. բայց հարցը տրվում եր, դուցե, նրա համար, վոր Զայցեվը վախից հայտնի հանցավորի անունը:

Բայց Զայցեվն իմանալով հանդերձ, պատասխանում ե.

—Վոչ, Նիկոլայ Պետրովիչ, յես չեմ արել:

—Հապա ո՞վ ե արել:

—Չգիտեմ:

Նիկոլայ Պետրովիչը տաքանում ե և ձեռքը զարկում սեղանին:

—Ասացեք հանցավորի անունը:

Դասարանը լուռ ե:

—Կրկնում եմ՝ մինչև չասեք, յես չեմ պարապի:

Սպառնալիքը նորից չի ազդում:

Վոչ-մեկ ձայն չի հանում:

Այդ ժամանակ կատաղվում և տարօրինակ մի բան.— Նիկոլայ Պետրովիչը պոկվում և ամբոխնից և նետվում դուրս՝ աչքերը այլայլված ու հուզված, վորն ավելի յե ազդում մեզ, քան նրա ամբ սպառնալիքը. թվաց—դնում ե արտակարգ մի բան կատարելու մեր դեմ: Ցեվ մենք չեկինք ախորժում: Մի քանի րոպեից նորա և մանում տեսուչը՝ Սանտարուն քանի րոպեից նորա և մանում տեսուչը՝ Սանտարուն Սերգեյիչը՝ մռայլ, սովորականից ավելի վատրիկատ քայլերով և ունքամեջը մի մեծ կնճիռ: Վոչ թե նորա և մանում, այլ ավելի շուտ դռներին դիպչելով՝ իրեն քցում և դասարանը, արագ մոտենում և ամբոխին ու ձեռը նրան հենելով՝ կանգնում: Այսինքն նին ու ձեռը նրան հենելով՝ կանգնում: Այսինքն կանգնում և համբերյա իմ ու Ցեվայի առաջ. և յես

նկատում եմ, թե Սանտառուկ Սերգեյիչի ձեռն ու ձեղքյուրանման բեխերն ինչպես են դողում:

— Ձերեխաներ,— սկսում է նա պայքացած ու մի պահ լուռ նայում դասարանին. նրա ծնոտը դողում է:— Դուք աչակերտնե՞ր եք, թե վոզոցային, նռ... սրիկաներ: Հը՞...

Դասարանը լուռ է:

— Դուք, կամ ձեզանից մեկը, Նիկոլայ Պետրովիչի հետ վարվել եք ամենաանթուլատրելի ձևով,— չարունակում է Սանտառուկ Սերգեյիչը, յուրաքանչյուր բառը չեշտելով:— Դուք, լհարկե, գիտեք ով է արել այդ բանը, ուստի պետք է հենց հիմա ասղնը վրաին հայտնեք ինձ անողի անունը... այլապես բոլորդ կառուժեք...

Դասարանը լուում է զարճյալ:

—Ձերեխաներ, յեթե,— չարունակում է Սանտառուկ Սերգեյիչը, և նրա յեղքյուրները դողում են յերեսին,— յեթե հենց այս րոպեյին չհայտնեք հանցավորի անունը—ձեր ամբողջ դասարանը կարճակվի: Ընդմի՛շտ:

Դասարանը նորից անշարժ է և լուռ:

Ձեվ այդ լուռթյան մեջ յես զգում եմ (հետո ընկերներս պատմեցին, թե իրենք ևս նույնն են զգացել), վոր դասարանում կախված է մի ապատնալիք, ահավոր մի բան, վոր ամեն վայրկյան կարող է պայթել:— վախենում եմ՝ մեր ընկերներից մեկը վեր կենա հանկարծ ու վախից հայտնի ամեն ինչ. ու յես զգում եմ ավելի Սեդրակի համար. չե՞ վոր կարող են անմիջապես դուրս անել նրան, և նա բոլորովին կղժրախատա-



նա, վորովհետև մայրը խորթ է, հայրը հարբեցող: Տանը նրան վոչ-վոք չի սիրում, և մխայն զլրոցում է, վոր նա իրեն ուրախ է զգում: Ցեվ այդ եր պատճառը, այլ թաքուն յերկյուղն եր պատճառը, վոր յերբ Աչոտը, մեր թաղեցի այրի Նոյեմի տղա Աչոտը ձեռ բարձրացրեց՝ պատասխանով մի սարսուռ անցավ:— Ի՞նչ սիրուն ասի արդյոք: Ցերևի մատնելու յե Սեդրակին,— անցնում է բոլորիս մտքով, և ատելության ու վրեժխնդրության պես մի բան է զարթնում ներսս:

—Խոսիր, Զարդարյան,— ասում է Սանտառուկ Սերգեյիչը ուրախացած, վոր մեկը, վերջապես, պոռնկեց:

Աչոտը վեր է կենում:

Ամբողջ դասարանը դառնում է լսողության և ուշադրության:

—Սանտառուկ Սերգեյիչ,— սկսում է Աչոտը,— յես պետք է ասեմ, վոր բոլորի պատճառը...

Նա կանգ առնում. խոկ դասարանը, չունչը պահած, սպասում է նրա խոսքի չարունակությանը, և այդ լուռթյան մեջ Աչոտը չարունակում է բեկ-բեկ, առանց չուրջը նայելու, նայվածքը միայն տեսչի բեխերին ուղղած:

—Այս բոլորի պատճառը, Սանտառուկ Սերգեյիչ, այն է, վոր Նիկոլայ Պետրովիչը, դինամարժուհյան ժամանակ, տղաներին կանգնեցնում է արևի դեմ և ստիպում, վոր բաց աչքերով նայեն արևին:

Սանտառուկ Սերգեյիչը ձեռները չփոում է:

—Ուրե՞մն,— ասում է նա սպասողական, և նրա

փոխված, փոքր ինչ մեղմացած դեմքից յերևում է, վոր նա մոտ է իր նպատակին. չուտով կիմանա ո՛վ է հանցագործը: Իսկ մենք— Սեդրակը, Մելիտեն, Աստղուհին և յես՝ հոնքներիս տակից նայում ենք Աչոտին և տագնապով սպասում նրա վերջին խոսքին:

—Ուրե՞մն,— կրկնում է Սանասարուկ Սերգեյիչը,— ո՞վ է արել այսօրվա...

Պատասխանելուց առաջ Աչոտը նայում է դատարանին, նայում է Սեդրակի և մեր ընկերների կողմը, նայում է միայն մի վայրկյան և ապա նայվածքը հառում նորից սեղանի բեմերին:

—Յես կարծում եմ, Սանասարուկ Սերգեյիչ, վոր...

Աչոտը կանգ է առնում անհամարձակ:

—Նո՛ւ, նո՛ւ, չարունակիր,— խրախուսում է սեսուչն անհամբեր:— Վոր ի՞նչ:

—Վոր յերեմ Նիկալայ Պետրովիչը տղաներին չը-կանդնեցնի արևի դեմ, տղաներն էլ այնպես բան չեն անի:

—Ուրե՞մն՝ արևի դեմ կանդնեցնելու համա՞ր են արել,— հարցնում է սեսուչը:

—Այո՛,— դլուխը կախում է Աչոտը:

—Ուրեմն դիտե՞ս ով է արել:

—Վոչ. չդիտեմ:

—Հապա ինչո՞ւ ես ասում, թե արևի դեմ կանդնեցնելու համար են արել,— սեսուչի ձայնի մեջ նորից բարկության նոտաներ են հնչում:— Վորտեղի՞ց դիտես այդ:

—Լսել եմ, վոր տղերքը դժգոհ են արևից:



—Վո՞ր տղերքը:

—Նիկալայ Պետրովիչն ինքը դիտի,— պատասխանում է Աչոտը հանդիստ և ելի նայում մեր կողմը:

—Իսկ դու չդիտե՞ս:

—Վոչ, Սանասարուկ Սերգեյիչ:— կարծեմ բոլորը...

—Յես քեզ դուրս կանեմ, Զարդարյան:

—Դուք դիտեք, Սանասարուկ Սերգեյիչ: Միայն թե յես չեմ:

Տեսուչը բռնկում է հանկարծ և վոտը խփում հատակին:

—Ապերախտ,— նետում է նա Աչոտի յերեսին, և նրա յեղջյուրները ցնցվում են քթի յերկու կողմը:— Իրըև հայր չունեցող տղայի՝ մենք քեզ պատեպատ ենք թոշակից և դու այդպես... Դու դիտե՞ս այն առածը, վոր ասում է՝ գողին թագցնողն ինքը գող է: Գիտե՞ս...

—Վոչ, Սանասարուկ Սերգեյիչ,— գլուխն որորում է Աչոտը:

Տեսուչը հիասթափված նայում է Աչոտին և գլուխն որօրում:

—Տխմա՛ր: Ուրեմն դիտես և չես ասո՞ւմ:

—Վոչինչ չդիտեմ, Սանասարուկ Սերգեյիչ: Յես հայտնեցի միայն պատճառը:

Յեվ այնուհետև վորքան էլ տեսուչն սպասում է, բարկանում, սպառնում— վոչ-վոք վոչինչ չի ասում:

Դատարանը լսում է մի մարդու նման:

Յեվ այդ որվանից Նիկալայ Պետրովիչն էլ վոչ—

վոքի չի կանդնեցնում արևի դեմ և կարգադրում.

—Նայի՛ր:

Իսկ Աչոտը, Զարգարյան Աչոտը դառնում է մեր հերոսը և ամենամոտ ընկերը:



XI

## ԼԻԴԱ ԼՎՈՎՆԱ

Նա դասարան է մտնում թռչունի քայլերով, կանգնում է ամբիոնի մոտ և ակնոցի տակից, աչքերը կկոցելով, նայում է դասարանին. ու միշտ թվում է, թե դասարանը նոր է նրա համար և ուզում է ծանոթանալ՝ ովքեր են նստած:

Վոմանք ասում են, թե կարճատեսությունից է այդպես նայում, բայց կարճատեսությունը մեզ սուտ բան է թվում: Մենք, ընդհակառակը, կարծում ենք, նա ձևանում է: Մեզ թվում է նույնիսկ, թե ակնոցները, թե աղմուկ մորթին, և թե ճեռնոցները,ովոր հագնում է անպամ զարնանը և ամառը, նա կրում է ցուցամոլության համար: Ամենից զարմանալին աղմուկ մորթին է, ովոր յերբեմն դասարանում էլ ուսերից չի վերցնում:

Ալոատոլ Կարամանիզին նրան «հնդուշկա» յե անվանում, Սամսոնը՝ «Թրլոն»— վայրի աղավնի: Իսկ մյուս աշակերտները լեղու յեն հանում նրա յետևից,

նրա բացակայությամբ ձևացնում են նրան— քայլում են նրա պես բարձրակրունկ ու աչքերնին կկոցում ժպտուն հանդիսելիս:

Ասում են, որ նա Ռուսաստանից է եկել և այստեղ վոչ-վոք չունի— վո՛չ ընկեր, վո՛չ բարեկամ. նրա միակ ծանոթներն ուսուցիչներն են, տերտերը և դեղագործի կինը. ու միշտ լուռ, չարտահայտվող ու ծածուկ մի բան կա նրա մեջ: Մյուս ուսուցիչների նման չերբեք չի պատմում իր կյանքը կամ վորևե դեպք իր կյանքից, և այդ պատճառով թվում է խորհրդավոր անցյալի տեր. իսկ մենք այնպես ենք ուզում իմանալ նրա կյանքը, անցյալը—ո՛վ է, ի՛նչ ընտանիքից, ի՛նչ է սիրում, ինչպես պատմում էին մյուս ուսուցիչները. և քանի վոր նա չի պատմում— թվում է արհամարհում է մեզ, չի ուզում արտաքաց լինել մեզ հետ, այլ մի այն՝ դասերը:

—Ձերեխաներ, մենք կարդացինք այս, հիմա կարդանք այս,— ու կարդում է դերասանի պես արտահայտիչ չարժ ու ձևերով՝ ձեռը բարձրացնելով, չերբեմն կրծքին դնելով:

Այդ էլ տարօրինակ է թվում մեզ. բոլորովին նման չի մյուս ուսուցիչներին, և տղաներից մի քանիսը, ինչպես Մելիսան ու Սեդրակը, դաս պատասխանելիս չերբեմն ձևացնում, ավելի չուտ ենթադրում են նրան:

Լիդա Լվովնան հասկանում է այդ. վոտը թեթև դարկում է հատակին, կամ քանոնը խփում ամբիոնին:

—Ձո ձայնով կարդա,—ասում է նա դուսպ:

Նույնը լինում է չերգեցողության դասին: Լիդա Լվովնան, ուսուց լեզվից բացի, մեզ սովորեցնում է նաև չերաժշտություն: Չերգում է միշտ դլուխը բարձր պահած, մազերն ուսերին, և այդ ժամանակ պենսնեն դողդողում է նրա քթին. ու ատացվում է չատ տարօրինակ ու ծիծաղելի տեսարան. Լիդա Լվովնան, թվում է, վոչ թե չերգում է, այլ ակնոցը խաղացնում է քթին, թե՝ այ տեսեք—վորքան էլ չարժեմ՝ չի ընկնի:

Այստեղ էլ Սեդրակը, Մելիսան և չերբեմն Սամսոնը՝ չերգելիս ձևացնում են նրան— դլուխները չետ են տանում, չերեսներն դոդացնում, բայց և այնպես նմանվել չեն կարողանում— ակնոց չունեն:

Բայց Լիդա Լվովնան հասկանում է դարձյալ և կամերտոնը խփում է ամբիոնին.

—Սխալ ես չերգում:— Նորից սկսիր:— դո—բեմի— ֆա՛...

Ու վորքան էլ տղաները տնազներ, ծամածռություններ են անում՝ նա տանում է, ցույց է տալիս, թե իրեն չի վերաբերում— այդ Լիդա Լվովնան: Այնպես պահել դիտի իրեն այդ Լիդա Լվովնան:

Բայց մի անգամ ահա ի՛նչ է պատահում:

Լիդա Լվովնան սովորեցնում է մեզ «Вниз по матушке по Волге» չերգը: Կամերտոնը ձեռին՝ չերգում է նա, սովորականի պես պենսնեն դողացնելով. և նրա ձայնը նուրբ թելեքներով դեղեցում է դասարանի լռության մեջ... բայց մեկ էլ, չերգի լարված պահին, Մելիսան վոխիացնում է իմ չետև, նրան հետևում է մի ուրիշը, չերրորդը... Ու հանկարծ կատարվում է անսպասելի մի բան:

Լիդա Լվովնան յերգն ընդհատում է անմիջապես, մի պահ, մի վայրկյան պահ նայում է դասարանին՝ կկոցվող աչքերով, ապա անխոս վոտները զարկում է հատակին, կամերտոնը չպրտում է ու դլուխը դնում ամբիոնի վրա. վոչ թե դնում, այլ քցում է կարծես, այնպես թուլանում է նրա դլուխն ուսերի հետ: Մի վայրկյան մեզ թվում է ուշաթափվեց, բայց ահա լացի, հեկեկանքի ձայն ենք լսում.

—Մամա... մամա... դու մեռել ես... խոկ յես յերգում եմ... և լինձ ծաղրում են... մամա՛...

Դասարանով սարսուռ է անցնում:

Ա.յդ րոպեին նա մեզ թվում է այնքա՛ն խեղճ, ա-նոգ, այնպես վոքր. ասես պատժված աշակերտուհի յե— լալիս է, հեկեկում ու չի կարողանում դլուխը բարձրացնել:

— Մամա՛... Մամա՛...

Աշակերտների մի մասը սառել են նստարաններին վրա, մյուսները, և յես դրանց հետ, մտածել, չըվճռած ենք ամբիոնը, Լիդա Լվովնային, բայց վոչ մեկս չենք համարձակվում ձեռ դիպցնել նրան, բարձրացնել, կամ մի խոսք ասել՝ մխիթարել կամ նեղությունն խնդրել:

Վերջապես, դարձյալ Աշոտը, Զարդարյան Աշոտն է, վոր համարձակ մոտենում է նրան:

— Լիդա Լվովնա,— բռնում է նա վարժուհու ձեռը և ասում կերկեր.— Ներեցեք: Մենք մեղավոր ենք:

Ա.յդ Աշոտը... Ինքը վոչ մի վատ բան չի արել, չի ծիծաղել, բայց լրեն էլ համարում է մեղավոր:



—Լիդա Լվովնա,— չարունակում է նա նույն կերկեր, համարյա լացակումած ձայնով:

Լիդա Լվովնան դլուխը չի բարձրացնում:

Բայց Աշոտն ավելի համարձակություն է առնում և մեղմորեն յետ է քաշում Լիդա Լվովնայի ձեռը նրա յերեսից.

—Լիդա Լվովնա, մենք ներողություն ենք խընդրում... Լիդա Լվովնա, մենք չդիտեինք, տղաները չդիտեին, վոր ձեր մաման մեռել է: Ամբողջ դասարանի վոդմից յես ներողություն եմ խնդրում, Լիդա Լվովնա... Ներեցե՛ք:

Լիդա Լվովնան դլուխը բարձրացնում է և աչքերը սրբում:

—Վոչինչ, վոչինչ: Նստեցեք տեղներդ...

Մենք տեղավորվում ենք՝ խորին ակնածությամբ ու հնազանդ, և յերբ Լիդա Լվովնան պատմում է, թե ու հնազանդ, և յերբ Լիդա Լվովնան պատմում է, թե մայրը մեռել է մի ամիս առաջ և ինքը չի կարողացել դնալ նրա թաղմանը, և այսոր հանկարծ հիշեց,— դասարանն այնպես է լռում, վոր չնչառություն անդամ չի լսվում:

Ա.յդ որվանից մենք խղճում և սիրում ենք Լիդա Լվովնային ու հաճախ, մանավանդ դարնանը, ծաղիկներ ենք բերում նրան:

## XII

## ՏԵՐ–ԳՅՈՒՏԸ

— Հը, անիրավներ, անիրավներ. հանգիստ չե՞ք կարող նստել,— ներս է մտնում տերտերը՝ ևս չալն ուսերին, սպիտակ փափուկ ձեռները չփնչելով:— Դե հանգստացեք, տեսնենք ինչ ենք անում:

Դասարանը հանգարտում է, և տեր–հայրը հոգնած, իր խոշոր մարմինը դժվարությամբ տեղավորում է ամբիոնի մոտ և մատը մեկնում առաջին պատահած աշակերտին.

— Ամատունի, դասդ գիտե՞ս:

Ռուբան Ամատունին Ցեվակի նման աղջիկ է՝ հոնքերը բարձր, համարյա ճակատին: Նա դլխով է անում, վոր, այո, գիտի:

— Դե կարդա, լսենք:

Ցեվ տեր–հայրը դանդաղ չարժումով կապակի գրպանից հանում է դեղնահատիկ տերտղոմյան, սրմունկը հենում ամբիոնին ու նայում լուսամուտից



դուրս: Իսկ Ամատունին կարմրելով կարդում է որվա դասը:

— Լուսնի յեղյուրը ծածկվեց Գերքե լեռան յետև...

— Ճիշտ է, ճիշտ է,— ասում է տեր–հայրը տերտղոմյան դցելով, մատածումներով տարված: Մի քանի նախադասություն լսելուց հետո՝ առաջարկում է մի ուրիշին:— Շարունակիր, Սամսոն:

Սամսոնը, ինչպես միշտ դաս պատասխանելիս, բլուղի վեղերն ուղղում է, կոկորդը մաքրում և սկսում արագ–արագ:

— Կամա՛ց, այ տղա, կամա՛ց. յետևիդ ձի չեն քշում,— ասում է տերտերը և չարունակում հաշվել տերտղոմյայի դեղին հատիկները, յերեսը մշտա դեպի լուսամուտը, ուր պահակի պես կանգնած է մի չահել ակացի:— Ճիշտ է, ճիշտ է,— դլխով է անում յերբեմն տեր–հայրը:— Հիմա դու կարդա, Մելիտե Եվանդուլը:

Մելիտեն մշտա առանձին սիրով ու հպարտությամբ է կարդում հայերենը:

— Հեղ արծաթափայլ Արածանին զարնանային հեղեղներից կատաղել եր և պղտոր հորձանքներով ծածկել իր ափերը...

— Ըհը՛. չատ ճիշտ է: Այ, տեսնո՞ւմ եք, հույն է, բայց հայերեն բոլորիդ լավ է կարդում: Կեցցե՛ս, կեցցե՛ս: Ե՛, հիմա դու չարունակիր, Սեդրակ:

Սեդրակը, վոր դասի ամբողջ ընթացքում գրաղ–

ված և հարևաններին հետ դրուցելով և դիրքը նույնիսկ չի բացել, դասը տեղն անմիջապես չի դնում և, ընկերներին աչքով անելով, դիրքը ճեռին բռնած, արտասանում է վաղուց սովորած մի վոտանավոր. նա առհասարակ առանձին սեր ունի դեպի սահուն վոտանավորները, և սկսում է.

Վաղ ժամանակ մի հայ շենում
Մի հարգևոր հարս է լինում:
Նրա բերնից կեսուր-կեսար
Ջեյին լսել մի շունչ, մի բառ:
Ջեյին տեսել շուրթը մի որ...

Դասարանը զարմացած, ծիծաղաղուստ նայում է մերթ տերտերին, մերթ Սեդրակին, սպասելով, թե ինչ է լինելու. նկատելո՞ւ չե արդյոք տերտերն այդ «խաղը», թե վոչ:

Տեր-հայրը, սակայն, տերողորմյան չդնելով և հոգնած հայացքը դեպի դուրս, դլխով է անում և կրկնում.

— Ճիշտ է, ճիշտ է:

Բայց Սեդրակն այլևս, չկարողանալով իրեն պահել, ծիծաղում է, և նրա հետ ամբողջ դասարանը:

Տերտերն, սթափվելով, նայում է դասարանին:

— Ի՞նչ եք հռհռում, անիրավներ: Չը՞:

Մեկը ծիծաղի միջից.

— Տեր-հայր, Սեդրակը դասի վոխարեն «Հոպոպը» կարդաց:

Տերտերը դլուխն որորում է Սեդրակի վրա:

— Ա՛յ դու, անիրավ, ուրեմն դասդ չգիտես, հա՞:

Վոր եղպես է, կմնաս առանց ճաշի. կսովորես՝ նորառն կերթաս: Իմացա՞ր:

— Համ ասում է «ճիշտ է», համ ասում է՝ «չգիտես»,—քրթմնջում է Սեդրակը, չուրջը նայելով ու թեթև ծիծաղելով:

Դասարանը նույնպես ծիծաղում է:

Բայց այս անգամ տերտերը բարկանում է.

— Ապո՛ւշ, դաս չիմացողը պետք է լայ լինի, վոչ թե ծիծաղի:

Սեդրակը խոսքի տակ չի մնում.

— Տեր-հայր, յես դասս գիտեմ, դասիս տեղը չը գիտեմ,—ասում է նա կամացուկ, բայց դասարանը ծիծաղում է նորից:

— Լավ, անիրավներ, լավ. հերիք է,— ասում է տեր-հայրը և տալիս է մի նոր դաս:

Կրոնի դասն անցնում է ավելի աշխույժ: Այդ ֆանատասավիկ բիբլիական աշխարհը հետաքրքրում է մեզ, մխսիքական սարսափ և ազդում է տասնյակ բազմաթիվ հարցերի,— Ղուլամի կինը ինչպես քարացավ, արդյո՞ք հիմա էլ մարդիկ կարող են քարանալ,— մի՞թե մի քանի ձկնով կարելի՞ չե ամբողջ հարսանիք կերակրել:— Այդ ի՞նչպես Մովսես Մարգարեն վոտով անցավ կարմիր ծովը. ի՞նչու այդպիսի հրաշք հիմա չի պատահում... Մեր հարցերի տարափին տեր-հայրը պատասխանում է ձեռի թափահարումով.

— Լռեցեք, անիրավներ, հերիքով խոսեք... Ի՞նչպես անցավ:— Մարգարե չեր՝ անցավ: Հիմա մարգարեներ չկան, վոր անցնեն...

Մի անգամ «Համբարձման» պատին Սամսոնը հարցնում է.

— Տեր-հայր, այդ ինչպես Հիսուսը բարձրացավ վերև. չի՞ վոր ծանր բաները վերև չեն գնում, ընկնում են:

Տերտերը պլուխն օրօրում է:

— «Ինչպես»: Մինչև հիմա այդ հասարակ բանն էլ չգիտե՞ս, անիրավ: Գլխատես, վոր սուրբ եր՝ դրա համար բարձրացավ. դո՛ւ էլ սուրբ լինես, դու էլ կը բարձրանաս, չնայած պլուխդ բավական հատա ու ծանր է:

Աչակերտները ծիծաղում են Սամսոնի վրա, իսկ Սեդրակը հարցնում է.

— Ուրեմն սրբերը թե՞թև են լինում, տեր-հայր:

Տեր-հայրը նորից պլուխն օրօրում է Սեդրակի վրա:

— Քո գլուխն է թեթև, անիրավ, քո գլուխը...

Մենք տեր-հոր հետ ավելի մոտ ենք, քան մյուս ուսուցիչներին. նա պարզ է, մատչելի է. վոչ մեկն դպրոցում, փողոցում էլ հանդիպելիս հետաքրքրվում է ինչ ենք անում, ո՞ւր ենք գնում: Յերբեմն չուկայից մի խա, կամ վորևե մթերք է առնում և հանձնում տուն տանելու: Յերբեմն առաջարկում է, վոր գնանք յեկեղեցում յերգենք, կամ փոխ տալ տվորենք: Նա ճանաչում է բոլոր աշակերտներին. դիտի ո՛վ ում տղան է. յերբեմն հետաքրքրվում է, թե ով թարխուն ունի կամ հազվագյուտ բուկվի սերմեր:

— Յեթե ունենք, հայրիկիդ ասա, մի քանի հատ ուղարկի:



Տեր-հայրն իր տան առաջ ունի մի մեծ, ընդարձակ այգի, բանջարանոց և այնքան ծաղիկներ, ծաղիկներ... Փողոցի դռնից մինչև տան հեռավոր ծայրը մի ճամբա, յերկու կողմը կանաչի յերկայնքներ են ու ծաղիկներ, բազմատեսակ ծաղիկներ—մեխակներ, շուշաններ, կատվախաղալիկ, մանուշակներ, ծով աչքեր և ուրիշ շատ տեսակներ, վորոնց անունը անհայտ է մեզ: Հետաքրքիր նրա խնձորենիները... Դրանց նման խնձորենիներ չկան մեզանում— խոշոր ու հյութեղ, համը յերկար ժամանակ չես մոռանում:— Իսկ նրա տանձերը —ղրանք հրաշքներ են, վոր միայն տեր-հոր մոտ կան. ամեն մի այդպիսի պլուխ և պատռում պատռատուկ համար ճյուղերը ունենալ այդ տանձենիներից: Յեվ տեր-հայրն, ի հարկե չի մերժում, միայն փոխարենը մի փոքրիկ ծառայություն և խնդրում,— մի սայլ քար՝ պարիսպը բարձրացնելու համար, կամ մի յերկու սայլ ավազ՝ ճանապարհին փռելու, իսկ յերբեմն խնդրողը հյուսն է, քարտաշ կամ ներկարար... այդ դեպքում տեր-հայրը խնդրում է մի նստարան չինել, թանդված պատը նորոգել կամ խոհանոցի դուռը ներկել:

Յերբ տեր-հայրը մի բան է խնդրում— վոչ-վոք չի մերժում: Յեվ ինչպես կարելի յե տեր-հորը բան մերժել. չի՞ վոր նա և ուսուցիչ է և մեր քաղաքի տեր-տերների ամենամեծը— դործակալը: Յերբ մեզ կանչում է տուն՝ իրեն «մի փոքր» ողնելու— մենք յերբեք չենք մերժում: Գնում ենք բանջարանոցում տերտերը ցանելու, յերբեմն քաղհանելու, իսկ աշնանը՝

խնճոր, տանձ քաղելու, կամ գետնախնձոր հավաքելու:

— Գնանք, տղերք, թե չէ վատ թվանշան կդնեն,— ծիծաղում են աշակերտները:

Ցեվ մենք գնում ենք ավելի ժամանցի համար, բայց և աշխատում ենք:

Մի անգամ չորս հոգով գնում ենք տեր-հոր հետ ճակնդեղ ցանելու: Տեր-հայրն իր կովերը կերակրում է ճակնդեղով և բանջարանոցի մեծ մասը ճակնդեղ է ցանում— կարմիր ու սպիտակ ճակնդեղ:

Ո՛, զարնան թուլացնող արև, ո՛, վոգքրիկ սերմնացաններ:

Հոգնում ենք չուտով, քրտինքը վաղում է մեր ճակատներից, և ծունկերնիս ցավում է բարձրանալուց-իջնելուց... Ցեվ ահա այդ ծանր գործից չուտով ազատվելու համար,— ո՛ պարզամիտ խորամանկություն,— մենք սերմը առպրակով թաղում ենք հողում: Թաղում ենք ու նստում հանգստանալու: Փոքր անց յերևում է տերտերը առանց վարաջայլի, մխայն կապայով և հարցնում է հեռվից.

— Ե՞, տղերք, վերջացրի՞ք:

— Այո, տեր-հայր, պատասխանում է Սևքրակը բոլորիս փոխարեն:

— Ետքո՞ն չուտ,— զարմանում է տեր-հայրը և ավելացնում իրեն հատուկ բարեհոգությամբ.— և, որհնյալ լինե՛ք...

Բայց յերկու չաթաթ հետո մեր դաղտնիքը պարզվում է— դաչոթ մի մասում բաղուկը չի ծլում:

— Ե՞, անիրավներ: Այդ ինչպես եք ցանել, վոր կեսը չի դուրս յեկել...

— Ցերեկի, սերմը վատ եր, տեր հայր:

— Ձեմ հասկանում. չատ կարելի յե,— ասում է տեր-հայրը:— Նոր սերմ եմ առել, եղուց յեկեք ցանենք, տեսնենք ինչպես է լինում...

Տեր-հայրը չատ մատչելի յե. նրա հետ խոսում, զրուցում ենք ամեն ինչի մասին. հաճախ զանազան հարցեր ենք տալիս նրան և նա մեզ ամեն բան բացատրում և այնպես հանդամանորեն, այնպես պարզ: Ամենահարցասերը մեր մեջ Սամսոնն է. նա յերբեք չի բավարարվում ընկերների պատասխաններով և միշտ դիմում է տեր-հորը իր կասկածները ստուգելու:

Մի անգամ ահա Սամսոնը մոտենում է ինձ և ասում ամենայն զգուշությամբ.

— Գիտե՞ս, Սուրեն, մի ենպես բան եմ իմացել— կզարմանաս: Ասում են՝ մարդն առաջ է յեկել կապկից. այսինքն՝ մեր պապերի պապերն առաջ կապիկ են յեղել:

Այս հայտնությունն ինձ զարմացնում է չատ:

— Ո՞վ է ասում,— հարցնում եմ տարակուսած:

— Մորաքրոջս ուսանող տղան: Ցերեկ հայրիկիս պատմում եր՝ լսեցի: Կապկի՞ց...

Բայց մենք կասկածում ենք, վոր այդպես լինի. այդ ուսանողն այնքան մեծ հեղինակություն չի, վոր անվերապահ հավատանք նրան: Ավելի լավ չի՞ հարցնենք տերտերին, վոր իհարկե ավելի չատ բան գիտի, քան Սամսոնի մորաքրոջ տղան, քան առհասարակ ամեն մի տղա:

Տեր-հայրը նկատելով դեպ իրեն ենք գնում.

հակառակում է խոսուն, վոր ասելու, հայցնելու բան ունենք:

— Հը՛, լեկնք տեսնեմ, ի՞նչ կա:

— Տեր-Հայր, կարելի՞ յե մի բան հարցնել,— արտում է Սամսոնը քաշվելով և ամաչելով բռնում է վեր:

— Ասա տեսնենք:

— Տեր-Հայր, ճի՞շտ է, վոր մարդը կապկից է ծնվել... առաջ լեկել,— հարցնում է Սամսոնը կարկատելով, կարծես արրապղծություն է կատարում:

Տեր-Հայրը զլուխն որորում է:

— Կապիկը դո՛ւ յես, անիրավ,— հանդիմանում է նա:

Մենք ամոթից զլուխներս կախում ենք և ուզում ենք հեռանալ, բայց տեր-Հայրը վանդնեցնում է.

— Սպասեք, Դավթյան,— ասում է նա Սամսոնին,— դու այդ վորտեղի՞ց ես լսել այդ տխմար բաները:

— Մորաքրոջս տղից:

— Ո՞վ է մորաքրոջդ տղան:

— Ուսանող է:

— Ուսանո՞ղ է, բայց հիմարություն է ասել, կամ, ինչպես յերևում է, հանաք է արել: Գնա, էլ այդպես բաներ չխոսես:

Բայց Սամսոնը մնում է կանգնած. նա ճակատը քորում է և ասում.

— Հետս, տեր-Հայր, նա ասում է ասուլած չկա- ճի՞շտ է:



Տեր-Հայրը ձեռը դնում է չուրթերին և դեմքին տալիս արրապղծության զղողի արտահայտություն.

— Սը՛ըտս. մյուս անգամ այդպիսի բան չասես... Տուն դառնալիս Սամսոնն ինձ հարցնում է.

— Ուրեմն մորաքրոջս տղան սո՞ւտ է ասում:

Կապիկի մասին յես վոչինչ չեմ կարող ասել, բայց ինչ վերաբերում է աստծուն, յես ուզում եմ Սամսոնին հայտնել իմ կասկածը, թե, յերևի, չկա, հավանորեն չկա. և ուզում եմ որինակ բերել, թե ինչպես յեղբորս համար մի դիշեր այնքան աղոթեցի, լաց յեղա— աստված վոչ մի բան չարավ. մինչդեռ՝ յեթե աստված լիներ, յերևի մի բան կաներ, այնպես չի՞: Բայց ամաչում եմ յուրյ տալ իմ թուլությունը, թե յես լաց եմ յեղել: Վորքան էլ Սամսոնը իմ ընկերն է, այնուամենայնիվ չեմ ասի,— հետո վրաս կծիծաղի.— ընկերներին վախտն է, նրանք կծիծաղեն վրաս: Ձեվ լռում եմ ու մտածում, վոր Սամսոնի մորաքրոջ տղան էլ, այդ ուսանողը, յերևի, ինձ նման մի բան է խնդրել ասծուց և ասուլած, յերևի, չի կատարել նրա խնդիրքը, դրա համար էլ ասում է «աստուած չկա»: Բայց մի՞թե իսկապես չկա: Հապա ինչո՞ւ նա կա տատիս, պապիս, մորս և բոլոր մեր հարևաններին համար... Լավ, յեթե չկա, մտածում եմ, այս մեծ աշխարհը, մարդկանց, անասուններին, ծառուններին ո՞վ է ստեղծել... ո՞վ է հապա ձյուն տալիս, անձրև, վարսուտ... և մի՞թե տերտերը սուտ է ասում: Կարո՞ղ է այդպիսի հասակով, մորուքով մարդը սուտ խոսել:

Լավ, լեմե կա,— ինչո՞ւ հապա իմ աղոթքը չլսեց և իմ խնդիրքը չկատարեց...

Մխաքս խճճվում է տարակուսանքների ցանցում. զգում եմ, որ շատ մութ, անհասկանալի բաներ կան, որ չես չեմ հասկանում:

Յեվ յերեկոյան, յերբ մայրս սովորականի պես քնելուց առաջ աղոթում է, չես հարցնում եմ նրան.

— Մայրիկ, աստված կա՞, որ աղոթում ես:

Մայրս ուշադիր նայում է յերեսիս, զարմանալով իմ հանկարծական հարցի վրա.

— Եղ ինչո՞ւ համար ես հարցնում:

Յես չվոխվում եմ մորս խնամս առնել և ասում առանց ակնկալելի.

— Սամսոնն ասում է՝ «աստված չկա», ճի՞շտ է:

Ասում եմ ամաչելով, թե չլինի վիրավորես մորս. չե՞ որ նա այնպես յերկյուղածությամբ և խոսում աստծու մասին, նեղության մեջ միշտ նրա անունն է տալիս, որպես արդարացատ մի դերագույն ուժի... Սակայն մայրս այսօր շատ անտարբեր է:

— Յես ի՞նչ գիտեմ,— ուսերը վեր է քաշում նա:— Քու ի՞նչ բանն է՝ կա, թե չկա. դնա դասդ սովորի:

Յեվ հարցն ելի մնում է մութ:



## XIII

## Ա Վ Ղ Ա Ն Ի Ս Տ Ա Ն

Ավղանիստա՛ն... Վորքան վիշտ ու պայրութ և կապված այս անվան հետ: Ասացին անգամ յես այդ անունը լսում եմ Սամսոնից, այնուհետև նա դառնում բոլորի խոսակցության առարկան...

Ամառային արձակուրդներին էլ մենք ընկերներով հաճախ մխաին ենք լինում. գնում ենք դաշտ, անտառ, գետը լողանալու: Ո՛, մանկական որերի աղատություն... ո՛, դաշտերի ու անտառների բուրվառ զովություն, և ինչ գետակի պաղպաջուն ջրեր... Ամառը ամենից շատ մենք սիրում ենք այդ դուրս գետը, որ աղմկաձայն իջնում է սարերից և քարե-քար դիպչելով գալիս և անտառներով, խոկ քաղաքից վերև հանդարտում և այնպես, կարծես հանգստանում և յերկար ճանապարհի հոգնությունից... և այդտեղ աղաները լճակներ են կազմում ու լողանում, լողանում յերկար, յերբեմն ճաշից մինչև յերեկո: Ու

նրանց ալմուկից թնդում են դեռատիը ու մոտից անտառը... այդ ալմուկին ամեն որ մասնակցում ենք և մենք— Սեդրակը, Մելիտեն, Ալոսոտոլ Կարամանը— դեն, Սամսոնը և ես: Յերբեմն մեզ միանում են Ֆելիկս Զայցեվը և Զարզարյան Աշոտը, բայց նրանք շատ քիչ են լողանում. յերկուսն էլ մի քանի լող են տալիս և անմիջապես հաղնվում ափեն՝ արևից տաքացած քարերի վրա: Իսկ մենք, մանավանդ Սեդրակն ու Մելիտեն, ջրից դուրս չենք գալիս. յերբեմն նրանք քիթները բռնում են ու սուզվում ջրի տակ և հետևում դուրս գալիս նորից՝ վայրկյաններ անցնելուց հետո:

Ամառը առհասարակ մենք հաճույքներ շատ ունենք, բայց ամենալավ հաճույքը դեռատի լողանալն է. և այդ է պատճառը, որ հաճախ հացից զրկում ենք մեզ, բայց լողանալուց յերբեք:

Բայց ահա մի որ լողանալու գնալիս՝ Սամսոնը հանկարծ կանգ է առնում ճանապարհի մեջտեղը և ասում տխուր.

— Գիտես, Սուրեն, ես քեզ մի վատ բան լսեցի: Ռուս Թագավորն, ասում են, ուզում է մեր յեկեղեցու հարստությունը, կալվածները խլի և մեզ բոլորիս, բոլոր հայերին քշի հեռու յերկիր:

Այս բոլորը մի անգամից լավ չեմ ըմբռնում. միթե՞ ռուս Թագավորն այնքան աղքատ է, այնքան հողչունի, որ ուզում է մեր յեկեղեցու կալվածքը խլի. և ինչո՞ւ պետք է մեզ հեռու յերկիր քշի. մենք ռուս Թագավորին ի՞նչ ենք արել:

— Ինչո՞ւ համար,— հարցնում եմ:

— Յեսիմ,— ուսերը վեր է քաշում Սամսոնը:

— Ո՞վ ասավ:



— Հերս, հետո մորաքրոջս ուսանող տղան:

Սամսոնի ասածների մեջ ինձ, չգիտեմ ինչու, առանձնապես անհանգստացնում է «հեռու յերկիր քշելու» լուրը: Ինչո՞ւ պետք է քշի, ի՞նչ է նշանակում քշել և ուր են ուզում քշել: Սամսոնը չգիտի ինչո՛ւ, բայց նա լսել է, վոր քշելու յեն Ավղանիստան:

Այո, Ավղանիստան. նա այդ անունը լավ է հիշում:

Ավղանիստա՞ն... Ավղանիստա՞ն,— կրկնում եմ յես չմոռանալու համար:

Վորքան տխուր, բայց և այնպես Սամսոնի ասածներն անհավատալի յեն թվում ինձ. ի՞նչպես կարող են մի անգամից բոլորիս քշել. հապա մեր տները, մեր ապրանքը, մեր դպրոցը...

Այդ որը մենք չատ քիչ ենք լողանում. կարելի յե ասել, ջուրն ենք մտնում դուրս գալիս. վոչ ջուր ենք ցանում իրար վրա, վոչ ժայռից նետվում գետը, վոչ քիթ ու բերան փակած սուզվում ջրի տակ... Լողանում ենք առանց ափեն էլ վերադառնում տուն: Մինչև լողանալը Սամսոնը տղաներին պատմում է իր նորությունները և հիմա բոլորի միտքն զբաղված է այդ արտակարգ լուրերով:

Յես վորոշում եմ տուն հասնելուն պես ամեն ինչ պատմել մորս:

Բայց մայրս արդեն լսել է. մերոնք՝ պապս, տատս, նույնպես դիտեն: Գիտեն և հարևանները...

Յեվ այդ որը ո՛մ նայում եմ՝ տխուր է յերևում ու մտահոգ: Բոլորն էլ խոսում են այն մասին, վոր շուտով ամեն տեղ՝ հայկական բոլոր գյուղերում ու

քաղաքներում թագավորի մարդիկ դրավելու են յա-
կնեղեցիների հարստությունը, կալվածները և մեկ՝
բոլորիս քշելու են Ամղանիստան, հեռու՛ս, հեռու՛ս մի
յերկիրը: Ու ամենքին էլ, ինչպես ինձ, սարսափեցնում
է վոչ թե յակնեղցու կալվածների դրավումը, այլ այդ
անհայտ, հեռավոր անորոշ Ամղանիստանը, վոր ոմ
դիտի, աշխարհի վոր ծայրումն է, ուր, ոմ դիտի,
վո՛չ ջուր կա, վո՛չ ծառ, վո՛չ անտառ...

Յեվ քանի դնում առավել շատ են խոսում այդ
մասին, որից-որ նոր մանրամասնություններ են պատ-
մում. լուրերն ուշշում են գառնում ահռելի ու ահար-
կու: Հարևանուհիները հաճախ, դռրծները թողած,
հավաքվում են մեր դռանը՝ տատիս մոտ և խոսում
հուզված, բարկացած: Իսկ տատս միայն անիծում է.

— Մեր հայ հավատն ուզում են վչացնեն, այ
աստծու կրակը թափվի դրանց գլխին:

— Ամմե՛ն, ամմե՛ն,—ասում են կանայք:

Տատս վոքրիկ պառավ է. սուր վոքրիկ աչքեր ու-
նի և սուր լեզու. մեր թաղի կանանց մեջ վայելում է
մեծ հեղինակություն: Հարևանուհիների հավանու-
թյունից վոգևորված՝ նա չարունակում է.

— Փուլ գա ռուս թագավորի թախտը, խնդրել եմ
աստծուց,— ասում է նա, ձեռները յերկինք պարզե-
լով:

Տատս այնքան անեծք գիտի, վորքան վոչ մի կին
մեր թաղում: Ու այդ բոլորն ասում է վրար յեռանից և
փոխե-փոխ վա՛մ ծնկերն է ծեծում, կա՛մ ձեռները
աղերսով յերկինք պարզում:

— Ի՞նչ ենք արել մենք թագավորին. վորդին զո-



դին մորթե՞լ ենք, վոր ուզում է մեզ դաղարդյուն
անի, աչխարհից-աչխարհ տանի:

Ու բոլորը միասին կամ անիծում են, կամ տը-
րտրտում անդոր ու անճարն: Ցեվ յես զգում եմ նրանց
վիշտը, հասկանում եմ ինչ է նշանակում նրանց գը-
լուխների տարուբերումը, ծնկներ տրտրելը: Այդ բո-
լորը նշանակում է՝ մենք անդոր ենք ու անտեր...

Կանայք չարունակում են խոսել և ասում են այն-
պիսի բաներ, վոր մարմինս փշաքաղվում է:

— Չեն թողնելու,— պատմում են նրանք,— մեզ
հետ մի սել, մի ձի տանելու. քշելու են վոտով...

Այդ հեռանկարը սարսափ է թերում ինձ, և այդ
սարսափի հետ միասին յես խորին ատելություն եմ
զգում դեպի ռուս թագավորը, վորի մե՛ծ պատկերը՝
ահագին վոսկեզուշն չրջանակով կախված է մեր դըպ-
րոցում:

Այդ ատելությունն զգում են և ընկերներս, ան-
դամ հույները՝ Ապոստոլ Կարամանդիին և Մելիտեն:

— Ձեզ վոր տանեն մենք մենակ վմնանք,— ասում
են նրանք տխուր:

Իսկ Սեդրակի աչքերը բոցկլտում են զայրույքից:

— Գնանք դպրոց,— ասում է նա,— պատկերը
վերցնենք՝ աչքերը հանենք:

Սեդրակը խոսում է թագավորի պատկերի մասին.
լսել է, վոր մի քանի մարդ նրա պատկերի աչքերը հա-
նել են, և ինքն ուզում է նույնը անել:

Ինչ Սեդրակ... նրան թվում է՝ յեթե պատկերի
աչքերը հանի—թագավորը կզգա նրա վրեժխնդրու-
թյունն ու կթողնի իր մտադրությունը:

Բայց ահա յեկավ մի որ, յերբ առավոտից յեկեղեցու զանգերն սկսեցին ղողանջել, ու ղողանջեցին մինչև ճաշ, մինչև մութ, մինչև ուշ յերեկո.

— Տի՛ն-դի՛ն... Տի՛ն-դի՛ն...

Դա սովորական հանդիսոտ զանգահարություն չի, այլ մի տխրագին, ձիգ ու աղիողորմ կանչ կարծես... Թվում է հիմա եվ լսում եմ այդ լալկան ղողանջները և սրտովս մի սարսուռ է անցնում: Զանգերի ղողանջները, թվում է, հուսահատություն ու տխրություն են փոում տների վրա, դաշտերի վրա ու իրենց ձայնն ուզում են լսելի դարձնել հեռուներին և, ասես, կանչում են այդ հեռուներին.

— Ոգնությո՛ւն, ոգնությո՛ւն...

Առավոտից մեր տան առաջ հավաքվել են մեր թաղի հասակավոր կանայք և, զանգահարության տակ յերեսները խաչակնքելով, ղրուցում են: Այստեղ են ոտաոս, սև Ոհանանց Մանիչակը, Այինանց Զարմանը, Տերանց Զանազանը՝ մի շեկ սրտուկէ պառավ, վոր ամեն բանի նայում և մկան հայացքով: Մանանը, Շեկոյանց Սուսամբարը և Բերդցի Վառոն:

Վառոն... վոսկրոտ, բարձրահասակ կին է, լայն չոր յերեսին բազմաթիվ սև խալեր. խոսում է տղամարդու ձայնով և այնպիսի հեղինակավոր շեշտերով, վոր վոչ վոք չի համարձակվում առարկել նրան: Հաստատակ կին է, անդրադետ, բայց չդիտեմ՝ իր ինքնավստահ տոնի՞, ծանրախոհության՞, թե՞ ավանդական սովորությունները լավ իմանալու շնորհվ՝ վայելում է բոլորի հարգանքը և, ասածից ավելի մեծ հեղինակություն ունի մեր թաղում: Մեկի տանը հիվանդ



լինի, թե ծննդկան, մեռել, թե հարսանիք— նա այնտեղ է և կարգադրություններ է անում մեծին ու փոքրին: Յեվ նրա խոսքը որենք է:

— Վառո քիքիրն եսենց ասավ...

— Վառո քիքիրն ասում է՝ հիվանդին չլողացնեք, դանթաւի խմացրեք կամ մոռի չայ:

— Վառո քիքիրը նրանց աղջկան հավան չի: Ասում ա՝ «ցեղը լավ չի»:

Ու մարդիկ նրա խոսքը լսելով՝ ուրիշ հարթանացու յեն վինասում:

Իսկ մեծ հրավերքի վերակուրներ յեփելիս՝ վոչվոք առանց Վառո քիքիրի խորհուրդների ձի չարժվում: Յեվ Վառո քիքիրը, վորքան եվ զբաղված լինի, սիրով ոգնության է հասնում ամենքին, յեթե միայն դիմեն իրեն: Յերբեմն կռվող ընտանիքներին խաղաղեցնում է, անհնազանդ վորդիներին ու հարսներին կարգի հրավիրում և ամաչեցնում հասարակության մեջ:

— Բայց դու ամանչի,— ու մատը թափ է տալիս ըսպառնալից:

Թանիլ անգամ ներկա յե յեղել և մեր տան բաժանքի կռվներին ու հանգստացրել բորբոքված կրքերը: Նա հաճախ առանձնապես հանդիմանում է պապիս: Զնայած տարիքով փոքր, բայց պապիս հետ խոսում էր իբրև նրանից մեծ: Թևքերը քշտած մոտենում է պապիս և, աջ ձեռքը բռունցք չինած ու համարյա նրա յերեսին դեմ անելով, ասում.

— Հոգուդ մասին մտածիր, հոգուդ մասին: Եգուց մեռնես՝ վոչ տունն ես հետդ տանելու, վոչ գոմը, վոչ

պղնձները... մի յերկու տախտակ ա քու կանը: Ունեցածդ հավասար բաժանի տղերանցդ մեջ ու ապրի քեզ համար:

Պապա սկզբում նրան լսում է հեգնանքով, բայց վերջը միշտ նեղանում է:

— Դե, լավ. դվիխա ավետարան մի՛ կարդա,— ասում է նա, տերտղամյան քաշելով, ու յերեսը չըրջում է մի կողմ:

— Ցես խոն ասի, սրանից հետը դու դխոնա,— ասում է Վառոն տղամարդու ձայնով և հեռանում:

Յեվ այժմ էլ, մեր դռանը հավաքված կանանց մեջ նա յե, վոր խոսում է իր տղամարդկային խրխնջած ձայնով.

— Մեր ուսումնարանները փակեցին, մեր լեխանց աշխարհի սևին ու ավազակին կարող թողին, հմի էլ ուզում են մեզ հոգեց-հոգի կորցնեն, հոգեմ դրանց պռուխը,— բառնցքը թաքի է տալիս նա:— Ամշանխատո՞ն... կմեռնենք— մեր վոտը մեր հողից դենը չենք դնի: Կենդանին չենք դնա, թող մեռած տանեն...

Կանայք լսում են նրան ու արտրվում ախորժած:

Իսկ նա՝ իրրև այրի՝ ամբողջովին սևազգեստ, չբուռնակում է խոպոտ քարոզիչի նման նույն վոգով, մեկ-մեկ, հոնքերի տակից դաժան հայացքներ ուղղելով դեպի հեռուները:

Կանայք խոսում են, յես ու Սամսոնը հեռու վանդնած վսում ենք ուշադիր և մեր յենթադրություններն անում. մեկ էլ այն ենք տեսնում, վոր բոլորը վեր կացած գնում են հուզված: Մի քանի խոսքից պարզվում է— գնում են տերտերի, մեր դասատու՝ տեր-Գյուտի մոտ: Ոմանք են և ամեն որ ապասում, վոր թաղավորը մարդիկ դալու յեն յեկեղեցու հարստությունը տանեն, բայց ասում են, վոր այդ բոլորը տերտերը պահում է, և կանայք գնում են նրա մոտ, ասելու, վոր վոչինչ չտա:

— Գնանք, գնանք տեղանք դա ի՛նչ ա ասում...

Ու առաջ են չարժվում Վառոյի դվխավորությամբ:

Գնում են դարձյալ հուզված խոսելով:

Յես ու Սամսոնը հետաքրքրությունից հետևում ենք նրանց: Ճանապարհին մեզ միանում են ուրիշ տղաներ էլ, իսկ կանանց՝ ուրիշ կանայք՝ այս ու այն բակից, մեկնակ կամ խմբով, վո՛րը յերեխան գրկին, վո՛րը դուվլան ձեռին, ու բոլորը հետաքրքրվում են, թե այս ուր են գնում կանայք վեթաքից դուրս յեկած մեղուի պես թվվալով: Հանդիպող մարդիկ կանգնում՝ նայում են զարմացած, իսկ կանայք դարձյալ դալիս են միանում: Դաշտ դնացող մի կին՝ յեղանը ձեռին խառնվում է կանանց, մի ուրիշը, վոր բանջրանոց է ջրում—թաց բահը ձեռին միանում է կանանց:

Ու թաղերը քանի գնում մեծանում է: Զգիտես՝ ինչպես են իմանում կամ ինչ են յենթադրում, վոր հանկարծ մեկը դուռը չրխկոցով փակում է ու միանում, մի ուրիշը՝ յերեխան տալիս և ջահել հարսին ու խառնվում թաղերին: Մի յերկու փողոց անցնելուց հետո՝ բազմությունն այնքան է մեծանում, բվվոցը փոխվում է ահռելի մրմռոցի, իսկ քիչ հետո նա թվում է հեղեղից ալմկող գետ... Բոլորը տնային, առօրյա հագուստներով են ու տնային դվխաշորերով. բոլորն էլ քայլում են զայրացած, խոսելով, բառնցքներ թափա-

հարելով... Ինձ թվում եր մեկն մեր թաղի կանայք են հուզված, բայց ճանապարհին պատահում են ավելի դրդված ու ծղրտան կանայք:

— Ո՛ւր են ուզում քշել, ո՛ւմ,— ճչում են նրանք:

Կանանց թափորը շարժվում է դրդված, իսկ դանդերը չարունակում են դողանջել՝ առաջվա պես տխուր ու աղիողորմ, ասես դարձյալ դուէթ ու ողնուէյան են հայցում հեռուներից և հեկեկում հուսահատուր:

— Տէ՛ր ն— դէ՛ր ն, տէ՛ր ն—դէ՛ր ն...

Կարծես կողոպտում, մորթում են մեկին, և նրա վերջին հառաչանքներն են դրանք: Այդ դողանջները սարսուռ են մաղում մեզ վրա, և կանայք, ողնուէյան չտապող բանակի նման, քունկված, մրրկված գնում են առաջ, դեմները դուխելով:

Ցեղ չես ու Սամսոնը, մանուկների ու տղաների բազմութեյան հետ, հետևում ենք նրանց, տեսնելու թե ի՛նչ են ասելու դրանք տերտերին կամ ինչ և պատասխանելու տերտերը դրանց:

Բայց դեռ տերտերի տունը չհասած՝ կանանց թափորը կանգ և առնում հանկարծ:

— Լեսնիչն ա, լեսնիչը՛,— անցնում է կանանց շարքերով:

Անտառապետի անունը լսելով՝ չես ու Սամսոնն առաջ ենք վազում, տեսնելու ի՛նչ կա, կամ ինչո՛ւ համար են նրա անունը տալիս:

Ճիշտ վոր— թափորն առաջ կանգնած և մեր անտառապետը՝ մի չերկար, հաղթանդամ ու չիկամորուս ուռա, վոր մինչև ման և դալիս չերկարաճիտ կոշիկները հագած, կանաչ չերկով ու կակարդով զվարիկ դրած:



Մեզանում բոլորը ճանաչում են դրան, մանավանդ գեռեն, թե ի՛նչպես և հետևում նա անտառում թաց ծառ կտրողներին. պատմում են, վոր չերբեմն, անտառապահներին տառելու համար, նա անձամբ գնում է անտառները չրջագայելու՝ լուսանկարչական ապարատար ձեռին. կացնի ձայն լսելիս՝ վրա չե հասնում և ծառ կտրողին լուսանկարում թաքուն. ապա հարցնելով իմանում և նկարվածի ազգանունը և գործը դատարան տալով, առաջարկում է ծառ կտրողին տուգանել կամ բանտարկել: Բանի՛ այդպիսի գործ անելիք գեպք և պատահել:— Ծառ կտրողները դատարանում ուրանում են, վոր երբևք նույնիսկ անտառ չեն գնացել այդ որը, պարտութե՛ան է, սո՛ւտ մեղադրանք: Բայց անտառապետը նրանց ցույց է տալիս լուսանկարը... Կախարդ է, վոչ թե անտառապետ: Ցեղ դրա համար բոլորը մեզանում վախենում են նրանից ու չեն սիրում նրան: Այդ է պատճառը, վոր չես ու Սամսոնը հետաքրքրութեյամբ վազում ենք առաջ:

Բայց մինչև մեր հասնելը՝ կանայք արդեն չրջապատում են նրան և խոսում ձեռներ թափահարելով, բարկացած, ծղրտոցով:

— Ինչո՞ւ համար եք մեր չեկեզեցիների ունեցածը խլում, ինչո՞ւ չեք մեզ Աչղանխաան քշում... Ի՞նչ եք ուզում մեզանից...

— Մենք կմեռնենք՝ Աչղանխաան չենք գնա, չենք գնա...

Խոսում են ու, ձեռնին թափահարելով, կարծես պատասխան են սպասում նրանից: Իսկ անակընկալի չեկած անտառապետը կանգնել է զունատված և չի ի-

մանում ինչ ասի իր հետ հայերեն խոսող վանանց: Նա, ըստ յերևույթին, հայերեն մի քանի բառ գիտի միայն, և դրանք էլ կրկնում է, գլուխը տարուբերելով.

— Ցես, нет кюприк, нет...

Ասում է նա ու ձեռը՝ կա՛մ կրծքին է դնում կա՛մ չարժում բացատրելը, վոր նշանակում է— յես բան չգիտեմ կամ բան չեմ հասկանում:

— Վո՛նց թե «нет»,—ձայնը բարձրացնում է հանկարծ վառոն և, ըստ սովորության, ձեռը չարժում գլխից վեր: Այդպես է նրա խոսելու ձևը:—Դու նահանջնիկ մարդ՝ բան չգիտե՞ս...«нет»— մեռ չկա: Մնդրում ենք դրես ձեր թաղավորին, վոր մենք չենք ուզում մեր յեկեղեցու ունեցածը ձեղ տալ, վոչ էլ ուզում ենք ուրիշ աշխարհ գնալ...

Քանի վառոն խոսում է՝ բոլորը լուռ են, իսկ յերբ նա վերջացնում է, նորից ձայներ ու ձեռներ են բարձրանում. կրկնում են վառոյի խոսքերը, խնդրելով, վոր անտառապետը թաղավորին ու «նամեսնիկին» գրի, վոր նրանք փոխեն իրենց կարգադրությունը: Այդ ամուսկի մեջ մի յերկու անգամ լսում եմ և ասեխ ծանոթ ձայնը:

Բայց քանի վոր անտառապետը հայերեն չի հասկանում, կանգնք առաջ են հրում մեր թաղեցի Յերանոսի հարսին, և նա սկսում է ամաչելով ու գլխաչորը չուտ-չուտ ուղղելով:

— Господин леснич, пиши, говорит, что цар наш бож один бож... церков не дам, Авганистан не пойдем...

Վերջացնում է Յերանոսի հարսը և ամաչկոտ բա-



պատում անտառապետի պատասխանին: Նրա հետ սպառում է և կանանց չնչաղուտ բազմությունը: Բայց մինչև անտառապետը կպատասխանի, վառոն թելադրում է.

— Ասա, գրի, մեր ուսումնարանները փակել եք գրե՞ք, հըմի էլ ուզում եք յեկեղեցինե՞րը...

Յերանոսի հարսը, աչքերը գետնին, թարգմանում է: Իսկ անտառապետը կես խոսքից կարծես նրան հասկանալով, գլուխն որորում է գարձյալ:

— Нет, нет кюприк, нет! ...

— Ի՞նչ ա ասում, ախչի,— հարցնում է վառոն անհամբեր, գլխի ընկնելով, վոր անտառապետը մերժողական պատասխան է տալիս:— Եդ ի՞նչ ա «նետ» ասում:

— Ասում ա՝ եդ իմ գործը չի,— բացատրում է Յերանոսի հարսը:

Վառոն բարկանում է.

—Ասա՝ հոդեմ գլուխդ, ձեռդ կկոտրի՞, վոր մի նամակ գրես, նահանջնիկ մարդ ես:

Անտառապետը, չգիտես, հասկանում է նրա խոսքերը, թե ուզում է հրաժարվել, ձեռը նորից չարժում է, վոր այդպես բան չի կարող անել, և ուզում է դուրս գնալ: Սակայն վառոյք ճանապարհ չեն տալիս, ուզում են գարձյալ ինչ-վոր բան ասել՝ բայց անտառապետը սրտնեղվում է և ասում բարկացած.

— Ну, уходите!...

Այդ մի հասարակ բառը... յերբեք չեմ մոռանա, թե ինչ արավ այդ հասարակ բառը... Յես առաջին անգամ այստեղ հասկացա այն խոսքը, թե լուցկին էլ

հաստատակ բան է, բայց դյուղ է վառում: Անտառապետի այդ մի հատիկ բառը լուցկի չեղավ կանանց պրպռված բարմունքյան համար: Գուցե բառը չեր մեղավոր, այլ անտառապետի բարկացած տոնը. սակայն այդ բառը բավական չեղավ, վոր կանայք իրար անցնեն: Հազիվ եր նա արտասանել այդ խոսքը, չերբ զայրացած քուռնյքներ բարձրացան և մեկը ճչաց հնաոտիկ ծղրտոցով.

— Վոր եղպես ա, մի՛րուքը պահեցե՛ք...

Ու բոլորն ահա դազազած պրոհ են տալիս, խառնվում իրար, և անտառապետը կորչում է կանանց ափանքում. չի չերևում այլևս վոչ նրա հաղթ հասակը, վոչ մի՛րուքը, վոչ կակարղով գլխարկը: Ցերևում են միայն սպառնալից չարժումներ, քուռնյքներ, վոր թափահարվում են անտառապետի քիչ առաջ կանգնած տեղն ու նրա չուրջը, ու լսվում են միայն ձայներ, վոր գոռում են.

— Ի՞նչ եք ուզում մեղանից... Մենք ձեզ ի՞նչ ենք արել...

Այդ խոսում են կարծես դարձյալ անտառապետի հետ, բայց անտառապետն ինքը չի չերևում: Ցես ու Սամսոնը վորքան ել բարձրանում ենք մեր վոտնամատների վրա և աչխատում մի բան տեսնել,— վոչինչ չի չերևում կանանց ալեկոծվող բարմունքյան մեջ: Հետո մեզ պատմեցին, վոր անտառապետն իրր չոքել նեղությունքյուն և խնդրել կանանցից և խոստացել, վոր նրանց ուզածը կանի, նամակ վդրի, միայն թե կրեն թողնեն,

Ու կանայք թողին.. Ցեվ նա հեռացավ խրոխտությունը կորցրած՝ կռվում պարտված աքլորի նմանությամբ: Հեռացավ, հազուստներն ուղղելով ու գլխարկը թափ տալով: Այդ խեղճ անտառապետը:

Բայց կանայք այլևս ուչ չեն զարձնում նրան: Նրանց թափորը նորից առաջ է չարժվում դեպի տերտերի տունը: Ցեվ զանգերը դարձյալ ղողանջում են վողբաձայն:

— Տի՛ն-դի՛ն... Տի՛ն-դի՛ն...

Այսես բոլորին կանչում, հրավիրում են դուրս գալ տներից և միանալ կանանց թափորին: Ու ճանապարհին, կարծես ի պատասխան զանգերի ղողանջին, նորից յերեխաներ ու կանայք են գալիս, միանում բազմությանը:

Հազիվ մի քանի քայլ ենք անում— մեզ մոտենում են Սեդրակը, Զարզարյան Աչոտը և Ալոսատոլ Կարամանուկին, յերեքն ել հևասպառ ու քրտնած:

— Ձի՞շտ է, վոր լեռնիչին ծեծեցին,— հարցնում են նրանք:

Մենք պատմում ենք մեր տեսածը:

— Բա հիմա ո՞ւր են գնում,— չարունակում են նրանք սաստիկ հետաքրքրված:

— Տերտերի տունը:

Տեր-Գյուտն ապրում է համարյա գյուղաքաղաքի ծայրին, իր ընդարձակ պարտեզի մեջ, վոր չրջապատված է ճաղավոր պարիսպով. իսկ տունը, մանր լուսամուտներով ու փոքրիկ պատչամներով ներկած տունը գոնովում է պարտիզի խորքում: Ավաղով ծածկված նեղ ճանապարհը, վորի յերկու կողմը բազ-

մաղուն ծալվիններ ու սեղեր են ցանված, փողոցի դռնից ուղիղ տանում է դեպի ներված պատշգամը:

Յեվ ահա կանայք, փողոցի վայրե դուռը բանալով, թշնամու նման խուժում են այդ ճանապարհի վրա ու դրվռոցով չարժվում դեպի ներված պատշգամը: Յեվ մենք՝ ընկերներով նրանց յետևից: Մենք դիտմամբ հետու յենք մնում, որ տեր-հայրը մեզ չը նկատի. որովհետև ո՛վ գիտի, կանայք ինչ են անելու. իսկ մեզ միայն հետաքրքրությունն է բերել այստեղ:

Բայց մինչև կանայք կհասնեն պատշգամ, տերտերը դուրս է գալիս տնից՝ վարագույրի փեչերն չտապ-չտապ ուղղելով, որ լուսո յերևույթին, նոր է հագել, Նրա յետևից դուրս է գալիս երիցկինը՝ շիտիված ու մի բարձ ձեռին:

Տնից պատշգամ դուրս գալով՝ տերտերը կանգնում է աստիճաններին դիմին և անհանդիստ հայացք նետում բազմության, չհասկանալով նրանց գալու պատճառը:

Մեր խեղճ կրոնուսույցը, որ վոչ-վոքից չի քաշվում և առհասարակ սիրում է խոսել,—այստեղ մնում է շիտիված, և իսկույն խոսք չի գտնում ասելու:

— Տե՛ս, ա՛ռ, տեր-հայրն լինչպես է ուռնդը դըցել,— ասում է Սեդրակը:

Իսկապես, տերտերն այդ բոպեյին դուռնատ է անաստուածից ավելի, նրա շիտիված հարցին, թե ի՞նչ կա, լինչո՞ւ յեն յեկել,— վառոն առաջ է գալիս՝ բարձրահասակ ու սևապեստ:



— Տերտեր, մենք յեկել ենք,— սկսում է նա իր տղամարդկային ձայնով, և նրա դեմքի խալերը դարձեն ավելի յեն սևանում ու աչքի ընկնում,— յեկել ենք խնամալու...

Նա խոսում է դարձյալ յեկեղեցիների, փակ դըպրոցների և Սվպանխաանի մասին: Ասում է, որ տերտերը վո՛չ մի խաչ, վոսկեղեն չուտ Թադավորի մարդկանց և դրի կամոդիկոսին, որ նա ել վոչ մի բան չուտ, և հայտնի, որ իրենք չեն ուզում յերկրից հեռանալ: Յեվ հիմա, Թող տերտերն ասի— ինչ անեն:

Ես՛ղճ տերտեր... Ինչպես մոռանամ քո այլայլված դեմքը, ցրված, խճճված միրուքը և չիտիված անոթ հայացքը, որ Թափառում եր կանանց բազմության դլխաչերևը և դարձյալ կանգ առնում անպզեստ վառոյի վրա: Դու չկարողացար խոսքեր գըտնել և միայն Թոթովեցիր.

— Եչմիածինը... Եչմիածինը... ինչ կարգադրի, ա՛յն ել կանեմ: Իսկ դուք, խնդրեմ, հանդիստ կացեք և իզուր ազմուկ մի՛ք բարձրացնե՛ք...

Յեվ լինքը տերտերը խոսում է անհանդիստ, շատ անհանդիստ. նա ասում է, որ ազմուկ բարձրացնելն ավելորդ է, որովհետև դրանով կրարկացնեն իշխանության և գործին, դուցե, ավելի վնասեն...

— Դե՛, հանդիստ դնացե՛ք ձեր տները,— ավարտում է նա իր կարճ ճառը:

— Յանի որ հանդիստ մնանք՝ բան չի՛ լինի,— ասում է վառոն կատակով:

— Այո, այո, պետք է հանդիստ մնալ: Ավելի լավ է հանդիստ....

— Ախը, այ աերսաևը, ասում են մեծ քաղաքներից յեկեղեցիների ունեցած չունեցածն արդեն հավաքել-տարել են, չմնաց գալու յեն մերը, ել ո՞նց հանդիստ մնանք...

Տեր-Հայրը հիմա առաջվա պես չի. այժմ նա խոսքեր է գտնում ասելու, որ ինքն ամեն ինչ կանի, և արդեն արել է, գրել է ո՛ւմ հարկավոր է:

— Դուք հանդիստ, հանգիստ գնացեք ձեր տները,— կրկնում է աերսաևը մի տեսակ խորհրդավոր ու վստահություն ներշնչող յեղանակով:

Զգիտեմ կանայք հավատում են նրա խոսքերին, թե վոչ, բայց չեն հանդստանում և իրենց տները չեն գնում: Այնպիսի՛ լուրեր են պատում, այնպիսի՛ բաներ են պատմում— ի՛նչպես կարելի յե հանգստանալ: Գուցե հենց հիմա թագավորն զորքը յեկել՝ յեկեղեցու դռները ջարդում է՝ մեջի հարստությունը վերցնելու, գուցե հրաման է յեկել ժողովրդին քշելու...

Յեվ կանանց բազմությունը, աերսաևի բակից դուրս գալով, ամբողջ թաղումով, գնում է դեպի յեկեղեցի, վորտեղից զանգերը չարունակում են զողանջել ավելի վողբագին ու ավելի հուսահատ.

— Տի՛ր-ողո՛րմ... Տի՛ր-ողո՛րմ...

Այս անգամ թվում է ուրա զորքն յեկել է արդեն և զանգերն ոգնության են կանչում: Յեվ մենք ընկերներով գնում ենք կանանց հետ.— Հեռացա՛ք, լարվա՛ծ, բորբոքվա՛ծ:

— Թագավորը հո մեր յեկեղեցիները չի ուզում, — ասում է Սեդրակը,— չոր քարերը նրա ի՛նչին են պետք, նա ուզում է, վոր մենք ուրա դառնանք: Այ ինչ է ուզում,

— Դու վորտեղի՞ց գիտես,— հետաքրքրվում է Զարզարյան Աշոտը:

— Լսել եմ: Բազարում են ասում:

— Ճիշտ է,—ասում է Սամսոնը,—մորաքրոջս ուսանող տղան էլ է ասում:

Այս անգամ ճանապարհին պատահում են բազմաթիվ մարդիկ, տղաներ, կանայք, վոր նույնպես յեկեղեցի յեն գնում: Շուկայով անցնելիս՝ աեսնում ենք մարդիկ խանութները փակում են ու չտալով յեկեղեցու կողմը: Վոչ միայն մեծերն են չտալով գնալի յեկեղեցի, այլ և յերեխաները, յերեխաները... հարյուրավոր յերեխաներ մեզ նման հետևում են մեծերին: Միայն հետաքրքրությունը չի տանում մեզ՝ մենք ինքներս էլ հուզված ենք, դրգռված. մենք հասկանում ենք ազեակ մեծությունը. մեծերի տխրությունն ու անհանգստությունը վարակում է և մեզ, ու այդ և պատճառը, վոր բոլոր յերեխաները լուրջ են և վոչ-վոքչարություն չի անում. բոլորն էլ հանդիստ ու մտահոգ հետևում են թափորին... Ցերբ խոսում են, վոր ուրա պինվորները յեկեղեցիները կողոպտելուց հետո՝ մեզ էլ պետք է լցնեն վագոններն ու քշեն հեռու, անհայտ, անհայտ Ալզանիստան,— սիրտս մորմոքում է, յերբ մտածում եմ, թե պետք է թողնենք մեր տները, մեր պարտեզները, մեր գաշտը, մեր դեռը, մեր ղըպրոցը ու գնանք, ով գիտի, ուր, ինչ վոր մի տխուր յերկիր.

— Պատահած սայլաթին խփելու չեմ,— ասում է Սեդրակը, բռունցքը թափահարելով:

Սամսոնն առամները սեղմում է իրար, իսկ Զաքարյան Աչոտը լացակումած է, և թվում է էլի խոսում, վորպեսզի լաց չլինի:

— Ցեթե մեր յեկեղեցիները թալանելին,— ասում է Ապոստոլ Կարամանուկյանը,— յես բոլորին կսպանեյի, բոլորին...

Նրա խոսքերը դիպչում են մեր ինքնասիրությանը, և մենք նրանից յետ չմնալու համար, կրկնում ենք համարյա միասին.

— Դու կարծում ես մենք չենք սպանի՞... Մենք էլ կսպանենք...

Ցեվ մեզ թվում է, թե կարող ենք, վսկապես, կռվել ուսս զորքի դեմ:

Մինչ այդ զբաղված բազմությունը ազմկելով մտնում է յեկեղեցու բակը, վոր արդեն լցված է ամեն տեսակ մարդկանցով, կառնանցով, յերեխաներով. շատերը նստել կամ կանգնել են տապանաքարերին, յերեխաները բարձրացել են ակացիները և նստել ճյուղերից բռնած, մեզ չափ մի քանի տղա զրկել են արձանները և նրանց հետ կանգնել՝ ավելի լավ տեսնելու... Իսկ բազմությունը յեռում է հուզմունքից ու սպասողականությունից: Բոլոր դեմքերին յսսում կա. թվում է՝ բոլորն էլ ինչ-վոր բան են ուզում ասել, լսել, պաշտպանել, բայց չգիտեն ի՛նչ... Ու յեռում են անհամբեր:

Ցեվ այդ ժամանակ ահա բազմության միջից բարձրանում է հանկարծ մի նիհար, սև յերիտասարդ



մարդ,— վոչ թե բարձրանում, այլ կարծես ծուլ և լինում ու կանգնում ինչ-վոր մի բարձրության վրա, վորը հետո պարզվում է— սեղան է: Նա կանգնում է, ճակատին թափած մազերն ուղղում ու խոսում՝ բռունցքը չարունակ բարձրացնելով ու իջեցնելով. և ինձ մի չափ թվում է—ուզում է մի բանի խփել, բայց վրիպում է:

Նրա ասածների մի մասն ինձ չի հասնում, վորովհետև չարունակ դառնում է ամեն կողմ, և յերբ յեթսը շրջում է ուրիշ կողմ— նրա խոսքերը յես չեմ լսում, իսկ լսածիս մի մասը չեմ հասկանում, բայց այնքան եմ ըմբռնում միայն, վոր ուսս թագավորի ուզածը չի կատարվի, վոր մենք նրան վոչինչ չենք տա:

— Մոտք տանք, վոր վմեռնենք ու վոչինչ չենք տա,— վերջացնում է նա:

Դրան պատասխանում են բոլորը ծափահարությամբ և մի այնպիսի դոռոցով, վորի մեջ էլ վոչ մի խոսք չի լսվում: Իսկ ծառին նստած մի տղա կանգնում է ու գոչում.

— Ուռռա՛՛...

Մեծ ժողովում յես առաջին անգամն եմ լինում, և ինձ թվում է՝ ինչ ասում են, դա կարող է, այդպես էլ պիտի լինի. խոսողից հետո պիտի ծափահարել ու դոռալ, իսկ տղաներն էլ պետք է կանչեն «ուռռա»:

Ապա խոսում է մի կարճահասակ, մխրուքով մարդ: Նա էլ ուրիշ բան է ասում, թե ուսս կառավարությունը վոչ միայն յեկեղեցիների վոսկին է ուզում հափշտակել, այլ մեր հոդինները, ձեր հոդինները,

ուզում է ուսացնել ձեզ, որ աշխարհի յերեսին էլ հայ չմնա... և նա էլ դառնում է բոլոր կողմերի վրա ու մատով ցույց տալիս մարդկանց: Նա խոսում է մի խուլ, տխուր ձայնով. կարծես նրա ձայնը վոչ թե վերևից է լսվում, այլ գալիս է ինչ որ անդունդից, և այդ ձայնը սարսուռ է բերում ինձ, իսկ խոսքերը՝ սարսափ: Մանավանդ այն տեղը, յերբ ասում է, թե ռուսներն ուզում են հափշտակել ձեր հոգիները— յես դողում եմ պարզապես. յես այդ հասկանում եմ բառացի. ինձ թվում է վանանց, մարդկանց ու յերեխաների կրծքերից հանելու յեն նրանց հոգիները ու տանեն Ռուսաստան:

Ինչպես առաջին հեռատրի, այնպես էլ սրա խոսքերի մեծ մասը յես չեմ հասկանում, բայց տեսնում եմ, որ դրանք, յերևի, շատ ուժեղ խոսքեր են, վորովհետև կողքից յերկու պատառ արդեն լաց են լինում: Իսկ նրա վերջին խոսքերի վրա, թե ռուս կառավարությունն ուզում է, որ «աշխարհի յերեսին էլ հայ չմնա»,— մի տղամարդ Թաչկինակը հանում է ու թաղ տալիս գլխից վեր.

— Կորչի՛, կորչի՛,—գոռում է նա:

Ինձ թվում է բոլորը հենց այդ խոսքին էին սպասում. և այդ խոսքն առավ թե չէ— հանկարծ միանգամից՝ տարբեր տեղերից բազմաթիվ ձեռներ են բարձրանում և բազմաթիվ ձայներ.

— Կորչի՛, կորչի՛...

Հռետորն ընդհատում է ճառը, ասես չիմանալով ինչ անի, բայց յերբ բացականչությունները լռում են՝ նա մեկին ձգտում է ու ձեռքը Թափահարում ոդում.



— Կորչի՛ բռնակալը,— ճչում է նա:

Ինչպես նրա բառերից չատերը, յես այդ բառն էլ չեմ հասկանում, բայց բազմությունը հանկարծ այնպես է աղաղակում, որ էլ հռետորի խոսքի չարունակությունը չի լսվում...

Ու բոլորն սկսում են հուզված, աղմկելով դուրս գալ յեկեղեցու բակից. և դանդերը, որ ժողովի ժամանակ դադարել էին, նորից սկսում են ղողանջել, այս անգամ արդեն համաձայն ու խրոխտ:

— Տի՛ն—դի՛ն... Տի՛ն—դի՛ն...

Բազմությունը դնում է, լավ մենք ընկերներով— յես, Սամսոնը, Սեդրակը, Ալոասոր Կարամանիդեն ու Զարզարյան Աշոտը, ուրիշ տղաների հետ, ավելի հասակավոր տղաների հետ՝ մնում ենք յեկեղեցու բակում, վորովհետև խոսում են, թե ամեն բոպե ռուս զորքը կարող է գալ, հարկավոր է պատրաստ լինել ու մոտ չթողնել: Մի քանի մեծ տղաներ ու յերիտասարդներ հրացաններով վրնված արդեն դիրք են մտել դեպի մատնաբարձի յեռև, վոր զորքը յերևալուն պես կրակեն:

Մենք էլ՝ ընկերներով վորոշել ենք այդ տղաների պես դիրք մտնել դեպի մատնատանը և քարերով յետ մղել զորքը:

Ու չարունակ նայում ենք յերկաթուղուն, վորով պիտի գան նրանք: Մեծ տղաները խոսում են, թե լավ չի լինի արդյոք գնան յերկաթուղու մոտիկ կամուրջը քանդեն, վոր նրանց գնացքը խորտակվի: Բայց ավելի մեծերը հակացնում են, վոր կարող է հանկարծ ուրիշ գնացք գալ՝ ուրիշ մարդկանցով և անմեղ մարդիկ կվնասվեն ի զուր:

Մի առ ժամանակ մենք չրջում ենք գերեզմանատանը՝ մեզ համար դիրք գտնելու: Գտնում ենք, վերջապես, մի քանի գերեզմանաքար իրար մոտ, որ հողից մի արշին բարձր են և կարող են պաշտպանել մեզ տեսնող զորքից: Անմիջապես քարերը ենք հավաքում, կիսաուկներ անում այդ չիրմաքարերի մոտ և, մեր-մեր մահակները պատրաստ, վերադառնում ենք տուն այն վարոշումով, որ դիշերը չենք քնի և, զորքի գալը լսելուն պես, կվազենք գերեզմանատուն՝ մեր դիրքից նրանց «քարապատուհ» անելու...

Ցեղ չեմ ահա խրոխտ վերադառնում եմ տուն, և ինձ թվում է՝ բոլորն ինձ քայլերից պետք հասկանան իմ վարոշումը ու զարմանան, որ չեմ այդքան վոգեպղծի մեծ հերոսություն եմ անելու: Ճանապարհին հանդիպում եմ Ցեվային, որ սովորականի պես մագերը հաղնված, ապտակ պերճլինով ու դոշնոցով, մագերը ժապավեն կապած— գանգնած և իրենց տան առաջ: Նա զարմացած նայում է մահակիս, որ, քաջությունս ցույց տալու համար, դրել եմ ուսիս:

— Այդ ինչ է, Մանասյան, այդ չոբանի գործն ինչո՞ւ համար է,— ասում է նա քմծիծաղ:

Ցես վշտանում եմ, որ նա իսկույն չի հասկանում իմ տրամադրությունն ու իմ մահակի նշանակությունը: Իսկ յերբ բացատրում եմ, նա ժպտում է դարձյալ:

— Փայտո՞վ... Կուվում են հրացանով, վոչ թե փայտով ու քարով:

— Միևնույն է. մենք վախտով էլ կկռվենք, քարերով էլ. ով դա— կխփենք:

— Բոլորին էլ,— հարցնում է Ցեվան:

— Բոլորին:

— Իսկ յեթե պրիստավը դա:

— Նրան էլ:

Պատասխանելով՝ զգում եմ, վոր Ցեվային ցուցադրում եմ վոչ ուժը, և թվում է, այժմ գոնե, նա պիտի զարմանա իմ խիզախության ու քաջության վրա և գնահատի ինձ:

Հայց նա բարակ շուրթերն իրար բերելով, նորից քմծիծաղ է տալիս ու ասում:

— Մմծաղելի չե:

— Թող նպատես լինի,— և չեն հետանում եմ հերպարտ, բայց այն պիտակցությունը, վոր Ցեվան չի համաստում իմ քաջությանը, վոր հեղնում է ինձ ու ծիծաղում վրաս,— այդ պիտակցությունը վշտացնում է ինձ և բարկացնում միաժամանակ:—Ցես կապացուցեմ, թե ինչպես կկռվեմ. չես ցույց կտամ... կկռվեմ ու դուցե մեռնեմ այդ կռվի մեջ... Ցեվ թող այն ժամանակ Ցեվան համոզվի... Այն ժամանակ նա վիճակները իր առած խոսքերի համար և նրա խղճը կտանջի նրան, վոր ծաղրել ինձ:

Ցերկու-յերեք որ ամառում ենք ռուս զորքին վտառերով պինված՝ ընկերներով գնում ենք գերեզմանատուն, վերադառնում: Զորքը չկա: Սառվոտն ասում են՝ գալու չեն յերևիայն. իսկ յերևիայն չենթադրում են, թե կգան առավոտ: Հայց վախենում ենք, դան հանկարծ դիշերը ու մենք չտեսնենք: Ու յերբեմն հերթով մնում ենք արթուն, վոր գալու դեպքում՝ իմացնենք իրար: Կռիվը մենք պատկերացնում ենք այս-

պես.— ուստ գործը կլրակում է հրացաններից. մենք թաղնված ենք վիրմաքարերի յետև, գնդակները մեզ չեն դիպչում. բայց մեր նետած քարերը— երբեմն ցեխից ղինվորներ ու սպաներ են տապալում, և մենք հաղթում ենք... Զինվորներն էլ մի մասն ընկնում է, մյուս մասը— գնդացները թողած վախչում, իսկ մենք դուրս ենք գալիս մեր թաղատացներից ու դիրքերից, և ժողովուրդն ուրախ ծափահարում է մեզ. «կեցցե՛ք, քաջ տղերք... կեցցե՛ք...»: Իսկ յերբեմն մեռնո՞նք... Յերբեմն մեռնենք— մեզ, յերևի, կթաղեն մեծ հանդիսով, ծաղիկներով, պսակներով ու բոլորը, ամբողջ ժողովուրդը վրա մեր յեւևից. բոլորը կգովեն մեզ ու կհիշեն մեր արածը, ճառ կասեն, հերոսներ կանվանեն մեզ... Յեվ այդ ժամանակ Յեվան կամաչի իր խոսքերի համար:

Զանազան բաներ յերևակայելուց բացի, յերբեմն խոսում ենք, թե ինչո՞ւ, պատճառն ի՞նչ է, որ ուստ թաղավորը վատ է վերաբերվում մեզ, զրկե և ուղարկում մեզ վրա. մենք նրան ի՞նչ ենք արել... Այս հարցերին մենք պատասխան չենք գտնում, իսկ Սամսոնն այդ բացատրում է նրանով, թե՝ «թաղավորը բռնակալ է— դրա համար»: Այդպես է ասել նրա մորաքրոջ ուսանող վորդին: Բայց մենք չենք հասկանում ի՛նչ բան է «բռնակալը», և ինքը՝ Սամսոնն էլ բացատրել չի կարողանում:

— Եղպես է ասում մորաքրոջս տղան,— կրկնում է նա.

— Չե, բան չհասկացանք,— ասում է Սեդրակը:— Ավի դու, ավելի լավ է, նրան մի կարգին հարցրու:

Սամսոնը խոստանում է, և մյուս որը գալիս է ուրախ-ուրախ:

— Իմացա: Բռնակալն, ասում է, են ա, վոր ժողովրդին ազատություն չի տալի, ճնշում է, ազատ խոսողին բռնում է...

Այս անգամ Սամսոնի բացատրությունից վորոշ բան հասկանում ենք, բայց դարձյալ լրիվ չենք պատկերացնում «բռնակալը»:

Թաղավորի մասին խոսելով՝ այդ օրերին յես հանկարծ հիշում եմ մորս պատմությունը— մեր թաղավորն այն տղային, վոր «չներն լրա մախ են», ուր մի որ հարցնում եմ մորս, թե արդյոք ի՞նչ յեղավ նա՝ այդ վոքրիկ տղան, ինչո՞ւ չի դուրս գալիս հարատ մեր ժողովրդին ուստ թաղավորից ազատելու:

— Ինեղը դեռ վոքր է,— ասում է մայրս:

Այդ զարմանալի չե. յես մեծացել եմ, իսկ նա դեռ վոքր է, այդ ինչ տարօրինակ տղա չե, վոր չի մեծանում:

— Իսկ յերբ մեծանա՝ դուրս կգա՞,— հարցնում եմ յես:

— Ի հարկե:

— Մեր տեսուչն ասում է՝ «դա հիմարություն է»:

— Տեսուչն ի՞նչ գիտե. նրա տեղը միայն կաթողիկոսն է իմանում:

—Բա դու վորտեղի՞ց ես իմանում, մայրիկ:

— Ինձ էլ իմ տատն ա ասել:

— Ուրեմն քու յերեխա ժամանակ էլ նա յերեխա՞ չե յեղել, եղ թաղավորի տղան,— ծիծաղում եմ յես:

Մայրս չի իմանում ինչ պատասխանել. նա չփոթվում է և ձեռը թափ տալիս բարկացած.

— Լավ, զլուխս մի տանի: Գնա բանիդ...

Ցեվ յես հեռանում եմ, մտածելով, որ տեսուչը ճիշտ եր ասում. յեթե այդ տղան կա, ինչու այսքան ժամանակ չի մեծանում: Ցեթե նա մորս հետ յերեխա յի յեղել, հիմա պետք է որ մեծ մարդ լիներ... Ջե, տեսուչն, լհարկե, ճիշտ եր ասում...

Անցնում է մի քանի որ՝ ոտս գորքը չի գալիս, մի որ էլ՝ լուր է տարածվում, թե այլևս չի գալու. թե ինչո՞ւ— մնում է անհասկանալի: Բայց մենք ընկերներով այդ հանգամանքը բացատրում ենք աշնանս, որ նրանք հավանորեն վախեցել են մեղնից: Ցերևի լուր են առել մեր պատերազմության մասին ու չեն համաձակվել գալ...

Դա մեզ ուրախացնում է: Ուրեմն վտանգն անցավ:— Ել մեզ հետու յերկիր չեն քշելու:

Բայց չուտով մի ուրիշ լուր է գալիս մեզ տխրեցնելու:

Մի առավոտ զարթնում ենք և լսում, որ մեր հարևանուհի Վառոյին, Ցերանոսի հարսին և յերկու ուրիշ կնոջ բանտարկել են անտառապահին ծեծելու համար: Մեր թաղում բոլորն ավտոտում են Վառոյին, և մեզնից, մանավանդ տատս այն կարծիքն են հայտնում, թե նրան՝ Վառոյին, յերևի, Սիրիր կքշեն:

Սիրի՞ր... դա ահարկու յե հնչում բոլորի համար: Մենք գիտենք՝ դա այն տեղն է, ուր ուղարկվածն էլ յետ չի գալիս, այն հեռավոր ու ցուրտ յերկիրը, ուր մարդիկ մեռնում են մութ անհայտության մեջ, իրենց տանն ու հարազատներին կարոտ...



Ամբողջ բաներ ենք լսել Սիբիրի մասին, և մեր վոքրիկ սիրտը տխրում, մորմոքում է Վառոյի համար: Բանտարկված մյուս կանանց լավ չենք ճանաչում, բայց Վառոյին գիտենք, նրա բարձրահասակ ամպագնաց կերպարանքը ծանոթ է բոլորիս. նրա տղամարդկային բարիացիտա ձայնը սառնել է և մեզ, ու չատ անգամ է նա մատ գծել մեզ վրա, մանավանդ իմ, Սեդրակի ու Սամսոնի վրա, բայց և այնպես մենք խղճում ենք նրան, այդ խելոք ու խրոխտ Վառոյին: Վոչ միայն խղճում, այլև՝ ընկերներով հավաքված մտածում ենք, թե չե՞նք կարող արդյոք նրան և մյուսներին, առանձնապես Վառոյին փախցնել չանոից, ինչպես մի քանի որ առաջ մեկին, մի տղայի, վոր ապաստակել եր պրկստավին, ընկերները փախցրել եյին գիշերով:

— Ի՞նչ կա վոր, կարող ենք,— ասում է Սեդրակը պարմանալի ինքնավստահ:—Մեղնից մեկը կերթա քաղաք կխնի պահակին, պահակը կընկնի խոտդի յետևից, իսկ մենք կմտանենք՝ դուրս կբերենք Վառոյին ու մյուսներին: Մինչև պահակը վերադառնա՝ մենք արդեն հեռացած կլինենք: Միայն խոտդը պետք է յա՛վ վազի, վոր պահակը չատ հեռանա...

Ջարգարյան Աչոտը զլուխն որորում է. նա այն կարծիքի յե, վոր բանտի պահակը մարդու յետևից չի վազում, այլ հրացան է կրակում: Այդպես էլ քար խոտդի յետևից նա չի վազի, այլ կկրակի և տեղն ու տեղը կսպանի:

— Դու ի՞նչ գիտես չի վազի,— ասքանում է Սեդրակը:

— Գիտեմ,— ասում է Աչոտը հանդարտ ու համոզիչ:

Այդ դեպքում Սեդրակն առաջարկում է կաշառել պահակին: Նա լսել է, որ պահակները փողով բանտարկյալներ են վաճառում: Կարելի է մի գումար հավաքել և տալ պահակին, այն ժամանակ նա կթողնի Վառոյին:

— Բայց ո՞ւր է փողը,— ասում է Սամսոնը:

Մեր գրպաններում դանում ենք միայն 50 կոպեկ: Բայց վորոշում ենք հավաքել մեր ընկերներից:

— Լավ. ասենք հավաքեցինք, բա ո՞վ կտանի կտա պահակին,— հարցնում է Զարդարյան Աչոտը:

Մենք իրար ենք նայում: Իսկապես, դա էլ լուրջ հարց է. հեշտ բան չի փող տալ պահակին և ասել՝ ազատի կամ փախցրու Վառոյին: Մեղնից ո՞վ կարող է անել այդ:

— Ձես,— ասում է Սեդրակը համարձակ:— Դուք փողը հավաքեք՝ ես տանեմ...

Այնպես լինքնավստահ ու համարձակ է այդ Սեդրակը:

Բայց մինչև մենք մտածում ենք փող հավաքել՝ Վառոյին փրկելու, լուր է տարածվում, վոր Վառոյին, Ցերանոսի հարսին ու մյուս կանանց տանում են արդեն ուրիշ քաղաք:

Ցեվ մենք՝ ընկերներով բանակ գնան ենք ոտ: Բանտամերձ փողոցում ահագին ժողովուրդ կա հավաքվել, մեծ մասը կանայք՝ ձեռներին ուտելիքի կապոցներ բռնած, վոր բերել են Վառոյի և մյուսների հա-



մար: Զնայած պահակները քշում են, բայց կանայք, յերեխաները չեն հեռանում. յետ են քաշվում մի քիչ, բայց բոլորովին չեն գնում: Իսկ յերբ բանակ դուրս բայ են անում հանկարծ և յերևում են պահակներով չրջապատված Վառոն ու մյուս կանայք, բոլորն առաջ են մղվում՝ ավելի լավ տեսնելու:

Ցես, Սամսոնը, Սեդրակը բարձրացել ենք մի պատ և, ճաղերից բռնած, նայում ենք նրանց, մանավանդ Վառոյին: Նա նույն խրոխտ բարձրահասակ Վառոն է, սևագլուխ ու խստադեմ. նույնն է և խալոտ թուխ դեմքը: Իսկ Ցերանոսի հարսը, թվում է, նիհարել է ու կուչ յեկել: Նա դլուխը վախ դեմքին է նայում չարունակ և ամաչում է բարձրացնել, ինչպես անտառապետի առաջ: Նույնպես ամաչում ու քաշվում են մյուս յերկու կինը: Այն ինչ Վառոն, ինքը պահակներից բարձրահասակ, համարձակ նայում է աջ ու ձախ հավաքված մարդկանց, կանանց, և յերբ մեկը բազմությանից մինչից հանկարծ վանչում է— «Վառո քիքիր»— նա կանդ է առնում, աչքերը սևեռում, հարցնում.

— Եդ ո՞վ եր, ախչի:

Այդ ժամանակ պահակը հրացանը դիպցնում է նրա թևին, վոր չկանգնի, ու ինչ վոր բան է ասում: Վառոն ձեռքը բարձրացնում է անխոս, գնում պահակի դլխին և հրամ նրան: Պահակը յետ-յետ է գնում, դլխչում է իր ընկերոջը և կանդ առնում՝ հանկարծահի յեկած:

Լռություն է խոր տիրում և փողոցում. բոլորը դադարած, չնչաղուսով սպասում են, թե ինչ է լինելու. արդյոք պահակը չի՞ կրակի Վառոյի վրա կամ չի՞ խփի նրան: Բայց վոչինչ չի լինում. պահակը վոչ միայն չի

խփում նրան, այլ կարծես ամոթահար, քայլում է նրանից հեռու: Իսկ ինքը Վառոն խրոխտ նայում է աջ ու ձախ և դվինով բարևում ծանոթներին:

Կանայք կապոցներ են ուղում տալ Վառոյին, մյուս կանանց, առանձնապես Վառոյին, բայց պահակները թույլ չեն տալիս մոտենալ՝ լավ հանձնել, ինքը Վառոն էլ չի ուզում վերցնել:

— Շնորհակալ եմ, ա խալիսը,— ասում է նա իր խրխնջած ռազմատրդկային ձայնով,— շնորհակալ եմ: Տարեք ձեր անները, բնխասները...

Նրանց առնում են դեպի կայարան, և կանայք, յերեխաները, մարդիկ հետևում են տխուր, ու մենք ընկերներով՝ նրանց հետ:

Կայարանին մոտենալիս՝ մի կլեն ձայն և տալիս հանկարծ:

— Վառո քիքիր, դի՛լ կաց, վախի՛լ մի...

Վառոն յետ է նայում և պահակներին դվինի վրայով՝

— Ցես վախըմ չեմ, դո՛ւք միք վախենայ... Մի որ ելել եմ, մի որ ել վմեռնեմ. դո՛ւք լավ կացեք. հողի՛մ սրանց դլուխը...

Ու յերկու ձեռով չանչում է ռուս պահակներին:

Վառոյի այս խոսքերն այնպես են հուզում մեզ՝ ընկերներիս, վոր մենք վորոշում ենք անառատապետին ծեծել անպատճառ կամ առնվազն քարով դլուխը պատռել:

Ցեվ վորոշում ենք այդ անել այն ժամանակ, յերբ նա մի որ մթնով անցնելիս կլինի մեր թաղի վողոցներով:

— Մեջքին դաշանակ ես կոտրելու,— յեզրափակում է Սեդրակը բորբոքված:



## XIV

## Մանուճի նեանը

«Աշխարհը յերեխաների համար խաղալիք է,— ասում է ծանոթներիցս մեկը,— ամեն մի իր, թե կենդանի՝ խաղի ու զվարճության նյութ է նրանց համար, և վորքան յերեխան փոքր — դա այնքան ճշմարիտ է»:

Զգիտեմ՝ ուրիշների համար փնչպես, մեր համար աշխարհն իսկապես մեր խաղալիք եր, յեթե վոչ խաղալիք, դոնե խաղի ու զվարճության ընդարձակ մի վայր:

Այդ տարիս արձակուրդներին յես, չնայած յերբեմն հորս ողնում եմ դաշտային աշխատանքների մեջ, մորս՝ տնային գործերում, բայց և այնպես ժամանակ եմ դտնում շարունակ ընկերներիս հետ լինել և մասնակցել նրանց խաղերին: Այդ որից, յերբ զորքը չեկավ՝ մենք մեզ համարում էինք քաջ և անպարտ, և չնայած Այվազովսան տեղափոխելու խնդիրը մեզ

այլևս չի հուզում և զորքի գալուն էլ չենք սպասում, բայց և այնպես չարունակում ենք ընկել վայրերում դինված: Մենք սեղ և զորձ ենք վնասում մեր հերոսությունը ցույց տալու: Ու այդպես դինված, դնում ենք գետը՝ լողանալու, դնում ենք դաշտ, անտառ, բարձրանում ենք ծառերը՝ Թռչունների բներ նայելու: Վոչ մի բան մենք չենք քանդում, այլ ուզում ենք վորձել մեր ճարպկությունը և տեսնել, թե բնի մեջ ինչ Թռչունի ձագեր կան, և յերե մեծ են ու թևավակած— վերցնենք տանենք տուն պահելու: Յեվ այդ բոլորն անում ենք ազմուկով ու իրար հետ մրցելով: Սակայն ամենից ճարպիկը մեր մեջ զարձյալ Սեդրակն է. նա այնպես է մագլցում ծառերը, վարձես ծնվել է միայն ծառ բարձրանալու, և դրա համար տղաները նրան ասում են «մկնձեռ»— սկյուռ: Ամենաբարակ և ամենաբարձր ծառն անգամ մատչելի չե Սեդրակին. բարձրանում է զարմանալի արագությամբ և կատարը կամ Թռչունի բնին հասնելու պես ճչում է. «Ուռռռա՛»... Անտառը դրմբում է նրա ձայնից: Մի անգամ էլ ահա Սեդրակը բարձրացել է մի բարձր Թեղի ծառ ու դիտում է դրեթե դազաթին դանվող մի բուն... Հանկարծ, չդիտես վորտեղից, յերկու մեծ Թռչուն, արտաքինով արծվի նման, կըռնչոցով դալիս են դեպի ծառը, դեպի Սեդրակի բարձրացած բունը ու պտտվում, նախ վերև, ապա հետզհետե ծառի ցանցառ դազաթին մոտ... Սեդրակը սկզբում բանի տեղ չի դնում նրանց և շարունակում, հեդնում է Թռչուններին. բայց յերբ Թռչուններից մեկն իջնում է ցած, իջնում է համարյա մինչև բունը, այնինքն մոտենում է Սեդրակին,— այդ ժամանակ Սեդրակը մի ձեռը պատ է տալիս ծառով, մյուսը Թափահարում է՝ Թռչունին քշելու: Աբդյոք Սեդրակի ձեռի այդ Թափահարումից, թե ճռտոցին պաշտպանելու ցանկությամբ՝ Թռչուններից մեկը՝ իր ընկերոջից բաժանվելով, ավելի ցած է իջնում... Մենք ներքևից սուլում ենք, ճչում, իսկ Սեդրակը ձեռը Թափահարում է չարունակ: Յեվ մինչ մենք սուլում ենք, նա Թափահարում է ձեռը— Թռչունն իջնում է ավելի ցած, մի պտույտ է զործում բնի շուրջը, Թեթև Թևաբախոմով նորից բարձրանում է մի վոքր և մնկնի, անապատելի իջնում է Սեդրակի դլխին...

Սեդրակը ճչում է և աշխատում ցած իջնել, իսկ Թռչունը բարձրանում է՝ Սեդրակի դլխարկը զուցե վոտների մագիլների մեջ... Նա, ընկերոջը Թողնելով բնի վերև սավառնելու, ինքը դնում է հետս... Նա, յերևի, կիջներ մի տեղ, և, կատղով ամարը ծվատելով, վոտները կպատեր այդ տարորինակ վտանգից, բայց, չդիտես ինչու, մինչև այսոր էլ ինձ Թվում է նա սավառնում է այդպես՝ զուցե վոտների մագիլները դլխարկի մեջ...

Այս դեպքից հետո Սեդրակն, իհարկե, չմոռաց ծառ բարձրանալը: Ամենևին: Նա չարունակում էր զարձյալ ծառերը մագլցել՝ նախկին յեռանդով ու ճարպկությամբ: Թվում էր չկա վոչ մի բան, վոր ընկճի Սեդրակի աշխուժն ու յեռանդը: Ամեն տեղ նա խաղ ու զվարճություն էր դտնում: Յեվ չնայած մայրը խորթ էր, հայրը հարբեցող, և չնայած նրան

հանդիմանում էլին հաճախ ու նախատում, բայց նա չերկնք չեր ախորում և իրեն միշտ ազատ եր զգում:

— Շատ վոր անեն՝ անկց կհեռանամ, մենակ կասքեմ,— ասում եր նա չերքեմն, ծնողներին ամենալուվ:

Բայց մի որ ահա Սեդրակը գալիս է տխուր, անսովոր տխուր ու ընկճված:

— Մեր Մանուչին նշանում են էսոր,— ասում է նա խորին թախիծով:

Տարօրինակ բան.— Սեդրակը տխո՞ւր... Ցեմ այն էլ քրոջ նշանի համար... Զարմանալի չե. նշանի համար մարդիկ ուրախանում են, նշանը չնորհավորում են, իսկ սա տխրությունից չի կարողանում խոսել:

— Ի՞նչ, դու ուրախ չե՞ս, Սեդրակ,— հարցնում է Սամսոնը տարակուսած:

Սեդրակն իսկույն չի պատասխանում:

— Ի՞նչ ուրախ,— ասում է նա, դլուխը վախելով:— Մանուչին ուզում են Շարոյանց Աբշակին տալ...

Ու ձեռը տանում է դեպի աչքերը:

Մենք ճանաչում ենք Մանուչին էլ, Շարոյանց Աբշակին էլ: Մանուչը Սեդրակի մեկ քույրն է առաջվա մորից. նա մի չերկու տարով մեծ է Սեդրակից. չեղբոր հագուստները միշտ վշանում-կարկատում է նա, խորթ մորից և հոր հարձակումներից միշտ պաշտպանում է նա, և Սեդրակը նրան այնպես է սիրում, վոր ամեն անգամ ձեռն ուտելու բան ընկնելիս— «ես էլ տանեմ Մանուչին»,— ասում է, իսկ



դպշից կամ անտառից դառնալիս՝ վայրի պտուղ կամ ծաղիկներ է բերում նրան: Զարմանալի աղջիկ է Մանուչը. լռակյաց և չարունակ աշխատանքով ըղբաղված. չերբ խորթ մայրը բարկանում է Սեդրակի վրա, վոր ասած գործը չի անում, Մանուչն անում է ինքը, վոր Սեդրակի վրա չխոսեն: Մի անգամ էլ Սեդրակի հանցանքը— լամպը կոտրելը— Մանուչը վերցնում է իր վրա, և հայրը, Սեդրակի փոխարեն ձեռում է Մանուչին: Զարմանալի աղջիկ է Մանուչը... Իսկ Շարոյանց Աբշակը— դա մորուքով մարդ է, Սեդրակի հոր ընկերը, նրա նման հարբեցող: Իսկ Մանուչը հազիվ 15—16 տարեկան է: Բացի դրանից՝ այդ Աբշակն այնքան տգեղ է, չեչոտ. նրա ցանցառ բեխերը հիչեցնում են կատուի բեխեր, վիզն էլ չերկար է, թիկ վոսկորը դուրս ընկած: Ասում են, վոր այդ Աբշակի կինը մեռնելով՝ թողել եր մի քանի չխլեակ... Ի՞նչպես կարող է Մանուչը այդպես մեծ մարդու կինը դառնալ և չերեխա պահել:

— Ո՞վ է ուզում տալ,— հարցնում է Աչոտը:

— Հեռս ու մերս:

— Իսկ Մանուչն ինքն ի՞նչ ա ասում:

— Մանուչը,— հևևեկանքը հազիվ պոպոում է Սեդրակը,— Մանուչը հրե՛ նստած լաց է լինում: Ասում է. «Սեդրակ ջան, չե՛ս չեմ ուզում. ջուրը կընկնեմ — նրան առնել չեմ»... Հրե դռում նստած լաց է լսում:

Ցեվ Սեդրակը, էլ չկարողանալով իրեն պահել, լաց է լինում:

Այս հանդամանքը, վոր մեր անվախ, ուրախ

ընկերը լաց է լինում, ըսում են՝ թե վրքան խորն է նրա վիշտը, և այդ վիշտն այնպես է ազդում մեզ, որ միաժամանակ վոչինչ չենք դանում ասելու։ Յես զարմանում եմ Սեդրակի հոր վրա, որ իր աղջկան ուզում է այդ տարիքով ու ազդեց մարդուն տալ. բայց վորովհետև հարբեցող է— այնքան զարմանալի չի թվում. հարբեցողից, ինձ թվում է, ասլասկի կ՝, մանավանդ մայրն էլ խորթ է։

— Իսկ աեբտերն ի՞նչ է ասում. թողնո՞ւմ է,— հարցնում է Զարդարյան Աչոտը։

Սեդրակը ձեռը թափահարում է հուսահատ։

— Տերտերին ի՞նչ։

— Յե՞րբ են ուզում նշանել,— չարունակում է Աչոտը։

— Եսոր իրիկուն ուզում են համ նշանեն, համ տանեն. ամեն բան վերջացած է։ Մենք՝ յես ու Մանուչն էլ եսոր խմացանք... Մանուչը հրեն նստած լաց է ըլում...

Սեդրակի ձայնը դողում է նորից և նա յերևոր չդնում է, վոր արցունքները չտեսնենք։

Մենք հասկանում ենք, վոր դա մեծ վիշտ է Սեդրակի համար, բայց մխիթարանքի խոսքեր չդիտենք, վոր սփոփենք նրա վիշտը։ Յեվ այդ հանդամանքը, վոր չենք կարող նրան սփոփել, ճնշում է մեզ։

— Աստա ես եսոր ուզում են տանե՞ն,— հետաքրքրվում է Սամսոնը։

—Հա, բայց Մանուչը չի ուզում...

— Իսկ եդ հարբան Աբշակն ուզո՞ւմ է անպատճառ,— չարունակում է Սամսոնը։



Սեդրակն այնքան յղված է, վոր միայն դլխով է անում։

— Զրանենք դրան մի լավ,— բռունցքը ցույց է տալիս Սամսոնը, ազդված Սեդրակի խոսելու յեղանակից. մեր մեջ Սեդրակն է, վոր սիրում է բոլոր խնդիրները լուծել ծեծով կամ լուծելու համար առաջարկել ծեծ. նա առանձնապես սիրում է քարածեծը։ Զինվորներին քարով քշելու հեղինակն էլ նա յեր։ Առհասարակ վորտեղ քարով, փայտով ծեծելու դործ եչինք ունեցել— բոլորը Սեդրակից եր լսվել, և Սամսոնը ազդվել եր նրանից։

Յեվ ահա Սամսոնի առաջարկն ընդունվում է, միայն յես եմ, վոր կասկած եմ հայտնում.

— Բա վոր եդ Աբշակը մեզ ճանաչվի՞...

— Ենպես ժամանակ կանենք, վոր չի ճանաչվի,— հանդստացնում է ինձ Սամսոնը։— Մշինով անցնելիս վրա կտանք՝ ու...

— Եվ յե՞րբ,— անքում է Սեդրակը հուսահատ։ — Ես իրիկու Մանուչին տանելու յեն... Մերոնք հրե պատրաստություն են տեսնում... Բայց Մանուչը նոր շոր չի ուզում հագնել...

Յեվ Սեդրակը, քրոջը հիշելով, լացակնում է նորից։

Մեզ համար ծանր է տեսնել մեր ընկերոջ, մեր համարձակ ընկերոջ վիշտը և պատրաստ ենք ամեն բան անել նրան սփոփելու. ու վորոշում ենք, յերբ իրիկունն այդ հարբեցող Աբշակը՝ իր ընկերներով, կամ բարեկամներով դա Սեդրակենց տուն— քարերով խփենք նրան։ Մեր վորոշումը Սեդրակին դուր է դա-

վես և նա նորից իմբի պեկավարությունն իր ձեռն է առնում. սկսում է խորհուրդներ տալ, թե ինչ և ինչպես պիտի անել: Նա դանում է, որ ել ուրիշ բան չկա, միայն ծեծելն է մնացել, և դա հեշտ է, որովհետև Արշակն այրի լինելով, գալու չէ առանց ղուռնայի, և մի չերկու մարդու հետ: Այդպես են ասել իրենց տանը:

— Յես չեմ թողնի, որ նա Մանուչին տանի,— հուզվում է նորից Սեդրակը:

— Այդ լավ: Բայց ինչպես անենք, որ չըքանը-վենք,— ասում է Զարդարյան Աշոտը: Այնքան լուդուշ է այդ Աշոտը:

Սեդրակն անմիջապես հանդատացնում է նրան: Իսուր է Աշոտը կարծում, թե վըռնվենք. մենք այնպիսի տեղից «քարապըռանուկ» կանենք նրանց, որ չերբեք չենք նկատվի, իսկ չեթե նկատվենք էլ— չենք բռնվի: Մենք հարձակում կսկսենք վտուրներից... Իսկ վախչելու համար Սեդրակն այնպիսի տեղեր գիտի, որ սատանան էլ իր ծուռ մոտով չի հասնի մեզ...

Սեդրակենց տունը դանվում է մեր թաղում և հեռու չի մեր ու Սամսոնենց տնից: Նրանք Աշոտենց հարևան են: Աշոտն ինքն էլ դիտի այդ տեղերը, և այլևս չի աստիկում:

Ու սկսում ենք պատրաստություն տեսնել:

Ո՛, խենթ ծրագիրներով մանկություն: Աչխարհում անկարելի մոչինչ չկա քեզ համար: Դու խիզախ ես, անվախ. սաղը դատողությունը չերբեք չի վաեցնում քայլերդ, ու անում ես այն, ինչ թելադրում են նրբաղդաց սիրտդ և դգացմունքներդ մաքուր: Սի-



րում եմ քեզ, խենթ մանկություն. քո վշտերն անգամ հաճելի չեն ինձ...

Սեդրակն խոհուն տանում ցույց է տալիս մեզ այն կտուրները, ուր պետք է դիրք մտնենք և «քարապըռանուկ» անենք իր վեսացուին՝ Արշակին և նրա հետ չեկողներին: Նա ցույց է տալիս իրենց տունը. տանող նեղ փողոցի չերկու կողմը դտնվող տների տափակ կտուրները. դրանցից մեկն Աշոտենց կտուրն է: Պիտի բարձրանանք այդ կտուրներն ահա և վրա տանք փողոցի չերկու կողմից:

— Այ, ծիծաղելի բան կլինի հա: Գալիս են նշան և հանկարծ— քարե կարկուտ,— ծիծաղում է Սամսոնը:

Սկսում ենք քար կրել կտուրները. մանր-մանր քարեր... Աշոտի խորհրդով դրպաններով ենք կրում, որ իր՝ Աշոտի մայրը և տհասատրակ տեսնողները դիմի չընկնեն: Ուզում ենք ցույց տալ, որ խաղում ենք իրրև թե: Ցերբ մի չերկու անգամ բարձրանում ենք իջնում, Աշոտի մայրը՝ այրի Նոյեմը հարցնում է, թե այդ ինչ ենք անում վերև:

— Հե՛չ, խաղ ենք անում,— պատասխանում է Աշոտը:

— Ի՞նչ խաղ է, որ բարձրանում-իջնում եք չա-րունակ,— կասկած է հայտնում այրին:

— Նոր խաղ է,— չի չփոթվում Աշոտը:

— Զարմանալի չե,— ասում է այրին և այլևս չի հետաքրքրվում. դնում է մի ինչ-որ տնից լվացքավարձ առանալու:

Իսկ մենք նորից բարձրանում ենք սանդուղով,

լինում, բարձրանում ենք լինում, և մեր այդ խաղն հետևանքը լինում է այն, որ ամեն մի կտուրի վրա գոյանում են քարերի, նետելի մանր քարերի մի քանի կիսաուներ:

Նախապատրաստական այս աշխատանքից հետո՝ սպասում ենք որը մթնի: Մինչ այդ՝ դործը հաջող տանելու համար՝ Սամսոնն առաջարկում է Մելիտեին ու Ապուսաղին էլ հրավիրել. Աչոտը դեմ է. նա վախենում է դաղտնիքը «դուրս դա». բայց մենք յերեքով վորոշում ենք կանչել, և Սամսոնին ուղարկում ենք նրանց յետևից: Նրանք գալիս են, և մեզ հետ սպասում, վոր որը մթնի: Իսկ յերբ որը մթնում է—յես, Մելիտեն, Աչոտը ծածուկ բարձրանում ենք Աչոտենց կտուրը, Սեդրակը, Սամսոնը ու Ապուսաղը՝ հարևանի: Բարձրանում, դիրք ենք մտնում ու նայում փողոցին, թե յերբ սիտակ գա հարբեցող Աբջակին իր մարդկանցով:

Յերեկոն մութն է, ասպղերը հաղիվ են յերևում. դիրք մտած լսում ենք ինչպես են չները հաջում հատ, ընդհատ, ուշ վերադարձող կովերը բառաչում են փողոցներում. մի դուռ ահագին ճռռոցով փակվում է. դա Սաբեթի դուռն է, վոր առավոտը բացվում է և յերեկոյան մինչև ծածկվում: Մեր թաղի բոլոր դռների ձայնը ծանոթ է մեզ: Ինչպես ճանաչում ենք ո՛ւմ կովն ի՛նչպես է բառաչում, ո՛ւմ չունն ի՛նչպես է հաջում, այնպես էլ դիտենք, ո՛ւմ դռան ի՛նչ ձայն է հանում: Յեվ մենք ուրախանում ենք, վոր թաղի դռները ծածկվում են իրար յետևից: Այդ լավ է—քար նետելիս մեզ չեն տեսնի: Բայց ո՞ւր են նշանա-



վորները, չեն յերևում: Փողոցով անցնում են մեկ-մեկ մարդիկ, իսկ նրանք չկան: Մենք դիտենք, վոր նրանք սիտակ դան խմրով, Սեդրակը նույնիսկ խմացել է, վոր նրանք չորս թե հինգ հոգի սիտակ լինեն և հետները մի քանի նվերներ սիտակ բերեն խնամիներին ու հարևանցուն համար: Այդ մենք էլ դիտենք—այդպես է սովորությունը...

Բայց ինչո՞ւ չեն ուշանում:

Մենք՝ յես, Աչոտն ու Մելիտեն չատ անհամբեր ենք. չուտ-չուտ բարձրանում ենք նայում դեպի վոդոցը կամ դեպի այն կտուրը, ուր Սեդրակն ու Սամսոնն են դիրք մտել. նկատելի յե, վոր նրանք էլ նայում են մեզ և յես դղում եմ, թե ինչպես և սրտոտ բարախում և ջնջատուքյունս ծանրանում: Աչոտն ու Մելիտեն վոչինչ չեն խոսում, իսկ յես անհանգիստ եմ չատ: Խոսում եմ հաճախ և իմ յենթադրություններն ու յերկյուղը հայտնում.

— Հանկարծ, Աչոտ, ուրիշ անցնողների վրա՞նք:

— Չե: Յես դիտեմ, նրանք խմրով, սրդով են դալու...

Այդ ճիշտ է: Բայց հանկարծ ուրիշն էլ դիպչի, հանկարծ թյուրիմացության մեջ ընկնենք,— մտածում եմ յես, աչքս միշտ փողոցի ծայրին, վորտեղից սիտակ յերևան նրանք:

Նորից մի յերկու մենավոր անցորդներ, մի պառավ քչում է իր կովը, հայհոյելով մեկին, վոր ուշացրել է կովը, մի այծ մկկալով վազում է կովի յետևից:

Իսկ մեր սպասած մարդիկ չկան ու չկան:

Վերջապես, փողոցն ծայրում ահա սակերները...

— Գալի՞ս են,— հռնգում է Մելիսան, վիզը կորից յերկարելով: Յես դող եմ ղրում մի վայրկյան, բայց ամաչելով, թե բոպեյի լրջությունը պիտակցելով, հավաքում եմ ինձ և աչք ճեռս վնքնաբերաբար դնում է դեպի քարերի կիսաուկը:

Աստղալուսով յերևում է, վոր յեկողը խումբ է. մեկը պրպիս է առջևից՝ մի լայն բան պլխին (դա յերկվի, մլրդն է, մոտածում եմ). մի ուրիշը նրա կողքին՝ մի կապոց բռնած (այդ ել, յերևի, հարսի չորեքըն են կամ նվերները), իսկ նրանց հետևում են մի քանի հոգի, վոր չարժվում են հանդիսավոր ու դանդաղ քայլերով:

— Նրանք են,— հռնգում է Աչոտը, ինքն ել քարեր վերցնելով:

Աչոտի խոսքերին անմիջապես հետևում է Սեդրակի պապանական սուլոցը հարևան կտուրից և Թրըխկում է առաջին քարը...

Այնուհետև յես ել վոչինչ չեմ տեսնում առջևս. քարեր են, վոր յես, Աչոտն ու Մելիսան նետում ենք դեպի փողոց, դեպ այն կողմը, ուր յերևացել են այդ սակերները... Յերբեմն նկատում եմ մեկին, վոր հարևան կտրանը նույնպես կռանում քարձրանում են Սեդրակը, Ալոսասոն ու Սամսոնը, իսկ թե ինչ է լինում փողոցում, ո՛ւր են ընկնում մեր քարերը՝ յես չեմ տեսնում, վոչինչ չեմ նշմարում... Մեկ ել ականջիս է հասնում նախ մի կուպիա հայհոյանք, հետո մի «վայ»... ու լսում եմ դարձյալ, թե ինչպես են մեր քարերը թվթվոցով դեսնին, կարծես յեղներ են վախչում փողոցով, մութի մեջ:



— Ախա՛, եդ ո՞վ եր,— լսվում է նորից մի ձայն:

Նորից լռություն, նորից քարեր, քարեր, հայհոյանք, կանչ-աղմուկ. դռներ են բացվում ու ծածկվում. բայց մեր քարերը տեղում են չարունակ և այդ բոլորի մեջ հանկարծ եղի մի խեղդված ձայն.

— Փախե՛ք. եստեղ մի թալակ կա...

Յեվ այդ խոսքերին հետևում են եղի հայհոյանքներ ու վոռոների թրմփթրմփոց:

— Փախան,— ասում է Մելիսան չշտկով, չդադարեցնելով իր քարակարանուկը:

Իսկապես փողոցում՝ առաջվա տեղն ել սակերներ չեն յերևում: Բայց տղերքը դեռ չարունակում են քարեր նետել, մանավանդ Սեդրակն իր ընկերներով ապտակի մեջ են. նրանց քարերը թափվում են անընդհատ: Նորից մի դուռ է բացվում փողոցի վրա: «Եհ ո՞վ ա», ասում է մեկը և, պատասխան չստանալով, թե քարերից վախենալով՝ դուռը դնում է չրխկոցով:

Սեդրակը սուլում է կրկին. դա նշան է, վոր վտարող ենք լինել: Հեմիհետ լինում ենք քրտնած և մեկմեկ, ամենայն զգուշությամբ, դնում ենք փողոց: Զենք հավատում, վոր նշանավորները վախած լինեն, և առաջ ենք դնում սուսպելու: Հաղիվ մի յերկու քայլ ենք անում, Սամսոնի վոտն ինչ-վոր բանի յե պրկչում, նա կռանում է և բացականչում.

— Հրե՛ս մի խաճոր...

Անապատելի բան... Մի քանի րոպեյի մեջ մենք, առանց լուցկու և լույսի գտնում ենք խնձոր, կանֆետ ու ընկուզ և, ուտելով՝ ցրվում մեր տները, ուրախ, վոր Մանուչին ապատեցինք այդ տգեղ մարդուց:

Բայց արդյո՞ք ապատեցինք...

Մյուս որը Թաղում լուր տարածվեց, Թե Մանուչը սիրեկան է ունեցել և Թե այդ սիրեկանը քարեբով փախցրել է նշան բերող Աբշակին՝ վր բարեկամների հետ: Յեվ խորթ մայրը՝ դրանից հետո սկսեց ավելի վատ վերաբերվել նրան: Նա հաճախ կռվում եր Մանուչի հետ և կրկնում.

— Սրան տեսեք, սիրեկան ա պահում. հողեմ քու դլուխն էլ, սիրեկանվդ դլուխն էլ. դե վոնց խանդաբնց, հենենց էլ Թող դա ամուսնանա: Բա խի՞ չի դալի, Թե կարդին տղա ա...

Յեվ մենք, ամեն անդամ այդ խոսքերը լսելիս, չդիտեինք ծվծաղենք, Թե ակրենք...

Աշխարհը, ինչպես յերևում է, խաղալիք և յերեխայի համար:



## XV

### ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Այս յերկրորդ քաջագործությունը յես կատարում եմ մենակ, մի քաջագործություն, վոր այսոր հիշելիս անգամ սիրտս է սիրտս:

Այդ նորից դու ես հուշում ինձ, հայրենական տուն:

Նորից ահա քո ընդարձակ բակը բացվում է իմ առաջ,— աշնան տերևներ ու դարման խառնված խոտ, դեղին դղումներ պատերին ու խոտերի դեզերի վրա և տերևաթափվող տխուր պարտեզ, ուր նոսր կա դարձներն մեջ, ճյուղերի վրա նվում է քամին, և հեղ ուռիներն այնտեղ ալեկոծվում են չեկ վարսերի պես:

Յեվ այդ քամու հետ ահա յես բարձր խոսոց ու աղմուկ եմ լսում:— Այդ մերոնք են դարձյալ— հայրս, պապս, հորեղբայրս, մայրս ու տատս... Այդ նրանք են աղմկում, այդ նրանք են վիճում նորից:

— Յես իմ բաժինն եմ ուզում,— ասում է հայրս:

— Ջեզ բաժին չկա...

Այդ վեճերը... Դրանք ակսում են սովորաբար աշնանը և գարնանը. ընդհանուր դժգոհություններ լինում են մեջս, ամեն առթիվ. խռովում, չեն խոսում իրար հետ յերկար, ամիսներով, բայց գարնանը, յերբ հարևանները պատրաստություն են տեսնում հողերն ու բանջարանոցները ցանելու և աշնանը, յերբ գարմանն ու անասունները պետք է տեղավորել— խլում լեզուները բացվում են և հին վեճերը նորոգվում, ու տևում որեր, շաբաթներ.. նորից հիշում են այն բոլորը, ինչ յեղել են անցյալ, նախանցյալ տարիները— վիրավորանքներ, խոսքեր, վարմունքներ: Այդ վեճերին, ինչպես մեջս, մասնակցում է մայրս, վոր, իհարկե, պաշտպանում է հորս և նոր բաներ հիշում իր կողմից. մասնակցում է և տատս, վոր աշխատում է լռեցնել կողմերին և ամաչեցնել. մասնակցում է և Սանամ-ղիզին պատշգամից տենյակ մըտնելով կամ տենյակից պատշգամ դուրս գալով. նա արհամարհանքով մի յերկու խոսք է ուղղում հատկապես մորս կողմը և խակուն յերեսը շրջում: Այդ վեճերի մինջոցին յերբեմն հիշում են և իմ շաքար ուտելը, վորից յես ամաչում եմ շատ: Այդ մեջս մայրս և հորեղբորս յերեսովը տալիս, վոր մի-կաոր շաքարի համար ծեծել է ինձ... Այդ վեճերը յերբեմն այնպես են վշտացնում ինձ, վոր քիչ է մնում լայ լինեմ, կամ հեռանամ, վոր վոչինչ չլսեմ և չտեսնեմ, վորովհետև հարևանները, մանավանդ կանայք, յերեխաներ հավաքվում ականջ են դնում և հետո պատմում— ծիծաղում... Դրանից յես այնպես եմ ամաչում թե՛ հարևաններից, թե իմ ընկերներից՝ Սամսոնից, Աչո-



ռից... վոչ մեկի տանն էլ այդպիսի կռիվներ չեն լինում...

Այդ անգամ բաժանքի կռիվը բորբոքվել է մարապի պատճառով:

Ինչպես ամեն տարի, այս աշնանն էլ հայրս ուզում է գարմանը լցնել մեր հին, միակ ու ընդհանուր մարագը, ուր իր տավարի կերն է լցնում և պապս: Այդ մարագն այնքան մեծ է, վոր ամեն մեկին իրենը յցնելով՝ դեռ բավական տեղ է մնում շարժվելու, ձմռան վատ դարանելու: Բայց, չնայած դրան, պապս ու հորեղբայրս դեմ են, վոր հայրս գարման լցնի այնտեղ. նրանք կանգնել են գարմանի սայլի առաջ և չեն թողնում, վոր հայրս մոտենա մարագին:

— Ջանի վոր ամեն ինչդ ջոկ ա, մարագդ էլ ջոկ լնի,— ասում է պապս:

Հայրս զայրացած, բայց անխոս սայլն ուղում է քշել առաջ:

Պապս տերտղտմյան խփում է յեղների դնչին ու վանդնեցնում նրանց, իսկ հորեղբայրս վազում է մարագի դուռը փակում կղպակով և ժպտում չարախնդալով:

— Բա եղպես հեր կլնի՞, վոր վորդուն զրկում է ամեն ինչից,— ասում է մայրս.— մարագը հետդ չե՞ս տանելու: Գարման ա,— ամեն տարի լցրել ենք, թող էս տարի էլ լցնենք:

— Հարկավոր չի,— ասում է պապս հանդարտ, բայց տրտնջան,— եղուց պակասեց, պարի ասես— պողպացել ենք:

— Դա մտհանա ա, վոր չթողնես,— հուզվում է

մայրս։— Պարզ ասա՝ «չեմ թողնում», պրծավ գնաց։

Պապս դադարեցնում է տերողորմյան չրխկացնելը և մի սուր հայացք է ղրկում մորս վրա։

— Հենց չեմ թողնում։ Ասելդ ի՞նչ ա։

— Ինչո՞ւ,— խեղճանում է մայրս։

— Եղպես,— պապիս վոխարեն պատասխանում է հորեղբայրս, վոր մինչ այդ լեթի նայում է մորս։— Գնա քեզ համար մարագ չինի, մենք լցրու։

— Դու ո՞վ ես, մարագը հո քունը չի՞,— դառնում է նրան հայրս,— մարագը լոլորինա ա, մարագը չի բաժանված...

— Չի՛ բաժանված,— քմծիծաղ է տալիս հորեղբայրս։— Տերը սա չի ու չի թողնում,— մատնացույց է անում նա պապիս,— ի՞նչ պտի անես։

Մայրս չի համբերում։

— Դուք խիղճ չունեք. ձեր խիղճը կատուն կերել ա։

— Կատուն երեսդ ուտի, անամոթ,— հանդիմանում է տատս։— Կորի՛ր եստեղից։ Դուք էլ ձեններդ կարեցեք,— դառնում է նա մյուսներին, ձայնն իջեցնելով։— Դուռ ու դրիվից լսում են, ամո՛թ ա։

Բայց տատիս խոսքերը չեն ազդում, և նրանք շարունակում են. ավելի վիրավորում են իրար, քան թե բան են ուզում հասկացնել։ Իսկ հարևանները, մանավանդ կանայք, իրենց պատշգամներում ու ցանկապատների մոտ լսում են ու ծիծաղում, լսում են ու չարախնդում, և ես մտածում եմ, վոր քիչ հետո պիտի պատմեն մյուսներին.

— Եսոր Մանասենք էլի ուտում էյին իրար...

Ամենից շատ զարմացնում է ինձ պապս. վորքան



հայրս տաքարյուն է, բռնկվող, պապս նույնքան սառն է, անտարբեր։ Հայրս շարունակ խոսում, բաժին է պահանջում, իսկ պապս լսում է ու լռում, լսում է ու տերողորմյային հանիվնները չրխկացնում, և այդ պատճառով հորս համառությունը սրբեցնում, բալկացնում է ինձ, վոր ձեռ չի քաշում պապիցս և չի բունակ բաժին է ուզում։

Լեղվակռիվն այնքան է տաքանում, վոր հայրս հայհոյում է հորեղբորս.

— Ծարեքա՛։ Սուտ կչեռք բանեցնող։ Մի կչեռքով առնում ես, մի ուրիշով ծախում։

— Գյադա՛,— ասում է հորեղբայրս յերկարացնելով, և դեմքն այնպես է ծամածռում, այնպիսի արհամարհանքով, վոր հայրս չի համբերում, ճիպոտը ձեռին դնում է դեպի նա, դնում է ինքն իրեն մոռացած և աչքերն արյունով լցված։

Բայց տատս մի զարմանալի ճարպիկ չարժումով, մի չարժում, վոր ինձ հիշեցնում է հավի թեթևությունն. այո, հավի թեթևությամբ թռչում— կանգնում է նա հորս առաջ և ծունկ չոքում.

— Սպա՛ն...

Հայրս վանդ է առնում՝ ճիպոտը բարձր բռնած, հորեղբայրս իրեն ղցում է պատշգամ ու դուռը դնում, իսկ Սանամ-պիլին, չխոթված, ավելը տալիս է մարդուն՝ պաշտպանվելու։ Ցավ յերկուսով մեսանին խրոխտում են պատշգամից։

Հայրս անքամ է, ղլուխն սրտրում է ու յետ դառնում։ Նա չի ուզում տատիս սրտրելով առաջ գնալ։

Ինչպես միշտ, այս կռվից էլ ծնողներս վեր-

ջանում են հանգստացած ու լիքիկար խոսում են այն մասին, որ բախտ չունեն: Ապա մայրս նստում է լռում է, թե պապս, հորեղբայրս ապրում են ճոխ, առատ, մեծ անկյունների, իսկ իրենց՝ մարդուկի մի անկյունն էլ շատ են համարում: Ու հանդիմանում է հորս, որ չի կարողանում իր բաժինն առանձ. որ թուլ է, պատասխան չի դիմում. որ լեթե խիստ լինի և խիստ խոսի՝ պապս ու հորեղբայրս տեղի կտան:

Հայրս, առանց այն էլ հուզված, մորս հանդիմանությունից ավելի է հուզվում և, իր հերթին, հանդիմանում է մորս, որ իրենց վնասին խառնվելով՝ խիստ լեզու է բանեցնում և դրանով ավելի գրգռում պապիս ու հորեղբորս, և ներանք, լեթե ուզեն էլ բաժանք անել— պայմանում են ու չեն անում: Մայրս համաձայն չի այդ կարծիքին, առարկում է հորս, և հիմա էլ իրենք են վիճում, թե իրենցից ով է մեղավոր, որ պապս բաժանք չի անում: Վիճում են կիրկար ու կռվում համարյա և ապա, իրարից խոսք ու կոմաթաթախ, պահում քնելու:

Ցեղ այս բոլորը՝ լեթե ծնողներիս կռիվը պապիս ու հորեղբորս հետ, թե հորս ու մորս վնասն միմյանց հետ,— խորին տխրություն ու վիշտ են բերում ինձ:

Այդ կիրկիս անկողին մտնելով՝ կես չեմ կարողանում հանգստանալ. չարունակ մտածում եմ բաժանքի կռիվների մասին և նորից համեմատում եմ մեր ընտանիքը՝ ընկերներիս ընտանեկան կյանքի հետ ու ավելի տխրում. ինչու նրանց տներում էլ բաժանք ու վնաս չկա, և միայն մեզ մոտ է այսպես: Ու սիրտս քիչ է մնում տրաքի բարկությունից, դայրույթից, վշտից:—Ախ, ինչու մեծ չեմ, որ կարողանամ ոչնչ



հորս, որ նա ազատվի նեղությունից և հրաժարվի որ բաժնից, և ել չմտածի բաժանքի մասին... Մտածում եմ և այն մասին, թե պապս ինչո՞ւ չի այդպես վարվում. ինչու ամեն բան պահում է իրեն ու մյուս ուղային, իսկ հորս վոչինչ չի տալիս: Ի՞նչն է սրա պատճառը... Չլինի՞ հայրս մի վորևե վատ բան է արել պապիս, չի լսել նրան, թե բարկացրել է նրան, և նա այդ պատճառով զրկում է հորս: Բայց լեթե այդպիսի պատճառ լինի— պապս կասեր մի որ, կամ հորեղբայրս կասեր... Ուրեմն ի՞նչ կա... Միտքս բացատրություն չի գտնում, չնայած որ չարունակ լսում եմ, թե պապս ժլատ է (ժլատ բառն էլ լես լավ չեմ հասկանում), թե իր ունեցածից չի ուզում զրկվել, թե ի՛նչ աչքը տեսել է, իրենն է դեղել— ցանկանում է նույնը մնա ձեռին մինչև մահ...

Իսկ այդ բոլորն ինձ թվում են անհասկանալի, շատ անհասկանալի: Ի՞նչպես թե մարդ չի ուզում տեսածից զրկվել...

Բայց վոմանք էլ, ինչպես բանտարկված վաստ քիքիրը և Սամսոնի մայրը՝ Թերեզա մորքուրը այն կարծիքի չեն, թե պապս հորեղբորս խոսքումն է «նստում—վեր վնասում», թե հորեղբայրս և նրան ներշնչում այդպես վարվել... Այնուամենայնիվ, (մտածելով, որ հայրս մեղք չունի) լես պապիս համարում եմ չար, անխիղճ, որ հորս տանջում է խղուր... Ցեղ մտածում եմ, թե ի՛նչը կարող է արդյոք ազդել պապիս, որ նա մեղմանա, որ ինչպես վաստն է ասում «հողին միտը դրի»— այդ բաժանքը կատարվի, քանի որ վոչ Թալի ծերունիների, վոչ բարեկամների միջնորդությունն է ոգնում, վոչ

տերտերի խորհուրդները, վոչ հորս խնդրանքը, վոչ մորս սպառնալիքը, թե վերջիս յեկեղեցում մոմ կը վառի, վոր աստված նրան պատժի... Մորս այս սպառնալիքը մինչտ զարմացնում եր ինձ, թե ինչո՞ւ մոմ վառելուց պետք է աստված նրան պատժի. մի՞թե առանց մոմի չի լինի, և ինչ զորություն ունի պղտիկ մոմը, վոր աստված, այդ վառելուց հետո միայն պետք է դրժե ուխտի: Ցնթե այդպես է մոմի զորությունը— ինչո՞ւ մայրս մինչև հիմա մի քանի տարի, թեկուզ մի քանի տասնյակ մոմ չի վառել. չե՞ վոր վորքան շատ լինեն մոմերը, այնքան մեծ կլինի նրանց զորությունը:

Սակայն, չնայած այս բոլորին, պատը մնում է անդրդվելի...

Ի՞նչ կարելի յե անել ուրեմն, վոր նա մեղմանա, վերջապես— հորս բաժին տա, վոր հայրս չտանջվի այնպես և մայրս չտխրի, լաց չլինի, և մանավանդ կռվիներ ու վեճեր չլինեն և հարևանները չծիծաղեն մեզ վրա ու յես ել չամաչեմ ընկերներիս առաջ: Ինձ սոսկացնում է այս հանդամանքն ե:

Անկողնում պառկած՝ յես յերկար, յերկար մտածում եմ այս ամենի մասին: Մերոնք՝ հայրս, մայրս, քույրս ու փոքրիկ Վաչոն քնել են վաղուց, բայց յես քնել չեմ կարողանում: Այսորվա կռիվներից ու վեճերից հետո— սոսկում եմ լինե, հարևանների պսպղած ծիծաղը հնչում է ականջիս, տեսնում եմ նրանց հեգնանքը և չարախինդ ժպիտները... Ու մտածում եմ միաժամանակ, թե արդյոք ընկերներս՝ Սամսոնը, Աշոտը, Սեդրակը, և մյուսները տեսան, թե ինչպես հայրս ճիպոտը ձեռին հարձակվեց հորեղբորս վրա և տատս ծունկի գալով՝ ընկավ նրա վոտները... Ցնթե տեսել են— պիտի կարծեն, վոր հայրս վատ, կատաղած մարդ է և այդպես ել կենթադրեն, վոր հայրս, յերևի, ճիպոտով միշտ ծեծում է ինձ: Ել չեն մտածի, թե ինչն է խնդիրը: այդպես չարունակ բարկացնում, դրգռում հորս...

Մտածելով այս ամենի մասին՝ յես համառորեն չարունակում եմ խորհել այն միտքը, թե ինչպես կարելի յե պատիվ մեղմացնել իսկապես, ինչպես կոտրել նրա համառությունը, վոր նա բաժանք անի և ել առիթ չտա նոր վեճերի ու կռիվների:

Մեկ ել, անհայտ և ինչպես, արդյոք տատիս ու մորս հին պատմություններն ազդեցության տակ, թե՞ հարևաններից լսածների չնորհիվ հիշում եմ զարլանդ թերող պատմություններ, թե ինչպես մեռելները դիշեր ժամանակ, մենակ, իրենց ճերմակ պատանով դուրս են գալիս գերեզմաններից, գնում վատ մարդկանց տները և յերեխաներից վամ լուսամուտներից ամաչեցնում ու սպառնում նրանց, վոր հրաժարվեն չար գործերից, այլապես վատ կլինի:

Հիշում եմ նույնպիսի պատմություններ և հրեշտակների մասին, վոր նույնպես մեռելների նման, գալիս—կանգնում են չար մարդու լուսամուտի առաջ և սպառնում նրան:— Ի՞նչու հապա մի այդպիսի հրեշտակ կամ մեռել չի գալիս պատիս վախեցնելու. չե՞ վոր նա ել չար մարդ է,— մտածում եմ, յերեվակայելով, թե վորքա՜ն լավ կլիներ, յեթե մի այդպիսի հրեշտակ կամ մեռել դար պատիս սպառնար: և նա, յերևի, այնքան կվախենար, վոր ահից ան-

պատճառ կկատարեր նրանց կարիքները։

Իմ մտքերն ինձ տանում են հեռուները... Ցեխ խորհում եմ, չես ուզում եմ վերջ տալ այդ ծանր, ամոթալի կյանքին և խաղաղություն առեղծել մեր տանը. ուզում եմ, որ մոլ-մոլ վատ չխոսի մեր մասին։ Գիշերը ծանրանում է, լռությունը խորանում մեր տանը, և չես դեռ համառ ու անվերջ խորհում եմ այն մասին, թե ինչպես, ինչ հնարքով կարող են դադարել բաժանքի կռիվները... Ցեխ, չես, վերջապես, դառնում եմ այդ հնարքը.— ամենից լավն այն չէ՞, որ գնամ պապիս մոտ և խնդրեմ, որ հորըս բաժինը տա, որ ել վեճ, կռիվներ չլինեն մեր տանը։ «Պապի, այ պապի,— կասեմ չես նրան,— ամոթ է, հարևանները ծիծաղում են քեզ վրա, մեզ վրա»... Ցեխ նրա ձեռը համբուրելով, լաց կլինեմ։ Ցեխ պապս կկղճա ինձ և կկատարի իմ խնդիրքը, և հետո բոլորը գոհ կմնան ինձնից, որ վարդապետ վերջ տալ տարիներ տևող բաժանքի կռիվներին։

Բազմապատկ են մտքի ճանապարհները և դալարիչ...

Որքան հավիտակվող ու բռնկվող եմ.— որևէ միտք հղանալիս՝ անհանգստությունը դող է բերում ինձ և ուզում եմ անմիջապես իրագործված տեսնել այն։

Ու ահա դիշեր է խաղաղ. մերոնք հանգիստ քնած են խավար անկյունում։ Ցես զգուշությամբ վեր եմ կենում անկողնից և կամաց-կամաց գնում եմ դեպի դուռը. զգույշ վերցնում եմ յերկաթե փակը, և յես



բակումն եմ— դիշերային ճերմակ չորերով քայլում եմ դեպի պապիս լուսամուտը...

Բակում մեր յեղները նոսրած վորոճում են հանդիստ, և լուսնի լուսով չորում են նրանց դնչերից կախված արծաթ թևլերը։ Ցերեկվա քամին ընկել է արդեն, և պարտիզի ծառերն այժմ անշարժ նայում են լուսնի լույսին, աստղերին, ու, թվում է, ականջ են դնում մեզ-վոր հեռավոր, հեռավոր ձայների։ Բայց հեռուներում միայն շներն են հաչում յերբեմնապես և ել վոչինչ, վոչինչ չի լսվում... Ցես, չուրջս նայելով, զգույշ քայլեր եմ անում դեպի պապիս ննջարանի լուսամուտը, վոչ թե այն լուսամուտը, վոր նայում է պատշգամին,— (ո՛, պատշգամ բարձրանալը վտանգավոր է. հորեղբայրս կարող է պարթևել...) յես դնում եմ դեպի այն լուսամուտը, վոր դռնովում է տան ծայրին ու նայում է դեպի պարտեզ։

Ցեվ, վերջապես, ահա յես պապիս լուսամուտի առաջն եմ։ Ի՞նչպես խոսեմ հիմա... Բայց նախ պիտի լուսամուտը ծեծել։ Իսկ յեթե պապիս վրդովեն ատաս զարթնել— ի՞նչ ասեմ այն ժամանակ. թողնեմ-հեռանա՞մ, թե խնդրեմ, վոր պապիս զարթնեցնել։ Այո, ատաս բարի յե, նա կզարթնեցնեն պապիս և ինձ կոգնի՝ պապիս համոզելու։ Բայց ի՞նչպես պիտի սկսեմ,— մտածում եմ պապիս ննջարանի լուսամուտի առջև կանգնած, մտածում եմ յերկար. ու մտածումներիս մեջ, թվում է, ժամեր են անցնում... Մեկ էլ մի ծանր հևք եմ լսում յետևս, մեկը զոփում է ինձ ու թաթերը դնում ուսերիս...

Ցես, ճիչ արձակելով, ընկնում եմ դետին։

Ապա առավոտ է. չես պատկած եմ անկողնում. կողքիս նստոտած են մայրս, Թերնզա մորքուրը և տատս: Մայրս ճակատս չիսում է ջրով և հարցնում, թե ինչո՞ւ չեմ պիչերը դուրս դնացել: Յես, հիշում եմ բոլորը, բայց դժվարանում եմ խոսել. չես վոչինչ չեմ պատասխանում:

— Շատ կարելի ա տաքության մեջ ա ելել,— ասում է տատս ախուր, հուշարկավորի ձայնով և բոլորը յենթադրում են, վոր չես քանի եմ դուրս չեկել հավանաբար տաքության մեջ:

Վորովհետև այդ ժամին արդեն բարձր տաքության մեջ եմ: Բայց, չնայած տաքության, չես պարզ լսում եմ կանանց ղրույցը, և նրանց ասածներից հասկանում եմ, վոր հայրս պիչերը, չերը դուրս և չեկել չեղներին նայելու, դաել և ինձ պատկս լուսամուտի տակ ընկած. և իմ կողքին նստած և չեղել մեր Թորլանը՝ կարած կապը վզին....



## XVI

### ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳՈԳՈԼՆԵՐ.

Ահա և ավարտական քննությունները:

Քանի որ և մեծ հոգսերի մեջ ենք. վերջին դասարանի բոլոր աշակերտները խումբ-խումբ կամ մեկնակ լարված պարապում— պատրաստվում են քննության: Դուրսը գարուն է, պայծառ, դյուրթական գարուն. ամեն կողմից հրապուրիչ տեսարաններ են կանչում մեզ. հասմիկի բուրմունքը խառնվում է, գաշտում այնքան ծաղիկներ կան. գարնան անուտան այնպես և դրավում, ինչպես քաղցածին ճոխ, առատ սեղանը. իսկ բակերում այնքան խաղ կա...

Բայց մենք համառորեն փակվել ենք տներում. խուճապում, թաղնվում ենք մարդկանցից, ընկերներից: կարդում, կրկնում ենք մեր դասերը, վոր վոչ մեկն դասարանում չմնանք, այլ և ավարտողների մեջ առաջինը լինենք...

Գոնե այդպես ենք մտածում յես ու Սամսոնը: Մենք աշխատում ենք միասին վազել վրա և ճաշը կիսատ թողած՝ նորից վազում դրքերի մոտ:

— Բան կերեք, վոր դիմանաք,— ասում է կամ Սամսոնի մայրը կամ իմ մայրը,— խնչքնելով կմախի, եղբան կարդալ էլ լինի, վոր դուք եք կարդում...

Բայց մենք ուտելու ժամանակ չունենք— դրքերը կանչում են, ընկերները հիմա առաջ անցան: Հիմա Աչառն ու Սեդրակը, ով գիտե, ինչքան բան են սովորել, իսկ Ասլոսատ Կարամանիքին ու Ֆիլիպ Զայցևը (սրանք էլ միասին են) բոլորիս վանցնեն, կերևի. չի՞ վոր նրանք ռուսերեն դիտեն բոլորից լավ... Պետք է այնպես անել ուրեմն, վոր մեղնից լավ իմացող չլինի, և վոչ մեկը մեզնից առաջ չանցնի... Ու թվաբանությունից անցնում ենք ռուսաց լեզվին, լեզվից՝ աշխարհագրության... Ամենից շատ նեղում է մեզ կերկրաչափությունը, իսկ ռուսաց ու հայոց քերականությունները... ո—ո—ո՛,—չենք սիրում մենք այդ քերականությունն առաջը. բայց պետք է այնպես իմանալ, այնպես, վոր վոչ մի սխալ չանենք, կեթե վոչ այդ հոդվածները, դերանուններըը, ածանցյալներն ու մակբայները կարող են հանկարծ մեզ խայտառակել:

— Դու ինձ քննիր,— ասում է Սամսոնը,— տես դիտե՞մ...

Ցեվ կես քննում եմ նրան. մերթ ձեռնում եմ Նիկալայ Պետրովիչ և, դեմքես խոժոռ արտահայտությունն ունով, աչքերս սևեռում եմ նրա աչքերին ու կարճ հարցեր տալով՝ խնդրում նրա պատասխաններին. մերթ տեսչի՝ Սանտարուկ Սերգեյիչի նման, ձեռներս հետևս դրած, դնում-գալիս եմ ու, առանց նրան նայելու, գլխով եմ անում կամ ուղղում մեկ-մեկ: Իսկ կերբ անցնում եմ հայոց լեզվի քննությանը— Սամսոնը հայտարարում է, թե հայոց լեզուն դատարկ



քան է, չգիտե, էմն տերտերը, միևնույն է, խոտապահանջ չի մյուս ուսուցիչների նման:

— Իսկ կեթե տերտերը հարցնի՝ վո՞րն է ածանցյալ դերբայը:

Սամսոնը կանգ է առնում չվարած:

— Զգիտես, անիրավ, չգիտես,— ասում եմ տերտերի ձևով, ձեռներս չփնչով, ձայնս նրա ձայնին նմանեցնելով:

Հերթը հիմա էլ Սամսոնինն է ինձ քննելու:

— Ասա, Մանասյան, վորտե՞ղ է գտնվում Սպիտակ ծովը,— ձգվում է նա Նիկալայ Պետրովիչի նման դիք ու աչքերը սևեռուն աչքերիս:— Լավ: Իսկ Հոմե՞րը:

Իմ ճիշտ պատասխանից հետո նա չարունակում է նոր խրճին. Հարցեր տալ աշխարհագրությունից, քերականությունից ու դրականությունից: Այսպես անցնում է դինամարժությանը:

— Բայց մենք դինամարժությունից քննություն չենք տալու,— առարկում եմ կես:

— Դու հարցրու պատասխանը,— վոտը գետնին է խփում նա, Նիկալայ Պետրովիչի պես:— Գումդը քանի՞ վաչա ունի:

— Ցերեք:

Նա դիք մռտենում է աչքերը կերեսս դցած ու... դեմ էլ ավ այսիս չդիտում է մի ուժգին ապտակ:

Ցես հանկարծակի յեմ գալիս ու կերեսս բռնում:

— Սա ի՞նչ բան է:

Սամսոնը վոտը թափ է տալիս վրաս.

— Կանգնիր արևի դեմ:

Ցես վերավորված նրան եմ նայում:

— Դե, լա՛վ, հանաք արի,—ծիծաղում է նա:

Ծիծաղում եմ և չեմ: Նա չարունակում է նրից հայոց լեզվից ու քերականությունից հարցեր տալ ինձ. նստում է չերեսը դեպի լուսամուտը և չերբեմն պլուխը ամբացնում տերտերի նման ու ինքն իրեն ասում է մի բան, վոր բնավ կապ չունի իմ պատասխանի հետ.

— Դերանուն... ներգոյական հոլով... Նո՛ւ, լավ, անկրավ, լավ...

Յես լռում եմ: Այդ ժամանակ նա չերեսը դարձնում է իմ կողմը և, իրրև թե պատնում է ամբողջ դասարանին, ասում է.

— Եսոր, տղերք, չեկեք ինձ մոտ... մարդերը քաղհանենք մի քիչ:

— Յես մի՛ քիչ հիվանդ եմ, տեր հայր:

— Հիվանդացիր քաղհանից հետո, անկրավ,— ասում է Սամսոնը տերտերի պես լուրջ և հետո ծիծաղում, ծիծաղո՛ւմ:

Ծիծաղում եմ և չես: Ծիծաղում ենք միասին:

Այս ծիծաղն է մեր հանդիսատը: Բայց մեր ծիծաղի վրա քույրս ներս է մտնում, կարծելով եղ չենք պարապում, ուզում է ինքն էլ մասնակցել մեր ծիծաղին: Բայց մենք նրան չես ենք ուզարկում. վոչ, դեռ ազատ չենք:

— Ի՞նչ ես կարծում, Սամսոն, քննություն կբռնեի՞նք,— հարցնում եմ չես:

— Ո՞վ է իմանում,— մտահոգվում է նա,— հանկարծ ենպես բան հարցնեն՝ չկարողանանք պատասխանել:



Մտահոգությունը, անորոշությունը, կասկածները ծանր քարերի պես ճնշում են մեր սիրտը: Այդ նկատելի է բոլոր աշակերտների դեմքին: Այդպես է և Յեվան, իմ նստարանի վոքրիկ հարևանուհին, վոր պարապում է հետս միևնույն: Յես ա՛յնպես կուզեի իմ բոլոր իմացածը ասել, բացատրել նրան. այնպես անել, վոր ամենից լավ քննություն տվողը լինի նա, բոլորից լավ վիայլի նա... Յես պատրաստ եմ ամեն ինչ անել նրա համար, յեթե միայն առաջարկի: Բայց նա իրեն պահում է դուսդ և վոչի՛նչ չի ասում: Իսկ չես չեմ համբերում և հարցնում եմ.

— Մենա՞կ ես պատրաստվում, Յեվա:

— Այո:

Յես ուզում եմ իմ ծառայությունն առաջարկել նրան, բայց նա այնքան ինքնավստահ է ասում այդ «այո»-ն— չես լռում եմ. նույնիսկ մոռացում եմ, վոր նա հակացավ իմ միտքը— դրա համար այդպես պատասխանեց. բայց և այնպես՝ չես կուզեի, վոր նա բոլոր աղջիկներից և բոլոր տղաներից, թեկուզ և ինձնից, լավ քննություն տա և լավ ավարտի...

Այդ քննությունները... մեր երկրյունն ամբողջ կլանված է դրանցով. հայ եմ ուտում, թե վողջ եմ դուրս գալիս՝ դրա մասին եմ մոռածում. դիշերը չերբեմն մայրս զարթնեցնում է ինձ քնած ժամանակ:

— Սուրեն, Սուրեն...

Աչքերս բանում եմ քնաթաթախ:

— Այդ ինչե՞ր ես խոսում:

— Ի՞նչ:

— «Աֆրիկան» ի՞նչ ա, վոր կրկնում ես մինչ-

լար: Հետո՝ «կոնուս, կոնուս»... դա ի՞նչ բան ա...
Ցես աչքերս տրորում եմ ու նորից պատկում:

Վերջապես քննությունները սկսվում են:

Բոլորիս, վերջին դասարանի բոլոր աշակերտներիս մեկ-մեկ կանչում են դրատախտակի վողջին դրված սեղանի մոտ ու առաջարկում այդ սեղանի վրա դանվող չաքարամանի նմանվող վալից վլորած մի թուղթ վերցնել— վիճակ հանել: Այդ թղթի մեջ է մեր բախտը և դժբախտությունը, վորովհետև այնտեղ դրված են այն ճակատագրական հարցերը և թեմաները, վորոնց մասին պիտի խոսենք կամ պատմենք:

Ցերկրորդ որն է կատարվում են քննությունները, և յերկրորդ որն է հյուրերը դալիս են նստում ու լսում մեզ:

Այսօր մի ահա չրջան բոլորած՝ հանդիսավոր նստած են դասարանի առաջ— պրեզիումը՝ ուսուցիչներով ու թուրը կողքից կախ, վորի վրա նա հաճախ հենվում է արմունկներով,— հաշտարար դատավորը՝ լիքը դեմքով մի բարեհոդի մարդ, վոր շատունակ ժպտում է աշակերտի թե լավ, թե վատ պատասխանների վրա.— Ծերունի պոստապետը՝ այծի մորուքով ու տարակուսական նայվածքով, մի նայվածք, վորից կարելի յե յենթադրել, թե այն բոլորը, ինչ լսում է— նորություն է նրա համար վամ վազուց մոռացած մի բան: Ախտեղ նստած են ուսուցիչներով և դեղին վոճակներով ուրիշ պաշտոնյաներ ել և այն բժիշկը, վոր լավացրեց հորս աչքերը: Հյուրերի հետ խառն նստած են նաև տեսուչը՝ Սա-



նասուկ Ավետիկը· իր յեղբոլրանման քեխերն այսօր առանձնապես վոլորված են ու ցցված, տերտերը՝ նոր մաքուր վարագա հագած ու գլխի մաղերը վոքը ինչ կարճեցրած.— Նվիրալայ Պետրոսիչը, Լիզա Լվովնան և մյուս ուսուցիչները՝ բոլորն ել տոնական դգեստներով...

Սմեն բանից և սմեն պատասխանից դժվարը հյուրերի առաջ դուրս դալն է: Ցես առանձնապես վախենում եմ պրեմատից— այնպես սուր հայացք ունի. թվում է նա իր այդ հայացքով կարող է տեսնել, թե ինչեր կան մարդու հոդում թաղնված, և, թերևս, հյուրերի ներկայությունն է պատճառը, վոր սմեն ինչ ինձ թվում է յերազի նման: Ցես ինձ մոռանում եմ հաճախ և միայն ակրոն եմ դդում, վոր տրոփում, տրոփում է անվերջ և, թվում է, իր մի ծայրով կարկում քունքերիս:

Առաջինը դնում է ահա Ալանյան Աստղիկը, վերցնում է վոլորած թուղթը, կարդում, ապա, կատեղելով, ամաչելով պատասխանում է, աչքը չարուն ակ հյուրերի կողմը: Բոլորի սիրտն ահ է ընկնում: Այդ հյուրերը... մի՞թե առանց դրանց չեր կարելի. ինչո՞ւ համար են դրանք: Մարդ կարող է իր լմացածն ել մոռանալ դրանց ներկայությամբ: Բայց, յերևի, կարդ է:

Աստղիկին հետևում են ուրիշները— ուրիշ տղաներ ու աղջիկներ. ապա դնում է Ալոսուոլ կապամանուլին. նա, ինչպես միշտ, բոլոր հարցերին պատասխանում է կուրծքը դուրս քցած, գլուխը յետ բռնած: Նրանից հետո դնում են Սամսոնը, Սեդրակը, Զարդարյան Սչուտը... Գնում, խոսում են բոլո-

բը, ու ամենը վնաս թվում է յերապի մեջ, և ահա հերթը, վերջապես, դալիս է ինձ... Պատասխանում եմ և, յերապի մեջ եմ դարձյալ:— Իրականութիւնը չեմ ղգում, չեմ ղգում նաև, թե ինչպես են ընդունվում իմ պատասխանները. անընում եմ միայն, վոր տերտերը գլխով է անում չարունակ. Վոկ այդ դեռ վոչինչ չի նշանակում. նա գլխով է անում թե՛ ճիշտ, թե՛ սխալ պատասխանների դեպքում էլ... Յեվ յես, չչվոխվելու համար, աշխատում եմ վոչ-վոքի չնայել. աչքերս պատի նկարներին՝ ասում եմ, ինչ դիտեմ...

Ու, վերջապես, ահա յես դուրս եմ գալիս բակը: Այդպես է կարգը— քննվելուց հետո թույլ են տալիս դուրս գալ: Յերևի բանտից ու կապանքներից աղատվողը կամ խավար աշխարհ ընկնողը նույն ղգացումներն է ունենում, ինչ յես եմ ունենում այդ րոպեին...

Արևն այնքան դուրեկան է ու պայծառ: Ինչ հաճելի յե նրա ջերմութիւնը: Թվում է— բոլոր ձայները լռել էյին, հիմա նոր միայն սկսում են հնչել.— Ինչ հաճելի յեն յերդում թռչունները— սարյակները, ծառերը... Յեվ ինչ թարմ է ողը...

Անցնում են քննութիւնները, և նրանց հետ մեր չարչարանքի օրերը, ու այդ ծանր օրերից հետո ահա մեր պարոցական հանդեսը, ուր սիրով հայտնվի, թե ում է մեղանից ավարտում: Այսոր հրավիրված են բոլոր ծնողները, դարձյալ հյուրեր: Բայց յեկել են միայն հայրերը: Աշխատողներին բաժանելու յեն վիայականներ: Տեառչը և ուսուցիչները հագել են իրենց տոնական զգեստները: Սանատրուկ Սերգեյիչը բեխերն ավելի յե սրել գեպի վեր, Լիդա Լվովնան հագել է գարնանայինն բաց կապույտ չրջազգեստ, վրձքին ամրացրել է մի բազմաթերթ կարմիր վարդ. նրա ակնոցի ապակիներն ավելի յեն պլպլում. նա այնպե՜ս ուրախ է այսոր: Տերտերը նույնպես ուրախ է թվում վր նոր վարաջայի մեջ, իսկ Նիկալայ Պետրովիչը... Նրա գլուխը կարծես նոր չինած չեկ խոզանակ լինի կամ թաղարում ծլած գարի, այնպես կանոնավոր, հարթ և հատ-հատ յերևում են նրա մազերը: Հանդիսչին յեկած ծնողները նույնպես վոչ սովորական գգեստներով են. բոլորի դեմքն ու արտահայտութիւնը տոնական է ու մտահոգ: Բազմութիւնը, այն էլ վոչ սովորական բազմութիւնը չուք է տալիս մեր դպրոցին, իսկ մեզ յերկյուղ է ներշնչում, քանի դեռ ավարտական վկայականները չենք ստացել: Ավարտողն ուրախութիւնը, յերևի ավելի մեծ կլինի այս հատարակութեան առաջ, իսկ մնացողի ամոթը կրկնակի:

Նույն սպրտանքն ու մտքերն են պաշարել ինձ այժմ, ինչ վոր գպրոց ընդունվելու որը, ինչ վոր քննութեան ժամանակ: Ընդունվելու որվա նման ներկա յեն բոլոր ուսուցիչները, ծնողները: Հայրս էլի նստած նայում է իմ կողմը, և նրա դեմքին յես նկատում եմ նրա մտահոգութիւնը, նրա անհանգստութիւնը. «ամոթով չանես»...

Դահլիճը զարդարված է վանաչ ճյուղերով, ծաղիկներով: Յեվ թե՛ աշակերտները, թե՛ հյուրերը, տեղավորված, անհամբեր սպասում են հանդեսի բացվելուն:

— Ի՞նչ ես վարձում, Մանասյան, յես կավաբաճի՞մ,— հարցնում է Յեվան մտահոգ:

— Իհարկե,— սիրա համ տալիս յես նրան,— վոր դո՛ւ չավարտես՝ եվ ո՞վ պիտի ավարտի:

Յեվան հանգստանում է և վեր հերթին սիրա տալիս լինճ.

— Իսկ դու՝ անպատման:

Վերջապես ահա Սանատրուկ Սերգեյիչը քեխե մեկը վոլորելով բարձրանում է ամբիոն, մի վայրկյանե հայացքը պտտում է դահլիճում, նայում է մեզ ու սկսում իր ճառը— յերկա՛ր, թվերով... Նա խոսում է, յես ընկերներիս նայելով, մտածում համ այն, ինչ բոլորին հետաքրքրում է այդ րոպեյին— տեսնես ո՞վ է ավարտելու, ո՞վ է մնալու...

Բայց վոմ մաքերն ընդհատվում են ծափահարությամբ:

Սանատրուկ Սերգեյիչը վերջացնում է իր ճառը և նստում:

Ապա ամբիոն է բարձրանում Նիկոլայ Պետրովիչն ու կարդում ավարտողների ցուցակը:

Վո՞ր աշակերտը կարող է այդ պահին հետևել ուրիշ վորևե բանի: Այդպես եվ յես՝ Նիկոլայ Պետրովիչի չուրթերից կախված ուշում եմ լսել իմ անունը: Ու սիրտս զարկում է արագ:— Ահա Սամսոնը... Սեդրակը, Յեվան... Աշոտը... ավարտում են: Իսկ յե՞ս... հանկարծ մնամ...

Նայում եմ հորս... Նա անհանգիստ է, նույնպես լսողության զարձած: Այս ի՞նչ է. մի՞թե իմ անունը չկա... Յես մոռացել եմ, վոր կարդում էն այրբենական կարդով:— Ահա և Ալոասող Կարամանիդին...



Ահա յեվ իմ անունը:

Ավարտում եմ:

Դահլիճն ավելի յե լուսավորվում. բոլորը զառնում են սիրելի, իսկ Նիկոլայ Պետրովիչը— առավել սիրելի...

Նորից նայում եմ հայրիկիս կողմը:— Նրա հոգնած դեմքը ցնծում է, աչքերը խաղում են յերեսին: Տարիներով նա այդպես ուրախ չի լինում մի որ. դա մի հազվագեպ բան է նրա մշտապես մռայլ, մտահոգ դեմքի համար: Նա ավելի յե ցնծում, յերբ տեսուչը՝ Սանատրուկ Սերգեյիչը կանչում է ինձ վեր մոտ և, սեղանից վերցնելով յերկու վառակալած դերք— ժպտալով տալիս է ինձ: Գրքերի վրա խոշոր, վոսկե տառերով գրված են «Гоголь»:

Հայրս ուրախությունից վեր է կենում տեղից և ձեռը մեկնում ինձ: Նա ուզում է տեսնել ստացած նվերները: Յես մոտենալով գրքերը տալիս եմ նրան, և նա անպատպ ուրախությամբ ու հետաքրքրությամբ նայում է նրանց կազմը, ներսը, մատը քսում վոսկե ուռուցիկ տառերին, ու հիացմունքի ժպտը յերկար չի հեռանում նրա դեմքից:

— Լա՛վն ա,— ասում է նա, այդ մի հատիկ բառի մեջ դնելով իր հայրական խինդն ու գոհունակությունը:

Իսկ իմ ուրախությանը չափ չկա... Այդ արտակարդ ուրախության պատճառը վո՛չ այնքան ավարտելն է, վորքան, թերևս, այդ վոսկետառ գրքերը, վորոնցից վոչ-վոք չստացավ: Մյուսները, մեկին յերեք հոգի, ստացան ուրիշ գրքեր, բայց մեկ-մեկ հատ և վոչք: Իսկ իմոնք յերկուսն են, և՛ մեծ և՛ չը-

քեզ... Տեսնես Ցեվան լինչ կասի. նա ինքը վոչ մի դիրք չատացավ։

Հանդիսից հետո աշակերտները մոտենում են՝ նույնպես չոշափում դրքերը, նայում մինչև պատկերները և կրկնում.

— Գոգո՛լ, Գոգո՛լ...

Անունն, իհարկե, ծանոթ է բոլորին. բայց ոչքան մե՛ծ, դեղեցիկ դրքեր...

Ուզում եմ հանդիսքն Ցեվային և ցույց տալ։ Նա էլ, իրեվ, կհետաքրքրվի։ Բայց նա ինքն անցնում է մոտովս և ասում անցողակի։

— Դու Գոգոլ ատացա՞ր, Մանասյան։ Վատ դիրք չի։

— Կուզես առ կարդա, Ցեվա։

— Ամայիմ վոչ,— ասում է նա անտարբեր։— Ցնա կարդալու դրքեր չատ ունեմ։

Սվարաեր և ատացած նվերը ավելի մեծ ուրախություն են պատճառում մորս։ Նա անմիջապես ձվաձեղ է անում ու դնում առաջս։ Դա ամենամեծ պատիվն է, որ նա անում է մեկին Թանկագին հյուրերի համար։ Ցեվ մինչ չես ուտում եմ վոակէդուչ ձվաձեղը, նա դուրս է գալիս փողոց և պարծանքով հարևանուհիներին պատմում իմ հաջողություններն։

— Սուրենն ավարտել ա, հետո էլ Գոգոլներ ա ատացել նվեր...



## XVII

## Ո Բ Ե Ր Ը

Ինձ թվում է՝ ամենամեծ պարգևը, որ մարդ ատացել է բնությունից— դա հիշողությունն է, սերը և իերատանքը։ Կենդանիները, իրեվ, չեն կարող հիշել հետու անցյալը, վոչ էլ սիրել քաղցը ու տանջալին, մանավանդ իերազել, տարվել քմահաճ իերեվակայության չքնաղ իերազներով։ Ցերջանիկ է մարդը, վոր իր ախորժը կարող է պարզարել պայծառ իերազներով և ձգտել այդ իերազին։

Իմ հուսահատության կամ հիասթափության տրտում որերին ինձ միշտ սփոփել են անցյալի հուշերը և իմ բեկված սրտին նեցուկ են հանդիսացել իերազանքները։ Իմ իերազները... Աշակերտության որերին ես վոչ մի քան այնքան չեմ սիրել— վորքան իմ իերազները, իմ պայծառ, բազմազան իերազները։ Բավական եր մնայի մենակ— ես տարվում եյի ցնորքներով, լուսեղեն ցնորքներով, վոր լցնում եյին իմ աչխարհն ու ապագան։ Վոչ միայն մենակ կամ

պարապ ժամանակ, այլ և դասին կամ գործի միջոցին՝ չես տարվում էլի չերազներով, ինչպես փոքրիկ չերեխան դուրսդգուշն խաղալիքներով: Ցերազները, որ այժմ էլ չեն թողնում ինձ:

Դեռ գպրոցը չավարտած՝ չես չարունակ մտածում էլի, թե ավարտելուց հետո ո՛ւր պիտի գնամ կամ ինչ պիտի անեմ, և ամեն ինչ այնպես դյուրին եր թվում ու բոլոր ճանապարհներն այնպես բաց: Մի ժամանակ չես չերազում էլի լինել հեռագրիչ, հագնել դեղին կոճակներով կապույտ բաճկոն, դնել կակարդով գլխարկ. ինձ գրավում եր մանավանդ նրանց արհեստը, որ թվում եր անհասանելի հնարագիտություն. նստել փոքրիկ սպարատի առաջ ու խոսել աշխարհի բոլոր քաղաքների և չերկրների հետ. դա թվում եր ամենաարարճր գործը, որ չերբևե կարող և անել մարդ: Ապա չես ցանկանում էլի, որ հայրս ունենար Մեկիաելի հոր նման մի խանութ, ու չես լինելի այնտեղ, գրպանս լցնելի ամեն տեսակ մրգով ու հայդա՛— դեպի դաշտ, դեպի անտառ, դեպի դեսր. միրգը բաժանելի ընկերներիս, որ նրանք ավելի լավ ընկերություն անելին հետս. միրգ տալի և Ցեվային, որ չերբեմն վերևից չնայեր ու մի չար մաերիմ մնար ինձ: Հետո չերազում էլի դառնալ ուսուցիչ, տեսուչ— փորմայով հագնվել, բայց այլ ոչ չարերաի չպատժել, այլ սիրել և ողնել, ողնել... Ու էլ ինչե՛ր, ինչե՛ր չեկի չերազում, և ամեն բան այնպես դյուրին ու հեշտ իրագործելի չեր թվում:

Ցեվ ահա դպրոցն ավարտելուց հետո ինձ նորից դրազեցնում է այն հարցը, թե ինչ պիտի անեմ հիմա: Վոչ միայն դրազեցնում, այլ հոգս և դարձել ինձ համար, ալեկոծող հոգս.— ի՞նչ պիտի անեմ... Ամառող ընկերներս արդեն վորոշել են իրենց անելիքը:— Սամսոնը գնալու չ քաղաք՝ սովորելու. նրա մորաքրոջ ուսանող տղան պատրաստելու չե նրան և աշնանը տալու չե գիմնազիա: Աչոտը գնում է Թիֆլիս՝ քեռու մոտ՝ Ներսիսյան դպրոց ընդունվելու. Ապոտոլ կարամանիպին մտադիր է գնալ Հունաստան, Մելիսան ողնելու չե հորը՝ նրա խանութում, Փիլիպ Զայցեվի հայրը գիմում է տալ արդեն նրան չերկաթուղային դպրոց ընդունելու համար, իսկ Ցեվան մտադիր է այս տարի պատրաստվել և չեկող տարի մտնել Հովհաննյան դպրոց:

Մնում ենք չես ու Սեդրակը. Սեդրակն էլ վորոշել է՝ հեռանալ հարրեցող հորից ու խորթ մորից և գնալ ծառայել մի տեղ: Մնում եմ, ուրեմն, միայնչես:— Ի՞նչ պիտի անեմ և ո՞ւր պիտի գնամ: Վոչ մի հեռանկար և վոչ մի հույս:

Ցերբեմն գնում եմ դաշտ, նստում անտառի պըռունկին ու մտածում մենակ. կապույտ չերկնքում լողում են ամպերը, արտերի գլխին՝ արտույտները ճախրում են ոդում, մարդիկ, կանայք կռացած աշխատում են բանջարանոցներում, հեռուն մի քանի դույդ չեղներ արածում են հանգիստ. ահա և մի նավակ— վախկոտ ցատկումներով դուրս է գալիս անտառից և վազում-մոնում մամխինների թիվուտը... Ցես նախանձում եմ բոլորին. և ամպերին, և արտուտներին, աշխատող մարդկանց, հանգիստ արածող չեղներին և նույնիսկ այս վախկոտ նավակին, վոր ստիպված չեն լինում նման մտածել պաշտոնի մասին, գործի մասին: Ներանք բոլորն էլ գիտեն ինչ

պիսի անձն վաղը... Իսկ ես վոչինչ, վոչինչ չեմ-տեմ,

Նույն մահճակալի մեջ է, ինչպես յերեսում է, և հայրս: Դալոցն ավարտելուց յետոյ որ հետո նա խոսք բաց արավ այն մասին, թե ինչ գործով պիտի պրոֆեսիա հիմա, վոր ոգտակար լինեմ տանը: Քանի չեմ ավարտել, նա յերբեք չեր խոսում այդ մասին. նա մորս նման չի, վոր միշտ ծրագիրներ ու յերազներ է պարզում իմ առաջ. նա այդ մասին խոսում է հիմա, յերբ հերթական անելիքի մասին, ինչպես իր գործերն է անում հերթով. ինչպես, որինակ արար հնձելուց հետո՝ կրում է վալը, ապա կալսում: Այդպես չի մայրս. նա հաճախ իր ցանկությունները կամ, ինչպես ինքն է ասում, իր «սրտի խորհուրդները» պարզում է իմ առաջ ու վոգևորվում: Այն որվանից յերբ նա ուխտագնացության ժամանակ Եջմիածնում տեսել է ձեմարանը՝ իր մաքուր, մխաեռսակ հոգին-ված աչակերտներով, միշտ կրկնում է. «Ձերանի նրան, ով աչխոհեղ յերեխա կունենա»:—«Բայց կընդունե՞ն վոր»,— կասկած է հայտնում ինքը: «Ինչո՞ւ: Շատ վոշ են ուզո՞ւմ», հետաքրքրվում եմ յես: «Շա՛տ... Համ էլ ինտեղ ընդունում մեն միայն տեր-տերի, հարուստի տղաներ»: Այդ ճիշտ է. մեր տեր-տերի՝ տեր-Գյուտի տղան էլ այնտեղ է սովորում:

Ցեղ ահա, յերբ հայրս խոսք է բաց անում «ինչ անելուս» մասին, մայրս ասում է.

— Հըլա մի փորձենք, ա՛յ մարդ, գուցե ձեմարան ուղարկենք...

— Ձեմարան,— ասում է հայրս:— Հը՛չա բան է ձեմարանը...



Այս մտածումների մեջ են մեքենք—մեկ էլ հայտնվում է մի մարդ, վոր խոտանում է յերջանկացնել Վնձ ու ծնողներիս:— Որերը:

Այդ մարդը հայտնվում է այնքան անսպասելի և այնքան հուզեր է վառում մեր տանը, իմ սրտում... ու այնքան նախանձ է չարժում իմ շուրջը— իր խոստումներով:

Մի իրիկուն կայարանից՝ հորս հետ մեր տուն է գալիս յերկաթուղային մի կոնդուկտոր՝ փոքրիկ ճամպրուկը ձեռին: Գալիս է նա մի գիշեր մնալու: Հարցրել է հորս, թե վո՞րտեղ կարող է գիշերել, ծանոթ չունի, և հայրս նրան հրավիրել է մեր տուն... Յեվ ահա գալիս է այդ մարդը՝ սպիտակ մեհյաղե վայրկան կոճակները կրծքին չարած: Շատ հարգանքով բարևում է մորս, ապա դրսպանվից կանֆետներ է հանում ու տալիս ինձ, քրոջս ու փոքրիկ վաչոյին: Իսկ հայրս կամացուկ ինչ-վոր բան է ասում մորս, և մայրս անմիջապես սեղան է սարքում. իրիկվա թեյն արդեն պատրաստ է, մայրս մուրաբա յե հանում, մի բան, վոր անում է շատ հազվադեպ, միայն «սպիտ» հյուրերի համար:

Մինչ մեր հյուրը թեյ է խմում, յես ու քույրս՝ վարդուշը, նայում, ուսումնասիրում ենք նրան: Ամենից շատ ինձ դուր են գալիս նրա յերկարաճիտ ծալծալ կոշիկները, բայց զարմացնում է այն, վոր մատանին դրել է բութ մատը, և բեխերն ա՛յնքան է կարել, վոր վերևի շուրթը մնացել է բաց. զարմանալի յեն և աչքերը, վոր չարունակ նայում են այս ու այն կողմ. կարծես սովոր չեն հանգիստ մնալու:

Մի քանի անգամ ինձ նայելուց հետո՝ նա ժպտում է և հանկարծ:

— Լա՛վ տղա ունես,— դառնում է նա հորս, ու կանչում ինձ,— արի տեսնեմ, տղաս:

Ցես մոտենում եմ. նա գլուխս չոյում է, մատներին ճակատիս դիպցնելով, ապա ձեռն ուսիս է դնում ու հարցնում, թե կարդալ գիտե՞մ արդյոք:

Ցես գլխով եմ անում.— այո:

— Մեր դպրոցն ավարտել ա,— միջամտում է հայրս:— Ցերիւռ դիրք ել նվեր ա ստացել:

— Թվաբանությունից վո՞նց ես:

— Գ[illegible]...

— Հա՞: Հաղարի վրեն լինչ է:

Ինձ [illegible]ում է ապ մարդը հանաք է անում, բայց և այնպես լուրջ պատասխանում եմ:

— Հինգ հարյուր:

Նա զովում է ինձ և նորից դառնում հորս:

— Աչքաբաց տղա ունես. չատ առաջ կերթա:

Հայրս ուրախանում է և հպարտ ու գոհունակ նայում ինձ. իսկ ես մտածում եմ— հապա թող ուրիշ բաներից հարցնի՝ տես ինչպես կպատասխանեմ... Ինչուամենայնիվ ես հպարտորեն նայում եմ քրոջս՝ Վարդուհուն ու գլուխս վեհացնում:

— Կուզե՞ս յերկաթուղու վրա գործ ունենաս,— հարցնում է նա:

— Ինչո՛ւ չե,— իմ փոխարեն պատասխանում է հայրս:— Ինքն ել ռուսերեն գիտե: Ցեթե եղպես մի քան անե՛ս...

— Աչքիս վրա,— ասում է մեր հյուրը:— Քու խոսքեր համար վարող եմ տանել, կուզես մաշինիստ



դարձնել, կուզես, յես իրավունք ունեմ իմ կողմից մի տղա տալ ժելեզնո-դարոժնի ուսումնարան. թող սովորի, մարդ դառնա: Ցես ինձ վրա կվերցնեմ քու ես լավ տղի ուսումը: Կուզե՞ս ուրիշ պաշտոն... Տեսնում եմ աչքաբաց տղա ա, չատ առաջ կերթա: Կարող ե կանտրալյոր դառնալ, ստանցիոննի ճաչալնիկ... Մի խոսքով ինպես մարդ, վոր դեղոմը մատով ցույց տան: Հը, վոքրիկ, կուզես չե՞, վոր քեզ տանեմ:

Սովորելը հենց իմ ցանկությունն է. Ֆիլիպ Զայցեվի հետ կսովորենք Ցերկաթուղային դպրոցում: Ցևմ յես գլխով եմ անում:

— Ա՛յ, լա՛վ: Ցես տղա չունեմ, տանեմ քեզ պահեմ իմ տղայի պես:

Մայրս ցնծում է, վոկ հայրս, վոր ուրախությոն արտահայտելու մեջ զուսպ է միշտ, նույնպես խնդումն դեմք ունի:

Ու որերը բացատրում է, վոր մի քանի տարի սովորելուց հետո՝ կարող եմ ուղածս պաշտոնն ստանալ. բայց պետք է լա՛վ աշխատեմ:

— Ինչքան աշխատես՝ ենքան առաջ կերթաս: Հասկանալի՞ յե,— ասում է որերը:— Ա՛յ, յես որեր եմ. բայց մինչև որեր գառնալս ինչքան եմ աշխատել:

Հայրս ու մայրս նրա չուրթերից կախված՝ բաց չեն թողնում նրա և վոչ մի բառը, ու դիտով չարունակ հասմանություն են տալիս նրա ասածներին:

Որերն ասում է, վոր հազվադեպ, նավերը, վոյտը կտտանում ձրի. յերկաթուղով ճամփորդելիր կլինի ձրի. կարող եմ նաև մորս ու քրոջս ձրի տանել, ման ածել ուրիշ-ուրիշ քաղաքներ...

— Բա հերն իրավունք չունի՞,— հետաքրքրվում է հայրս:

— Չե, բնա՛: Հորն իրավունք չկա:

Հայրս կոտրվում է:

— Լավ, թող եգիպտոն ընկի, ես ինձ համար չեմ մտածում,— ասում է հայրս:

— Ուրեմն համաձա՞յն ես,— նորից պատնում է տերն ինձ:

Ես նորից գլխով եմ անում:— Այո:

— Այսա, չնորհակալ եմ,— թելադրում է հայրս և, ինձ ժամանակ չտալով, ինքը չնորհակալություն է հայտնում նրան:

Իսկ յերը քիչ հետո տերերը դուրս է գնում՝ «բարեաբ»— խանութիների փողոցը՝ հայրս ու մայրս ուրախությունից լրիվ են նայում ու անխոս ժպտում: Ես հենց հիմա էլ հիշում եմ այդ ժպիտները. այնքան գոհունակություն կա նրանց դեմքին. ինձ թվում է, ուրախությունից չեն կարողանում խոսել:

— Ե, բախտը բացվեց,— խոսում է, վերջապես, հայրս:— Գնա մարդ դառ: Գնա թշնամու աչքը հանի:

Նա ակնարկում է հորեղբորս. յես այդ հասկանում եմ:

— Ենպես արա՝ աղնիվ մարդ պատնա, բոլորը քեզ յերանի տան: Յերթե յես չհանենք էլ, գոնե գերեզմանից մեջ ուրախանամ,— հորս ձայնը թեթևում է հանկարծ, կոկորդի վռնդորը խաղում է բերին:— Մասքս չմոռանաս...

Նրա ձայնը դադում է նորից, մի բան, վոր նրան քիչ է պատահում, և առհասարակ նա իր դատողություններն արտահայտելու մեջ չատ ժլատ է, բայց



այս անգամ, չգիտեմ ինչու, ղգացվում է չատ, և յես, գլխով անելով, խոստանում եմ կատարել նրա կամքը:

— Հա, եղավես,— ասում է նա ու ծալած ցուցամատով սրբում աչքից կախված արցունքը:

Այդ վարկյանին յես խղճում եմ հորս, տեսնում եմ՝ նրա սիրտը լիքն է, բայց նա չի արտահայտում: Սակայն նրա այդ տրամադրությունը յերկար չի տևում: Շուտով նրա դեմքը պայծառանում է կրկին:

Ծնողներիս հետ ուրախ եմ և յես, վոր պիտի նորից գնամ և սովորեմ, վոր յես չեմ մնա իմ ընկերներից... բայց միևնույն ժամանակ մի թախիծ, մի թեթև տխրություն կա իմ սրտում, վոր պիտի թողնեմ մեր դյուղը, ընկերներիս մի մասին, Յեվային... բայց վորքան դա ծանր, անսովոր, նույնքան և հետաքրքրական է— մեր դյուղից յես դեռ վորևե տեղ չեմ գնացել, դեռ մեծ քաղաք չեմ տեսել...

Իրիկունն արդեն քնում է ամենամաքուր անկողնում, վոր մայրս պատրաստում է հորս մահճակալի վրա. մաքուր սավան և փուտա, յերկու բարձ և ղեղնում, վոր փափուկ լինի...

Իսկ յես, անկողին մտնելով, յերկար քնել չեմ կարողանում: Յերևակայում եմ ինձ արդեն ոտար մի քաղաքում, բարձր պատռոնում, դեղեցիկ չորքեր հագած...

Ուրերը մի դիշերվա փոխարեն մեր տանը մնում է մի քանի որ, նույնիսկ մի ամբողջ շաբաթ՝ ինչ-

վոր գործերի համար. և այդ որերի ընթացքում չուտով մեր թաղում տարածվում է, վոր որերն ինձ տանելու չե Ցերկաթուղային պլրոց, ու հետո պետք է պաշտոն տա: Ընկերներս, առաջին հերթին Սամսոնն ու Սեդրակը գալիս են խանգարում— ճի՞շտ է արդյոք:

Ցես հպարտությամբ հաստատում եմ նրանց լրատածը:

— Այո, չուտով գնալու չեմ:

Իսկ հորաքույրս, վոր հետու թաղումն է ապրում և մեր տանը առհասարակ քիչ է երևում, հանկարծ գալիս է զանգատով, թե ինչո՛ւ հայրս տեղ է արել ինձ համար ու չի մտածում իր կարոյի մասին, վոր այնքան ժամանակ պարապ է:

— Ի՞նչ կըլինի եղ մարդուն խնդրես, վոր կարոյս էլ ընդունի, տանի:

Ու նեղացած թոնթորում է, վոր չեղբայրները միշտ մոռանում են իրեն և բանի տեղ չեն դնում:

— Ձեք ասի՝ քույր ունե՞նք, քույրնիս՝ տղա ունի՞: Սաղը սրտի տեր եք; սա՛ղը....

Նրանց այդ վրույցի մեջտեղին ներս է մտնում ոքերը:

— Նիկոլ ախպեր, ես վմ քիրն ա,— ակսում է հայրս, նրանց ծանոթացնելով և բացատրում է, վոր քույրն էլ մի տղա ունի իմ չափ:— Ձի կարելի՞, վոր նրան էլ տանես մի գործի դնես. հը՞: Շատ եմ խընդրում;

Ոքերը չվարած նայում է հորաքրոջս, նայում է հորս և ասում.



— Շատ դժվար ա, բայց վոր խնդրում ես, Ներսես ախպերը, խաթրդ չեմ կոտրի, թող գա:

— Շնորհակալ եմ,— պլուխ է տալիս հորաքույրս:— Իմ տղայի անունը Կարո չե. շատ աչքաբաց տղա ա. ինչ ասես կանի, մխայն լավ նայես:

Ոքերը խոստանում է. իհարկե, այդ մասին խոսելն ավելորդ է. նա վոր տանում է, նշանակում է, իհարկե...

Այդ որը չերեսիը բերնին մեր տուն է գալիս և մեր քեռի Փիլոն, նա՛, վոր չերբեմն գալիս եր մեր շաժանքի վճճերին հաշտարար դեր կատարելու, գալիս է և անձամբ խնդրում ոքերին, վոր իր Վարդանին էլ «վերցնի»—տանի. ի՛նչ գործ ուզում է դնի, միայն թե չերկաթուղում պաշտոն ունենա: Փիլո քեռին նրա լավությունը չի մոռանա և վորդեվորդի հհիշի:

Ոքերը լարի մարդ է չերևում.— խոստանում է նրա վորդուն էլ տանել: Բայց չերեկոյան հորս հայտնում է, վոր չնայած խոստանում է նրանց տանել, բայց միայն ինձ պիտի տա պլրոց, իսկ մյուսներին վորևե գործի կդնի:

Հայրս չնորհակալություն է հայտնում այդ հատուկ ուշադրության համար:

Յեվ այնուհետև հորաքույրս ու քեռի Փիլոն, իրար չետևից, ոքերին հրավիրում են ճաշի, վոր, ինչպես մայրս եր բացատրում, «աղ ու հացը կապի» և իրենց վորդիներին լավ աչքով նայի: Ինչպես հետո խոսացա, նրանք վարձել էլին, վոր որերի ինձ տանելու վորոշման պատճառը չեղել և մեր հյուրընկալությունը;

Ամբողջ չարաճճի որբերը մնաց մեր դյուղում, և այդ որբերին նա չարունակ դուրսն էր լինում, և առաջ էր գալիս մեկայն յերեկոյան: Հայրս նեղանում էր, վոր տանը չի ճաշել, իսկ նա արդարանում էր միշտ նրանով, թե դործերը շատ են, պետք է վերջացնի, յորեն ունի իրենց դյուղում, պետք է ծախի. դրա համար պայմանագրեր է կատում վաճառականների հետ, ուրիշ արհեստի մարդկանց հետ... Հորաքրոջս ու քեռի Փիլոյի տանն էլ ճաշի վրա նա խոսք էր բացել յորենի մասին և կանխավճարներ վերցրել:

Մինչ նա աշխատում էր իր դործերը վերջացնել — յես զբաղվում եմ իմ յերազներով:— Կերթամ ահա յերկաթուղային դպրոցը կավարտեմ, պաշտոնի կմտնեմ և աշխատածս փողով մորս, քրոջս, փոքրիկ Վաչոյի համար նոր հագուստներ կառնեմ: Այդ բոլորից բացի քրոջս՝ Վարդուհու համար կառնեմ զարդեր, ականջողներ, վոր զարդարվի ուրիշ աղջիկներից նման: Նվերներ կառնեմ նաև Յեվային համար, թե ի՞նչ— առայժմ վորոշել չեմ կարող, բայց անպատճառ մի լավ բան: Նվերներ կառնեմ և տատիս և... այնքա՛ն ուրախ եմ, սիրտս այնպես է լցված— ուզում եմ բոլորին սիրեմ... Ու վորոշում եմ դնալու ժամանակ մնաս բարով ասել բոլոր ընկերներիս ու հարևաններին: Բայց առայժմ դուրս եմ գալիս դաշտ ու մտքով «մնաս բարով» ասում բոլորին ու ամեն ինչի— դաշտին, անտառին, ջրերին. կանդնում եմ, նայում կարոտով և անխոս հրաժեշտ տալիս; մտածելով, թե մեկ էլ յե՛րբ արդյոք կտեսնեմ նրանց: Սիրտս ճնշում է մի անծանոթ ծանրություն. արցունքները գալիս են կոկորդս, բայց արտասվել չեմ կարողանում:



Որերն լինճ թվում է մեծ, ամենազոր մարդ, մի մարդ, վոր ամեն ինչ կարող է անել— ո՛ր ուզի կարող է պաշտոն տալ, բարձրացնել, յերջանկացնել... Յեվ լինճ թվում է, թե այն պատիվը, վոր տալիս են նրան հայրս ու մայրս,— դա մի չնչին բան է, համեմատած այն բարիքի հետ, վոր անելու յե որերն լինճ:

Այդ քանի զդում են և ծնողներս, բայց ինչպես յերևում է, ավելին անել չեն կարող: Մայրս, որինակ, ասում է, թե այսպիսի մարդու համար պետք է առանձին պատրաստություն տեսնել, դառ մորթել, պինդ, կոնյակ առնել. բայց հավից, ձվից ու մուրաբից ավելի բան չի կարողանում դնել սեղանի վրա:

— Հետո դաշտ կվթխեմ կուղարկեմ, նրա լավության տակ չեմ մնա,— ասում է մայրս ընկճված:

Իմ դնալու լուրը արդեն դիտեն չատերը: Փողոցով անցնելիս, լսում եմ, թե ինչպես մեր հարևան Դանայք ասում են իրար.

— Բախտ ա. ասածած վոր ուզի կուտ առանց մատաղի էլ. դուռը վակես—կտրվիը կթռածի:

Յես թեև ախուր եմ, վոր շուտով պիտի հեռանամ մեր դյուղից, ծնողներից ու ընկերներից. բայց հպարտանում եմ այս խոսքերից: Կան ընկերներ ու հարևաններ, վոր անկեղծ չնորհավորում են լինճ, ուրախանալով, վոր դնում եմ լավ դպրոց ընդունվելու. մինչև անդամ պապս, վորքան էլ հոլիցս խռով, կանչում է վրենց պատշգամը և խրատում, վոր լավ ապրեմ ու խելոք մնամ: Իսկ տատս, իմ փոքրիկ

տասը համբուրում է ինձ, լաց է լինում, հետո հավաքում է իրեն և ասում.

— Գնալուդ որն ինձ կվտացնես...

Նույնիսկ հոբելեյայս անտարբեր չի մնում:

Շուշայով անցնելիս՝ ձեռով վանչում է ինձ:

Վա՛ղուց, շատ վաղուց նա հետս չի խոսում. չեմ հասկանում ինչու այս անգամ վանչում է: Մոտենում եմ տարակուսանքով ու զգուշությամբ:

— Հր՛, Տրասկոն մա՞ս,— ասում է նա հեգնանքով:

Ցես հասկանում եմ նրա այդ հեգնանքը. ուզում է ասել՝ հետու տեղ ես գնում:

— Ուզում եմ նահանջնիկ դառնամ, կոճակներով չորեր հաղնե՞լ, հա՞... Քանի Թումանն ասիկ առնես ամսական...

Նա ծաղրում է, իսկ ես մտքումս ասում եմ. «Այ, կերթամ-կմտավորիմ, լավ պաշտոն կստանամ— են ժամանակ կտեսնես»... Ցավ ուզում եմ հեռանալ: Բայց նա նորից կանգնեցնում է ինձ.

— Սպասիր. եղ որերը հանկարծ ժուլիկի մեկը չլնի: Նա ով ա, վոր մարդու դպլոց տա, պաշտոն տա: Ինչ իշխանություն տեր ա:

Ցերը քիչ հետո հորս ու մորս պատմում եմ նրա առաձնները, յերկուսը միասին չեն համբերում.

— Նախանձում ա... Չի ուզում, վոր մարդ դառնաս:

Մայրս յեռանդուն պատրաստության մեջ է. հագուստներս կարդի յե բերում, լվանում, հարթուկում: Նույնն անում են հորաքույրս ու Փիլո քեռու կինը՝ Զարդարը: Դրանից բացի՝ յերեք տանն էլ պաշարի համար պաթա յեն թխում, հավ են մորթում, ճուն են յելնում: Իսկ յերեք մեկնողներս՝ հորաքրոջս որդան՝ Կարոն, քեռի Փիլոյի վորդին՝ Վարդանը— չուտ-չուտ հանդիպում ենք իրար և միմյանց հայտնում, թե ում տանն վինչ է արվում: Պարզվում է, վոր յերեքիս տանն էլ միևնույն բաներն են պատրաստում:

Հայրս լինքն էլ է մասնակցում պատրաստության. չափի, վերնաչափի կտորներ է գնում չուկայում, վայտ է կտորում փուռ վառելու, իսկ պարապելիս՝ չարունակ խրատում է ինձ. նրան միանում է և մայրս:

—Ձեռդ վող ընկնելիս՝ պահվ կամ ղարկի... Անտեղի, ավելորդ ծախս չանես...

Վերջապես վերոր նպատրաստությունները վերջացել են ահա. ամեն ինչ վապոցներ ենք արել, և մենք հագնվել. վորոշման համաձայն իմ յերկու ընկերները՝ իրենց ծնողների հետ հավաքվել են մեր տանը՝ միասին կայարան գնալու:

Նորից, քանի յերրորդ անգամ, խրատում են, թե ինչպես պետք պահենք մեզ ճանապարհին, ուտար մարդկանց մոտ, ծառայության մեջ:

— Հը՞, տղերք, Սուրեն, կարո, Վարդան, չլսեմ-չլսմանամ պապկրոս մեք քաշել, դինի եք խըմել... Իմանամ՝ կգամ Թիֆլիսը գլխներիդ փուլ կածեմ,— ասում է քեռի Փիլոն:— Որինավոր կապրեք, որինավոր կպահեք ձեզ: Զրսրհնեքին ու Զատկին կգաք միասին: Եղ որերը ձեր բարերարն ա— ինչ վոր ասի՝ կլսեք: Նա ձեր վատը չի կամենա...

— Հա՛, հա՛,— հավանություն է տալիս հորաքույրս, թաշկինակին աչքերին սրբելով:— Բեռին լավ ա ասում...

Խոսելով՝ սպասում են որբերին, վոր ընթրենք ու մեզանից գնանք կայարան. բայց նա, չգիտես ինչո՛ւ, ուշանում է: Որը մինուռն է արդեն, կայարան գնալու ժամանակն է, սակայն նա չի երևում: Կես որին վոքրիկ ճամպրուկը վերցրել, գնացել և չուվա:

— Մի յերկու բան եմ առնելու, մեջը դարսեմ,— ասել է նա մորս ու գնացել, բայց անհայտ է, թե ինչո՛ւ ուշանում է:

— Հիմկ կգա ելի,— հանդստացնում է մայրս, բայց ինքն էլ անհանգիստ, չուտ-չուտ գնում է բակը, դալիս ներս, ականջը մի չոռնաձայնի:

Անցնում է բավական ժամանակ, լամպերը վառվում են, անհանգստությունը մեծանում է:

Քեռի Փիլոն խորհուրդ է տալիս կայարան գնալ. չատ հավանական է՝ մարդն այնտեղ սպասում է մեզ:

— Գնանք,— ասում է հայրս և վերցնում է իմ պաշարի կապոցներից մեկը:

Մենք և մեզ ուղեկցողները վերցնում ենք մյուս կապոցները, իսկ մնացողները համբուրում են մեզ, բաժանվելու պես են անում:

Այս անհանգստության մեջ յես մոռանում եմ, վոր պետք է տատիս տեսնեմ և «մնաս բարև» ասեմ. բայց նա հասնում է ինձ ճանապարհին և ձեռս մի թուղթ է դնում ու ինձ համբուրում.

— Բան կառնես, կուտես, մատաղ, քեզ լավ կը պահես...



Մենք չարունակում ենք մեր ճանապարհը: Ամենից առաջ գնում է հայրս քեռի Փիլոյի հետ, հետո մայրս ու հորաքույրս և քեռի Փիլոյի կինը՝ Զարզար ձալոն: Իսկ տղաներս գնում ենք բոլորի վերջում, և յես ախորժությամբ, խորին թախիծով եմ նայում ճանապարհի յերկու կողմի տներին, ծառերին, վորոնց, ով դիտի, մեկ ել յերբ պիտի տեսնեմ, յերբ պիտի վերադառնամ... բայց յերբ վերադառնամ, յերևի, բոլորովին փոխված կլինեմ, լավ հագուստներով. բոլորը կզարմանան, թե ո՛վ է այս գեղեցիկ տղան, և յերբ կիմանան յես եմ— կմոտենան, կչոշափեն հագուստներս, կհիանան գեղեցիկ կոճակներիս ու գլխարկիս վրա, կհարցուփորձեն, թե ի՛նչպես մեծացա, ուսում առա...

Այս յերազներից ինձ հանում են ընկերներս:

— Հասանք...

Կայարանում հայրս, ձեռի կապոցը մեզ հանձնելով, գնում է որերին վերառելու: Գնում է և մի քանի րոպեից գալիս, թե չի յերևում, բայց հիմա կգա, յերևի: Մենք բոլորս այս ու այն կողմ ենք նայում— բարմուհյան մեջ նրան վերառելով.— չի յերևում: Գալիս է տոմս առնելու ժամանակը— գործակալ չկա: Մերոնք մտածում են տոմս առնել առանց նրան, սակայն քեռի Փիլոն գտնում է, վոր միտք չունի. բայց և այնպես խելացի կենք համարում հերթի կանգնել տոմսի համար, վոր որերը յերևալուն պես— գնենք և յետ չմնանք...

Զանգը տալիս են: Գնացքը գալիս է:— Շրխկոց, սուլոց, իրարանցում— որերը չկա:

— Չկա՞... Չի՞ յերևում,— ձայն են տալիս մեբոնք Իրար բազմության միջից:— Չկա՞... Չե՞...

Ճանապարհները բեռներով դնում – նստում են— որերը չկա:

—Ի՞նչ յեղավ ես մարդը, չլնի՞ մի բան պատահեց խեղճին,— անհանգստանում է մայրս, դարիք է, ով դիտե...

Ու բոլորը նույն յենթադրությունն են անում,— այլապես ինչո՛ւ պիտի ուշանար գնացքին:

Հայրս, այնուամենայնիվ, գնում է կայարանի ծառայողներին հարցուփորձելու, թե չե՞ տեսել այն մարդուն. և վերադառնում է, հայտնելով, թե մի յերկուսն ասում են՝ չենք տեսել, իսկ յերկու հոգի, թե այստեղ եր, մի «պատիվ չեմոդան» ձեռին:

Այդ ժամանակ մոտենում է մի ուրիշ յերկաթուղայինն:

— Ո՞ւմ եք հարցնում...

Հայրս նկարագրում է որերին:

Յերկաթուղայինը թափահարում է ձեռն ու դուխը:

— Ե, գնաց ճաշի գնացքով, մի պատիկ չեմոդան ձեռին...

Տուն ենք վերադառնում տարակուսած, դարմացած, չհավատալով քնով մեր լսածին. և՛ մեկ մեկի բերանը չի բացվում խոսի:

Մյուս որը, յերբ հայտնի յե դառնում, վոր որերը վախել է, մեր տունն իրար յեկավ մարդիկ են գալիս, թե որերը կրենցից փող է վերցրել, «մեչոկներ» է վերցրել, վոր ցորեն ուղարկի, ու մեզ հարցնում են, թե ինչպես կլինի հիմա, ո՛վ իրենց փողը յետ կտա:

— Ցես ի՞նչ գիտեմ,— ասում է հայրս չվարած:

— Վո՞նց թե, մեզ ասել է ձեր տանն է ապրում, ձեր բարեկամն է. մենք էլ հավատացել ենք, ասել:

Հայրս չի կարողանում ինչ ասի, իսկ մայրս բոլորին կրկնում է միևնույնը.

—Ի՞նչ «բարեկամ». անծանոթ մարդ եր, յեկավ մի քանի գիշեր մնաց— գնաց...

Ներանք դրանով չեն բավարարվում, խոսում են և՛ լի, ապա հայհոյելով ջոկում— տանում են իրենց «մեչոկները»:

Իսկ յե՛ս... յես ամոթից չեմ յերևում մարդկանց, խուսափում եմ ընկերներից, բարեկամներից և չեմ իմանում ո՛ւր գնամ, վոր ինձ չտեսնեն: Բայց հենց առաջին որը պատահում է մեր թաղի տղաներից մեկը.

— Հը, որեր, վո՞նց ես:

Ցես հեռանում եմ առանց պատասխանելու: Իսկ հորեղբայրս, հենց նույն որն առավոտ, ինձ տեսնելուն պես, հարցնում է պատշգամից.

— Հը՛, Տրապիզոն գնացիր – յեկա՞ր, ապա... Հա՛–հա՛–հա–հա՛... Նայելնիվ գառար, հա՞...

Ու քրքջում է դարձյալ: Ներա հետ անձայն բարախնդում է և Սանամ–ղիզին:

Այդ որվանից յես ամաչում եմ նրա աչքին յերեվալ, կանգնել նրանց պատշգամի առաջ: Վոչ միայն նրա, այլ և առհասարակ յերևալ մարդկանց: Ամեն հայացք խոսում է սիրտս, ամեն նայվածք չփոթում է ինձ: Ամաչում եմ տեսնել ընկերներիս, մանավանդ

Ցեվային. ի՞նչ կարելի չե անել, վոր նա այս բանը չիմանա...

Ավելի ծանր և զզում իրեն մայրս. նա ամոթից չի իմանում ի՛նչ անի. չարունակ ծունկը ծեծում և ու կրկնում.

— Այո՛տառակվեցինք, խայտառակվեցինք...

Իսկ հայրս, ասես մի ծանր լերադից դարձնած, զարմանում և չարունակ:

— Բա եդ սատանի զավակին էլ մարդ չզտավ, չեկավ լինճ խարելո՛ւ... Ձե, չես հավի՛ խելք ունեմ, հավի՛...

Ու էլ խոսք չի գտնում ասելու, անդամ հայհոյելու...

Դա առաջին հիասթափությունն և, վոր կրում եմ չես մարդկանցից, այն էլ վայլուն կոճակներ ունեցող մարդուց: Իսկ այդպիսի կոճակներ, վակարդ ունեցող մարդկանց չես համարում էլի այնքա՛ն լավ, այնքա՛ն աղնիվ ու բարձր: Դրանից հետո անծանոթ կոճակավորներ տեսնելիս՝ բնազդարար մի վախից՝ չենթագրում եմ, վոր խաբեբաներ կլինեն որերի նման, ու մտքումս վորոշում եմ, վոր չեմ ել մի բան ասեն— չհավատամ: Ցես չնայած խուսափում եմ ընկերների չրջանից, ամաչում եմ վողոց դուրս գալ, բայց ընկերներս չերբեմն գալիս մխիթարում են ինձ.

— Բանի տեղ մի գնի՛,— ասում և Սամսոնը,— հե՛րն անիծած:

Իսկ Սեդրակը ատամները կրճատում և միչա.

— Կպատահի՛— դազանակը մեջքին կոտրելու չեմ...



Մյուս ընկերներս՝ Աշոտ Զարդարյանը, Ազոստոսը, Մելիտեն նուչնպես զայրացած են նրա դեմ... Բայց այդ ամենը տակավին չեն սփոփում իմ վիչտը, վոր խորն և այնքան, վոր չես մենակությունն եմ վինարում չարունակ, և պարապ չմնալու համար կարդում եմ պարտիզում առանձնացած կամ բարձրանում եմ տանիքը, վոր վոչ-վոք չտեսնի ու չիմանա-դարի լինճ: Գողոլն և միայն ցրում իմ տխուր ժամերը, նա չե վերացնում չրջապատից ու սփոփում լինճ: Կարդում եմ և իմ հին դասերը, այն վատորները, վոր չերբևե դուր են չկնել լինճ: Բայց ամեն անգամ, չերբ հայրս գործից տուն և գալիս— նեղանում և ինքն իրենից, վոր չես պարապ եմ մնացել:

— Աչխատիր, ա՛յ վորդի, մի գործ գտնել. պարապ լավ չի,— ասում և նա ընկճված: Ցեվ չերբեք խոսքը չի վերջացնում. միչտ մի բան, ասես, դեմ և առնում բիլին:

Ցես ամաչում եմ և պարզապես չեմ իմանում ի՛նչ ասեմ: Ամաչում եմ, վոր չեմ կարողանում ոգտակար լինել մեր տանը և չդիտեմ ել, թե ինչով կարող եմ ոգտակար լինել: Գանի անգամ վորոշել եմ գնամ մի տեղ ծառայության մտնեմ, բայց միչտ ել դեմս ծառացել և մի հարց. «Վորտե՞ղ»: Այդ «վորտեղ»-ն և, վոր դժվար և վորոշել ու գտնել:

Ցեվ ահա մի որ ել վորոշում եմ— գնամ հարս ոգնեմ: Ցեթե նրան ոգնեմ, չերևի, չի նեղանա: Այժմ նա չերկաթուղու համար ավազ և կրում. առավոտը գնում և, չերեկոյան վերադառնում հոգնած: Այո, պետք և ոգնել,— ասում եմ չես: Ցեվ չերբ

վորոշումս հայտնում եմ մորս— նա և՛ ախորժում է, և՛ ուրախանում:

— Ե՛հ, վոր ուզում ես դնա... հերդ մեղք ա...— ասում և նա կարեկցանքով, բայց խոսքը չի վերջացնում:

Նրա հառաչանքը ես հասկանում եմ այնպես, վոր նա չեր ուզի ես այդպիսի գործեր անեմ, բայց քանի վոր ես վորոշել եմ հորս ոգնել— դեմ չի, վորովհետև մայրս նրան խղճում է. նա աչխատանքից հետո այնպես հոգնած և տուն գալիս, վոր հազիվ լսելով՝ պառկում և հանգստանալու:

Սակայն, յերբ վորոշումս հայտնում եմ հորս, նա գլուխը տարուբերում և ախուր:

— Ցես պրա համար չեմ քեզ ուսումի ռվել, վոր դաս լինճ նման ռվազ կրող դառնաս: Զե, ախպեր... դու քեզ համար քու սրտի ուզած պաչտոն դռի: Ցե-թե չես կարող՝ յես կդռնեմ,— ասում և նա հանդարտ, բառերը հատիկ-հատիկ:

Ցեվ նա կատարում է իր խոստումը. չի անցնում մի չարաթ, իր ծանոթ յերկաթուղայինների միջոցով պաչտոն և դռնում լինճ համար:



## XVIII

### ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՄԱՍԱՍԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ

Ա հա մի մեծ, բարձր ռպիտակ տուն, չորս կողմի վրա բացվող պայծառ լուսամուտներով: Ծաղկած ռվացյանները և ճերմակ ու կապույտ հասմկները հանդարտ որորվում են այդ լուսամուտների առաջ: Ներանց թարմ բուրմունքը, մանռվանդ յերեկոները տարածվում և թակում ու բաց լուսամուտներից մտնում ներս:

Սա իմ առաջին պաչտոնատունն է— յերկաթուղայինի 15-ր գծամասի դրասենյակը: Ցնանի որ և աչխատում եմ այստեղ, բայց դեռ լինճ զգում եմ այնպես, ինչպես յեկեղեցում:

Մեծավորս՝ գործերի կառավարիչը, վորին Գլեբ Մաքսիմիչ են ասում, ճեռքս շատ հավանեց և առաջին իսկ որը արտադրություն յուլեց, կամ՝ ինչպես ինքն է ասում, «պատճեն հանելու»: Սենյակը, ուր աչխատում եմ— հինգ սեղան է դրված:

Այդտեղ աշխատում են ինքը Գլեբ Մաքսիմիչը և դբաղիրները՝ յուրաքանչյուրը մի սեղանի առաջ: Իմ սեղանը դրեթե դռան մոտ է: Ներս մտնողները, այցելուները,— և վորքա՜ն շատ են դրանք,— անցնում են շարունակ իմ կողքից, նրանք համարյա քըշվում են իմ սեղանին, հաճախ կանգ են առնում ինձ մոտ և զանազան հարցումներ անում: Գալիս են մեծ մասամբ բանվորներ, դծի վարպետներ, ամեն տեսակ կապալառուներ: Առաջին անգամ այդտեղ եմ իմանում, վոր յերկաթուղու դծերը նորոգում են և այդ դծերը նորոգելու վրա այդքան մարդ է աշխատում, և այդ բոլորն ղեկավարում է դծամասի պետը— Կառլ Կառլիչը... Ձեվ այստեղ յեկողների մեծ մասը հարցնում են ղլխավորապես նրան:

— Եստե՞ղ է պետը... Եստե՞ղ է Կառլ Կառլիչը...

Մեծավորը՝ Գլեբ Մաքսիմիչը հվռունի մոտ բարի ուս է— հանաքչի, սիրալիր, բայց պետի մոտ լուրջ ու վախկոտ: Ինչ վոր չեմ հասցնում դրասենյակում՝ թուղթ և տալիս տանել տուն և յերեկոյան կամ դիչերը վերջացնել, յեթե շտապ է:

Ինչպիսի՛ ղողոջ և յերկյուղով եմ աշխատում, ինչպիսի՛ ուշադրությամբ ու խնամքով, վոր սխալներ չանեմ և դիտողություն չստանամ: Ցերբ նստում եմ աշխատելու, մայրս ման է գալիս վոտներիս ծայրի վրա. աշխատում է վոչ մի բանով, վոչ մի ձայնով չխանգարել ինձ, և շարունակ ղգուշացնում է յերեխաներին.

— Ըՙսս... Սուրենը դրում ա:



Յեվ քույրս՝ Վարդուշը և փոքրիկ Վաչոն վոչ մեկայն լռում են, այլ և իրենք էլ, մորս նմանեցնելով, քայլում են վոտի ծայրերի վրա և ձեռնին չուրթերին տանելով, ղգուշացնում իրար.

— Ըՙսս... Սուրենը դրում ա:

Այնպիսի լռություն է ընկնում, վոր ասես սրբազան արարողություն եմ կատարելու: Մայրս ղգուշանում ձեռին նստում է ժամերով ու լռում. բոլորը քնում են տանը, նա մնում է արթուն ու լուռ, և սենյակի լռության մեջ լսվում է միայն իմ գրչի ճռնչյունը և նավթի լամպի պատրույգի յերբեմնակի թրթռացը: Ցեվ այսպես մինչև ուշ յերեկո, մինչև դիշեր: Աչխատում եմ չատ դրել, անխափան դրել, և, վորքան հնարավոր է, դեղեցիկ դրել, վոր Գլեբ Մաքսիմիչը հավանի և դովի ձեռագիրս:

Իմ պաշտոնն այնպիսի ուրախություն է բերել ծնողներիս, վոր նրանք էլ չեն տրտնջում իրենց բախտից. ու այնպես գոհ են, այնպես հպարտ. չե՞ վոր իմ ընկերներից և վոչ մեկը դեռ այդպիսի պաշտոն չունի: Ճիշտ է, միքանիսը պիտի գնան ուրիշ քաղաքներում սովորելու, մի քանիսն ոգնում են իրենց հայրերին՝ խանութներում, ինչպես որինակ Մելսոնն,— բայց և վո՛չ մեկը փող չի աշխատում, ինչպես յես: Այդ և պատճառը, դուցե, վոր հորեղբայրս ու պապս նայում են ինձ զսպված նախանձով: Նրանք այդ վոչ մի խոսքով չեն արտահայտում, իհարկե, բայց յես զգում եմ, վոր նրանք ուրախ չեն լինում, յերբ յես կարտոնե թղթատանակը թեւիս տակ դնում եմ դրասենյակ: Այդ յերևում է և այն ժամա-

նակ, յերբ հայրս մի որ խոսք է բանում բաժանքի մասին։

— Տղաղ հլմա աշխատում է, ել ի՞նչ ես ուզում, — ասում է պապս հանդարտ, տերողորմյան քաշելով։

— Տղան լրա՛ համար, հողն վրա՛,— ասում է հայրս։

Պապս լռում է և չարունակում տերողորմյալի հատիկները հիսկացնել լրար յեռևից։

Իսկ յերբ առավոտները, թղթատպանակը կռնատակ դրած, յերբևին և առանց դրան, բայց մատնամոտ թղթատպանակով յես աշխատանքի յեմ գնում այնպիսի վեհ, հպարտ քայլերով, ասես աշխարհի բարձրագույն պաշտոնն իմս է։ Գրասենյակ գնում եմ բոլոր պաշտոնյաներից չուտ, վախենալով, վոր յերեք ուշանամ կարող են հանկարծ «դուրս անել», ինչպես ասում, ներշնչում և մայրս։ Ու, թեև այդ և պատճառը, վոր լույսը հազիվ բացված՝ նա վեր և կենում, թեյ պատրաստում ու ինձ զարթեցնում։

— Վեր կաց, թե չե կուշանաս։

Ու յերբեք չեմ ուշանում։ Գնում եմ՝ մենակ նստում սեղանիս առաջ ու կարգում արտագրածս թղթերը։ Ամբողջ մտահոգությունս այն է, վոր սխալ չլինի, թե չե հանկարծ...

Ինձնից հետո գալիս են գրասենյակի մյուս աշխատակիցները— յերկու ուրիշ գրագիր և մի արտագրող աղջիկ, վոր միշտ ոգնում է ինձ— վարդում է ձեռագրերների անընթեռնելի տեղերը, ցուցմունքներ և տալիս և առհասարակ աշխատում է, վոր պարզ ձեռագրերները յես վերցնեմ արտագրելու։ Մյուս գրագիրները չեն խառնվում մեր գործերին։ Իսկ Գլեբ Մաքսիմիչը— գործավարը, նա ամեն ինչ է մեզ համար. նա ինքը՝ հեղինակություն է, խոսքը որենք։ Թեև բարի, բայց խստապահանջ է ու մաքրասեր։ Չի սիրում տառի կամ վեհի սխալ, թանաքի մի ամեկորդ բիծ։ Այդպիսի բան տեսնելիս՝ փոքրիկ գանակը հանում է ու քերում անմիջապես.

— Ոյ,ձելզյա, գլաուբչիկ, ձելզյա...

Գլեբ Մաքսիմիչը... ինչպես մոտանամ յես նրա յերկար հասակը, բարակ վիզը, մաքրասիրությունը և խոնարհամտները պետք առաջ... Նա հագնվում է մի չքնաղ մաքուր, մազերը սանրում է յերկու կողմի վրա և մեջտեղից ճեղքում։ Սիրում է առանձնապես մաքուր պահել պաշտոնազգեստի կոճակները և կակարդը. գրասենյակում թեկուզ յերեք մի կաթիլ ընկնում և կոճակին՝ նա գրպանից հանում է կամիճի կտորը և քսում թրջած կոճակին ու նորից սրբում թաշկինակով. նույնը անում է անձրևի տակ ընկնելու ժամանակ.— ա՛յնքան մաքրասեր է այդ Գլեբ Մաքսիմիչը։ Ցեխ նույնքան խոնարհ ու հնազանդ մեծավորի առաջ։ Ցերբ մեր պետը, այսինքն 15-րդ դծամասի պետ կաուլիչը ներս է մտնում, Գլեբ Մաքսիմիչը, վորքան էլ զբաղված, վեր է թռչում տեղից, և գլուխը հարգանքով խոնարհում այնպես, վոր ծնոտը դիպչում է կրծքին. թվում է նա այդ անում է գրասենյակի բոլոր աշխատակիցների կողմից, յերբև ներկայացուցիչ, յերբև պատասխանատու...

Իսկ կաուլիչը նրա վողջույնն ընդունում է սովորաբար անխոս, անգամ առանց գլխի չարժումի։

Նրա մասին ասում են, որ նա ռուսացած գերմանացի է. մեկ ինչ է նշանակում «ռուսացած գերմանացի»— չես այդ լավ չեմ հասկանում, բայց նրա բարևի անխոս ձևը վերագրում եմ դրան. յերևի ռուսացած գերմանացիներն այդպես են ընդունում մարդկանց բարևը: Նա միջահասակ է, ամուր և չեկ քեխերը միշտ վեր սրած, և ինձ թվում է, որ բոլոր ռուսացած գերմանացիները հենց այդպես են լինում: Ներս մտնելիս՝ նա ձի էլ նայում մնաց, այլ գնում և ուղիղ իր կաբինետը. իսկ յերեք նայում է,— նայում է այնպես, ասես թյուրիմացությամբ, բերանի մի անկյունը միշտ ծխամորճ դրած: Կառլ Կառլիչը նաև շատ սակավախոս է. որերով գրասենյակում խոսք չի ասում, և նրա լռությունը ճնշում ու վախ է ազդում բոլորին: Անխոս լսում է գծի վարպետներին, ահեռնիների, գործերի կառավարչի զեկուցումները և մի յերկու խոսք ասում, կամ հետո գրավոր կարգադրություն անում: Իսկ հաճախ, շատ հաճախ նա դրեզինով գնում է գծի նորոգումները տեսնելու և, վերադառնում է բարկացած. ու ամեն անգամ հեռացնում է գործից կա՛մ ավագին, կա՛մ բանվորներին: Իսկ լռությունից հետո, յերկարատև լռությունից հետո, յերբ նրա ձայնը հնչում է հանկարծ, չգիտես ինչո՛ւ, դող և առաջացնում ծառայողների մեջ, և ամենից ավելի Գլեբ Մաքսիմիչի. նա անմիջապես վեր և թռչում տեղից և ականջ դնում, թե ի՞նչ է ասում Կառլ Կառլիչը և ի՞նչն է արդյոք նրա բարկության պատճառը:

— Լսա,— ասում է նա, գլուխն ուսերի մեջ սրսված,— լսա...



Ու քանի Կառլ Կառլիչի ձայնը բարձրանում է, նա այնքան ավելի է կուչ գալիս ու լսողության պառնում: Իսկ յերբ Կառլ Կառլիչը դուռում է հանկարծ— Գլեբ Մաքսիմիչը նորից դունատված վեր է թռչում ու նստում. և այդ կրկնվում է մի քանի անգամ:

Իսկ Կառլ Կառլիչն այդպես դուռում է յերբեմն գծամասի վարպետների, ավագների և բանվորների վրա. ձեռը գարկում է սեղանին կամ վոտը խփում հատակին ու բացականչում. « ВОН! » և ամեն անգամ ինձ թվում է նրան վիրավորում են— գրանից է այդպես գոռում: Ու նրա ձայնի վրա՝ նրա խոսքը կիցն անմիջապես— լինի դա վարպետ, բանվոր թե ծառայող— նրա կաբինետից դուրս է գալիս կարմրատակած ու չուրթները կոճկելով:

Բոլորը գլուխները կախում են սեղանների վրա և չնչազուրկ սպասում, մեկ ինչ սկսի լինի այնուհետև: Ճիվ այդ լռության մեջ լսվում է հանկարծ Կառլ Կառլիչի ձայնը.

— Մաքսիմի՛չ:

Գլեբ Մաքսիմիչը վառների ծայրերի վրա գնում է ներս՝ հնազանդության ու խոնարհության բոլոր ձևերով:

— Վոչ մի մարդ չթողնեք ներս,— կարգադրում է Կառլ Կառլիչը բարկացած:

— Լսում եմ,— ասում է Գլեբ Մաքսիմիչը խոնարհ, մեջքը դեպի դուռը յետ-յետ գնալով:

Կառլ Կառլիչն առանձնասես խիստ է բանվորների հետ. յերբ մեկն ու մեկը կամ խմբով գալիս են

մի բան խնդրելու,— նա կամ չի ընդունում, կամ լսելով հեռացնում է բարկացած:

— Նա չի ուզում բանվորների հետ գործ ունենալ,— բացատրում է լինճ արտադրող աղջիկը,— նա միայն վարպետի հետ սրճաք է խոսի, իսկ վարպետը՝ բանվորների: Բայց սրանք գալիս են նրան բարկացնում և մեզ խանգարում:

Ցնկել են ահա նորադող բանվորները իրենց սառնասրտաններին հետ. չեկել են բողոքելու դծի վարպետի դեմ. որ խելոք է և կոպիտ է վարվում իրենց հետ: Նրանք խնդրում են Գլեբ Մաքսիմիչին, որ իրենց գալու մասին հայտնի կաու Կաուլիչին: Գլեբ Մաքսիմիչը չի համաձայնում.

— Ձեմ կարող, голубчик, կարդադրել է վոչ-վոքի,— ասում է նա և, թերևս, խոսքին ուժ տալու համար, ձեռը բացատարար շարժում է թերանի մոտ:

— Նո՛ւ, Գլեբ Մաքսիմիչ, ասեք չաս կարևոր գործի համար է:

Գլեբ Մաքսիմիչը պիջում է. գնում է դեպի դուռը, բայց կես ճանապից չետ է դառնում.

— Ձեմ կարող:

Բանվորները նորից:

— Գլեբ Մաքսիմիչ, ասեք դծի վարպետի դեմ դանգատ ունենք:

Բարի չե Գլեբ Մաքսիմիչը. գնում է չերկրորդ անգամ և վախվխելով ներս մտնում:

Բայց այս անգամ ներսից մկան զոռոց է լսվում.



— Ցես ձեզ ասացի՝ վո՛չ—վո՛ք...

Գլեբ Մաքսիմիչը դուրս է գալիս թղթի պես սպիտակած և, պատասխանի փոխարեն, ձեռը տանում է դեպի բերանը, որ նշանակում է լուռթյուն:

Բայց — տարօրինակ բան — բանվորները, ուրիչ անգամվա նման, վոչ լռում են և վոչ էլ հեռանում, և դրասենյակը լցվում է նրանց դժգոհ ձայներով. այնպես են խոսում, որ պարապելը դառնում է անկարելի: Խոսում են հմա առանց քաչվելու, հուզվա՛ծ, դրդռվա՛ծ— մեկը մյուսին ընդմիջելով: Ցեվ նրանց ասածներից չես այնքանն եմ հասկանում, որ իրենց աշխատեցնում են մինչև մութը, աշխատեցնում են և կվրակի որերը, բայց անցած ամսվա որավարձերը— »получка »—ն դեռ չեն ստացել. Նրանք խոսում են և այն մասին (և ամենից չատ խոսում է մի թուխ կարճահասակ բանվոր), թե դծի վարպետը կոպիտ է վարվում, վոդը ժամանակին չի տալիս և վոքր ինչ դժգոհող բանվորին արձակում է աշխատանքից, թե պետք է կարդադրել այդպես: Ցեվ այժմ նրանք չեկել են ոտուգելու, թե այդպե՞ս է արդյոք: Ցերեկ էլ վարպետը մեկին խփել է, ուշադնաց տարել են դեսը և ուշքի բերել: Ցեկել են ահա այս ամենը պետին հայտնելու և անցած ամսվա «պալուչկան» խնդրելու: Բայց նրանք չենթադրում են, որ այդ «պալուչկան» կերել է վարպետն ինքը: Այդպես է բացատրում կարճահասակ թուխ բանվորը Գլեբ Մաքսիմիչին:

Իսկ մյուսները խոսում են, թոնթորում, և բոլորը միասին, ինչպես գյուղական ժողովներում, վոմանք ծխում են ջղայնացած, պապիրոսները դղում են հա-

ակին և, թեռնելով տրորում: Այս բոլորն ինձ համար նոր և զարմանալի ու ես ուշադիր հետևում եմ նրանց ու զարմանում, թե ինչպես կաղ կաղլիչյց չեն ամաչում, չեն վախենում. այսպես ամեն մի յեկող խոսում և այնպես պղծ'ւյչ, կամա'ց, իսկ սրանք այնպես դեղավարի— առանց քաչվելու: Նայելով նրանց ես չարունակ մտածում եմ, որ նրանց ձայնը հասնում և անշուշտ կաղ կաղլիչին և նա ջղայնանում և, յերևի, իր առանձնասենյակում: Իմ ծառայության առաջին որից ես այսպիսի հուզում և բանվորների կուտակում չեմ տեսել մեր դրասենյակում: Սովորաբար գալիս են մի կամ մի քանի հոգով, իրենց գործը տեսնում հանձնարարն ու գնում: Բայց այսոր հուզված են անսովոր ու խոսում են այնպես դրգռված, որ չեն մտածում, թե ո'ւր են գտնվում: Չի ոգնում և այն, որ Գլեբ Մաքսիմիչը չուտ-չուտ տեղից յելնելով՝ ձեռը բերանն և տանում: Ներանք չարունակում են:

Ցեվ նրանց այդ հուզված խոսակցությունն անհանգստացնում և ինձ. թվում և չարունակ, որ այդ հանգամանքը կարող և բարկացնել կաղ կաղլիչին. յես գիտեմ, որ նա աղմուկ և բորբոքոտ խոսակցություն չի սիրում: Ջե՞ որ իզուր չե Գլեբ Մաքսիմիչը միշտ լռության պահպանում դրասենյակում:

Ցեվ յես չեմ սխալվում իմ յենթադրության մեջ:

Ներանց ձայների վրա կաբինետի դուռը բացվում և հանկարծ և յերևում և կաղ կաղլիչի խուզած գլուխը:

— Ի՞նչ աղմուկ և,— ասում և նա:

Գլեբ Մաքսիմիչը վեր և թռչում կանգնած տեղը և յես ու առաջ անում մի քանի անգամ: Թվում և՝ չի համանում՝ նեղությունն խնդրի՞ պետից, թե՞ բանվորներին սաստի: Ինեղճ Գլեբ Մաքսիմիչ. վորքան տարորվնակ և իր դու այդ վայրկյանին, վորքան չըվոխված ու անճարակ... Բայց քեզ հետ միասին դողում և յի և յես և միտս աշխատակիցները... Ի՞նչ պիտի լինի մտածում և յինք մենք և սպասում քո խոսքին: Բայց մինչ դու մի խոսք կասեյիր— բանվորների միջից առաջ յեկավ այն թուխ կարճահասակ տղան և...

— Պարոն պետ...

Կաղ կաղլիչն իր խոժոռ հայացքը վոլորում և նրա վրա և դառնում Գլեբ Մաքսիմիչին.

— Հեռացրեք սրանց,— ասում և նա և դուռը չրխկացնում թուխ տղայի յերեսին:

Բանվորները զարմացած իրար են նայում:

— Գնա'նք, տղերք, գնա'նք,— ասում և նրանցից մեկը:— Բան չի դուրս գա, գնանք:

Թուխ տղան կարմրում և, սպրդնում. նա հայացքը բևեռում և պետի գրան վրա, և նրա աչքերը վայելատակում են:

— Դե', դե',— նրա թևը քաշում և հասակավոր մի բանվոր:— Գնա'նք...

Ու գնում են: Նրանք սենյակից դուրս են գալիս իրար սեղմելով ու մռայլ: Նրանց հայացքը կանգ չի առնում և վոչ մի բանի վրա:

Գլեբ Մաքսիմիչը վրդով նայում և նրանց յետևից, վոր այդպես անհանգստացրին կաղ կաղլիչին: Գլեբ Մաքսիմիչը չի սիրում առհասարակ, յերբ կապալառուները, գծի վարպետները կամ բանվորները գալիս

են պետք արամադրությունը փչացնում, վտրտվհետև դա, վերջի վերջո, անդրադառնում է դրասենյակի, մանավանդ իր՝ Գլեբ Մաքսիմիչի վրա: Ցավ, խոսքս, մի յերկու այդպիսի դեպքից հետո տեսել եմ, թե ինչպես կառլ Կառլիչը դուրս է գալիս և իր պժգությունը հայտնում կամ սրանեղում Գլեբ Մաքսիմիչի վրա, վոր սխալ է կատարել այս կամ այն կարգադրությունը կամ ուշացրել է և կամ իր սեղանի վրա թուղթ չկա. քանի անգամ է ասել, վոր իր սեղանի վրա սրանից ինչ պետք է լինի իր տեղում:

Այդպիսի դեպքերում Գլեբ Մաքսիմիչն իրեն կորցնում է և թուղթ, թանաք հավաքում տանում կառլ Կառլիչի կաբինետը, միշտ վոտի ծայրերի վրա, միշտ զգույշ շարժումներով, այդ թերևս նրա համար, վոր չլինի թե առիթ տա նոր զայրույթի:

Գլեբ Մաքսիմիչ... ի՞նչպես մոռանամ քեզ, քո յերկու մասի սանրած մազերը, քո խոնարհ ժպիտները, քո զգույշ շարժումները ու քայլվածքը: Դու քայլում եյիր այնպես, վոր չխանգարես կառլ Կառլիչի հանգիստը և ձեռդ բերանիդ եյիր դնում ա՛յնպես, վոր զրասենյակ յեկող բանվորները լռեն: Կամ ինչպես մոռանում քո այն խոսքերը, վոր ասում եյիր յերբեմն ուշացող ծառայողներին:

— Նելզյա, միլիյ, նելզյա. պետք է ժամանակին դալ. թե չե կառլ Կառլիչը— անհարմար է...

Ցավս, առանց այդ ել կառլ Կառլիչից վախենում եմ և աշխատանքի յեմ գալիս բոլորից շուտ. այդ առնից յես այն կարծիքն եմ կազմել արդեն, վոր բոլոր պետերը, յերևի, բարկացկոտ են լինում. հավա-



նորեն, մոռացում եմ յես, նրանց պաշտոնն այնպես է, վոր և խիստ պիտի լինեն և խոստախանջ: Այդպես ինձ թվում է մանավանդ այն պատճառով, վոր կառլ Կառլիչը դուրսը՝ հնոջ, յերեխաների հետ պրոմնեդ-չատ հանդիստ ու մեղմ մարդ է. ժպտում է, յերեխաներին դրկած խնդացնում կառլից. սիրում է և վտրտի դնալ ճաշից հետո. դաշտում վտրտում է լորեր ու թռչուններ: Շատ եմ տեսել, թե ինչպես նա պաշտոնապզեստը փոխած, յերկարաճիտ կոշիկներով, վտրատարկերն աղդրերին կախած անցնում է դաշտով, մոնում արտերը, բարձրանում բլուրները, իր սրճադույն պոչատ շունը միշտ հետը, վոր սրընթաց թլատնում է խրխնած վտրտի յետևից և, բռնելով, բերանով բերում մատուցում տիրոջը: Ցավ կառլ Կառլիչն այդ ժամանակ սիրով չոյում է շանը, վայելչում:

Ուրեմն նա չար չի, ինչպես ասում են:

Նա միայն խոստախանջ է դրասենյակում, ու ինձ թվում է, յերևի, այդպես պետք է լինեն բոլոր պետերը: Ցավ յես աշխատում եմ գրել վալ, մաքուր ու անսխալ, վոր յերթե արտագրածս ձեռն ընկնի մի սր— նկատողություն չստանամ հանկարծ կամ չհեռացնի ինձ վատ գրելուս համար: Ինձ միայն այս է մտահոգում. վատ գրելու հետևանքը կարող է լինել այն, վոր ինձ կհեռացնեն. իսկ դա նշանակում է խայտառակություն:

Ի՞նչ ասոթ: Ի՞նչ վասեն մարդիկ. հալիվ ծառայեց մի ամիս— հեռացրին: Ուրեմն չի կարողացել աշխատել: Վորքա՞ն վուբախանա հորեղբայրս:

Ի՞նչ կասեն ընկերներս, ի՞նչ կասի Ցավան...

Մանավանդ Ցավան...

Ցեվան... Իմ դպրոցական ընկերը Ցեվան: Նա այժմ համարյա մեծ աղջիկ է դարձել: Դպրոցն ավարտելուց հետո հանել է դպրոցական հագուստները և հագել հասուն որիորդի զգեստներ ու բարձրակրունկ կոշիկները, վորից բավական բարձրացել է իր սովորական հասակից. ուսման է գալիս մի քիչ կոստյումով. գուցե այդ միայն—թվում է ինձ, և դրա պատճառը թերևս բարձրակրունկ կոշիկներն են ու վոլթ-վոլթ, ուսապլուխներին ուռչող թևքերը, վոր այնպես սազում են նրան. վակ յերկար հյուսը նա յերբեմն հավաքում և հերկաններով ու սանրերով ամրացնում է գլխի յետև: Այդ արդեն բոլորովին մեծ աղջկա կերպարանք է տալիս նրան: Ցեվ ինքն էլ լրջացել է այնպես:

Պաշտոն ստանալուց որից մենք հաճախ հանդիպում ենք իրար: Փողոցում պատահելիս՝ նա բարևում է, ժպտում և յերբեմն առաջինն էնքն է ողջունում.

— Բարև, Մանասյան, ի՞նչպես ես:

Նա բարևելու յեղանակին էլ է փոխել. բարևելիս հիմա՝ նաև գլխով է անում:

Ցես էլ, իհարկե, յես չեմ մնում նրանից. թըղթապանակը թևիս տակ, գլխարկս վերցնում եմ լուրջ ու մեծի պես բարևում. թող բոլորը, և դրանից հետո Ցեվան, տեսնեն, վոր յես այլևս դպրոցական չեմ, այլ 15-րդ դծամասի պաշտոնյա:

Բարևելուց հետո՝ Ցեվան առաջինն է հետաքրքրվում ինձանով. հարցնում է գործիս մասին, պաշտոնակիցներիս մասին, ոճիկիս մասին: Ցես պատասխանում եմ ուրախությամբ, փոքր ինչ պարծենկոտ, բայց միշտ լուրջ, իսկ նա չարունակ ժպտում է.— այնպե՛ս չարաճճին է այդ Ցեվան:

— Դու ինչո՞ւ յես ծիծաղում, Ցեվա,— հարցնում եմ:

Ցեվան նորից ծիծաղում է:

— Դու այնպես լուրջ ես պահում քեզ, կարծես մեծացել ես:

Ինչպես թե «կարծես». մի քիչ արդեն մեծ չեմ... Ցես վիրավորվում եմ Ցեվայի այդ նկատողությունից, բայց, իհարկե, վոչինչ չեմ ասում, և մենք միասին խոսելով անցնում ենք փողոցով: Յերբեմն յես նրան ուղեկցում եմ մինչև իրենց տուն. նա զանազան պատմություններ է անում և, ի միջի այլոց, պատմում է, վոր շուտով այս աշնանը գնալու յե Թիֆլիս մորաքրոջ տուն. այնտեղ պիտի պատրաստվի և յեկող տարի մտնի Հոլենանյան դպրոցը:

— Իսկ դու պիտի մնա՞ս այստեղ,— հարցնում է նա:

Ցես չգիտեմ ինչ պատասխանեմ:

— Առայժմ դեռ վճռած. հետո, գուցե, յես էլ գամ:

— Այդ լավ կլինի,— ասում է Ցեվան:— Այնպես արի... Ե՛, ցտեսություն...

Ու չասպում է տուն, իսկ յես վերադառնում եմ Ցեվայի ուշադրությունից ուրախացած, վերացած. ա՛յ, մեր ընկերների մեջ Ցեվան միայն ինձ հետ է մտերիմ. մյուսներին բանի տեղ չի դնում,

իսկ ինձ հետ խոսում է լերկար, մանր ու դալիս փողոցում: Ցնվ այս, հանդամանքն ինձ բարձրացնում է իմ աչքում: Ի հարկե, չեմ ես մյուսներից լավ լինեմ, Ցեվան ինձ հետ ուրիշ կերպ կվարվի,— մտածում եմ ես:

Ճանապարհին պատահում է Սամսոնը: Ջեռնեցը դրպանը դրած կանգնում ու ժպտում խորհրդավոր, խորամանկ ժպիտով, ու աչքերը խաղացնելով սպիտակ դեմքին:

«Ի՞նչ է պատահել սրան, ինչո՞ւ է ժպտում»:

— Վո՞րտեղից ես գալիս,— հարցնում է նա:

— Գրասենյակից:

Նա ժպտում է:

— Գրասենյակն այն կողմն է, ոչ թե այս կողմը:

Ճիշտ վոր. ես գալիս եմ հակառակ կողմից: Այդ հանդամանքը ես մոռացել եմ:

Իմ չվոխուքթյունը տեսնելով՝ նա ժպտում է դարձյալ և ասում, ձայնը իջեցնելով:

— Դու Ցեվային սիրո՞ւմ ես:

Սե՛ր... Ցես չգիտեմ— սե՞ր է այն, վոր մենք յերբեմն հանդիպում ենք իրար և յես ուղեկցում եմ նրան մինչև իրենց տուն, թե՞ մի պարզ ընկերություն է դա, լավ վերաբերմունք, ուշադրություն: Բայց— սե՛ր... յես այդ մասին չեմ էլ մտածել: Մի՞թե այդ բոլորը միասին կարող են կոչվել սեր:

— Չգիտեմ,— ասում եմ,— յես նրան հարգում եմ...



Սամսոնը ժպտում է և դարձյալ խորհրդավոր, խորամանկ ժպիտով:

Սեր է դա, թե համակրանք— չգիտեմ, բայց ցանկանում եմ միշտ, ես գալուցից, վոր նա մոտ ու մոտիկ լինի ինձ, և մենք իրար ասենք քաներ, վոր ուրիշ վոչ-վոքի չենք ասի: Գիտեմ, զգում եմ, վոր նրա մոտիկությունը հաճելի է ինձ: Իսկ ի՞նչ է ուզում Սամսոնը. նախանձո՞ւմ է, վոր մենք հանդիպում ենք իրար, թե՞ չի ցանկանում, վոր մենք տեսնվենք, խոսենք:

— Ի՞նչ է, քեզ դուր չի գալիս, վոր մենք խոսում ենք իրար հետ:

Սամսոնը ծիծաղում է:

— Ինչքա՛ն ուզում եք խոսեք, ինձ ի՛նչ,— ուսերը վեր է քաշում նա և չուրթերը սեղմում իրար:— Միևնույն ծիծաղելի՛ եք...

— Ինչո՞ւ,— կրկնում եմ յես, մտածելով, վոր ոչ մի ծիծաղելի բան չկա մեր ապրածի մեջ:

— Վոչինչ, յես հանաք եմ անում,— նորից ծիծաղում է Սամսոնը և մենք խոսելով գնում ենք առուն:

Իսկ յերկու որ հետո, յերբ յես գալիս եմ գրասենյակից, Սամսոնը վանդնեցնում է ինձ և ասում չուրջ, շատ լուրջ.

— Գիտես, յես այսոր պատահեցի Ցեվային. հարցրեց քո մասին. ասում է՝ «ինչո՞ւ չի յերևում»: Ուզում է քեզ տանեմ:

— Ճի՞շտ:

— Այո. ինչու սխալ ասեմ:

Ցես ցնծում եմ: Ահա— յերեխ ուղում է տես-նել, դա նշանակում է սեր է: Բայց յերեխ ուզում է տեսնել— ինչո՞ւ ինքը չի յերևում: Ցերևի ամաչում է,— մտածում եմ և յեզրակացնում, թե վորքա՜ն համեստ աղջիկ է Ցեվան: Այո, յերևի սերը հենց այդ է: Նա ուրեմն սիրում է ինձ, բայց ամաչում է խո-սել: Ինձ թվում է, վոր իսկական սերը, յերևի, հենց այդպես է լինում: Ուրեմն սկսում է, մտածում եմ յես մի թաքուն ահով և ուրախությամբ:

Ո՜, դյուրահավատ պատանեկություն, վոր ապ-րում ես ցնորքներով ու յերազներով, յերբ ամեն ինչ քեզ թվում է հնարավոր ու կարելի, և կախարդա-կան աշխարհն այնքա՜ն մատչելի:

Ցեվ ահա, յերբ ամռան յերեկոն լցնում է խա-ղաղ, յես, դրսպանումս ընտիր խնճորներ պահած, անհամբեր դնում-գալիս եմ Ցեվայենց տան շուրջը: Նրանց տունը, վոր դանվում է յերկու վողոցի ան-կյունում, ցածրիկ պարսպի յետև, չրջապատված է ծառերով. իսկ պատշգամի առջև այնքա՜ն ծաղիկներ կան... Փողոցում յես նույնիսկ բուրմունք եմ դգում, մի բուրմունք, վոր կարող է հարբեցնել: Բայց դա, դուցե, միայն թվում է... Ցերեկով յես չատ եմ տես-նել նրանց տունը և բոլոր ծաղիկները, թեպետ այդ է պատճառը, վոր յես բուրմունք եմ դգում... Բայց այժմ նրանց տունն էլ ինձ թվում է ամենագեղեցիկը, ամենալուսավորը բոլոր տների մեջ: Գնում-գալիս եմ թեթև, թեթև քայլերով, և ամեն անգամ անկյունին մոտենալիս (այդտեղ անցնող սայլերը պարսպի պատից քարեր են գցել) կանգնում եմ լայ-



տերի այսն մոտ և վոտս գնում ընկած քարի տեղը ու, ձգվելով, պարսպից նայում ներս— պատշգամին, լուսամուտներին: Ցեվան չի յերևում...: Պարսպի դուռը թակիչ ունի. չմտնե՞մ արդյոք...: Վոչ, ա-վելորդ է. կարիք չկա, վոր նրանց տնեցիներն իմա-նան իմ գալը. Ցեվան ինքն էլ, յերևի, չի ցանկանա այդ: Բայց վորքա՜ն կուզեի, վոր չուտ դուրս գար և տեսներ ինձ այստեղ՝ իրեն սպասելիս...: Իսկ դուրս գա թե չէ, յես անմիջապես կասեմ. «Ցեվա, յեկել եմ», ու դրպանիս խնձորները կտամ նը-րան, ինչպես մի ժամանակ տալիս եյի Սամսոնի քրոջը— Սիրանին: Այնուհետև... այնուհետև կխո-սենք ու կզրոսնենք... Ցեվ հետո յես կհուրցնեմ, թե ինչո՞ւ յես կանչել ինձ:

Բայց Ցեվան չի յերևում: Ինչո՞ւ... Մի՞թե մո-ռացել է, վոր կանչել է ինձ: Թե՞ Սամսոնը խաբեց ինձ:

Ցես գնում—գալիս եմ նորից և, վերջապես, դու-ռը ճռռում է ահա և Ցեվան— մի գիրք ձեռին դուրս է գալիս փողոց: Սամսոնն ուրեմն ճիշտ էր ասում:— Ահա Ցեվան... Բայց նա իմ կողմը չի նայում: Ցես ուզում եմ ճչամ, կանչեմ, վոր յեկել եմ, այստեղ եմ: Սակայն մի բան, ամոթը դուցե, զգացմունքների ա-ռատությունը թերևս խանգարում են ինձ մի ուռ ժամ. բայց և այնպես ասում եմ կամացուկ.

— Ցեվա:

Նա զարմացած նայում է ինձ ու չացականչում.

— Մանասյա՞ն:

Ցես հաղիվ եմ զսպում ուրախությունս.

— Ցեկել եմ...

Ու նեռվում եմ առաջ:

Բայց Ցեվան կանգ է առնում զարմացած.

— Ի՞նչպես:

Նա կարծես չլավ չի լսել իմ խոսքը:

— Ցեկել եմ:

— Ի՞նչ կա... Ինչո՞ւ համար...

Այժմ զարմացողը ես եմ:

— Վո՞նց թե: Չե՞ վոր դու կանչել ես:

— Ցե՞ս,— Ցեվան գլուխն օրորում է զարմացած, ու ծիծաղում է:

«Ուրեմն Սամսոնը կատակ արավ», մտածում եմ և, այդ մասին ավելորդ չխոսելու համար, ասում եմ.

— Դե՛, ինչ վոր է, Ցեվա. ա՛ռ, քեզ համար խընձոր եմ բերել... մեր ծառերից է:

— Շնորհակալ եմ,— ասում է Ցեվան և չի ուզում կարծես վերցնել խնձորները, թերևս անհարմար է համարում: Բայց քանի վոր զրպանից հանել, մեկնել եմ էրեն— չի ուզում մի ևնուն ժամանակ վիրավորել ինձ, վերցնում է մեկը, միայն մեկը և ասում.

— Կվերցնեմ, բայց մյուս անգամ ել եսպես բան չանես:

Զարմից զգում եմ, վոր նրա այդ խոսքերի տակ կա և թաքուն ուրախություն, վոր ես ուշադիր եմ պեսի էրեն, վոր մինչև անգամ մեր ծառերից խնձոր եմ բերել: Ինձ ուրախացնում է մանավանդ այն հանգամանքը, վոր նա չի մերժում: Չե՛, Ցեվան բարի սիրտ ունի... վորքան ել ասավ «մյուս անգամ եսպես բան չբերեմ», բայց կես կբերեմ...

— Դու տանճ սիրո՞ւմ ես, Ցեվա,— հարցնում եմ կես:



— Տա՞նճ. մենք տանճ ունենք. դու այդ թող...

Ցեվ մենք խոսում ենք զանազան բաներից ու ծիծաղում: Ցես նորից հարցնում եմ, թե մի՞թե կեսպես լինքը չի կանչել ինձ:

— Վոչ: Ո՞վ ասավ, վոր կես քեզ կանչել եմ:

Այլևս թագցնելու կարիք չեմ տեսնում և ասում եմ.

— Սամսոնը:

— Սամսոնը՛,— ծիծաղում է Ցեվան:— Ի՛նչ հիմար ազա կե այդ Սամսոնը: Շա՛տ հիմար է: Կատակ է արել, բերևի...

Ցես Ցեվային հասցնում եմ ընկերուհու տուն և վերադառնում թեթև սրտով, մտածելով, վոր Ցեվան լավ աղջիկ է, նրա համար պետք է մի լավ նվեր առնեմ: Ցեվ գիշերն այնպես լավ է, դուրեկան: Ուզում եմ բոլորին սիրել, բոլորին լավություն անել և բոլորին քաղցր խոսք ասել: Նույնիսկ Սամսոնին, չնայած խարել է ինձ, ուզում եմ սիրել... ներել և սիրել...

Բայց ահա հապիղ մի տասը քայլ եմ անում— Սամսոնը դուրս է գալիս Ցեվայենց պատի անկյունից:

— Սամսո՞ն. դու այստե՞ղ եյիր:

Նա չի թվում է:

— Վոչինչ. անցնում եյի,— ասում է ակամա:

— Բա ասում եյիր՝ Ցեվան կանչե՞լ է ինձ,— չեմ համբերում կես:

Նա չի պատասխանում:

Ցես բռնում եմ նրա թևը:

— Թո՛ղ,— լսում է տալիս նա Թևը և ճանապարհը ծռում:

— Սամսո՛ն, Սամսո՛ն,— կանչում եմ ես: Բայց նա էլ ինձ չի նայում, և շուտով անհայտանում է խավարում:

Հասկանում եմ. նա լինճ խարել—ուղարկել է Ցեվային մոտ և լինքը էհեւկցս չեկել, վոր ծիծաղի իմ անհաջողության վրա: Նա կատակ է արել, վոր հետո պատմի ընկերներին ու ծիծաղի: Բայց նրա կատակը չունեցավ սպասված հետևանքը և, ընդհակառակը, Ցեվան ծիծաղեց ու «Հիմար» անվանեց նրան:

Ահա՛ լինչու է ախուր Սամսոնը:

Բայց ես պատրաստ եմ ներել նրան ամենը և սիրել...

Իսկ Ցեվա՞ն... վորքա՞ն բարի է Ցեվան, վորքան սիրալիր...

Այդ դիշեր ես անկողին եմ մտնում ամենաերջանիկ ղդացումներով: Հիշում եմ Ցեվայի խոսքերը, նրա վոքրիկ ճերմակ ձեռները և նրա աչքերը, վոր ճառագայթում էլին մութի մեջ. ու յերանության մեջ եմ ղդում լինճ. աչխարհն այնպես քաղցր, այնպես լավ է թվում... Մտածում եմ, վոր այսուհետև մենք չուտ-չուտ կհանդիպենք մեկյանց, կես դարձյալ խընճոր կտանեմ նրան, և մենք կխոսենք ու կզբոսնենք նրանց տան վողոցում...

Բայց դա յեղավ մեր վերջին հանդիպումը:



## XIX

### Ամառվա գիշեր ցեղ անծանոթ տեղեր

Ինչպես պայծառ յերկնքից կայծակ տրաքի...

Այս խոսքը վոչ մի տեղ դուրս այնպես չի հարմարում, ինչպես այս դեպքում: Ո՛վ կարող եր ասպասել, վոր իմ ուրախ յերեկոն,— Ցեվայի հետ անցրած յերանավետ ժամը— իմ խնդագին մտածումներն ապագայի մասին պիտի վերջանան մի մռայլ կոշմարով...

Ինչպես անսպասել յերկնքից կայծակ տրաքի:

Ցեվայի ծասին յերազելուց հետո՝ քնել եմ հանպիսա, ու քնի մեջ, լսում եմ՝ «Թրխկ»... Թվում է այդ մեր դուռն են ծեծում: Բայց միայն թվում է, վորովհետև յերազի պես է: Ասպա քայլերի ձայն եմ լսում, խոսքեր տարորինակ, և այդ բոլորը դարձյալ թվում է յերազի պես, յերազի մեջ: Ցես չրկվում եմ ավելի լավ քնելու համար,— ա՛յնպես քաղցր է քունը լավ որերից հետո: Ցես ուզում եմ քնել և վոչի՛նչ, վոչի՛նչ չլսել,— ա՛յնպես քաղցր է քունը... Ու մի աս ժամ կարծես, թվում է, վոչի՛նչ չեմ լսում: Բայց

փոքր անց ղրում եմ ալդեն, վոչ թե լսում, այլ դղում եմ, թե ի՛նչպես են հրում ինձ: Զգում եմ միաժամանակ, վոր այդ մարս սովորական հպումը կամ շարժումը չէր, յերբ ուզում է զարթեցնել ինձ իր հարազատ ձեռի դղվանքով: Վոչ, զգում եմ, վոր սա մարս դրսիսոա ձեռը չէր, այլ մի կոպկա ձեռի բերտ ցնցում: Այդպես մեկ-մեկ զարթեցնում էր ինձ Սամսոնը քննությունների որերին:

Այդ կոպտությունն ինձ դուր չէր գալիս և յես ասում եմ առանց աչքերս բանալու:

— Թո՛ղ...

Բայց ուսերիս ցնցումը չարունակվում է, և յես լսում եմ մարս մեղմ ձայնը.

— Սուրե՛ն, Սուրե՛ն...

Այդ ձայնը վոչ մեկին մեղմ է. նրա մեջ դղում եմ և արտահայտվ[illegible] բան. մարս ձայնը դողում է ահարեկ: Մի վատ նախազգացում է համակում ինձ— հիշում եմ յերերուս մահվան դիշերը— և յես բոլորովին սթափվում եմ քնից, աչքերս բանում եմ անմիջապես և նստում անկողնիս մեջ: Բայց թվում է դարձյալ յերապի մեջ եմ:— Մեր սենյակում կանդնած են Թուրը կողքից կախ, սև բեղերով մի ձիգ մարդ, յերկու ստրաժնիկ և մեր դղիր Աստուրը. ստրաժնիկները հրացանով ու թրով, իսկ դղիրը՝ իր սովորական ճիպոտով: Նրանց մոտ կանդնած է հայրս՝ դիշերվա սպիտակեղենի վրա հին սիջակը քցած, կանգնել է անշարժ ու խեղճ, մի բան, վոր յերբեք չեմ տեսել, իսկ մայրս, մայրս լրեն կորցրած, բայց միաժամանակ բռնկվելու պատրաստ, դեհասներն է ուղղում:



— Հագնվիր,— ասում է ինձ Թուրը կողքից կախած, սև բեղերով ձիգ մարդը. վոր նայում է սենյակին դրած իմ թղթապանակը և արտագրության համար բերած գրություններըս:

Ու մինչ յես հագնվում եմ, առանց վիճանալու, թե ինչո՛ւ, իմ թղթապանակը նայող Թրավոր մարդը վերցնում է և իմ դասագրքերից մեկը, բանում է ու սկսում հանդիստ թերթել: Իսկ ստրաժնիկները՝ ավելի նավոր հրացաններըս ձեռներին, մերթ ինձ են նայում, մերթ Թրավորին. դղիր Աստուրն էլ ձգվել— կանգնել է վայրի պես:

Յես զարմացած նայում եմ հորս ու մորս, նրանց դեմքից գոնե իմանալու, թե այս ի՛նչ է նշանակում: Բայց նրանք ավելի յեն զարմացած, քան յես: Ուրեմն, նրանք նույնպես չղիտեն ի՛նչ է պատահել:

— Դու հո կանտորից հարկավոր թղթեր չե՞ս բերել,— ասում է հայրս կիսաձայն:

— Չե,— պատասխանում եմ յես, մտածելով, թե մի՞թե այդանք թղթերի համար են յեկել. և ի՞նչ թղթերի համար արդյոք:

— Ես ի՛նչ պատուհաս է,— չընդում է մայրս դայրույթով,— աչքով կերան մեզ, աչքները տրաքի:

— Եսառեղ մատնություն վա,— քիչ հետո ավելացնում է հայրս, մորս հանդստացնելու համար:

Այս կիսատուբ խոսքերից և այն բանից, վոր Թրավորը նայեց իմ թղթապանակը, դասագրքքը և հետո յել նայում է Գոգոլի դրքերը,— յես դղում եմ, վո՛չ մեկն դղում, այլ և հասկանում եմ, վոր թե՛ Թրավորը, թե՛ ստրաժնիկները և թե՛ մեր դղիրը յեկել են ինձ համար:

Բայց ինչո՞ւ. չես կարող ասել...

— Նո՛ւ, գնանք,— ասում է Թրավորը, կերը չես հագնված պատրաստ եմ, ու ինքը գնում է պետի դուռը՝ իմ Թղթասանակն ու Գոդոլը ձեռքն:

Այդ ամենը զարճալ թվում է կերպարի նման: Ցեղլաղ է թվում և այն, որ սարաժնիկներից մեկը բռնում է իմ թևից ու ասում. «Գնանք»: Ցերեկ է թվում և այն, որ մայրս լաց է լինում, հայրս ուզում է գալ ինձ հետ, բայց նրան չես են մղում, և մենք դուրս ենք գալիս փողոց, ու չես մտածում եմ ինչքան լավ է, որ քույրս՝ Վարդուշը և փոքրիկ Վաչոն չզարթնեցին և չտեսան այս ամենը: Լավ է նաև, որ ցեղ չկա էլ և հորեղբայրս էլ տեսնի ինձ այսպես, այս մարդկանցով շրջապատած:

Ո՛, տաղնապալի ահավոր գիշեր, որ այնքան վիշտ թերիր մեր տունը:

Ցեթե չես ապրեմ հարյուր տարի, հավանորեն չեմ մոռանա այդ գիշերը:

Ցավ այժմ ահա, կերը հեռվից-հեռու նայում եմ այդ գիշերին— տեսնում եմ քնած կերկար փողոցներ՝ լիքը մութով ու մուժով: Ցերբեմն նվազ մի լույս է ցոլում այս ու այն պատուհանից, վախեցած մի շուն կամ կատու կորում-անցնում է փողոցը սրընթաց և անհետանում բակում կամ պարտզում,— և այդ մութ, ամայի փողոցներով ահա քայլում է մի փոքրիկ տղա՝ կերկու կողմը գինված ըստ-ժնիկներ, առջևից Թրավոր մի մարդ, որի դեմն ու պարտականությունը նա չի հասկանում. իսկ կետևից քայլ է գալիս գդիրը՝ վոտները քստացնելով:



Փոքրիկ տղան անկից փողոց դուրս գալով՝ թեթև սարսուռ է զգում, ու չի իմանում այդ վախից է, թե խոնավությունից. բայց մութը և գինված սարաժնիկները ահաբեկում են նրան և նա չարունակ մտածում է, թե ո՞ւր են տանում իրեն և ինչո՞ւ: Ու քանի գնում—— նրա սարսափն այնքան մեծանում է, խորանում. աչքատում է հիշել իր մեղքերը, որ պործել է կերբևե.— մի՞թե կարող է պատահել, կեղեցական ցույցերին մասնակցելու համար, կամ Մանուչի նշանը խանգարելու, թե՞... Բայց գրանք այնքան առաջ եկին, մի քանի տարի առաջ: Ուրիշ ի՞նչ կարող է լինել ուրեմն...

Նա մտածում, մտածում է անվերջ ու չի գտնում մի հանցանք և մնում է մութ սարսուռանքների մեջ: Բայց և այնպես այդ ռոմանտիկ տղան սկսում է կերպարել անկարելի բաներ. հանկարծ ընկերները մի հրաչքով իմացած լինեն իր ձերբակալությունը և դան փայտերով գինված ու վախցնեն իրեն անտառ կամ հեռու մի տեղ:

Սակայն փողոցներ են անցնում, նրանք չկան:

Բայց քանի դեռ լսում է գդրի վոտների ձայնը— նա այնքան վախ չի զգում, լսկ կերբ գդիրը գնում է կես ճամբից (ըստ կերևույթին նրա պարտականությունն է կեղել միայն ցույց տալ մեր տունը) և նա մնում է անծանոթ սարաժնիկների հետ,— ահը զոդ է զցում նրա սիրտը, թե չլինի հանկարծ սպանեն իրեն ու քիչ է մնում լաց լինի: Բայց լաց չի լինում. հիշում է, որ արդեն մեծ է, գրասենյակի պաշտոնյա է, և անհարմար է համարում լացը:

Սվ/ֆեն վայել ե... Իսկ քիչ հետո, յերբ հագի ձայն ե լսում— նա սրտապնդում ե և քայլում համարձակ: Ինչո՞ւ...

Այդ իմ հոր հագի ձայնն ե, մի ձայն, վոր հապար ձայնի մեջ կարող եմ ջոկել: Ճես ուրիշն մենակ չեմ. հայրս գալիս ե յեւիցս և թերևս մի բան ասի: Փախցնի՞... Վոչ, նա մենակ չի կարող փախցնել ինձ, բայց վխմանա գոնե ո՛ւր են տանում ինձ և կխնդրի, վոր թողնեն:

Քայլում եմ և մտածում զանազան բաներ:— Հակարծ Ճևման տեսնի ինձ այսպես. յերևի վխտածի, վոր դողուքյուն եմ արել դրասենյակից վամ մի այնպիսի վատ բան, վորի համար ինձ տանում են պատժելու: Բայց լավ ե, վոր մուքն ե և վոչ-վոք չի կարող ինձ տեսնել:

Այս մտքերով ինձ տանում են սլվխատալի դրասենյակը, այնտեղից էլ մի ուրիշ սենյակ, ուր մեկայն մի վայրկ մահճակալ եմ տեսնում մոմի լույսով և ուրիշ վոչինչ: Սորաժնիկներից մեկը՝ մոմը ձեռին ինձ ներս և անում ու դուրը դնում. հետո լսում եմ բանալու դաժան սլտուկը վիականքի մեջ:

«Ինձ կպանսարկեցին», մտածում եմ.— ուրեմն հայրս չկարողացավ մի բան անել: Բայց գոնե ասելին ինչո՞ւ համար: Սվ/ֆեն առանց պատճառի մարդ են բանտարկում: Այդ ինձ շատ տարօրինակ ե թվում, վորովհետև տեսել եմ, վոր յերբ տանուտերը մարդ ե բանտարկում, ասում ե վ/նչո՛ւ համար: Իսկ այստեղ ինչո՞ւ չեն ասում: Իսկ իմ թղթերը, իմ դրքերն ինչո՞ւ վերցրին: Ճենթադրենք իմ դեմ բան կա, դրքո՞ւմ... Դա ի՞նչ ե նշանակում:



Անթվիլ հարցեր են ծագում մտքումս, անթվիլ հարցեր եմ տալիս ինքս ինձ, ու վոչ մի պատասխան չեմ գտնում: Ժամեր են անցնում հուսահատության ու տխրության մեջ և վեր, վերջապես, հոգնածությունից մեկնվում եմ չոր տախտին, սպասելով, թե ինչ ե լինելու: Ինձ թվում ե հայրս նույնպես սպասում ե դուրսը, վոր մի բան անի: Ու այդ դիտակցությունը, վոր հայրս սպասում ե դուրսը— արտասվնդում ե ինձ, և յես քնում եմ:

Առավոտն ինձ զարթնեցնում են և տանում մի սենյակ, ուր պատին վախված ե թաղամորի պատկերը և մի որացույց: Ճերկու հոգի նստած են մի մեծ սեղանի չուրջը. մեկն ակնոցով, վոքրիկ մորուքով հաղատ մարդ ե, վորին յես առաջին անգամն եմ տեսնում, մյուսը ածվլված, վլոր յերեսով և նույնպես անծանոթ: Իսկ կերպարդը՝ յերկար ճերմակ մորուքով մի ծերունի կանդնած ե դռան մոտ, վոր ինձ թվում ե ծանա, այնքան վատ ե հաղնված: Ճերք յես ներս եմ մտնում, նա ձեռն ուսիս դնելով ինձ մոտեցնում ե սեղանին, իսկ ակնոցով հաղատ մարդը հարցնում ե անուն-ազդանունս: Ճես ասում եմ:

— Դու ծանոթյում ես 15-րդ պծամասի դրասենյակո՞ւմ:

Ճես գլխով եմ անում.— Այո:

— Դու սիրո՞ւմ ես ձեր սեւերին:

Տարօրինակ հարց: Ճես նրանից ամեն չոտ վախենում եմ, քան սիրում: Ի՞նչ ասեմ, մտածում եմ և պատասխանում.

— Ցես մի ամիս է ինչ ծառայում եմ:

— Մի ամիս...

Մարդիկ իրար յերեսի չեն նայում:

— Իսկ կարող ես ասել, թե ձեր ծառայողներից, բանվորներից, ո՞վ չեր սիրում ձեր պետին:

— Չգիտեմ... Նա ամենքի վրա էլ բարկանում է,— ասում եմ յես և զգալով, թե ինչ անհարմար բան եմ ասում, անմիջապես ընդհատում եմ ինձ:

Բայց ակնոցով մարդն խնդուն.

— Ո՞ւմ վրա, որ՛նաև... Ո՞ւմ վրա չե բարկանում:

Ցես չվոխվում եմ և ասում.

— Շատերի:

— կարող ես, որ՛նաև, մի անուն տալ:

— Ցես անուններ չգիտեմ, յես մի ամիս է ինչ ծառայում եմ: Դեռ չեմ ծանոթացել:

— Այդ թող և իմ հարցին պատասխանեիր,— կարում է ինձ ակնոցով մարդը:—Բանվորների մեջ ճանաչո՞ւմ ես մեկին, կամ մի քանիսին, որ չեյին սիրում ձեր պետին:

Ցես հիշում եմ բանվորների վերջին դժգոհությունը, հիշում եմ կարճահասակ Թուխ բանվորին, որ քիչ մնաց հարձակվեր Կառլ Կառլիչի վրա, ու ինչ որ վատ հոտ եմ առնում այս հարցաքննությունից: Հիշում եմ և այն, թե ինչպես բոլորն ասում էին, որ Կառլ Կառլիչը խիստ, վատ մարդ է, որ ամեն մի չնչին բանի համար բանվոր ու ավագ և



արձակում պաշտոնից, որ բանվոր ու ծառայող չի սիրում... բայց ամենից ավելի յես հիշում եմ կարճահասակ Թուխ բանվորին, և ինձ թվում է նրան մի վատ բան են ուզում անել: Ցեվ քննիչը հարցն պատասխանում եմ, որ այդպիսի մարդ չեմ ճանաչում, վորովհետև յես մի ամիս է ինչ ծառայում եմ:

Քննիչը, սակայն, իմ դանդաղ պատասխանից չի բավարարվում:

— Դուք մի վախեք, վոչքրիկ, քեղ վոչինչ չի լինի: Ինձ ասել են, որ դուք լավ տղա յես, կրթված, գիտող ես կարդում, որ սուտ խոսել չգիտես. նուև, անկեղծ ասա ինչ գիտես: Ձեր պետը ո՞ւմ հետ եր խիստ և ո՞վ եր նրանից դժգոհ:

Սառում է ակնոցով մարդը և ձեռը մտերմաբար դնում ուսիս.

— Ո՞ւմ հետ եր խիստ,— հարցնում եմ յես մտածկոտ:

— Այո, այո,— ուրախանում է ակնոցով մարդը:

— Բոլորի հետ էլ խիստ է. բանվորների հետ էլ, գծի վարպետների հետ էլ, փոքրաքիների հետ էլ,— ասում եմ յես իրար յեռևից և, նկատելով որ ածիլած մարդը, ըստ յերևույթին՝ դրագիրը, դրի յե առնում իմ խոսքերը, յես անմիջապես աթոռիցում, մտածում եմ, թե ինչեր եմ ասում. չե՞ որ յեթե Կառլ Կառլիչն իմանա, ինձ խնդույն գործից կհեռացնի:

— Լավ,— ասում է ակնոցով մարդը:— Իսկ ո՞վ եր ամենից շատ նրանից դժգոհ:

— Չգիտեմ: Ցես մի ամիս է ինչ աշխատում եմ:

— Լավ: Իսկ սրանից մի քանի որ առաջ, երբ քանվորները սպմուկ սրին դրասևնյակում, դու այնտե՞ղ էիր:

— Այո,— ասում եմ ես, և նկատում, որ զրադիլը դարձյալ դրում է իմ պատասխանը:

— Կարո՞ղ ես տալ ովքեր էլին դրանք:

— Վոչ մեկին չեմ ճանաչում. ես մի ամիս է, որ աշխատում եմ:

— Լավ: Դու Սրամ անունով բանվոր ճանաչո՞ւմ ես.

— Վոչ:

— Մամիկո՞ն:

— Վոչ:

Գրադիլը նորից դրում է իմ պատասխաններդը, իսկ դռան մոտ կանգնած ճերմակ մերուքավոր ծերունին տնքում է, հառաչում: Այդ ինձ տարօրինակ է թվում— նա ինչո՞ւ էլ հոդոցներ հանում, տրնքում: Ակնոցով մարդը լռում է մի առժամ, կռնաչ աչքերով պինում է ինձ վոտից գլուխ, ապա սեղանի վրայից վերցնում է մի հին գլխարկ ու ցուցց տալիս ինձ.

— Կարո՞ղ ես ասել ո՛ւմ գլխարկն է սա:

Ճես գլուխս տարուբերում եմ.— Վոչ:

Նա դժգոհությամբ գլխով նշան է անում դռան մոտ կանգնած ծերունուն:

— Տարի՛ք:

Ինձ նորից տանում են իմ նախկին տեղը և, քիչ հետո, դռան մոտ կանգնած երիկար մորուքով ծերունին հաց ու պանիր է բերում ինձ համար: Հայրը դնում է առաջիս և ինքը հոդնած նստում թախտին՝



իմ դիմաց: Այստեղ, մոտիկից նայելով, ես նկատում եմ, որ նա Թուխուն կլոր աչքեր ունի և կլոտուցք նման կեռ քիթ, որ կարծես ուզում է կտցել սպիտակ բեխերը, որ խառնվում են կրծքին փռված լայն մերուքին:

— Կեր, տղա ջան, կեր, սոված կըլես,— ասում է նա աչքերը փակելով, կարեկցանքով և մի այնպիսի հոգատար ձայնով, որ ակնոցավոր մարդու խոստովանությունից հետո՝ մայրական քնքշություն է թվում ինձ,

Նրա ամբ մեղմությունը, սրտացավությունը դուր են գալիս ինձ, սիրտում են վինձ, և ես մի անդիմադրելի պահանջ եմ զգում նրա հետ խոսելու, ու առաջին բանը, որ ասում եմ նրան, այն է վինում, թե ինչո՞ւ ես էին բռնել:

— Գե՛ղ,— յերկարացնում է ծերունին,— քեզ կապատեն չուտով, յերեխ ասես, ոլ է սպասնել նաչալնիկին:

— Ի՞նչ նաչալնիկ,— վեր եմ թռչում ես:

— Ա՛յ, ձեր կառլ կառլիչին:

— Կառլ Կառլիչի՞ն... Սպանե՛լ... Ո՞վ է սպասնել:

— Եղ դու կիմանաս, վորդի: Դու պըտի ասես: Ու ծերունին իմ հետաքրքրությանը պիղնելով, թե սրտացավությունից դրդված՝ պատմում է վինչպես են սպանել Կառլ Կառլիչին. և նրա պատմությունն այն սպանվորությունն է թողնում դարձյալ, ինչպես անսամզ յերկնքից կայծակ տրաքի: Ճեթե այդ պատմությունն աներ ուրիչ մեկը, ես հավիկ թե հավատայի. բայց ծերունու սրտաբինն այնքա՛ն հավատ

նեըընչող և և նա ա՛յսպես և հառաչում ու ծանր հոգոցներ արձակում: Իրը թե կառ կառլիչը հենց յերեկ յերեկո, այսինքն այն ժամին, յերբ յես ուրբաթ գրուանում եյի Յեվայի հետ,— տասն վերստանոց նալին՝ կայարանի ճամբին հանդիպում և յերկու հոգու. լավում և մի քանի կրակոց, հետո ամեն ինչ լռում և. մարդիկ վազում են կրակոցի վրա— տեսնում են յերկու հոգի վազում են դեպի դաշտ, իսկ կառ կառլիչն ընկած և դեռևին: Նայում են— արյունը գնում և դլխից. չարժում են— չե, մեռած և խեղճը...

Ծերունու լայն մխրուքը դողում և. նրա ձայնի մեջ այնպիսի տխրություն կա, վոր թվում և ահա՛ պիտի արտասվի: Նա վերջացնում և կերկեր ու լիքն աչքերով նայում և ինձ:

— Բա՛, տղա ջան, սպանում են եսպես ու վախչում: Մեզ մարդը կին ունի, յերեխաներ...

Այս անգամ ծերունին թաշկինակը տանում և աչքերին:

Յես հուզվում եմ և ել չեմ կարողանում հայց ուտել: Հենց միայն սպանության փաստը ինձ սարսափեցնում և, զարմացնում. Ի՞նչ սիրտ պետք և ունենար մարդ, վոր ձեռ բարձրացներ մի այդպիսի խիստ մարդու վրա, վոր այնպիսի դիրք ուներ և այնպիսի պաշտոն, վոր ինքը վորսորդ եր և հրացան դնել դիտեր: Յես նախ զարմանում եմ սպանչ հնարի համարձակության վրա, ապա խղճում եմ նրա կրնոջն ու յերեխաներին, վոր սրանն որ իրենց սև փայլուն ու փայլատակող վառոդով գոռոնում են կայծրանի իրենց չենքից մինչև կուլաների ձորը, մինչև բաղ-



դասարի աղբյուրը... Յես, չգիտեմ ինչո՛ւ, խղճում եմ յերեխաներին, վոր հիմա պիտի սրանն ու լաց լինեն... Ու,— տարօրինակ բան,— ինձ մտահոգում և նաև այն, թե ի՞նչ պիտի անի հիմա կինը. կմնա՞ նույն տանը, կպահի՞ արդյոք վառոդն ու ձիերը, թե՞ կծախի... կամ ի՞նչ, պիտի անի մարդու վորսորդական հրացանը և վորսի շունը,— մտածում եմ յես:

Իսկ ծերունը, հոգոցներ հանելով ու անքալով, շարունակում և.

— Բոլորն ել խղճում են նրան, տղա ջան, բոլորն ել: Մեղք եր, ենպես չի՞: Բոլորն ել պայթացած են սպանողների դեմ, բոլորը: Ասում են՝ բանենք, կտոր-կտոր անենք: Ով պիտի բանվորներից են սպանել, չե՞,— ու ծերունին վշտահար նայում և ինձ:

Յես ուսերս վեր եմ քաշում.— Յեսիմ...

Այս անգամ նա թաշկինակը կլոր աչքերը հառում և յերեսս:

— Ինչո՞ւ, տղա ջան. պու իլիմանաս՝ ո՞վ եր հետն ընկած, ո՞վ եր դժգոհ, ո՞վ եր նրան հայհոյում: Դու կանտորում աշխատում ես— կիմանաս... Ի՞նչ մարդ, խեղճ յերեխաներ... Են ասում են ասում, թե նա բանվորներին չեր սիրում, ծառայողներին դուրս եր անում: Ասա և, չատ եր սիրում... Ի՞նչ մարդ... այնպես եր սիրում...

Նա նորից թաշկինակը տանում և աչքերին:

Յես դլխի յեմ ընկնում, վոր սա ել ավնոցավորի նման կարծում և, թե վորպես դրսեցիական աշխատող, յերևի, ճանաչում եմ սպանողներին և ուզում և իմանալ: Բայց իմ պատասխանները,— վոր յես,

իրրև մի ամուլա աշխատող՝ մարդ չեմ ճանաչում,— նրան չեն գոհացնում և նա չարունակում է.

— Սպանութիւնը տղա չէ, ո՛, վատ բան է. չէ՞տ: Սպանութիւն անողն հոգին էլ է դժոխք գըներում, իմացողի— չասողի հոգին էլ: Դու մեղք ես, աղա Չան. անմեղ, փոքրիկ հոգիդ մեղք ա: Յեթե բան դիտես— մի՛ թագցնի: Մի ապաքէ ծեծեն, տանջեն— նոր ասես...

Ի՞նչպես թե «ծեծեն, տանջեն»... քանի անգամ կրկնեցի, վոր վոչինչ չգիտեմ, վոչ մի բանվոր չեմ ճանաչում, վոկ նա չարունակում է... Յես քարկութիւնից դողում եմ և քիչ է մնում բերած հացը գըետնովը տամ, կամ այնպես եմ ուզում քացով տալ նրա վորին, նրա ներս ընկած փորին. բայց այն պիտակոսութիւնը, թե դրա համար կարող են պատժել— պահում եմ ինձ և կրկնում նեղացած, վրդով.

— Զգիտե՛մ, քեռի, չե՛մ իմանում: Յես ախր վո՛չ մի բան չեմ իմանում. ինձ հետ հո չե՞ն խոսել:

— Ե՛հ, լավ չես անում, տղա Չան, լա՛վ չես անում,— որորում է նա գլուխը վշտահար և նորից իր թռչունի կլոր աչքերը հառում յերեսս:— Լա՛վ չես անում: Յեթե իմացածդ ասես, քեզ խակուն կապատանեն, կերթաս նորից ձեր տուն, հորդ, մորդ մոտ. եղի քու պաշտոնը, գործը կչարունակես: Բա՛... Սաա: Մարդ սպանողին չեն խղճա: Սպանվածին կըխղճան. մեղք են նրա յերեխեքը... Հը՞: Դե... ասա՛ տեսնենք...

Յես այլևս չեմ համբերում. ինձ համար էլ անըսպասելի՝ վոտս խփում եմ հատակին.

— Զգիտե՛մ, չգիտե՛մ, չգիտե՛մ,— ձայնս բարձրացնում եմ յես ու վրդովմունքից, դայրույթից լաց լինում:

— Դե լա՛վ, լա՛վ,—վեր է կենում նա անքա-լով,— մի նեղանա, տղա Չան. մտածի, դուցե թե հիչես ո՛վ եր նրա թշնամին... Նստի, հացդ կեր ու մտածի:

Յեվ նա հանդարտ դուրս է գնում ու դուռը փակում վրաս:

Ո՞վ եր նա: Յես մինչև այսօր էլ մտածում եմ, թե ո՞վ եր այդ խորհրդավոր ծերունին:

Նրա գնալուց հետո յես վոչինչ չեմ կարողանում ուտել, բայց մտածում եմ յերկար, յերկար: Յեվ այն յեղրակացութեան եմ գալիս, վոր ինձ բռնել են վոչ թե հանցանքի համար, այլ նրա, վոր ինձանից իմանան, թե ով եր մեր պետի թշնամին և ով կլինի նրան սպանողը:

Այդ յերեկո ինձ տեղափոխում են բանտ:

Մեր բանտը... Այն որից, յերբ Վառոյին, Յերանոսի հարսին և մյուս կանանց բանտարկեցին,— մեր բանտը գարմանալի հետաքրքրում է ինձ. ուզում եյի տեսնել ի՛նչ կա նրա ներսը, ի՛նչպես են ապրում մարդիկ, ի՞նչ են ուտում, վորտե՞ղ են քնում և արդյոք լույս վառո՞ւմ են այնտեղ, տեղան ունե՞ն... Թե՞ բոլորը գետնին են քնում ու գետնին հաց ուտում:

Յեվ յես ահա այդ բանտումն եմ: Նրա փոքրիկ կամերներից մեկում: Բայց յես մենակ չեմ. ինձ հետ են և յերեք փոքր, համարյա իմ տարիքի տղաներ:

Յեթե ապրեմ նաև մեկ հարյուր տարի— չես կարող չեմ մոռանա այդ տղաներին, նրանց խնդուն դեմքերը, նրանց դարմանալի համարձակությունն ու խելքը: Չեմ մոռանա առանձնապես այն նիհար, բայց մեծ գլխով ու խոշոր աչքերով տղային, որին ընկերները, չգիտեմ ինչո՛ւ, Մանդո-Բալաս էին առած. մյուսի անունն էլ տարօրինակ էր— Շուա-տու-Գեվո, իսկ երրորդը— Աչիկն էր, կերկուսից էլ փոքր, բայց կերկուսից էլ ճարպիկ:

Նրա եմ մոռանում թե չէ, նրանք անմիջապես չրջապատում են ինձ և մի քանի րոպեյում մոբիլիզացնում: Իմանալով ինչու համար եմ բանտարկվել՝ կերկքը մեսին ձեռնին թաղ են տալիս:

— Եղ հո՛չ: Բռնել են՝ բան իմանան, չուտով կըթողնեն: Մենք էլ կարծեցինք զղուելյան համար է:

Իսկ իրենք նստած են զղուելյան համար. ու այդ մասին խոսում են այնպես զվարթ, կատակներով, ասես բանտում չեն. այդ թերևս նրանից է, որ, իրենց ասելով, բանտ սովոր են. շատ անգամ են նստել ու ազատվել, կամ, ինչպես Մանդո-Բալասն է ասում, «ծրկել». այս անգամ նրանց բռնել են մեր կայարանում՝ վագոնից ճամպրուկներ զղանալիս: Հավիկ իջնում են վագոնից՝ ամեն մեկը մի ճամպրուկ առած,— մի մարդ վրա կե հասնում: «Ո՞ւր եք տանում»: Սրանք պատասխանում են. «Տերը ավից իջեցնելու, հիմա ինքն էլ կգա»: «Տերը կես եմ», ասում է մարդը: Ու նրանց բերում են մեր բանտը:

— Բայց վոչինչ, հետևից էլ կծրկենք,— ասում



են նրանք այնպես, կարծես թաղնված են և հիմա կարող են դուրս գալ ու փախչել:

Բոլորից սրտաբացը Մանդո-Բալասն է. նա շատ նաև խոսում է և զարմանալի պատմություններ անում իրենց կյանքից: Պատմում է, որինակ, թե ինչպես քաղաքի շուկայում մեկից «ծոցրել» են մի փութ յուղ և մյուսորը ելել ծախել տիրոջ վրա՝ արդեն ուրիշ ամանով: Մի կնոջ դրպանից հանել են պորտմոնեն՝ մեջը լիքը նկարներ և յեղել... Պատմում է Մանդո-Բալասն իրար յետևից և ինքը ծիծաղում իր պատմություններից վրա: Յերբեմն ընկերներն ուղղում են նրան կամ լրացնում և նույնպես ծիծաղում իրենց թե՛ հաջողություններից և թե՛ անհաջողություններից վրա: Ինձ զարմացնում է, որ երանք այդ տարիքում այդքան բան գիտեն կյանքի մասին, այդպես ճանաչում են կյանքը. իսկ կես, որ գալուց եմ գնացել, գրքեր եմ կարդացել— ոչինչ չգիտեմ համարյա: Նրանք ուշ մի րոպե չեն անցնում. կա՛մ յեղկերություններ, այծեր են չինում հացից ու ներկում, կա՛մ կատակներ են անում և իրար զվարճացնում. իսկ ինձ չարունակ սիրտ են տալիս, որ վոչինչ չի լինի և խոստանում են, դուրս գալուց հետո, ընկերացնել ինձ, յեթե լ հարկե, ցանկանամ աշխատել իրենց հետ:

— Յես որ ազատվեմ, սովորելու պիտի գնամ,— ասում եմ կես լուրջ:

— Իմ... Սովորելը ախուր բան է,— ասում է Մանդո-Բալասը:— Ինչքան սովորես՝ մեկ է: Աբի մեր գրագիրը գաս, կուզես ոսկիկ կտանք, կուզես ազ-

բանք: Մի որ բանս կնստես, մի որ դադարիս կանես, նախ ավելի հետաքրքիր ե..

Վորքան էլ ղվարճեցնում են, պրպեցնում, այնուամենայնիվ ի վիշտն ու խոհերն ինձ չեն թողնում: Ես դեռ չմած եմ և չեմ կարողանում հավատալ կատ Մահվիճի սպանության: Այդ ամենը թվում է սուտ, հնարովի բան ինչ-որ չերտալ: Ես մտածում եմ նաև մերոնց մասին, ընկերներիս մասին, Ծեվայի մասին: Ծերեվակայում եմ, թե վորքան անհանգիստ ե հիմա մայրս, կամ ինչպես և չարախնդում հորեղբայրս. իսկ ընկերները— Սամսոնը, Սեդրակը, Աղոսոտ կապամանիլին, Աչոտ Զարգարյանը, Մելկոնն— մի թե կարող են վատ բանում կասկածել ինձ, մտածելից հանելու այն սպանության, չեթե դա, իսկապես, սուտ չի: Ծեվ ինձ թվում ե, վոր նրանցից և վոչ մեկը վատ չի մտածի իմ մասին. ընդհակառակը, նրանք հիմա, չերևի, միջոցներ են խորհում, թե ինչպես ազատեն ինձ... Իմ ընկերները՛: Բայց ինձ առանձնապես հետաքրքրում և Ծեվայի վերաբերմունքը.— արդյոք լսացած կլինի՞, վոր ես ձերբակալված եմ և բանտում, և չեթե լսանա՝ կսիրի՞ արդյոք, թե՞, սովորականի պես կնստի իրենց պատշգամում ու դիրք կկարդա կամ թևանոցով կպրպանի ընկերուհիների հետ. չես ա՛յնպես կուզեի իմանալ նրա վերաբերմունքը. կարո՞ղ և արդյոք կասկածել ինձ կամ վատ բան մտածել իմ մասին: Ծերբևին ինձ թվում ե, վոր, այո, կարող ե հանկարծ կասկածել. լավ չի լինի՞ այդ դեպքում մի նամակ գրել, վոր չես անմեղ եմ, վոր ինձ



բունել են մի ուրիշ բան լսանալու, սակայն չես՝ վոչի՞նչ չդիտեմ...

Բայց սրեն անգամ, չերբ չես տարվում մի խոհերով, տղաներն իմ մտքերն իսկույն ցրում են իրենց խաղերով ու կատակներով.— աբռւրմա չեն խաղում, գլխկոնծի չեն տալիս կամ չերեքն իրար ուսի բարձրանալով՝ պատի վերին մասերում մակագրություններ են անում ածուխով ու մատիտով. չերբեմն, պարծյալ մի մեկնց ուսի չելնելով, նայում են լուսամուտից դուրս և չվիացնում չերկու մատով. իսկ հաճախ այնպիսի աղմուկ են բարձրացնում, վոր պահակը բարկացած նկատողություն և անում անցքից.

— Եվ, պետրուչկաներ, կամա՛ց:

Տղաները, չերեքը միասին անմիջապես ուղղվում են, ձեռնին դնում քունքերին և պատով տակի չեշտական դիրքով ու չարժումներով, վոր պահակն ինքն էլ չծիծաղում է:

— Պետրուչկանե՛ր. պետրուչկանե՛ր...

Բանտ փոխադրվելուս հետևյալ որը պահակը մոտենում և մեր դռան անցքին և հայտնում, վոր հայրս ուզում է ինձ տեսնել:

Հայրս ուզում է ինձ տեսնել... Հենց միայն այդ լուրը սիրտս լցնում և անասելի ջերմությամբ. հայրս իմ աչքում բարձրանում–դառնում է ամենալավ արուն տեր մարդը, վոր չերբևիցե չեղել և աշխարհում: Ծեվ չերբ նեղ միջանցքով պահակին ինձ առաջնորդում և դեպի դուռը, չես մտածում եմ՝ հայրս ինձ վհատրուրի՞, թե՞ վոչ. նա չերբեք ինձ չի համբուրած, բայց

չգիտեմ ինչո՛ւ, այս անգամ, կես մտածում եմ հորս համբույրի մասին: Սակայն, յերբ տեսնում եմ նրան յերկաթե պատնեշի այն կողմը՝ մի վերմակ ու բարձ ձեռին, ինձ թվում է նրանից լավ հայր չկա: Ինձ տեսնելուն պես՝ նա անուշ ժպիտ է, վերմակը բարձի հետ դնում հատակին ու ձեռները տարածում, որ ինձ գրկի, բայց յերկաթները չեն թողնում. մյուս կողմից պահակի ներկայությունը չի թողնում է նրան, և նա կոչտ ձեռքը տանում է դեպի աչքերը: Զգիտեմ՝ բանտային միջավայրից մի պզտուկների առատությունից նա խիստ չի կարողանում խոսել: Իսկ յերբ խոսում է, նրա առաջին խոսքը լինում է.

— Մերդ ա գրկել,— և նա վերմակը, բարձը ու մի փոքրիկ կապոց տալիս է ինձ:— Գիխներները ծածկված քնի, չրացվես...

Յես հարցնում եմ յերեխաների մասին, մայրիկիս մասին, ընկերներիս մասին:

— Լա՛վ են, լա՛վ են. շատ բարով են անում: Դու են ասա՝ ի՞նչ են քեզ պատում: Ասում են քեզ քննել, անմեղ են հանել, հա՞...

— Եղ մասին չի կարելի,— ասում է պահակը:

Ինձ հայրս չիմացո՞մ, թե՞ վախենում է— ել չի իմանում ինչ խոսի: Բայց յես ա՛յնքան ուրախ եմ. նա մենակ կարծես դրսի աշխարհը բերել է ինձ. նրանից առնում եմ մեր տան հոտը, մեր դաշտի բուրմունքը...

Մենք խոսում ենք զարմյալ զանազան բաներից և նա հետաքրքիր սիրտ է տալիս ինձ:



— Զվախենա՛ս, Սուրեն ջան. յեղնիքը կծախեմ— քեզ կազատեմ...

Հայրս առհասարակ դժվար է արտահայտում իր հայրական զգացումները, և յես մինչև այն կարծիքի յեմ յեղել, որ նա սառն է, նման չի յերբեք ուրիշ հայրերի; որ համբուրում են իրենց յերեխաներին, բայց այսոր նրա խոսքը հուզում է ինձ մինչև սրտի խորքը,—ուրեմն նա ա՛յնքան է սիրում ինձ, որ, ինձ ազատելու համար, պատրաստ է յեղներն անգամ ծախել:

«Յեղները կծախեմ՝ քեզ կազատեմ»... Հորս այս խոսքերը յերկար, յերկար հնչում և ականջիս ու հուշս վառում սրտումս: Այդ խոսքերը սրտապնդում են ինձ, և յես ել չեմ վախենում: Իսկ ազաներ իմանալով՝ հայրս ուզում է յեղները ծախել՝ ինձ ազատելու— խորհուրդ են տալիս հիմա չազատվել:

— Ավելի լավ է, ազատի միասին ազատվենք,— ասում է Մանդո-Բալասը,— մենք քեզ դորձ կտանք. մեզ հետ ավելի շատ կաշխատես, քան դիր անելով...

Բայց չուտով այնպես է պատահում, որ ո՛չ հայրս է ստիպված լինում յեղները ծախել, ո՛չ ել ազանների ցանկությունն է կատարվում:

Հենց մյուս որը բանտի հսկիչը— Թրով, ուսապետերով մի չեչոտ մարդ, յերեսը դեմ է անում դատի անցքին և, ազդանուն տալով, պատվիրում է՝ անկողինս հավաքեմ, դուրս գամ:

— Ո՞վ գիտե ազատում են,— ասում է Մանդո-Բալասը:

— Ի՞նչ դիտես, դուցե քեզ ուրիշ բանտ են տանում,— ավելացնում է Շուռ-տուռ-Գելոն:

Ցնա աչխատում եմ հորս բերած վերմակն ու բարձը վաթաթել:

— Ենպես հավաքի, մեղանից բան չտանես,— ասում է Սչիկը:

— Ցնքեն պտի ազատեն՝ մի դնա,— ծիծաղում է Մանդո-Բալասը:

Մինչ ցես անկողնես հավաքում եմ՝ հսկիչը նորից է գալիս.

— Ի՞նչ է, տղա. ինչո՞ւ ցես այդպես դանդաղ չարժվում. չկնի՞ ցես ուզում ազատվել:

Այդ խոսքերն այնպես են հուզում ինձ, որ ուրախությունից չեմ կարողանում իսկապես անկողնես հավաքել, այլևնքն՝ բարձս վաթաթել վերմակի մեջ ու կապել, մինչև Մանդո-Բալասն ու Սչիկը չեն ոգնում ինձ: Իսկ ցերը պատրաստվում եմ դուրս գալ, ներանք «ախտոտում» են, ձեռս սեղմում, իսկ Մանդո-Բալասը հացից չխնած իր յեղբերուններից մեկը տալիս է ինձ «հիշատակ», և ցես վորոշում եմ ուսնել այն քրոջս՝ Վարդուհին. ու Վաչոյին նվեր: Այդ կուրախանան հա՛... Դուռը բանալիս՝ տղաները նորից ցանկություն են հայտնում, որ ընկերանամ իրենց, ցերբ դուրս վրդան:

— Ջմուռանա՛ս, կսպասես մեզ...

— Հլա՛-հլա՛,—ասում է հսկիչը,— դուք ետեղից չենք ազատվի, դուր մի պայմանավորվեք...

Վորքան էլ հսկիչը չնորհավորում է իմ ազատությունը, բայց և այնպես տակավին մի վտանգ կա ներսս, թե դուցե չազատեն, դուցե հսկիչն ինքը չդիմի:

Բայց սխալվում եմ,— ահա՛ բանտի դրասենյակը, ահա՛ վերադարձնում են Գոդոլի դրքերը, իմ թղթաթապանակը, ահա՛ իմ ծանոթ վողոցը, ահա՛ ազատ չրջող ծանոթ մարդիկ...

Վողջո՛ւյն քեզ, արև...

## XX

### ԴԵՊԻ ԱՆՀԱՅՏ ՀԵՌՈՒՆ

Իմ վերադարձն, ինձանից, մեծ անակնկալ եղավ մեզանից համար— բանտարկությանս պես անսպասելի ու հանկարծ:

Կեսօր է ահա. վերմակը մի թևիս տակ, յեղջերուն մյուս ձեռիս բռնած, ամաչկոտ, բայց ներքուստ ուրախ, վերադառնում եմ տուն և հրճվում այն մտքից, թե վարքան կղարմանան մեզանք և ի՛նչ ուրախությամբ իվաղեն ինձ ընդառաջ.— հայրս, մայրս, քույրս՝ Վարդուշը և փոքրիկ Վաչոն: Ցեղ չես յեղջերուն վնվիրեմ Վարդուշին ու կհամբուրեմ Վաչոյին:

Բայց դեռ մեր տան անկյունը չհասած՝ չես աղմուկ եմ լսում, և այդ աղմուկի մեջ պարզ ջոկում եմ հորս, հորեղբորս, պապիս, մորս ու տատիս ձայները: Տատս ու մայրս խոսում են փարակ ձայներով և, ինչպես միշտ, նրանց ձայնը կորչում է տղամարդկանց ձայների մեջ, որ հնչում են բարձր ու բորբոքված.



— Բա ի՞նչ պտի անեմ, պտի հնձեմ,— ասում է հայրս:

— Իրավունք չունե՛ս,— կտրում է պապս,— իրավունք չունես:

— Հնձե՛մ... Դա քու տեղը չի, որ հնձես,— լսվում է հորեղբորս հեգնանքը:— Հերու հնձեցիր— հերիվ՛ք է:

— Պռի հնձեմ, հենց քու ջիգրու պըտի հնձեմ,— կրկնում է հայրս:

Ցես կանգ եմ առնում վերմակը թևիս տակ, յեղջերուն ձեռիս:

Իմ պայծառ ուրախությունը պղտորվում է:

Նորից բաժանվի՞ կռիվ է: Ցեվ, ձայներից ու խոսելու յեղանակից դատելով, յերևում է, որ կռիվն այն չըվանումն է արդեն, յերբ սովորաբար անցնում են հայհոյանքի: Բայց իմ յերևումը հանկարծ,— պարմանալի բան,— մոգական ազդեցություն է ունենում. լեզվակռիվը դադարում է անմիջապես, ինչպես դանակով կտրես: Թերևս դրա պատճառը մայրս է լինում, որ վերջումնքը ուրախ մի ճիչի փոխելով՝ ձեռները պարզած նետվում է դեպի ինձ: Հայրս նույնպես առաջ է գալիս: Մայրս համբուրում է ինձ և ուրախությունից լաց լինում: Իսկ հայրս, իր բռնկոտը հագիվ զսպելով, ասում է մյուսին. «Այ լա՛վ արիր յեկար»... Տատս նույնպես գրկում է ինձ ու համբուրում: Քույրս ու յեղբայրս պատում են չուրջս և յեղջերուն, կարմիր ներկած յեղջերուն համարյա խըլում ձեռիցս: Պապս տերողորմյան քաշելով մնում է իր տեղը, իսկ հորեղբայրս յերեսը չրջում է ու մոնում

ներս, և յես պատշգամբի առջևից անցնելիս՝ լսում եմ, թե ինչպես նա ասում է կնոջը— Սանամ-դեղուն.

— կատրաժնին յեկավ...

Այդ խոսքը վշտում է իմ ուրախության մնացորդը, և այնուհետև վորքան էլ աշխատում եմ նշանակությունն չտալ,— չեմ կարողանում, վորքա՛ն էլ մայրս աշխատում է հյուրասիրել ինձ ճվաճեղով և ուրիշ ուտելիքներով, վորքան էլ քույրս՝ Վարդուշը և վորբիկ Վաչոն հրճվալից ուրախությամբ նայում են յեղջերուլին կամ խնդուն դեմքերով դիտում ինձ, այնուամենայնիվ հորեղբոր խոսքը չի հեռանում մտքից: «Կատրաժնին յեկավ»... Զգում եմ այդ խոսքի բովանդակ ծանրությունը, նախատինքը և վարկաբեկող իմաստը: Գիտեմ, վոր «կատրաժնի» ասում են մարդասպանին, գողին և ամեն տեսակ ավազակի, վորոնց քշում են հեռու յերկիր— բանտ կամ աքսոր: Ուրեմն նա ի՞նչ է համարում ինձ— սպանության մասնակիցց, թե՞ ա՛յնքան վատ տղա, վոր արժանի յեմ բանտի, աքսորի...

Այդ խոսքի տպավորությունն այնպես է ճնշում ինձ, վոր քրոջս ու յեղբորս հրճվանքին ժպտալով, մի հասարակ ժպիտով անգամ չեմ կարողանում պատասխանել և մորս հարցին, թե ինչո՛ւ տխուր եմ, պատճառաբանում եմ հոգնածությամբ. դիչերը չեմ քնել:

«Կատրաժնին»... Ուրեմն այսուհետև ինձ այդպես պիտի անվանեն, մտածում եմ յես և այդ բառը չիևացած չամփուրի պես դառնում է ուղեղիս մեջ, դառնում է անվերջ:



Սրա վրա ավելանում է չուտով և այն, վոր մերոնք սկսում են պատմել, թե ինչո՛ւ եկին վռնդում,— պապա չի թողնում, վոր հայրս սարի խոտատեղը հնձի, իսկ հայրս պնդում է, վոր պետք է հնձի:

— Նա վրտավունք չունի ինձ խոտի տեղից դրիելու,— ասում է հայրս, խոսքն ավելի ուղղելով քացախ պապիս, քան ինձ:— Կամ իմ բաժինը պըտի տա, կամ կերթամ եղ կհնձեմ...

Սովորական պատմություն, վոր ուրիչ անգամ վրդովում եր ինձ, դայրացնում, բայց այսոր բոլորովին չի հուզում: Այլ, ընդհակառակը, տխրեցնում է միայն. և յես նեղանում եմ, վոր ինձանով չեն ըղբաղվում, այլ խոսում են խոտի մասին, հումի մասին: Մայրս չուտով հասկանում է տրամադրությունս և խոսքը փոխում է.

— Զթողին մի կարգին ծառայի՛ս,— ասում է նա,— աչքով կերա՛ն... Մի տեղ ըլի պնա՛ս-հանանա՛ս սրանց աչքից...

Նախաճաշելուց և մերոնց հետ խոսելուց հետո՝ յես դուրս եմ գալիս շրջելու և ընկերներիս հանդիպելու:

Վորքան բանտում կարոտում եյի մերոնց և բոլորին, բայց հիմա, անհայտ ե ինչու, յես տխրում եմ, յես քայլում եմ տմպչելով. թվում է՝ մարդիկ նայում են ինձ ուսարոտով հայացքով, թվում է՝ չեն ասում, բայց բոլորի մտքում էլ պտտվում է «կատրաժնի» բառը, և դժում եմ, վոր ուրիչ կերպ էլ չեն կարող նայել, վորովհետև մեր դյուղաքաղաքի բա-

մաթիվ նախապաշարմունքներից մեկն էլ այն է, որ յերբ մեկը բանտարկվում է— նա դառնում է կատակեղծ, արատավոր...

Ցեվ դա չուտով յերևում է...

Յես գնում եմ ընկերներիս հանդիպելու: Այնպես եմ ուզում տեսնել նրանց,— Սամսոնին, Սեդրակին, Աշոտին, Ապոստոլ Կարամանիկուն, Մելիտեյին... Ջեմ ուզում դնալ նրանց տները, այլ այն վոդոցը, դլխավոր վոդոցը, ուր հաճախ լինում են նրանք:

Ցեվ հավիվ մի հետո քայլ եմ անում— հանդիպում եմ Ցեվային: Բաճրակրունկ կոշիկներ հագած դալիս է վերևից, լսո յերևույթին լրենց տնից:

Վորքան էլ հազուստը փոխած— դեռ հեռվից ճանաչում եմ նրան. նա քայլում է զարձյալ մեծ աղլկա նազանքներով, կոտրտելով. ավելի չուտ ուզում է նմանվել մեծ աղլկա:

Յես պատրաստվում եմ դլխարկ վերցնել և ուրախ բարևել նրան, ինչպես անում են բարեկիրթ մարդիկ որևորդ հանդիպելիս. բայց մտածում եմ, վոր այս դեպքում բարևը հատարակ բան է. բանտարկությունից հետո, այսքան որ իրար չտեսնելուց հետո՝ միայն բարևե՞լ. նուխնիկ ամոթ է. այդպես կարող են անել անծանոթները, իսկ մե՞նք...

Ու յես վորոշում եմ և՛ բարևել և՛... Ու դեռ հեռվից ժպտում եմ նրան: Նա տեսնում է ինձ, բայց ինչո՞ւ հանկարծ այն կողմն է նայում: Ի՞նչ կա այնտեղ...

Մոտենալով՝ յես դլխարկս վերցնում եմ, բայց



նա զարձյալ տես չի տեսնում ինձ. նայում է դեպի աջ. արդյոք նրա ուշադրությունն զբաղմո՞ծ է այնտեղ կռվող ազաներով, թե՞ մխքը տարված է ուրիշ բանով:

— Բարև՛, Ցեվա,— ասում եմ յես:

— վա՛յ, Մանասյա՛ն,— ասում է ցրված, զարմացած և ելի չուրջն է նայում: կարծես խուսափում, թե ամաչում է:

Իսկ յես չարունակում եմ ուրախ.

— Ցես, դիտես, Ցեվա, բանից էսոր պուրս յկա... Անմեղ եյի,— ազատեցնի: Ես յերկու որը միչա հիշում եյի քեզ. ուզում եյի նամակ դրեմ...

— Նամա՞կ,— զարմանում է նա:— Ի՛նչ կարիք կար, Մանասյան...

Նրա ճերմակ ու բարակ ձեռները, նրա վախկոտ ձայնը, վորով ասում է «Մանասյան», հիշեցնում են դպրոցը, բայց նա, թվում է, խուսափում է. աչքերը կամ խոնարհում է կամ արագ զարձնում այս ու այն կողմ: Ի՞նչ է պատահել:

— Դու կարծես անհանդիստ ես, Ցեվա:

— Վա՛չ, ընդհակառակը:

— Բա ինչո՞ւ այդպես ես:

— Ի՞նչպես,— ասում է նա զարձյալ ցրված, ու կարմրում է:

— Ցես յերազում քեզ տեսա կարմիր չորեր հագած,— ասում եմ յես:— Դու ասում եյիր «Մանասյան...»

Ցեվան ժպտում է դուռալ ու վչրլված ժպիտով և

ելի չուրջն է նայում, կարծես անհամբեր սպասում է մեկին կամ ուշանում է մի տեղից:

Պարզ երևում է, որ իմ պատմությունը նրան չի ուրախացնում. և այս անգամ արդեն զղում եմ, որ նա պարզապես խուսափում է ինձնից, թեև իրրև բանասիրվածվից և անհարմար է համարում հանդիպել ինձ փողոցում, մոտենալով, տրևել, թե ինչ կասեն մարդիկ: Ջի՛ որ մեզանում բանասիրվածը համարվում է կատվածելի, արատավոր:

— Դու տեղ ես չտապո՞մ, Ցեվա:

Ցեվան կարմրում է և կոչիկի ծայրով գետինը քանդում:

—Այո...

Նա այդ ասում է դժվարությամբ, առանց ինձ նայելու:

— Դե գնա,— ասում եմ յես կոպտած արտով և չարունակում ճամպաս: Ցեվ ինձ թվում է իմ այդ ախուր ու դժգոհ տոնից Ցեվան կսմթափվի ու ձայն կտա «Մանասյան», ապա կմոտենա մեզմ ու սիրող խոսքերով, ժպտալով... Բայց նա գնում է, գնում առանց յետ նայելու:

Փողոց դուրս գալիս՝ ինձ թվում եր, թե ահա բոլորը կզարմանան ինձ տպած տեսնելով ու կհետաքրքրվեն, թե ինչերը են հարցրել ինձ, բանաոր ի՞նչպես եր, ի՞նչպես եմ ապրել այնտեղ, վախեցե՞լ եմ, թե՞ վոչ: Ցեվ ամենից ավելի իմ ընկերները: Բայց հանկարծ Ցեվան այդպես անտարբեր...

Ցես ախուր չարունակում եմ ճամբաս և ինձ թվում է, թե բոլոր նայվածքները



նույնն են, ինչ վոր Ցեվայինը: Ցեվայի վերաբերմունքից հետո ինձ հասկանալի կե արդեն մարդկանց անտարբերությունը, թե ինչո՛ւ նրանք չեն զարմանում ինձ տեսնելիս: Ցեթե Ցեվան չզարմացավ, չը հետաքրքրվեց,— մյուսներն, իհարկե...

Այս մտքերով դնում եմ, ավելի շուտ քայլերս ինձ տանում են դեպի կայարան, որը մեկը թեև չունում և հանկարծ:

— Սուրե՞ն... Եղ ի՞նչ ես դուրս յեկել...

Առջևս կանգնած են յերեք հոգի՝ մեր դպրոցի բանվորներից, վոր, ինչպես յերևում է, նոր են վերադառնում աշխատանքից՝ պլիչկիներն ուսներին գցած: Ցես նրանց ճանաչում եմ միայն դեմքով, բայց յերբեք ծանոթ չեն ինձ: Նրանք չրջապատում են ինձ և, մեկը-մյուսին ընդհատելով, հարցեր են տալիս, հարցեր, վորոնց պատասխանը չեմ կարողանում հասցնել: Ամենից առաջ հարցնում են— ի՞նչպես են բոլոր ընկերները— Սրամը, Մամիկոնը: Ցես այդ Սրամին ու Մամիկոնին նույնպես չեմ ճանաչում:

— Դու նրանց չե՞ս տեսել...

Ցես բացատրում եմ նրանց, վոր յես յերեք վոքրիկ ազանների հետ, բայց նրանց չեմ տեսել:

— Ախտոս ազերք,— ասում է բանվորներից մեկը, վորի ծնոտն այրված է, և այրված տեղը վայրում է այնպես, կարծես հղկված է ու յուղած:— Ախտոս, մի չան համար պըտի կորչեն...

Մյուսները նույնպես ախտոսում են, և նրանց խոսքերից, չարժումներից ու տխուր նայվածքներից

պլում եմ, որ սրանք ավելի քան պետեն, քան ես։ Զգում եմ միաժամանակ, որ նրանց մեջ մի խոր ատելություն կա դեպի կառլ Կառլիչը, և սրանք մի առանձին համակրանքով են վերաբերում այդ ազնուության, ու այդ ինձ զարմացնում է։

— Հոդիններս հանեց... դնաց, էլի չպրծանք,— ասում է ծնոտն այրված բանվորը։

Մյուսները դլուխները որորում են անխոս։

Այսոր էլ, տարիները անց, հիշում եմ նրանց հոգնած, տխուր ու զայրացած դեմքերը և հիշում եմ, որ այդ դեմքերն ինձ դուր չեկին դալիս,— ա՛յնպես չար էին նրանք։ Նրանց վիշար կես չեզի հասկանում այն ժամանակ։

Փողոցի կարճ դրույցից հետո, նրանք ինձ հրավիրում են մի անծանոթ տուն. վորքան էլ կես այդ չեմ ուզում, բայց դնում եմ ակամա, նրանք ցանկանում են դարձյալ ինչ-վոր բաներ իմանալ, և կես չդիտեմ ի՛նչ կարող եմ ասել նրանց։ Սակայն նրանք շատ հետաքրքիր են։ Ուզում են, որ պատմեմ, թե ի՛նչպես են բռնել ինձ և ի՛նչ են հարցրել։ Յեվ կես զարմանում եմ, թե ինչո՛ւ սրանք ավելի կին հետաքրքրվում իմ բանտարկության մասին, քան ծնոտներս հետաքրքրվեցին։

Յես հիշում եմ պայծառորեն և այն ցածրիկ տունը, ուր մտանք։ Հիշում եմ և այն կնոջը, որ մեզ տեսնելով, ավելը կտնկեց թախտի տակ և սեղանը ծածկեց սփոռոցով։ Դա, ինչպես յերևաց, բանվորներից մեկի տունն եր։

— Դե պատմիր, Սուրեն, պատմիր տեսնենք,— ասում են նրանք սեղանի չուրջը նստելով։

Ու կես պատմում եմ, ինչ պետեմ.— թե ինչե՛ր հարցրին ինձ, ո՛վ եր հարցաքննողը, ո՛վքեր եկին ներկա, և ա՛յն, որ կես Արամին ու Մամիկոնին չեմ տեսել և չեմ ճանաչում առհասարակ։

Բանվորները գլուխնին որորում են նորից։

— Ախտա՛ս, ազերք, ախտա՛ս...

— Մարդ կարողանա դրանց վախցնել,— ասում է ծնոտն այրվածը, սրտի խորքից, մի բուռն, բայց անզոր ցանկությամբ։

— Եդ չի ըլի, եդ դժվար ա,— ծանրախոհ տատրտւքերում է գլուխը միրուքավորը։

— Ինչո՞ւ չի ըլի,— համարյա հարճակվում է ծնոտն այրվածը բոցկլտոդ աչքերով։— Ինչո՞ւ ա դժար։

— Նրա համար, որ զարտուղները չատացրել են։

— Ինչ նշանակություն ունի,— նորից վրա յե պրծնում ծնոտն այրվածը։— Ենքան մարդով են վախցնում, կարծում ես զարտուղ չի ըլում։

— Կարելի ա՝ կաշառում են,— միջամտում է յերրորդ բանվորը, հարցական ու փոխե-փոխ նայելով յերկուսին էլ։

Միրուքավորը համաձայնում է. ի հարկե, այդ էլ կա։

— Բայց ո՞ւր ա փող...

Նրանք խոսում են մտահոգ ու փոքր ինչ մութ, հիշելով ինձ անծանոթ անուններ ու դեպքեր, և նրանց

խոսակցությունից յես իմանում եմ, որ ինձ հետ միասին նույն դիշերը բանվել են տասներկու հոգի— յերկաթուղու բանվորներ ու ծառայողներ: Մի յերկուսին թողել են, իսկ մյուսները դեռ բանված են: Բայց սրանք խոսում են միայն Սրամի ու Մամիկոնի մասին և ասոսում են միայն նրանց: Ցետ յես մտածում եմ, որ այդ Սրամն ու Մամիկոնը, հավանորեն, գրանց ընկերներն են, դուցե և բարեկամը...

Բայց միևնույն ժամանակ յես նկատում եմ, որ նրանք բնավ չեն ասոսում կառ կառլիչին. ընդհակառակը՝ շատ ուրախ են, որ վրենք ազատվել են նրանից: Հիշում են, թե ինչպես միևնույն աշխատանքը դիտմամբ անել եր տալիս մի քանի անգամ, դիտմամբ, որ տանջի մարդկանց, կամ «պալուշկանների» եր ուշացնում կա՛մ իմբերով հետացնում բանվորներին:

Նայելով խոսողներին՝ յես հիշում եմ, որ դրանց նույնպես տեսել եմ գրասենյակում, բայց թե որտեղ են աշխատում և ինչ են անում— չգիտեմ: Հիշում եմ և այն որը, յերբ կարճ բանվորը ազատողին նայեց կառ կառլիչին և կառ կառլիչը դադրացած կարզադրեց, որ հետացնեն բանվորներին:

Խոսակցությամբ տարված՝ նրանք համարյա մոռացել են, որ յես մնացել եմ նստած, ու ինձ մտաբերում են այն ժամանակ, յերբ տանտիրուհին մտնում և սիրալիր և սեղանին է դնում մի քանի թարմ վարունգ:

— կե՛ր, մատաղ, մեր բաղչից ա...

Յես չեմ հրաժարվում. ախորժակով ուտում եմ թարմ վարունգները և նրանք ինձ ճանապարհ են դնում, խնդրելով մարդու բան չասել, թե ի՛նչ են խոսել ինձ հետ:

Յես, ի հարկե, խոստանում եմ, մտածելով, որ նրանք չուտով մի բան կանեն, մի զորավոր միջոցի կդիմեն իրենց ընկերներին ազատելու:

Սակայն...

Հետո, շատ հետո իմացա, որ նրանք չկարողացան ազատել իրենց ընկերներին. և այդ ինձ անծանոթ Սրամն ու Մամիկոնը դատապարտվեցին մահվան ու... կախվեցին:

Յես մինչև այսոր էլ չգիտեմ— կառ կառլիչին ազատողը նրանք եյին թե ոչ, բայց գիտեմ, յերբ տերտերը մահապատժից առաջ գնում և նրանց խոստովանելու,— նրանք հայհոյում են տերտերին ու քշում:

Այս պատմել եր տերտերը նրանց ծնողներին:

Այժմ յես մոտենում եմ իմ պատմության վերջին մասին և սիրտս նորից լցվում է ախորժությամբ:

Իրիկնադեմ է. յես հոգնած քայլերով վերադառնում եմ բանվորների մոտից ու դեռ մեր տան անկյունը չհասած— նորից բարձր, աղմկալի խոսակցություն եմ լսում: Խոսում են դարձյալ մեր բակում, և յես նորից ջոկում եմ հորս, հորեղբորս և պապիս ձայները:

— Յես իմ ասածը վանեմ,— ասոսում է հայրը:

— Ջենդ կտրի՛,— ասոսում է պապս:

Խոտաստեղի վեճը նորոգվել է կրկին:

Չգիտեմ ինչու— սիրտս տխրում է ավելի ու չեմ ուզում էլ գնալ մեր տուն: Առաջները այդպիսի վեճեր լսելիս— հուզվում էի, բարկանում, բայց այժմ չեմ տխրում. իսկ այժմ մի զարմանալի թախիծ է գալիս վրաս և այնքա՜ն ձանձրալի, չնչին են թվում հողի, դոմի ու խոտի վեճերը, կռիվները, որ կըրկրկնվում են միշտ միևնույն անփոփոխ խոսքերով, միշտ միևնույն սպառնալիքով ու հայհոյանքով:

Բանտում կես մոռացել էի այդ բոլորը, բայց այժմ նորից ու նորից լսելով այդ հին վեճերը, և այն էլ միևնույն որը կերկու անգամ— սիրտս դառնանում է այնպես... Ցավոն անհարմար է համարում խոսել հետս, հորեղբայրս «կատրեժնի» է ասում և դրանով զատում ինձ հանցագործ ու զոհ մարդկանց չարքը, բռնված՝ մարդկանց ով գիտի ինչ է սպասվում.—աշխարհում՝ այսպիսի ծանր դործեր են լինում, իսկ նրանք խոսում են զարմյալ հողի ու խոտի մասին, ու վոչ-վոք չի հետաքրքրվում կնճռանով: Ո՛, կինե՛ր մի այնպիսի տեղ, այնպիսի մի անկյուն, վոր էլ չլսեի այդ բոլորը՝ այդ վեճերը, այդ աղմուկները...

Ու ինձ հանկարծ պաշարում է հեռանալու միտքը:

Ցես այլևս չեմ ուզում գնալ գրասենյակ: Ավելի լավ է հեռանալ այստեղից, հեռանա՛լ... Այ, ընկերներս չուտով գնալու կենք, ինչո՞ւ կես էլ չգնամ... նրանք գնում են սովորելու, ինչո՞ւ կես էլ չսովորեմ: Հիշում եմ մորս խոսքերը, վոր ասում նախաճաշին. «մի տեղ ըլի գնաս— հեռանաս սրանց աչքից»:



Ինձ թվաց՝ նա ակնարկում է հարևաններին, բայց նա միտքը պարզեց իսկույն. «ով գիտի, մեկ էլ տեսար նորից կեկան բռնեցին»: Այդ էլ կարող է պատահել, մտածում եմ կես:— Ի՛նչ խմանաս հանկարծ նորից կեկան ու նորից տարան բանտ:

Այս մտքերով դուրս եմ գալիս դաշտ և, դաշտը կրկնապատկում է տխրությունս:— Հատկավորված արտերն ալ քավորվում են հանդարտ,— տեղ-տեղ արդեն ղնդում է անտես գերանդին, բանջարանոցները ջրում են բահերն ուսած մարդիկ, քաղհանավոր աղջկինները կերդում են ծանոթ կերդեր, իսկ անտառը լուռ, ասես ականջները կախ լսում է նրանց:

Սիրտս ավելի կե տխրում: Այդ տխրությունը աղջկինների կե՞րդն է քերում ինձ, անտես գնդացող գերանդինե՞րն արդյոք, թե՞ ամբողջ դաշտն ու անտառը միասին— չգիտեմ, բայց այժմ կես ինձ ա՛յնպես խորթ, ա՛յնպես ոտար եմ զգում այդ բոլորի մեջ: Իսկ կերբեմն ինձ թվում է գերանդիների գնդոցի մեջ զգում եմ հորեղբորս խոսքը, հիշում եմ Ցեվայի վերաբերմունքը և մեղոնց կռվիը խոտատեղի համար: Ու հեռանալու միտքը նորից, ավելի ուժով պաշարում է ինձ, և կես մտածում եմ տարօրինակ, համարձակ բաներ. նորից կերպանքներ ու ցնորքներ...

Այո, կերթամ հեռու մի տեղ, ցերեկները կաշխատեմ, կծառայեմ, իսկ գիշերը դաս կսովորեմ ու կըկարդամ անվերջ... կսովորեմ ու կավարտեմ, հետո վող, շատ վող կաշխատեմ ու մի որ հանկարծ, բոլորի համար անսպասելի, նվերներ ու վող կուղարկեմ հորս, մորս, քրոջս ու յեղբորս:

Փողը կուղարկեմ, լհարկե, հարց, վոր նա այլևս պահլից հող, դոմ, մարագ ու դանագան բաներ չուզի. հրաժարվի հոր ժառանգությունից և վերջ տա վնճերին, այդ ախտոր վնճերին... Կուղարկեմ չատ, չատ փող և չատ նվերներ... Ու մերոնք կզարմանան, լ հարկե, և կպատմեն հարևաններին: Հարևանները նույնպես կզարմանան, վոր յես այսքան «քաչ» եմ ու աչխատասեր... Ցեվ յեթե մի որ վերադառնամ— բոլորը, ո՛, բոլորը— հարևան, բարևիմ վորքա՛ն լավ կընդունեն ինձ: Բոլորը մատնացույց կանեն ինձ ու կասեն լրենց վոքրիկներին.

— Այ, տեսնում ևք, տասնուհինգ տարեկան դռնաց քաղաք, ինքն իր աչխատանքով ուսում առավ, մարդ դառավ, հիմա յեկել ե ծնողներին տես...

Գուցե ասեն և չատ ուրիչ բաներ...

Վերադառնալով՝ յես սիրով կվողջունեմ բոլորին, սիրով կսեղմեմ բոլորի ձեռքը, բայց հորեղբորս ձեռը—յերբե՛ք, յերբե՛ք... Ներան տեսնելիս՝ յես յերեսս կշրջեմ ու կանցնեմ: Ներան չեմ արժանացնի իմ հայացքին անգամ: Իսկ յեթե նա ինքը մոտենա ու ձեռ մեկնի ինձ... Մի լևնուշկ ե, յես ներան չեմ բարևի: Ու այդպես կառնեմ իմ վրեժը այն քոլոր վերաբերանքների համար, վոր պատճառել ե նա ինձ... Իսկ Ցեվան... Ցեվան... Ցեթե նա հանդիպի և ժպտալով ձեռ մեկնի ինձ... Ի՞նչ կանեմ... Ցես, լ հարկե, կբարևեմ ներան ու կժպտամ սիրով ու կհարցնեմ՝ ի՞նչպես ե ապրում արդյոք...

Ցեվ, չգիտեմ ինչու, այդքան տարիներ անցնելուց հետո, յես ներան պատկերացնում եմ դարձյալ նույն



Ցեվան՝ պղրոցական հագուստով, դոշնոցով, իմ այդ որվա կապույտ զգեստով:

Իմ վերաբերմունքից նա կամաչի, լ հարկե, վոր չուզեց խոսել բանից դուրս յկածի հետ. կամաչի և կախտոտա, վոր վատ վարվեց հետս, և, թերևս, ներողություն խնդրի:

«Վոչի՛նչ, վոչի՛նչ»,— կասեմ յես, ու ամենայն մեծահոգությամբ կներեմ նրան:

Կլինեմ առհասարակ վեհանձն ու ներող: Կներեմ բոլորին, բոլորին — այն տղաներին, վոր յերբևիցե ծաղրել են ինձ, դպրոցական ընկերներս, վոր վատ են յեղել ու չարաչար, հարևաններին, վոր յերբևե վատ աչքով են նայել ինձ, կներեմ անգամ պապիս, վոր այնքան դառնություններ և պատճառել հորս ու մորս... Բայց հորեղբորս— յերբե՛ք, յերբե՛ք...

Այնուհետև կարճատով կգամ այս դաչտը, կերթամ անտառ, կշրջեմ ծանոթ վայրերը բոլոր— կույսերի ձորը, Լորու Թալան և Բաղդասարի աղբյուրը, վորի ջուրը րոպեում է ժայռե կրծքից՝ ձիու նման վրնջալով:

Այս հետանկարը հուզում է ինձ, դրավում ու դյուրթում, և յես հափշտակված ծրագիրներ եմ կազմում:

— Այո, այդպես էլ կանեմ,— վճռում եմ յես և քայլերս ուղղում դեպի տուն:

Այստեղ սիրտս հուզում է մի անցած բերկրանք:

Այս անգամ տանն ինձ սպասում եր ուրախությունը,— սպասում եյին ընկերներս— Սամսոնը,

Սեդրակը, Աչոտ Զարդարյանը, Մելիտեն և Ասլոտոլ Կարամանեփին: Իմանալով ազատվել եմ բանտից— յեկել եյին ինձ տես... Այժմ յես անկարող եմ նկարագրել մեր հանդիպման վճիտ ուրախությունը, արցունքալեռ համբույրները, դիմախառնումները և իմ յերանալեռ հրճվանքն ու ոխիսանքը, վոր արտահայտվում եյին միայն արցունքներով. արցունքները, վոր անարգել թափվում եյին իմ աչքերից և զովացնում լցված սիրտս:

— Բա մենք մտածում եյին քեզ վախցնել,— ասում և Սեդրակը, առաջինը սթափվելով ազամարդուն անվայել սանտիմենտալ տեսարանից:

Ու սկսվում և հարց ու փորձը:

— Քանի ժամ և տևոտում ենք, վո՞րտեղ եյիր,— հետաքրքրվում և Սամսոնը:— Ձեր դրասենյակո՞մ:

Յես դլուխս որորում եմ.

— Ձե, յես ել դրասենյակ չեմ դնալու:

— Ինչո՞ւ: Ձե՞ վոր անմեղ ես...

— Ել չեմ ուզում այստեղ մնալ:

— Ինչո՞ւ:

— Գնալու յեմ Թիֆլիս:

Ընկերներս հավանություն են տալիս իմ մտադրությանը: Բայց նրանց հարցին, թե ինչ պիտի անեմ այնտեղ— չեմ կարողանում պատասխանել: Ինքս ել չդիտեմ ի՛նչ պիտի անեմ:

— Ե՛, դնա, մենք ել չուտով կդանք,— ասում և Զարդարյան Աչոտն իր ու Սամսոնի կողմից:— Ասլոտոլն ել դնում և Հունաստան: Մնում են Մելիտեն ու Սեդրակը:



— Մելիտեն ել հոր խանութը կերթա, կմնամ յես մենակ,— ավելացնում և Սեդրակը:— Յես ել Մանուչին կվերցնեմ, կերթամ մի տեղ...

Ու մի քանի որ հետո դնացքն ինձ տանում և Թիֆլիս: Վագոնի լուսամուտից նայում եմ յես մնացող ընկերներիս, մեր դյուղաքաղաքին, նրա ծաղկած դաշտին, անտառներին, խշշան գետն և մաքով մնում թարով ասում բոլորի՛ն, բոլորի՛ն, դրանց հետ նաև յերկաթուղու 15-դ գծամասի դրասենյակին, սպիտակ կոճակներով բաճկոնին, վոր խլիսկ հագնելի և կարկղով դլխարկին...

Մնաք բարով և դուք մանկության անհոդ որեր և պատանեկության ուրախ ժամեր, յես դնում եմ դեպի անծանոթ մի կյանք, վոր թվում և ինձ մթին, սահարկու մի անտառ, ուր չդիտեմ կմոլորվե՞մ արդյոք, թե՞ կդտնեմ մի լուսավոր արահետ...

Յեվ դնացքը սուրում ու սլանում և արագ...

վերջ առաջին գրքի



# ՑԱՆԿ


Նախերգանք . . . . . 5

I Մեր տունը . . . . . 7
II Բաժանք . . . . . 19
III Վրեժխնդրություն . . . . . 33
IV Առաջին սեր . . . . . 58
V Առաջին վիշտ . . . . . 82
VI Զաքար վարժապետի դպրոցը . . . . . 92
VII Ռուսաց դպրոց . . . . . 112
VIII Տավարած . . . . . 130
IX Նորից դպրոցում . . . . . 151
X Նիկոլայ Գեորգիչ . . . . . 163
XI Լիդա Լվովնա . . . . . 179
XII Տեր Գյուտը . . . . . 184
XIII Ավազանիսան . . . . . 195
XIV Մանուշի նշանը . . . . . 227
XV Ցերկլորդ քաջագործություն . . . . . 241
XVI Բննություններ և Գոգոլներ . . . . . 253
XVII Ոբերը . . . . . 265
XVIII Տառնուհինգլորդ գծամաի պրասեճյաիը . . . . . 287
XIX Անավոր գիշեր և անծանոթ աեղը . . . . . 309
XX Դևալե անհայտ հետուն . . . . . 333

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Խնդրում ենք ուղարկել ձեր տպավորությունները կամ կարծիքն այս գրքի մասին, դրան ավելացնելով տեղեկություններ ձեր զբաղմունքի, կրթության և տարիքի մասին, հետեվյալ հասցեյով.

Ցերեվան, Լենինի փողոց № 65, Հայպետհրատ, գեղարվեստական գրականության բաժին:



ՀՀ Ազգային գրադարան
NL0332894

Գինը 30 կ. 60 կ.
Цена 1 р. 60 к.

30063